ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ • ՄԱՅԻՍ 2018

Լիահոնա



Գերագույն Համաժողովի Ելույթները

Հաստատվել են երկու նոր Առաքյալներ

Հաստատվել են նոր Բարձրագույն Իշխանություններ և օժանդակ կազմակերպությունների գերագույն պաշտոնյաներ

Հայտարարվել են յոթ նոր տաճարներ

Առաջին Նախագահություն

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը (կենտրոնում) հաստատվեց Եկեղեցու 17-րդ Նախագահ 188-րդ ամենամյա գերագույն համաժողովին: Առաջին Նախագահությունում Նրա խորհրդականներն են՝ Նախագահ Դալլին Հ. Օուքսը (ձախում) և Նախագահ Հենրի Բ. Այրինգը:

Բովանդակություն մայիս 2018

Հատոր 19 • Համար 2

Շաբաթ առավոտյան նիստ

6 **Հանդիսավոր ժողով**
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

9 **Թանկագին պարգևներ Աստծուց**
Նախագահ Մ. Ռասսել Բալլարդ

12 **Արդյո՞ք զավակն եմ ես Աստծո**
Երեց Բրայըն Ք. Թեյլոր

15 **Ինչպէս Քրիստոսն էլ ձեզ ներեց, այնպէս էլ դուք**
Երեց Լարի Ջ. Էքո Հոք

17 **Մարգարեի սիրտը**
Երեց Գարի Ի. Սթիվենսոն

21 **Յոթանասուն անգամ յոթը**
Երեց Լին Գ. Ռոբինս

24 **Աստծո մարգարեն**
Երեց Նիլ Լ. Անդերսեն

Շաբաթ ցերեկային նիստ

28 **Եկեղեցու պաշտոնյաների հաստատում**
Նախագահ Դալլին Հ. Օուքս

29 **Եկեղեցու աուդիտի բաժնի հաշվետվություն, 2017**
Քեվին Ռ. Ջերգենսեն

30 **Հեզ և խոնարհ սրտով**
Երեց Դեյվիդ Ա. Բեղնար

34 **Եվս մեկ օր**
Երեց Թեյլոր Գ. Գոդոյ

36 **Երիտասարդ Կանայք աշխատանքում**
Բոնևի Լ. Օսկարսոն

39 **Փրկարար արարողությունները մեզ սքանչելի լույս կբերեն**
Երեց Տանիելա Բ. Վաքոլո

42 **Ուսուցում տանը՝ ուրախալի և սրբազան պարտականություն**
Դեվին Գ. Դյուրան

46 **Ընտանեկան պատմություն և տաճարային աշխատանք. Կնքում և բժշկում**
Երեց Դեյլ Գ. Ռենլանդ

Քահանայության գերագույն նիստ

50 **Ինչ պետք է իմանա Ահարոնյան քահանայության յուրաքանչյուր կրողը**
Դուգլաս Դ. Հոլմս

54 **Ներածական ելույթ**
Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

55 **Երեցների Քվորում**
Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն

58 **Տե՛ս, արքայական զորքը**
Երեց Ռոնալդ Ա. Ռասբանդ

61 **Ոգեշնչված սպասավորություն**
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

65 **Քահանայության զորությունները**
Նախագահ Դալլին Հ. Օուքս

68 **Սպասավորել Աստծո զորությամբ և իշխանությամբ**
Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

Կիրակի առավոտյան նիստ

75 **Վերցրեք Սուրբ Հոգին որպես ձեզ առաջնորդ**
Երեց Լարի Յ. Վիլսոն

78 **Լինենք միաբան**
Ռեյնա Ի. Սբուրտո

81 **Մաքուր սեր՝ Հիսուս Քրիստոսի յուրաքանչյուր ճշմարիտ հետևորդի իսկական նշան**
Երեց Մասիմո Դե Ֆեո

83 **Ով որ մինչև վերջը համբերէ՝ նա կփրկվի**
Երեց Կլաուդիո Դ. Զիվիկ

86 **Որպեսզի Նրա Հոգին ձեզ հետ լինի**
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

89 **Փոքր և հասարակ բաներ**
Նախագահ Դալլին Հ. Օուքս

93 **Հայտնություն Եկեղեցու համար, հայտնություն մեր կյանքի համար**
Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

Կիրակի ցերեկային նիստ

97 **Տեր Քրիստոսն հարյավ այսօր**
Երեց Գերիթ Վ. Գոնգ

98 **Մարգարենները խոսում են Սուրբ Հոգու զորությամբ**
Երեց Ուլիսես Սոարես

100 **Սպասավորություն**
Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

101 **«Լինել նրա հետ և ամրապնդել այն»**
Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ

104 **Սպասավորել Փրկիչի ձևով**
Ջին Բ. Բինգհեմ

107 **Ահա այն մարդը**
Երեց Դիտեր Ֆ. Ուխդորֆ

111 **Դա՝ մարդիկ են**
Եպիսկոպոս Ջեռալդ Կոսե

114 **Նախապատրաստվել հանդիպել Աստծուն**
Երեց Քվենթին Լ. Քուք

118 **Տեր Աստծո գործին բոլորս մասնակցենք**
Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

72 **Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանավորները և Բարձրագույն Պաշտոնյաները**

119 **Վիճակագրական հաշվետվություն, 2017**

120 **Համաժողովի պատմությունների ցուցիչ**

121 **Եկեղեցու նորությունները**

137 ***Եկ, հետևիր ինձ. Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության համար***

188-րդ ամենամյա գերագույն համաժողով

Շաբաթ առավոտ, 31 մարտի, 2018, գերագույն նիստ
Վարող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Բացման աղոթք. Երեց Մերվին Բ. Առնոլդ
Փակման աղոթք. Երեց Վ. Մարկ Բասեթ
Երաժշտությունը՝ Թաբերնաքլի երգչախմբի, Մաք Վիլբերգ և Ռայան Մըրֆի, տնօրեններ. Էնդրյու Անսվորթ և Քլեյ Քրիսչենսեն, երգեհոնահարներ. “Sweet Is the Work,” *Hymns,* no. 147; “We Thank Thee, O God, for a Prophet,” *Hymns,* no. 19, arr. Wilberg; “We Listen to a Prophet’s Voice,” *Hymns,* no. 22, arr. Murphy; “Press Forward, Saints,” *Hymns,* no. 81; “Tell Me the Stories of Jesus,” *Children’s Songbook,* 57, arr. Murphy; “My Redeemer Lives,” *Hymns,* no. 135, arr. Wilberg:

Շաբաթ ցերեկ, 31 մարտի, 2018, գերագույն նիստ
Վարող. Դալլին Հ. Օուքս
Բացման աղոթք. Երեց Մարկ Ա. Բրագ
Փակման աղոթք. Երեց Պիտեր Ֆ. Մըրս
Երաժշտությունը Սոլթ Լեյք Սիթիի կրոնի ինստիտուտների միացյալ երգչախումբ, Մարշալ Մաքդոնալդ և Ռիչարդ Դեքեր, տնօրեններ. Լինդա Մարջեթս և Բոնիի Գուդլիֆ, երգեհոնահարներ. “Come, Listen to a Prophet’s Voice,” *Hymns,* no. 21, arr. Matthews and Goodliffe; “Where Can I Turn for Peace?” *Hymns,* no. 129, arr. McDonald and Parker; “Choose the Right,” *Hymns,* no. 239; medley, arr. McDonald: “As Zion’s Youth in Latter Days,” *Hymns,* no. 256, and “The Iron Rod,” *Hymns,* no. 274; “I’ll Go Where You Want Me to Go,” *Hymns,* no. 270, arr. Wilberg:

Շաբաթ երեկո, 31 մարտի, 2018, Քահանայության գերագույն նիստ
Վարող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Բացման աղոթք. Մ. Ջոզեֆ Բրոու
Փակման աղոթք. Երեց Կ. Բրեթ Նաթրես
Երաժշտությունը՝ Բրիգամ Յանգ Համալսարանի (Այդահո) քահանաների երգչախումբ. Ռանդալ Քեմփթոն, Պոլ Բասսելլբերգ և Դեյվիդ Լոզանո-Տորրես, տնօրեններ, Բրայան Մաթիաս և Էնդրյու Անսվորթ, երգեհոնահարներ. “How Firm a Foundation,” *Hymns,* no. 85, arr. Busselberg, pub. by Sharpe Music Press; “Father in Heaven,” *Hymns,* no. 133, arr. Busselberg, pub. by Sharpe Music Press; “Praise to the Lord, the Almighty,” *Hymns,* no. 72; “Rise Up, O Men of God,” *Hymns,* no. 324:

Կիրակի առավոտ, 1 ապրիլի, 2018, Գերագույն նիստ
Վարող. Նախագահ Ռասսել Մ. Նելսոն
Բացման աղոթք. Երեց Ս. Մարկ Փալմեր
Փակման աղոթք. Երեց Յոքին Ի. Կոստա
Երաժշտությունը՝ Թաբերնաքլի երգչախմբի, Մաք Վիլբերգ, տնօրեն. Քլեյ Քրիսչենսեն և Ռիչարդ Էլիոթ, երգեհոնահարներ. “On This Day of Joy and Gladness,” *Hymns,* no. 64; “Christ the Lord Is Risen Today,” *Hymns,* no. 200, arr. Wilberg; “He Sent His Son,” *Children’s Songbook,* 34–35, arr. Hoffheins; “Rejoice, the Lord Is King!” *Hymns,* no. 66; “He Is Risen!” *Hymns*, no. 199, arr. Wilberg, pub. by Oxford University Press.

Կիրակի ցերեկ, 1 ապրիլի, 2018, Գերագույն նիստ
Վարող. Դալլին Հ. Օուքս
Բացման աղոթք. Երեց Վեթերֆորդ Թ. Քլեյթոն
Փակման աղոթք. Երեց Վալերի Վ. Քորդոն
Երաժշտությունը՝ Թաբերնաքլի երգչախումբը, խմբավարներ՝ Մաք Վիլբերգ, տնօրեն. Քլեյ Քրիսչենսեն և Ռիչարդ Էլիոթ, երգեհոնահարներ. “Brightly Beams Our Father’s Mercy,” *Hymns,* no. 335, arr. Murphy; “Dear to the Heart of the Shepherd,” *Hymns,* no. 221, arr. Wilberg; “Redeemer of Israel,” *Hymns,* no. 6; “Love One Another,” *Hymns,* no. 308, arr. Wilberg; “Let Us All Press On,” *Hymns,* no. 243, arr. Elliott, pub. by Jackman:

Համաժողովի ելույթները մատչելի են
Գերագույն համաժողովի ելույթները տարբեր լեզուներով մատչելի են համացանցում՝ conference.lds.org կայքում, որտեղ կարող եք ընտրել լեզուն: Ելույթները մատչելի են նաև Gospel Library բջջային հավելվածում: Սովորաբար համաժողովից հետո վեց շաբաթվա ընթացքում անգլերեն լեզվով տեսագրությունները նույնպես մատչելի են բաշխման կենտրոններում: Հաշմանդամ անդամների համար հասանելի ձևաչափերով գերագույն համաժողովի տեղեկությունը մատչելի է disability.lds.org կայքում:

Կազմի վրա
Առջևում. Լուսանկարը Լեսլի Նիլսոն
Ետևում. Լուսանկարը՝ Քոդի Բելլի

Համաժողովի լուսանկարները
Սոլթ Լեյք Սիթիում լուսանկարել են. Քոդի Բել, Ջանե Բինգհեմ, Մեյսոն Քոբերլի, Ռենդի Քոլեր, Վեսթոն Քոլթոն, Ալլեսանդրա ԴեԱգոստինի, Էշլի Լարսոն, Բրայան Նիկոլսոն, Լեսլի Նիլսոն, Մեթ Ռեյեր, Քրիստինա Սմիթ, Դեյվ Ուորդ և Մարկ Վեյնբերգ:

ՄԱՅԻՍ 2018 ՀԱՏՈՐ 19 ՀԱՄԱՐ 2
ԼԻԱՀՈՆԱ 14751 201

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պաշտոնական միջազգային ամսագիր

Առաջին Նախագահություն. Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս, Հենրի Բ. Այրինգ

Տասներկու Առաքյալների Քվորում. Մ. Ռասսել Բալլարդ, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դիտեր Ֆ. Ուխդորֆ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քվենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսեն, Ռոնալդ Ա. Ռասբանդ, Գարի Է. Սթիվենսոն, Դեյլ Գ. Ռենլանդ, Գերիթ Վ. Գոնգ, Ուլիսես Սոարես

Խմբագիր. Հյուգո Ա. Մարտինեզ
Խմբագրի օգնականներ. Ռանդալ Ք. Բաններթ, Քերոլ Ֆ. Մակքոնկի
Խորհրդատուներ. Բրայան Ք. Էշթոն, Բոննի Հ. Քորդոն, Լեզռան Ռ. Քըրթիս Կրտս., Շերոն Յուբենկ, Դուգլաս Դ. Հոլմս, Էրիկ Վ. Կոպիչկե, Լարի Ռ. Լորենս

Գլխավոր տնօրեն. Ռիչարդ Ի. Հիթն
Եկեղեցու Ամսագրերի տնօրեն. Ալան Ռ. Լոյբորգ
Գործարար ղեկավար. Գարֆ Քենոն

Գլխավոր խմբագիր. Աղամ Ս. Օլսոն
Գլխավոր խմբագրի օգնական. Ռայան Քար
Հրապարակման օգնական. Ֆրանսիսկա Օլսոն
Գրողներ և խմբագրողներ. Մարիսա Դեննիս, Դեյվիդ Դիքսոն, Դեյվիդ Ա. Էդվարդս, Մեթյու Դ. Ֆլիթոն, Լորի Ֆուլեր, Գարեթ Հ. Գարֆ, Լառեն Փորթեր Գանթ, Ջոն Ռայան Ջենսեն, Շառլոտ Լարկաբալ, Մայքլ Ռ. Մորիս, Էրիկ Բ. Մըրդոք, Սալի Ջոնսոն Օդեքրիկ, Ջոշուա Ջ. Փերկի, Յան Փիլբորո, Ռիչարդ Մ. Ռոմնի, Մինդի Սելու, Մարիսա Վիդիսոն

Արվեստի գծով գործադիր տնօրեն. Ջ. Սքոթ Նադսեն
Արվեստի տնօրեն. Թեդ Ռ. Փեթերսոն
Ձևավորում. Ջանեթ Էնդրյուս, Ֆեյ Պ. Անդրուս, Մենդի Բենթլի, Ս. Քիմբալ Բոթ, Թոմաս Չայլդ, Դեյվիդ Գրին, Քոլլին Լինքլի, Էրից Պ. Ջոնսեն, Սյուզան Լոֆգրեն, Սքոթ Մ. Մոյ, Էմիլի Չիկո Ռեմինգտոն, Մարք Վ. Ռոբինսոն, Ռաքել Սմիթ, Բրեդ Թիըր, Կ. Նիկոլ Վոլկենհորստ

Մտավոր սեփականության համակարգող. Քոլեթ Նեբեքեր Օն
Հրատարակչության տնօրեն. Ջեյն Էնն Փիթերս
Հրատարակում. Իռա Գլեն Ադեյր, Քեվին Բանկս, Ջուլի Բըրդեթ, Թոմաս Գ. Քրոնին, Բրայըն Վ. Գիջի, Գինին Ջ. Նիլսոն, Դերեկ Ռիչարդսոն
Նախատպագրություն. Ջոշուա Դենիս, Ամմոն Հարիս
Տպագրության տնօրեն. Ստիվեն Տ. Լյուիս
Բաշխման տնօրեն. Թրոյ Ռ. Բարքեր

Միացյալ Նահանգներից և Կանադայից դուրս բաժանորդագրման և գների մասին տեղեկանալու համար այցելեք store.lds.org կամ դիմեք Եկեղեցու ձեր տեղական բաշխման կենտրոն կամ ծխի/ճյուղի ղեկավարին:

Ձեռագրերը և հարցերը ներկայացրեք առցանց՝ liahona.lds.org; էլ-փոստով՝ liahona@ldschurch.org; կամ փոստով՝ *Liahona*, Rm. 2420, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150-0024, USA:

Լիահոնան (Մորմոնի Գրքի տերմին, որը նշանակում է «կողմնացույց» կամ «ուղեցույց») հրատարակվում է անգլերեն, ալբաներեն, բիսլամա, բուլղարերեն, գերմաներեն, դանիերեն, էստոներեն, թագալոգ, թաիթերեն, թամիլ, թայերեն, թելուգու, թոնգերեն, ինդոնեզերեն, իսլանդերեն, իսպաներեն, իտալերեն, լատիշերեն, լեհերեն, լատիշերեն, խորվաթերեն, կամբոջերեն, կիրիբաթի, կորեերեն, հաիթերեն, հայերեն, հինդի, հոլանդերեն, հունարեն, հունգարերեն, ճապոներեն, մալագազի, մարշալերեն, մոնղոլերեն, նորվեգերեն, շվեդերեն, չեխերեն, չինարեն, պորտուգալերեն, ռումիներեն, ռուսերեն, սամորեն, սինհալա, սլովեներեն, վիետնամերեն, ուկրաիներեն, ուրդու, քեբուանո, ֆիներեն, ֆիջիերեն և ֆրանսերեն լեզուներով: (Հրատարակության հաճախականությունը տարբերվում է ըստ լեզուների:)

© 2018 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Հեղինակային իրավունք. Եթե հատուկ նշված չէ, Լիահոնայի նյութերը կարելի է բազմացնել անձնական ոչ կոմերցիոն նպատակով օգտագործելու համար (այդ թվում Եկեղեցու կոչումների համար): Այդ իրավունքը կարող է ցանկացած ժամանակ սահմանափակվել: Տեսողական նյութերը չեն կարող բազմացվել, եթե սահմանափակումներ են նշված տվյալ աշխատանքի նկարագրական տողում: Հեղինակային իրավունքի հետ կապված հարցերը պետք է ուղղել. Intellectual Property Office, 50 E. North Temple St., L13, Salt Lake City, UT 84150, USA; կամ էլ-փոստով. cor-intellectualproperty@ldschurch.org:

Լիահոնան տարբեր լեզուներով կարելի է գտնել www.liahona.lds.org ինտերնետային կայքում:

For Readers in the United States and Canada:
May 2018 Vol. 19 No. 2. LIAHONA (USPS 311-480) Armenian (ISSN 1525-7614) is published four times a year (April, May, October, and November) by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150. USA subscription price is $4.00 per year; Canada, $4.80 plus applicable taxes. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address must be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (Visa, MasterCard, American Express) may be taken by phone. (Canada Poste Information: Publication Agreement #40017431)

POSTMASTER: Send all UAA to CFS (see DMM 507.1.5.2). NONPOSTAL AND MILITARY FACILITIES: Send address changes to Distribution Services, Church Magazines, P.O. Box 26368, Salt Lake City, UT 84126-0368, USA.

Խոսնակների ցուցիչ

Այրինգ, Հենրի Բ., 6, 61, 86
Անդերսեն, Նիլ Լ., 30
Բալլարդ, Մ. Ռասսել, 9
Բեդնար, Դեյվիդ Ա., 30
Բինգհեմ, Ջին Բ., 124
Գոնգ, Գերիթ Վ., 97
Դե Ֆեո, Մասիմո, 81
Դյուրան, Դեյվիդ Գ., 42
Դուգլաս Դ. Հոլմս, 50
Երեց Թեյլոր Գ. Գոդոյ, 34
Ջիվիք, Կլաուդիո Դ., 83
Ջերգենսեն Քեվին Ռ., 29
Էշթոն, Բրայըն Կ., 12
Էքո Հոք, Լարի Գ., 15
Կոսե, Ջեռալդ, 131
Հոլլանդ, Ջեֆրի Ռ., 101
Նելսոն, Ռասսել Մ., 54, 68, 93, 100, 118
Ուխդորֆ, Դիտեր Ֆ., 107
Ռասբանդ, Ռոնալդ Ա., 58
Ռեյնա Ի. Աբուրտո, 78
Ռենլանդ, Դեյլ Գ., 46
Ռոբբինս, Լին Գ., 21
Սթիվենսոն, Գարի Ի., 17
Սոարես, Ուլիսես, 98
Վակոլո, Տանիելա Բ., 39
Վիլսոն, Լարի Յ., 75
Քուք, Քվենթին Լ., 114
Քրիստոֆերսոն, Դ. Թոդ, 55
Օուքս, Դալլին Հ., 28, 65, 89
Օսկարսոն, Բոննի Լ., 36

Թեմաների ցուցիչ

Ահարոնյան Քահանայություն, 50
Աղոթք, 42, 75, 78, 83, 86, 93
Աշակերտություն, 36, 81, 104, 107, 111, 118
Ապաշխարություն, 21, 24, 50, 75, 83, 89, 107
Առաջին Նախագահություն, 17, 93
Աստվածային էություն, 12, 30
Արարողություններ, 39, 46, 50, 97, 114, 118
Արդարակեցություն, 114
Արժանավորություն, 65, 75
Բժշկում, 46
Գերագույն համաժողով, 118
Գթություն, 61
Եկեղեցու կազմակերպությունը, 17, 58, 101
Եկեղեցու կոչումներ, 65, 93
Երեխաներ, 12, 42
Երիտասարդ Տղամարդիկ, 36
Երիտասարդ կանայք, 36, 100
Երիտասարդներ, 104
Ջատիկ, 93, 97, 107
Ջոհաբերություն, 34
Ընտանեկան պատմություն, 36, 46, 114
Ընտանիք, 42, 65
Խոնարհություն, 30, 86
Ծառայություն, 9, 36, 54, 55, 61, 65, 68, 78, 81, 101, 104
Հաղորդություն, 9, 21, 39, 83
Հայտնություն, 75, 93
Հայր Աստված, 12, 78, 81
Հայրություն, 65
Հանգստության օր, 9
Հանդիսավոր ժողով, 6, 17, 24, 93
Հաջող ավարտ, 21
Հավատ, 9, 24, 50, 86, 98, 118
Հարություն, 89, 97, 107
Հեզություն, 30
Հետևել մարգարեներին, 17, 24, 58, 98
Հիմնական էջ, 42, 131
Հիսուս Քրիստոս, 9, 12, 15, 21, 24, 30, 34, 39, 75, 78, 81, 83, 86, 89, 93, 97, 98, 104, 107, 111
Հնազանդություն, 24, 83, 86, 89
Հպարտություն, 30
Ճախորդություն, 107
Մահ, 107
Մայրություն, 12
Մարգարեներ, 9, 17, 24, 30, 97, 98
Մելքիսեդեկյան Քահանայություն, 55, 58, 65
Միություն, 58, 78, 114
Միսիոներական աշխատանք, 114
Մորմոնի Գիրք, 12
Նախապատրաստություն, 114
Ներում, 15, 21, 81
Շնորհ, 21
Ուխտեր, 39, 83, 97, 111, 118
Ուսուցանել, 17, 42, 50
Ուրախություն, 34
Պատասխանատվություն, 36, 114
Ջոզեֆ Սմիթ, 12, 39, 86, 93, 97
Սիրեք, 54, 78, 81, 86, 100, 101, 104
Սուրբ Հոգի, 75, 86, 93, 98
Սուրբ գրությունների ուսումնասիրություն, 12, 42, 83
Սպասավորություն, 54, 55, 58, 61, 68, 78, 86, 100, 101, 104, 111
Սփոփող Միություն, 100, 104
Տաճարային աշխատանք, 36, 46, 114, 118
Տաճարներ, 97
Տասներկու Առաքյալների Քվորում, 17, 93
Տնային ուսուցում, 100, 101
Տոկունություն, 83
Փրկության ծրագիր, 34, 81
Քահանայության քվորումներ, 54, 55, 58, 61, 104
Քահանայություն, 65, 68, 100
Քավություն, 12, 15, 34, 39, 50, 81, 93, 97, 107
այցելությամբ ուսուցում, 100, 101

188-րդ ամենամյա գերագույն համաժողովի ամփոփում

Այս գերագույն համաժողովը պատմական էր բազմաթիվ պատճառներով, այդ թվում՝ Մելքիսեդեկյան Քահանայության քվորումների վերակառուցման և սպասավորության նոր ժամանակաշրջանի սկիզբը դնելով: Հավանաբար ամենասպասվածը մեր անհատական հնարավորությունն էր հաստատել Նախագահ Ռասսել Մ. Նելսոնին՝ որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու 17-րդ Նախագահ:

Հանդիսավոր ժողով

Երբ մենք ոտքի կանգնեցինք և հաստատեցինք նոր մարգարեին ու Նախագահին, մեր բարձրացված ձեռքերը հնարավոր չէր հաշվել որևէ մարդկային գրանցման միջոցով, բայց դրանք նշվեցին երկնքում՝ որպես ուխտ Աստծո հետ:

Համաժողովի ընթացքում մենք ականատես եղանք վկայությանը, որ սա Փրկիչի Եկեղեցին է, որը ղեկավարվում է Նրա կողմից Իր ծառաների միջոցով: Մենք վկա եղանք, որ ապրող մարգարեի պաշտոնը առնչվում է մեզանից յուրաքանչյուրի հետ, բայց չի կանգնում մեր և Փրկիչի միջև, այլ կանգնում է մեր կողքին և ցույց է տալիս դեպի Փրկիչը տանող ճանապարհը: Մենք հնարավորություն ունեցանք ստանալ «անձնական վկայություն, որ Նախագահ Նելսոնը կանչված է Աստծո կողմից» և խարսխել «մեր հոգիները Տեր Հիսուս Քրիստոսին, լսելով նրանց, ում Նա է ուղարկում» (տես Երեց Նիլ Լ. Անդերսեն, էջ 26):

- Դուք կարող եք ավելին սովորել Նախագահ Նելսոնի մասին 2018թ.-ի մայիսի *Ensign* և *Լիահոնա* ամսագրերի 16 էջանոց հատուկ հավելվածում:

Նոր ղեկավարների հաստատումը

Ի լրումն Նախագահ Նելսոնի հաստատմանը, մենք հաստատեցինք նաև 70 նոր ղեկավարների:

- Հաստատված ղեկավարների, այդ թվում նոր Տարածքային Յոթանասունականների ցուցակին ծանոթանալու համար այցելեք էջեր 6–8, 28–29-ը:
- Նոր ղեկավարների կենսագրականները կարդացեք սկսած 121 էջից:

Փոփոխություններ քվորումներում և սպասավորություն

Կանխատեսվելով մարգարեների կողմից, համաժողովի ընթացքում հայտարարված փոփոխությունները «[Աստծուց] տրված հայտնության օրինակներ են, որոնք ի սկզբանե առաջնորդել են այս Եկեղեցին», - ասաց Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը (տես էջ 101):

- Կարդացեք Նախագահ Նելսոնի հրահանգները քվորումների վերակառուցման մասին Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնի և Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդի կողմից, էջ 54:
- Կարդացեք հրահանգները սպասավորության մասին Նախագահ Նելսոնի, Երեց Հոլլանդի և Քույր Ջին Բ. Բինգհեմի ելույթներում, էջ 100:
- Այս փոփոխությունների և ուսուցողական աղբյուրների մասին լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել նորությունների բաժնում, էջ 132–33:

Լրացուցիչ տաճարներ

Որպեսզի շեշտադրվի «աշխարհին ուղղված մեր ուղերձը», որ «մենք հրավիրում ենք վարագույրի երկու կողմերում գտնվող Աստծո զավակներին գալ դեպի Փրկիչը, ստանալ սուրբ տաճարի օրհնությունները, ունենալ հարատև ուրախություն և արժանանալ հավերժական կյանքի», Նախագահ Նելսոնը հայտարարեց յոթ նոր տաճարների մասին:

- Պարզեք, թե որտեղ կկառուցվեն յոթ նոր տաճարները էջ 133-ում: ■

Ներկայացնող՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության երկրորդ խորհրդական

Հանդիսավոր ժողով

Ողբայրնե՛ր և քույրե՛ր, Նախագահ Նելսոնը խնդրել է, որ ես վարեմ հանդիսավոր ժողովը, որի համար հավաքվել ենք:

Սա Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ամբողջ աշխարհի անդամների համար մեծ կարևորություն ունեցող իրադարձություն է:

Սկսած 1880թ. հոկտեմբերի 10-ից, երբ Բրիգամ Յանգից հետո Ջոն Թեյլորը հաստատվեց որպես մարգարե, տեսանող և հայտնող, և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ, այսպիսի իրադարձություններից յուրաքանչյուրը հայտարարվել է որպես Եկեղեցու պաշտոնական հանդիսավոր ժողով Եկեղեցու ձայնը արտահայտելու համար:

Մենք կքվեարկենք քվորումներով և խմբերով: Որտեղ էլ գտնվեք, ձեզ խնդրելու ենք կանգնել և ձեռքը բարձրացնելով արտահայտել, որ հաստատում եք նրանց, ում անունները կներկայացվեն: Դուք պետք է քվեարկեք միայն այն ժամանակ, երբ ձեզ խնդրենք կանգնել:

Բարձրագույն Իշխանություններին հանձնարարվել է Թաբերնաքլում և Տաճարային Հրապարակի Ժողովների Սրահում հետևել այնտեղի քվեարկությանը: Ցցերի կենտրոններում ցցի նախագահությունը պետք է հետևի քվեարկությանը: Եթե դեմ քվեարկողներ լինեն, այդ մարդիկ պետք է կապ հաստատեն իրենց ցցերի նախագահների հետ:

Այժմ, մենք կսկսենք: Կրկին, խնդրում ենք կանգնել և քվեարկել միայն այն ժամանակ, երբ կխնդրենք ձեզ:

Առաջին Նախագահության անդամներին խնդրում ենք ոտքի կանգնել:

Առաջարկվում է Առաջին Նախագահությանը հաստատել Ռասսել Մարիոն Նելսոնին որպես մարգարե, տեսանող և հայտնող և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ:

Առաջին Նախագահությունից ովքեր կողմ են, խնդրում եմ արտահայտել դա:

Առաջարկվում է Առաջին Նախագահությանը հաստատել Դալլին Հարիս Օուքսին որպես Եկեղեցու առաջին նախագահության առաջին խորհրդական և Հենրի Բոնյոն Այրինգին՝ որպես երկրորդ խորհրդական։

Առաջին Նախագահության այն անդամները, ովքեր կողմ են, կարող են արտահայտել դա։

Առաջարկվում է Առաջին Նախագահությանը հաստատել Դալլին Հարիս Օուքսին որպես Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ և Մելվին Ռասսել Բալլարդին՝ որպես Տասներկու Առաքյալների Քվորումի գործող Նախագահ։

Առաջին Նախագահության անդամները կարող են քվերակել։

Առաջարկվում է Առաջին Նախագահությանը հաստատել Տասներկու Առաքյալների Քվորումի անդամներ՝ Մ. Ռասսել Բալլարդին, Ջեֆրի Ռ. Հոլանդին, Դիտեր Ֆ. Ուխդորֆին, Դեյվիդ Ա. Բեդնարին, Քուենթին Լ. Քուքին, Դ. Թոդ Քրիստոֆերսոնին, Նիլ Լ. Անդերսենին, Ռոնալդ Ա. Ռասբենդին, Գարի Է. Սթիվենսոնին, Դեյլ Գ. Ռենլանդին, Գերրիտ Վոլտեր Գոնգին և Ուլիսես Սոարեսին։

Առաջին Նախագահության անդամնե՛ր, խնդրում եմ քվեարկել։

Առաջարկվում է Առաջին Նախագահությանը հաստատել Առաջին Նախագահության խորհրդականներին և Տասներկու Առաքյալների Քվորումին որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ։

Առաջարկվում է Առաջին Նախագահությանը հաստատել Տասներկու Առաքյալների Քվորումի անդամներ՝ Մ. Ռասսել Բալլարդին, Ջեֆրի Ռ. Հոլանդին, Դիտեր Ֆ. Ուխդորֆին, Դեյվիդ Ա. Բեդնարին, Քուենթին Լ. Քուքին, Դ. Թոդ Քրիստոֆերսոնին, Նիլ Լ. Անդերսենին, Ռոնալդ Ա. Ռասբենդին, Գարի Է. Սթիվենսոնին, Դեյլ Գ. Ռենլանդին, Գերրիտ Վոլտեր Գոնգին և Ուլիսես Սոարեսին։

Առաջին Նախագահության անդամնե՛ր, խնդրում եմ քվեարկել։

Այժմ, Առաջին Նախագահությունը կարող է նստել։

Հրավիրում ենք Երեց Գոնգին և Երեց Սոարեսինգրավել իրենց տեղերը Տասներկուսի Քվորումի շարքում։

Միայն Տասներկու Առաքյալների Քվորումի անդամներին, այդ թվումԵրեց Գոնգին և Երեց Սոարեսին, խնդրո՛ւմ ենք, կանգնե՛ք։

Առաջարկվում է Տասներկու Առաքյալների Քվորումին հաստատել Ռասսել Մարիոն Նելսոնին որպես մարգարե, տեսանող, հայտնող և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ, իր խորհրդականների և Տասներկուսի Քվորումի անդամների հետ միասին,

ինչպես որ նրանք ներկայացվել և քվեարկվել են Առաջին Նախագահության կողմից:

Տասներկու Առաքյալների Քվորումի անդամներին խնդրում ենք քվեարկել:

Դուք կարող եք նստել:

Յոթանասունի Բարձրագույն Իշխանավորնե՛ր և Նախագահող Եպիսկոպոսության անդամնե՛ր, խնդրում եմ կանգնեք:

Առաջարկվում է Յոթանասունի բարձրագույն Իշխանավորներին և Նախագահող Եպիսկոպոսության անդամներին հաստատել Ռասսել Մարիոն Նելսոնին որպես մարգարե, տեսանող, հայտնող և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ, իր խորհրդականների և Տասներկուսի Քվորումի անդամների հետ միասին, ինչպես որ նրանք ներկայացվել և քվեարկվել են Առաջին Նախագահության կողմից:

Յոթանասունի Բարձրագույն Իշխանավորները և Նախագահող Եպիսկոպոսության այն անդամները, ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Դուք կարող եք նստել:

Անկախ այն բանից, աշխարհի որ մասում եք գտնվում, խնդրում ենք կանգնել բոլոր Տարածքային Յոթանասունականներին, կարգված հայրապետերին, քահանայապետերին և երեցներին:

Առաջարկվում է հաստատելՌասսել Մարիոն Նելսոնինորպես մարգարե, տեսանող, հայտնող և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ, իր խորհրդականների և Տասներկուսի Քվորումի անդամների հետ միասին, ինչպես որ նրանք ներկայացվել են և քվեարկվել:

Ովքեր կողմ են, խնդրում եմ արտահայտել դա:

Ովքեր դեմ են, կարող են արտահայտել նույն ձևով:

Խնդրում եմ նստել:

Սփոփող Միության բոլոր անդամնե՛ր, այսինքն՝ 18 տարեկանից բարձր բոլոր կանայք, խնդրում եմ կանգնել:

Առաջարկվում էՌասսել Մարիոն Նելսոնին հաստատել որպես մարգարե, տեսանող, հայտնող և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ, իր խորհրդականների և Տասներկուսի Քվորումի անդամների հետ միասին, ինչպես նախկինում ներկայացվել են և քվեարկվել:

Ովքեր կողմ են, խնդրում եմ արտահայտել դա ձեռքի բարձրացումով:

Ովքեր դեմ են, արտահայտեք նույն կերպ:

Դուք կարող եք նստել:

Ահարոնյան Քահանայություն, այսինքն՝ բոլոր կարգված քահանաներ, ուսուցիչներ և սարկավագներ, խնդրում ենք կանգնել:

Առաջարկվում էՌասսել Մարիոն Նելսոնին հաստատել որպես մարգարե, տեսանող, հայտնող և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ, իր խորհրդականների և Տասներկուսի Քվորումի անդամների հետ միասին, ինչպես նախկինում ներկայացվել են և քվեարկվել:

Ովքեր կողմ են, խնդրում եմ արտահայտել դա ձեռքի բարձրացումով:

Ովքեր դեմ են, արտահայտեք նույն կերպ:

Դուք կարող եք նստել:

Երիտասա՛րդ աղջիկներ, ովքեր 12–18 տարեկան են, խնդրում եմ կանգնել:

Առաջարկվում էՌասսել Մարիոն Նելսոնին հաստատել որպես մարգարե, տեսանող, հայտնող և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ, իր խորհրդականների և Տասներկուսի Քվորումի անդամների հետ միասին, ինչպես նախկինում ներկայացվել են և քվեարկվել:

Ովքեր կողմ են, խնդրում եմ արտահայտել դա ձեռքի բարձրացումով:

Ովքեր դեմ են, արտահայտեք նույն կերպ:

Դուք կարող եք նստել:

Այժմ, խնդրում ենք կանգնել բոլոր անդամներին՝ անկախ հավաքման վայրից, նաև նրանց, ովքեր արդեն կանգնել են:

Առաջարկվում է հաստատելՌասսել Մարիոն Նելսոնինորպես մարգարե, տեսանող, հայտնող և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ, իր խորհրդականների և Տասներկուսի Քվորումի անդամների հետ միասին, ինչպես որ նրանք ներկայացվել են և քվեարկվել:

Ովքեր կողմ են, խնդրում եմ արտահայտել դա ձեռքի բարձրացումով:

Ովքեր դեմ են, արտահայտեք նույն կերպ:

Բոլորդ կարող եք նստել:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, շնորհակալություն ձեր սիրո և աջակցության համար: ■

Երեց Մ. Ռասսել Բալլարդ
Տասներկու Առաքյալների Քվորումի Գործող Նախագահ

Թանկագին պարգևներ Աստծուց

Կյանքը կարող է լցված լինել հավատքով, ուրախությամբ, երջանկությամբ, հույսով և սիրով, երբ մենք գործադրենք ամենափոքրիկ իրական հավատքն առ Քրիստոս։

Իմ եղբայրնե՛ր և քույրե՛ր, մենք հենց նոր մասնակցեցինք հանդիսավոր ժողովի, սովորույթ, որը կարելի է տեսնել Աստվածաշնչում, երբ հնօրյա Իսրայելը հավաքվում էր՝ զգալու Տիրոջ ներկայությունը և գովերգելու Նրա օրհնությունները։[1] Մեզ արտոնված է ապրել մի այնպիսի ժամանակ, երբ այս հնօրյա սովորույթը վերականգնվել է Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով։[2] Ես հորդորում եմ ձեզ գրառել ձեր անձնական օրագրում, թե ինչ զգացիք այս ամենասուրբ իրադարձության ժամանակ, որի մասնակիցը դարձաք։

Վերջերս մենք հրաժեշտ տվեցինք մեր թանկագին ընկեր և մարգարե Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնին։ Չնայած բոլորս էլ կարոտում ենք նրան, մենք խորապես երախտապարտ ենք, որ Տերը կանչեց նոր մարգարե՝ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնին, նախագահելու Իր Եկեղեցում։ Այժմ մենք պատշաճ կարգով մի նոր գլուխ ենք սկսում մեր Եկեղեցու պատմության մեջ։ Սա թանկագին պարգև է Աստծուց։

Երբ մենք հաստատեցինք Նախագահ Նելսոնին՝ բարձրացնելով մեր ձեռքը, մենք կանգնեցինք որպես վկաներ Աստծո առաջ և ընդունեցինք, որ նա Նախագահ Մոնսոնի իրավահաջորդն է։ Մեր ձեռքի բարձրացումով մենք խոստացանք ականջ դնել նրա ձայնին, մինչ նա առաջնորդություն կստանա Տիրոջից։

Տերն ասել է.

«Պիտի ուշք դարձնես նրա [նկատի ունենալով Եկեղեցու Նախագահին] բոլոր խոսքերին ու պատվիրաններին, որոնք նա կտա քեզ, երբ նա ստանա դրանք՝ ողջ սրբությամբ քայլելով իմ առաջ . . . .

Քանզի նրա խոսքը դուք պետք է ընդունեք, ինչպես որ իմ իսկ բերանից, ողջ համբերությամբ ու հավատքով»։[3]

Ես ճանաչում եմ մեր նոր մարգարեին ու նախագահին ավելի քան 60 տարի։ Ես նրա հետ ծառայել եմ Տասներկուսի Քվորումում 33 տարի, և ես վկա եմ, թե ինչպես էր Տիրոջ ձեռքը նախապատրաստում նրան դառնալ մեր նախագահող առաքյալը և մարգարեն, որ սպասավորի սուրբ քահանայության բոլոր բանալիները երկրի վրա։ Թողմեզանից յուրաքանչյուրը լիարժեք հաստատի նրան և նրա խորհրդականներին և հետևի նրանց։ Մենք նաև ջերմորեն ողջունում ենք Երեց Գոնզին և Երեց Սոարեսին՝ որպես Տասներկու Առաքյալների Քվորումի անդամներ։

Հիսուսի հարությունից հետո, իրադարձություն, որը մենք նշում ենք այս փառահեղ օրը, Նա հայտնվեց Իր աշակերտներին և ասաց. «Խաղաղութիւն ձեզ, *ինչպէս իմ Հայրն ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում*»։[4] Ուշադրություն դարձրեք կրկնակի գործողությանը. Աստված ուղարկում է Իր Որդուն։ Որդին ուղարկում է Իր ծառաներին՝ մահկանացու տղամարդկանց և կանանց, որպեսզի իրականացնեն Իրենց աշխատանքը։

Մեզ չպիտի զարմացնի Տիրոջ աշխատանքը կատարելու համար կանչված անհատների անկատար էակներ լինելը։ Սուրբ գրությունների պատմություններում միջադեպերի մանրամասներ են բերվում տղամարդկանց և կանանց մասին, ովքեր կանչվել էին Աստծո կողմից

կատարելու մեծ գործ. մեր Երկնային Հոր լավ որդիները և դուստրերը, կանչված ծառայելու Եկեղեցու իրենց կոչումներում, ձգտում էին անել հնարավոր ամեն բան, սակայն նրանցից ոչ մեկը կատարյալ չէր: Նույնը ճշմարիտ է մեզ համար այսօր:

Հաշվի առնելով մեր մարդկային թույլ կողմերի և թերությունների իրողությունը, ինչպե՞ս ենք առաջ շարժվում միմյանց աջակցելու և հաստատելու հարցում: Այն սկսվում է հավատքով, իրական, անկեղծ հավատքով առ Տեր Հիսուս Քրիստոսը: Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատը Քրիստոսի վարդապետության և ավետարանի առաջին սկզբունքն է:

Տարիներ առաջ ես այցելել էի Սուրբ Երկիր: Մինչ անցնում էինք մանանեխի բույսի մոտով, ԲՅՀ-ի Երուսաղեմի Կենտրոնի տնօրենը հարցրեց՝արդյոք երբևէ տեսել եմ մանանեխի հատիկ: Ես չէի տեսել, ուստի, մենք կանգ առանք: Նա ինձ ցույց տվեց մանանեխի սերմերը: Դրանք զարմանալիորեն փոքր էին:

Ապա ես հիշեցի Հիսուսի ուսմունքները. «Որովհետեւ ճշմարիտ ասում եմ ձեզ՝ եթէ մանանեխի հատի չափ հաւատք ունենաք, այս սարին կ՚ասէք՝ փոխադրուիր այստեղից այնտեղ, եւ նա կ՚փոխադրուի. Եւ ոչինչ անկարելի չի լինիլ ձեզ համար»:[5]

Եթե մենք մանանեխի հատի չափ հավատք ունենանք, Տերը կարող է օգնել մեզ հեռացնել հիասթափության և կասկածի սարերը, որոնց կհանդիպենք, երբ ծառայենք Աստծո զավակներին՝ ընտանիքի անդամներին, Եկեղեցու անդամներին և նրանց, ովքեր դեռևս Եկեղեցու անդամներ չեն:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, կյանքը կարող է լցված լինել հավատքով, ուրախությամբ, երջանկությամբ, հույսով և սիրով, երբ մենք գործադրենք ամենափոքրիկ իրական հավատքն առ Քրիստոս՝ նույնիսկ մանանեխի հատի չափ հավատք:

Երեց Ջորջ Ա. Սմիթը հիշում էր Ջոզեֆ Սմիթի կողմից տրված հետևյալ խորհուրդը. «Նա ասաց ինձ, որ ես երբեք չպետք է հուսահատվեմ, ինչ դժվարություններ էլ, հնարավոր է, շրջապատեն ինձ: Եթե ես ընկնեմ Նովա Սքոթիայի ամենախորը հորը և Ռոքի լեռներն ամբողջությամբ ինձ վրա թափվեն, ես չպետք է հուսահատվեմ, այլ սպասեմ, հավատ գործադրեմ և պահպանեմ քաջությունս և վերջապես պիտի դուրս գամ այդ կույտի գագաթը»:[6]

Մենք պիտի հիշենք Պողոսի հայտարարությունը. «Ամեն բան կարող եմ ինձ զօրացնող Քրիստոսով»:[7] Սրա իմացությունը մեկ այլ թանկագին պարգև է Աստծուց:

Իմ նշած պարգևներից բացի, կան շատ այլպարգևներ: Այժմ ես կխոսեմ դրանցից ընդամենը մի քանիսի մասին՝ Հանգստության օրվա, հաղորդության, ուրիշներին ծառայելուն մեզ Փրկիչ տալու Աստծո անսահման պարգևի մասին:

Հանգստության օրվա զորությունը կայանում է նրանում, որ եկեղեցում և տանը վայելենք Սուրբ Հոգին զգալու հրճվանքը, ուրախությունը և ջերմությունը՝ առանց որևէ շեղող հանգամանքի առկայության:

Շատերը համարյա ապրում ենառցանց՝ իրենց խելացի սարքերով՝ էկրաններն են գիշեր-ցերեկ լուսավորումնրանց դեմքը, իսկ ականջակալները արգելափակում են Հոգու մեղմ, հանդարտ ձայնը: Եթե ժամանակ չգտնենք դրանք անջատելու համար, մենք զուցե կկորցնենք Նրա ձայնը լսելու հնարավորությունները «Դադարեցէք եւ ճանաչեցէք, որ ես եմ Աստուած»:[8] Այսպիսով, ոչ մի սխալ բան չկա, երբ օգտվում ենք Տիրոջ կողմից ոգեշնչված տեխնոլոգիաների առաջընթացից, բայց մենք պետք է իմաստուն կերպով օգտագործենք դրանք: Հիշեք Հանգստության օրվա պարգևը:

Հաղորդության ժողովի ժամանակ հաղորդությունը ստանալու օրհնությունը երբեք չպետք է սովորական գործողություն դառնա կամ պարզապես ինչ-որ բան, որ մենք անում ենք: Մի ամբողջ շաբաթվա ընթացքում ընդամենը 70 րոպե է, երբ կարող ենք դադար տալ և ավելի շատ խաղաղություն, ուրախություն և երջանկություն գտնել մեր կյանքում:

Հաղորդության ընդունումը և մեր ուխտերի նորոգումը մեր նշանն է Տիրոջը, որ մենք միշտ հիշում ենք Նրան: Նրա Քավությունը բարեգութ պարգև է Աստծուց:

Երկնային Հոր զավակներին ծառայելու արտոնությունը ւ ևս մեկ հնարավորություն է հետևել Նրա Սիրելի Որդու օրինակին՝ ծառայելով միմյանց:

Ծառայություն կատարելու որոշ հնարավորություններ պաշտոնական բնույթ ունեն՝ տանը, Եկեղեցու մեր կոչումներում և համայնքի ծառայողական կազմակերպություններում մեր մասնակցությունը:

Եկեղեցու անդամները, թե՛ տղամարդիկ, և թե՛ կանայք, չպիտի վարանեն, եթե ցանկանում են ընտրվել

կառավարական որևէ պաշտոնում, որտեղ էլնրանք ապրեն: Մեր ձայներն առանցքային դեր ունեն այսօր և կարևոր են մեր դպրոցներում, մեր քաղաքներում և մեր երկրներում: Որտեղ առկա է ժողովրդավարությունը, որպես անդամներ, մեր պարտքն է քվեարկել պատվարժան տղամարդկանց և կանանց համար, ովքեր ցանկանում են ծառայել:

Ծառայելու շատ հնարավորություններ ոչ պաշտոնական բնույթի են, առանց հանձնարարականի, և գալիս են, երբ մենք ձեռք ենք մեկնում ուրիշներին, ում հանդիպում ենք կյանքի ուղիներում: Հիշեք, Հիսուսն ուսուցանեց օրենսգետին, որ մենք պետք է սիրենք Աստծուն և մեր մերձավորին մեր անձի պես՝ օգտագործելով բարի սամարացուն որպես օրինակ:[9]

Ծառայությունը բացում է մի պատուհան, որի միջոցով մենք հասկանում ենք Քրիստոսի կյանքը և ծառայությունը: Նա եկավ ծառայելու, ինչպես ուսուցանում են սուրբ գրությունները. «Ինչպես մարդի Որդին չ'եկաւ որ իրան ծառայեն, այլ որ ինքը ծառայէ, եւ շատերի փոխանակ իր անձը փրկանք տայ»:[10]

Պողոսը թերևս տվել է Փրկիչի երկրային ծառայության լավագույն նկարագրությունը հինգ բառով, երբ դիմել է Հիսուսին որպես մեկը, «որ ման եկաւ բարի անելով»:[11]

Տեր Հիսուս Քրիստոսը Աստծո բոլոր պարգևներից ամենաթանկն է մեզ համար: Հիսուսն ասել է. «Ես եմ ճանապարհը եւ ճշմարտութիւնը եւ կեանքը. ոչ ոք չի գալիս Հօր մօտ, եթէ ոչ ինձանով»:[12]

Նեփին շեշտել է մեր Փրկիչի կարևոր դերը, երբ հայտարարել է. «Մենք խոսում ենք Քրիստոսի մասին, մենք հրճվում ենք Քրիստոսով, մենք քարոզում ենք Քրիստոսի մասին, մենք մարգարեանում ենք Քրստոսի մասին, և մենք գրում ենք մեր մարգարեությունների համաձայն, որ մեր զավակները կարողանան իմանալ, թե ինչ աղբյուրի նրանք կարող են ապավինել իրենց մեղքերի թողության համար»:[13] Քրիստոսը պիտի լինի մեր կյանքի կենտրոնը՝ բոլոր ժամանակներում և բոլոր տեղերում:

Մենք պիտի հիշենք, որ Նրա անունն է հայտնվում մեր երկրպագության վայրերում. մենք մկրտվում ենք Նրա անունով, և մենք հաստատվում, կարգվում, օժտվում և կնքում ենք մեր ամուսնությունը Նրա անունով: Մենք ճաշակում ենք հաղորդությունը և խոստանում մեզ վրա վերցնել Հիսուս Քրիստոսի անունը և դառնալ ճշմարիտ քրիստոնյաներ: Ի վերջո, հաղորդության աղոթքը հորդորում է մեզ «միշտ հիշել նրան»:[14]

Մինչ մենք պատրաստվում ենք վաղվա Զատիկի կիրակիին, եկեք հիշենք, որ Քրիստոսը գերագույն էակ է: Նա արդար Դատավորն է, մեր հավատարիմ Բարեխոսը, մեր օրինյալ Քավիչը, Բարի Հովիվը, խոստացված Մեսիան, ճշմարիտ Ընկերը և շատ ու շատ ավելին: Նա իսկապես շատ թանկագին պարգև է մեր Հորից մեզ համար:

Մեր աշակերտության մեջ մենք ունենք բազմաթիվ պահանջներ, մտահոգություններ եւ հանձնարարություններ: Այնուամենայնիվ, կան որոշ բաներ, որոնք միշտ պիտի լինեն Եկեղեցու մեր անդամության հիմքում: «Ուստի,- պատվիրում է Տերը,- եղիր հավատարիմ. կանգնիր այն պաշտոնում, որում նշանակել եմ քեզ. *սատարիր* թույլերին, *բարձրացրու* ընկած ձեռքերը և *բարձրացրու ամրացրու* տկար ծնկները»:[15]

Սա է Եկեղեցու գործը: Սա է անարատ կրոնը: Սա է ճշմարիտ

ավետարանը, երբ մենք սատարում, բարձրացնում և ամրացնում ենք նրանց, ովքեր ունեն հոգևոր և նյութական կարիքներ: Դա պահանջում է մեզանից այցելել և աջակցել նրանց,[16] որպեսզի նրանց վկայությունները և հավատքն առ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը և Նրա Քավությունը խարսխվեն նրանց սրտերում:

Թող Տերն օգնի և օրհնի մեզ փայփայել մեր բազում թանկագին պարգևները, որ ստանում ենք Աստծուց, ներառյալ՝ Իր վերականգնված Եկեղեցում մեր անդամությունը: Ես աղոթում եմ, որ մենք լցված լինենք սիրով մեր Երկնային Հոր զավակների հանդեպ և կարողանանք տեսնել նրանց կարիքները և ցանկություն ունենանք պատասխանել ավետարանի շուրջ նրանց ունեցած հարցերին և մտահոգություններին պարզ ու բարյացակամձևով, որը կմեծացնի հասկացողությունը և գնահատանքը միմյանց հանդեպ:

Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն է: Այն, ինչ մեզ կուսուցանվի այս գերագույն համաժողովի ընթացքում, տրվում է մեզ առաքյալների և մարգարեների, Բարձրագույն Իշխանավորների և քույր ղեկավարների ոգեշնչմամբ, ովքեր Եկեղեցու Բարձրագույն Պաշտոնյաներն են: Թող Տիրոջ ուրախությունը և խաղաղությունը մնա յուրաքանչյուրիս հետ, սա իմ խոնարհ աղոթքն է Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Encyclopedia of Mormonism* (1992), "Solemn Assemblies," 3:1390–91.
2. Տես Վարդապետություն և Ուխտեր 88.70:
3. Վարդապետություն և Ուխտեր 21.4–5:
4. Հովհաննես 20.21, շեղագրերն ավելացված են:
5. Մատթեոս 17.19:
6. George A. Smith, in *Teachings of Presidents of the Church: Joseph Smith* (2007), 235.
7. Փիլիպպեցիս 4.13:
8. Սաղմոս 46.10:
9. Տես Ղուկաս 10.25–37:
10. Մատթեոս 20.28:
11. Գործք 10.38:
12. Հովհաննես 14.6:
13. 2 Նեփի 25.26:
14. Վարդապետություն և Ուխտեր 20.77, 79:
15. Վարդապետություն և Ուխտեր 81.5, շեղագրումն ավելացված է:
16. Տես Հակոբոս 1.27:

Երեց Բրայըն Ք. Թեյլոր
Յոթանասունից

Արդյո՞ք զավակն եմ ես Աստծո

Ինչպե՞ս կարող է մեզանից յուրաքանչյուրը զգալ մեր աստվածային ինքնությունը հասկանալու զորությունը: Դա սկսվում է այն պահից, երբ ձգտում ենք ճանաչել Աստծուն՝ մեր Հորը:

Վերջերս ես եկեղեցի գնացի իմ անուշ մայրիկի հետ մեր հին քարե հավաքատանը: Գրավված փոքրիկների ձայներով, որոնք լսվում էին Երեխաների Միության նույն սենյակից, ուր ես հաճախում էի տասնամյակներ առաջ, ես մոտեցա և սկսեցի դիտել, թե ինչպես էին հոգատար ղեկավարներն ուսուցանում այս տարվա թեման՝ «Զավակն եմ ես Աստծո»:[1] Ես ժպտացի, երբ հիշեցի համբերատար ու սիրալիր ուսուցիչներին, ովքեր երգելու ժամանակ հաճախ նայում էին ինձ՝ նստարանի վերջում նստած անհնազանդ փոքրիկ տղային, և կարծես ասում. «Արդյո՞ք նա *իսկապես* Աստծո զավակն է: Եվ ո՞վ է նրան կյանք տվել»:[2]

Ես հրավիրում եմ մեզանից յուրաքանչյուրին բացել մեր սրտերը Սուրբ Հոգու առաջ, ով «վկայութիւն է տալիս մեր հոգուն հետ, որ մենք Աստուծոյ որդիք ենք»:[3]

Նախագահ Բոյդ Ք. Փաքերի խոսքերը պարզ են ու անգին. «Դուք Աստծո զավակն եք: Նա ձեր հոգու հայրն է: Հոգևոր առումով դուք ազնվածին եք՝ Երկնային Թագավորի ազգիցն եք: Ամրագրեք այդ ճշմարտությունը ձեր մտքում և կառչեք դրանից: Ինչևէ, ձեր մահկանացու ծագման շատ սերունդներ, անկախ այն բանից, թե ինչ ռասա կամ ժողովուրդ եք դուք ներկայացնում, ձեր հոգու հարուստ կենսագրությունը կարող է գրվել մեկ տողով: Դուք Աստծո զավակն եք»:[4]

«Երբ դուք . . . տեսնեք մեր Հորը,- նկարագրել է Բրիգամ Յանգը,- կտեսնեք մեկին, ում դուք վաղուց եք ճանաչում, և նա կընդունի ձեզ իր ձեռքերի մեջ և դուք պատրաստ կլինեք ընկնելու նրա գիրկը և համբուրելու նրան»:[5]

Մեծ պատերազմ աստվածային էության համար

Մովսեսն իմացավ իր աստվածային ժառանգության մասին՝ Տիրոջ հետ դեմ առ դեմ խոսելով: Այդ փորձառությունից հետո «Սատանան եկավ՝ նրան փորձելով» նրբանկատորեն, սակայն կատաղի մտադրությամբ, որպեսզի խեղաթյուրի Մովսեսի ինքնությունը և «ասաց. Մովսես, *մարդու որդի,* երկրպագիր ինձ: Եվ . . . Մովսեսը նայեց Սատանայի վրա և ասաց. Ո՞վ ես դու: Քանզի ահա, ես *Աստծո որդի եմ*»:[6]

Աստվածային էության վերաբերյալ մղվող մեծ պատերազմը գնալով ավելի կատաղի է դառնում, մինչ սատանայի արագ բազմացող զինանոցի նպատակն է կործանել մեր հավատը և գիտելիքը կապված Աստծո հետ մեր հարաբերությունների մասին: Բարեբախտաբար, ի սկզբանե մենք օրհնված ենք եղել մեր ինքնության վերաբերյալ պարզ տեսլականով և հասկացողությամբ. «Եւ Աստուած ասեց. Մեր պատկերովը եւ մեր նմանութեան պէս մարդ շինենք»,[7] և ապրող մարգարեները հայտարարում են. «Յուրաքանչյուր [մարդ արարած] երկնային ծնողների կողմից սիրված հոգևոր որդին կամ դուստրն է, և, որպես այդպիսին, յուրաքանչյուր ոք ունի աստվածային բնույթ և ճակատագիր»:[8]

Հաստատապես իմանալով այս ճշմարտությունները,[9] կկարողանանք հաղթահարել ամեն տեսակի փորձանքները, տագնապները և

չարչարանքները:[10] Երբ հարցրել են. «Ինչպե՞ս կարող ենք օգնել [անձնական մարտահրավեր] ունեցողներին», Տիրոջ Առաքյալը հրահանգել է. «Ուսուցանեք նրանց իրենց ինքնության և իրենց նպատակի մասին»:[11]

«Իմ ունեցած ամենազորեղ գիտելիքը»

Այս զորեղ ճշմարտությունները փոխեցին իմ ընկեր Ջենի կյանքը,[12] ով իր պատանեկության տարիներին լուրջ ավտովթարի պատճառ դարձավ: Թեև նա ստացել էր ֆիզիկական ծանր վնասվածքներ, սակայն նրան ավելի մեծ ցավ էր պատճառում մյուս վարորդի մահը: «Ինչ-որ մեկը կորցրեց իր մորը, և դա իմ մեղքով էր»,- ասել է նա: Ջենը, ով ընդամենը մի քանի օր առաջ կանգնում և անգիր ասում էր. «Մենք դուստրերն ենք մեր Երկնային Հոր, ով սիրում է մեզ»,[13] այժմ հարցնում էր. «Ինչպե՞ս Նա կարող է սիրել *ինձ*»:

«Ֆիզիկական տառապանքն անցավ,- ասում է նա, սակայն ես չէի մտածում, որ երբևէ կապաքինվեին իմ հուզական և հոգևոր վերքերը»:

Մի կերպ դրանով ապրելու համար Ջենն ավելի խորը թաքցրեց իր զգացմունքները՝ դառնալով մեկուսացած և թմրած: Մի տարի անց, երբ նա, վերջապես, ի վիճակի էր խոսել վթարի մասին, մի ոգեշնչված խորհրդատու հրավիրեց նրան գրել «Զավակն եմ ես Աստծո» արտահայտությունը և ասել այն օրը 10 անգամ:

«Բառերը գրելը հեշտ էր,- հիշում է նա,- սակայն ես չէի կարողանում ասել դրանք: . . . Դա շատ դժվար էր, և ես իրականում չէի էլ հավատում, որ Աստված կամենում էր ունենալ իմ նման զավակ: Ես կծկվում ու լաց էի լինում»:

Ամիսներ անց Ջենն ի վերջո կարողացավ անել դա ամեն օր: «Ես ամբողջությամբ դատարկեցիիմհոգին,- ասաց նա,- աղերսելով Աստծուն: . . . Ապա ես սկսեցի հավատալ այդ բառերին»: Այդ հավատը թույլ տվեց Փրկիչին սպեղանի դնել նրա վիրավոր հոգուն: Մորմոնի Գիրքը մխիթարություն և քաջություն բերեց Նրա Քավության միջոցով:[14]

«Քրիստոսը զգացել է իմ ցավերը, իմ վշտերը, իմ մեղքի զգացումը»,- ասում է Ջենը: «Ես զգացի Աստծո մաքուր սերը, և երբեք չեմ զգացել որևէ բան, որ այդքան զորեղ լիներ: Այն, որ ես Աստծո զավակն եմ, իմ ունեցած ամենազորեղ գիտելիքն է»:

Չգտենք ճանաչել Աստծուն՝ մեր Հորը

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, ինչպե՞ս կարող է մեզանից յուրաքանչյուրը զգալ մեր աստվածային ինքնությունը հասկանալու զորությունը: Դա սկսվում է այն պահից, երբ ձգտում ենք ճանաչել Աստծուն՝ մեր Հորը:[15] Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը վկայել է. «Ինչ-որ զորավոր բան է պատահում, երբ Աստծո որևէ զավակ ջանում է ավելին իմանալ Նրա և Նրա Սիրելի Որդու մասին»:[16]

Փրկչին ճանաչելն ու հետևելը օգնում է մեզ ճանաչել Հորը: «Լինելով . . . [Հոր] էութեան նկարագիրը»,[17] Հիսուսն ուսուցանել է. «Որդին իրանից կարող չէ ոչինչ անել, թէ որ չ'տեսնէ Հօրն անելիս»:[18] Քրիստոսի յուրաքանչյուր բառը և արարքը հայտնում է Աստծո ճշմարիտ էությունը և Նրա հետ մեր հարաբերությունը:[19] Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն ուսուցանել է. «Արյունահոսելով ամեն ծակոտիից և տանջալից աղաղակն Իր շուրթերին, Քրիստոսը փնտրում էր Նրան, ում միշտ փնտրել էր՝ Իր Հորը: «Ա՛բբա,- աղաղակեց Նա,- Հա՛յր»:[20]

Ինչպես Հիսուսն էր անկեղծորեն փնտրում Իր Հորը Գեթսեմանիում, այնպես էլ պատանի Ջոզեֆ Սմիթը 1820թ. աղոթքով փնտրում էր Աստծուն Սրբազան Պուրակում: «Եթե մեկը ձեզանից իմաստութեան պակասություն ունի, թող խնդրէ Աստուածանից»[21] տողերն ընթերցելուց հետո Ջոզեֆը գնաց աղոթելու:

«Ես ծնկի իջա,- ավելի ուշ գրել է նա,- և սկսեցի սրտիս ցանկությունները հայտնել Աստծուն: . . .

Իմ գլխավերևում ես տեսա . . . լույսի մի սյուն: . . .

. . . Ես տեսա երկու Անձնավորություն, ինձնից վեր՝ օդի մեջ կանգնած, որոնց պայծառությունն ու փառքն ամեն նկարագրությունից վեր էր: Նրանցից մեկը խոսեց ինձ հետ, դիմելով ինձ անունով, և ասաց՝ մատնացույց անելով մյուսին. [Զո՛զեֆ,] *Սա է Իմ Սիրելի Որդին: Լսի՛ր Նրան*»:[22]

Եթե մենք հետևենք Փրկիչի և Մարգարե Ջոզեֆ Սմիթի օրինակին, ջերմեռանդորեն փնտրելով Աստծուն, մենք կսկսենք հասկանալ ամենաիրական ձևով, ինչպես Ջենը, որ մեր Հայրը գիտի մեզ անունով, որ մենք Նրա զավակներն ենք:

Մայրե՛ր, հատկապես երիտասա՛րդ մայրեր, որ հաճախ ճնշվածություն եք զգում, մինչ փորձում եք մեծացնել «մեղքին դիմակայող սերունդ»,[23] երբեք մի՛ թերագնահատեք Աստծո ծրագրում ձեր ունեցած հիմնական դերը: Լարված պահերին, գուցե երբ դուք վազում եք փոքրիկների հետևից, և հանկարծ

խոհանոցից եկող վառածի հոտը ձեզ տեղեկացնում է, որ ձեր սիրով պատրաստված ընթրիքն այժմ ողջակեզի է վերածվել, իմացեք, որ Աստված սրբացնում է ձեր ամենաղժվար օրերը:[24] «Մի վախենար, որովհետեւ ես քեզ հետ եմ»,[25] կրկին անգամ խաղաղ հաստատում է Նա: Մենք պատվում ենք ձեզ, երբ դուք իրականացնում եք Քույր Ջոյ Դ. Ջոնսի հույսը, ով նշել է. «Մեր երեխաներն արժանի են, որ հասկանան իրենց աստվածային ինքնությունը»:[26]

Ես հրավիրում եմ մեզանից յուրաքանչյուրին փնտրել Աստծուն և Նրա Սիրելի Որդուն: «Ուրիշ ոչ մի տեղ,- ասել է Նախագահ Նելսոնը,- այդ ճշմարտությունները չեն ուսուցանվում այդքան հստակ ու զորեղ, որքան Մորմոնի Գրքում»:[27] Բացեք դրա էջերը և սովորեք, որ Աստված անում է «բոլոր բաները [մեր] բարօրության ու երջանկության համար»,[28] որ Նա «ողորմած է և գթառատ, դանդաղ բարկության մեջ, երկայնամիտ և բարությամբ լի»,[29] և որ «բոլորը նույնն են [Նրա] համար»:[30] Երբ դուք վիրավորված եք, մոլորված, վախեցած, վշտացած, տխուր, քաղցած կամ հուսահատորեն լքված կյանքի ծայրահեղ իրավիճակներում[31], բացեք Մորմոնի Գիրքը և դուք կսկսեք հասկանալ, որ «Աստված երբեք մեզ չի լքի: Նա երբեք դա չի արել, և չի անի: Նա չի կարող անել դա: [Այդպես վարվելը] Նրա բնավորությունը չէ»:[32]

Երբ սկսում ենք ճանաչել մեր Հորը, ամեն բան փոխվում է, հատկապես մեր սրտերը, մինչ Նրա մեղմ Հոգին հաստատում է մեր իրական ինքնությունը և մեծ արժեքը Նրա աչքում:[33] Աստված քայլում է մեզ հետ ուխտի արահետով, մինչ մենք փնտրում ենք Նրան աղոթքով, սուրբ գրություններն ուսումնասիրելով և հնազանդության ձգտումով:

Աստծո էության գնահատությունը. իմ վկայությունը

Ես սիրում եմ իմ հայրերի Աստծուն,[34] «Ամենազոր Տեր Աստծուն»,[35] ով արտասվում է մեզ հետ մեր վշտերի մեջ, համբերատար կերպով նախատում է մեզ անարդարության համար և ուրախանում է, երբ մենք ձգտում

ենք «հրաժարվել [մեր] բոլոր մեղքերից [Նրան] գիտենալու համար»:[36] Ես երկրպագում եմ Նրան, ով միշտ «որբերին հայր» է,[37] և ընկեր նրան, ով չունի ընկեր:Երախտագիտությամբ ես վկայում եմ, որ սկսել եմ ճանաչել Աստծուն՝ իմ Հորը, և վկայում եմ կատարելության, հատկանիշների և «[Նրա] բնավորության գերազանցության» մասին:[38]

Ես ջերմորեն աղոթում եմ, որ մեզանից յուրաքանչյուրը կարողանա իսկապես հասկանալ և գնահատել որպես Աստծո զավակ մեր «ազնվական ծագումը»,[39] սկսելով ճանաչել Նրան՝ «միայն ճշմարիտ Աստուած. Եւ նորան, որ [Նա] ուղարկեց՝ Յիսուսին Քրիստոսին»,[40] Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես *2018 Միացյալ Ժամի Ծրագիր. Զավակն եմ ես Աստծո,* lds.org/manual/primary:
2. Տես «Աստծո զավակն եմ», *Հիմներ և մանկական երգեր,* էջ 58:
3. Հռովմեացիս 8.16:
4. Բոյդ Ք. Փաքեր, «Երիտասարդ կանանց և Տղամարդկանց», *Ensign,* մայիս 1989, 54:
5. Brigham Young, "Discourse," *Deseret News,* Oct. 1, 1856, 235.
6. Մովսես 1.12–13, շեղագրումն ավելացված է:
7. Ծննդոց 1.26:
8. «Ընտանիք. հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* մայիս 2017, 145:
9. Ջոզեֆ Սմիթը նշել է. «Ավետարանի առաջին սկզբունքն է ճշգրիտ իմանալ Աստծո բնույթը» (Քինգ Ֆոլեթի քարոզից, ապրիլի 7, 1844թ., *Եկեղեցու պատմությունը,* 6.305):
10. Տես Ալմա 36.3, 27:
11. Russell M. Nelson, in Tad R. Callister, "Our Identity and Our Destiny" (Brigham Young University devotional, Aug. 14, 2012), speeches.byu.edu.
12. Անունը փոխվել է:
13. «Երիտասարդ կանանց թեմա», *Երիտասարդ կանանց անձնական զարգացում* (2009), 3, PersonalProgress.lds.org:
14. Տես 2 Նեփի 2, 6–9, Մոսիա 2–5, 14–16, Ալմա 7, 34, 39–42, Հելաման 14, 3 Նեփի 11, Մորոնի 7:
15. Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է. «Եթե մարդիկ չեն ըմբռնում Աստծո բնույթը, նրանք չեն հասկանա, թե ովքեր են իրենք» (*Եկեղեցու նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* [2007], 40):
16. Ռասսել Մ. Նելսոն. «Վկայություն Մորմոնի Գրքի մասին. Ինչի՞ նման կլինի ձեր կյանքն առանց նրա»: *Լիահոնա,* նոյեմբեր 2017, 61:
17. Եբրայեցիս 1.3:
18. Հովհաննես 5.19:
19. Տես Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Աստծո վեհությունը», *Լիահոնա,* նոյեմբեր 2003, 70–73:
20. Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Հայրերի ձեռքերը», *Լիահոնա,* հուլիս 1999, 19:
21. Հակոբոս 1.5:
22. Ջոզեֆ Սմիթ — Պատմություն 1.15–17:
23. Ռասսել Մ. Նելսոն, «Մեկ կարևոր խնդրանք իմ քույրերին», *Լիահոնա,* նոյեմբեր 2015, 97:
24. Տես «Աստծո սրբեր», *Հիմներ և մանկական երգեր,* հ. 6:
25. Եսայիա 41.10:
26. Joy D. Jones, in Marianne Holman Prescott, "2018 Primary Theme 'I Am a Child of God' Teaches Children Their Divine Identity," Church News section of LDS.org, Jan. 5, 2018, news.lds.org.
27. Ռասսել Մ. Նելսոն. «Մորմոնի Գիրքը. Ինչպիսի՞ նկլիներձեր կյանքն առանց նրա», 61:
28. Հելաման 12.2, տես նաև 2 Նեփի 26.24:
29. *Lectures on Faith* (1985), 42.
30. 2 Նեփի 26.33:
31. Ես սիրում եմ ձեր ռահվիրա տղամարդու հուզիչ պատմությունը, ով հարթավայրերն անցնելու փորձառությունից հետո վկայել է. «Մենք տառապեցինք շատ ավելի, քան դուք կարող եք պատկերացնել և շատերը մահացան ցրտից ու սովից, սակայն դուք երբևէ լսե՞լ եք, որ այդ խմբից վերապրած մեկը որևէ քննադատական խոսք ասեր: *Այդ խմբից ոչ ոք երբևէ ուխտաղրոժ չեղավ կամ չթողեց Եկեղեցին, քանի որ մեզանից յուրաքանչյուրը կատարյալ գիտեիք ձեռք բերեց այն մասին, որ Աստված ապրում է, քանի որ մենք սկսեցինք ճանաչել նրան մեր ծայրահեղ իրավիճակներում»* (David O. McKay, "Pioneer Women," *Relief Society Magazine,* Jan. 1948, 8):
32. George Q. Cannon, "Remarks," *Deseret Evening News,* Mar. 7, 1891, 4.
33. Տես Վարդապետություն և Ուխտեր 18.10:
34. Տես Գործք Առաքելոց 5.30, 22.14, "God of Our Fathers, Whose Almighty Hand," *Hymns,* no. 78:
35. Մովսես 1.3, տես Հայտնություն 15.3, 21.22-23, 3 Նեփի 4.32, Վարդապետություն և Ուխտեր 109.77, 121.4:
36. Ալմա 22.18:
37. Սաղմոս 68.5, տես նաև Հակոբոս 1.27:
38. *Lectures on Faith* (1985), 42.
39. "Carry On," *Hymns,* no. 255.
40. Հովհաննես 17.3:

Երեց Լարի Ջ. Էքո Հոք
Յոթանասունից

Ինչպէս Քրիստոսն էլ ձեզ ներեց, այնպէս էլ դուք

Մենք բոլորս կարող ենք ստանալ աննկարագրելի խաղաղություն և համագործակցել մեր Փրկիչի հետ, եթե սովորենք ի սրտե ներել նրանց, ովքեր հանցանք են գործել մեր դեմ։

«Բայց միաշաբաթի օրը առաւօտանց կանուխ եկան գերեզմանը, եւ բերին այն խնկերը, որ պատրաստեցին. Եւ ոմանք էլ նորանց հետ։

Եւ քարը գերեզմանիցը հեռու թաւալած գտան։

Երբոր ներս մտան, Տեր Հիսուսի մարմինը չգտան։

Եւ եղաւ երբոր նորա համար շատ հիացել էին, ահա երկու մարդ հասան նորանց լուսաւոր հանդերձներով։

Եւ երբոր նորանք ահով լցուեցան, եւ իրանց երեսները դէպի երկիր խոնարհեցրին, նորանց ասեցին. Ի՞նչ էք կենդանին մեռելների մէջ որոնում։

Այստեղ չէ, այլ հարություն առավ»։[1]

Վաղը՝ Զատիկի կիրակի օրը, մենք առանձնահատուկ ձևով հիշելու ենք, թե ինչ է Հիսուս Քրիստոսն արել մեզ համար. «Որովհետեւ Աստուած այնպէս սիրեց աշխարհքը որ իր միածին Որդին տուաւ. որ ամեն նորան հաւատացողը չկորչի այլ յաւիտենական կեանքն ունենայ»։[2] Ի վերջո, մենք հարություն կառնենք, ինչպես Նա հարություն առավ, որպեսզի ապրենք հավերժ։

Հիսուս Քրիստոսի սուրբ Քավության հրաշքի միջոցով մենք նույնպես կարող ենք ստանալ մեր մեղքերի և սխալ արարքների ներման պարգևը, եթե ընդունենք ապաշխարության հնարավորությունը և պատասխանատվությունը։Եվ ստանալով անհրաժեշտ արարողությունները, պահելով ուխտերը և հնազանդվելով

պատվիրաններին, մենք կարող ենք ստանալ հավերժական կյանք ու վեհացում։

Այսօր ես ուզում եմ կենտրոնանալ ներման վրա՝ կարևոր և թանկարժեք պարգևի, որն առաջարկվել է մեզ մեր Փրկիչ ու Քավիչ Հիսուս Քրիստոսի կողմից։

1982 թվականին, դեկտեմբերյան մի գիշեր Պոկատելոյում (Այդահո) մեր տանը մի հեռախոսազանգ արթնացրեց կնոջս՝ Թերիին և ինձ։ Լսափողից միայն լացի ձայն էրլսվում։ Վերջապես քույրս, իրեն հաղթահարելով, ասաց. «Թոմին չկա»։

Ալկոհոլի ազդեցության տակ20-ամյավարորդը, ավելի քան 135 կմ/ժամ արագությամբ վարելով, Դենվերի (Կոլորադո) արվարձաններում անսպասելիորեն անցել էր կարմիր լույսի տակ։ Նա ուժգին հարվածել է մեքենային, որը վարում էր իմ կրտսեր եղբայր Թոմին, ինչի արդյունքում նա և նրա կինը՝ Ջոանը, տեղում մահացել են։ Նրանք Սուրբ Ծննդյան երեկույթից վերադառնում էին տուն՝ իրենց փոքր դստեր մոտ։

Ես և կինս անմիջապես օդանավով մեկնեցինք Դենվեր՝ թաղմանը մասնակցելու։ Բոլորս հավաքվել էինք՝ ծնողներով, քույրերով և եղբայրներով, և կիսում էինք մեր սիրելի Թոմիի և Ջոանի կորստի ցավը։ Մենք կորցրինք նրանց անիմաստ հանցագործության արդյունքում։ Մեր սրտերը կոտրված էին, իսկ իմ ներսում սկսում էր բորբոքվել երիտասարդ հանցագործի հանդեպ զայրույթը։

Թոմին իրավաբան էր աշխատում ԱՄՆ-ի Արդարադատության դեպարտամենտում և պատրաստվում էր մի քանի տարի անց հզոր դատապաշտպան դառնալ բնիկ ամերիկացիների հողերի և բնական ռեսուրսների պաշտպանության գործերով։

Որոշ ժամանակ անց կայացվեց դատական որոշումը և երիտասարդ տղամարդը դատապարտվեց որպես ավտովթարի առաջացման և դրա հետևանով մարդու մահվան մեղավոր։ Դադար չունեցող վշտի ու ցավի մեջ՝ ծնողներս և ավագ քույրս՝ Քեթին, ներկա եղան դատավճռի հայտարարության օրը։ Ալկոհոլ

ընդունած վարորդի ծնողները նույնպես ներկա էին, և դատական նիստից հետո նստեցին նստարանին և լաց եղան: Ծնողներս և քույրս մոտ էին նստած, փորձելով տիրապետել իրենց զգացմունքները: Մեկ րոպե անց ծնողներս և քույրս վեր կացան, մոտեցան վարորդի ծնողներին և սփոփանքի ու ներման խոսքեր ասացին նրանց: Տղամարդիկ սեղմեցին միմյանց ձեռքերը, կանայք բռնեցին միմյանց ձեռքերը, խորը վիշտ էր տիրում, արցունքներ էին թափվում. երկու ընտանիքները մեծ տառապանքներ էին տարել: Մայրս, հայրս և Քեթին ցուցաբերեցին քաջություն և լռելու ուժ, ցույց տվեցին մեր ընտանիքին, թե ինչ է իսկական ներումը:

Ներման այդ դրսևորումը փափկացրեց իմ սիրտը և բացեց ապաքինման ուղին: Ժամանակի ընթացքում ես սովորեցի, ինչպես կարելի է ներող սիրտ ունենալ: Միայն Խաղաղության Իշխանի օգնությամբ թեթևացավ իմ ցավալի բեռը: Իմ սիրտը միշտ կկարոտի Թոմիին և Ջոանին, բայց ներումը թույլ է տալիս ինձ այսօր հիշել նրանց անսահմանափակ ուրախությամբ:Եվ ես գիտեմ, որ մենք կրկին միասին կլինենք ընտանիքով:

Ես չեմ առաջարկում, որ մենք խրախուսենք անօրինական վարքագիծը: Մենք շատ լավ գիտենք, որ մարդիկ պետք է պատասխանատվություն կրեն հանցավոր գործողությունների և քաղաքացիական անհնազանդության հետևանքով: Բայց մենք նաև գիտենք, որ որպես Աստծո որդիներ և դուստրեր, մենք հետևում ենք Հիսուս Քրիստոսի ուսմունքներին: Մենք պետք է ներող լինենք, անգամ այն դեպքում, երբ ուրիշների համար մեր ներումը պատշաճ է:

Փրկիչն ուսուցանել է.

«Որովհետև եթե դուք մարդկանց իրանց յանցանքները թողէք, ձեր երկնաւոր Հայրն էլ ձեզ կթողէ:

Իսկ եթե դուքմարդկանց չէք թողիլ նորանց յանցանքները, ձեր Հայրն էլ չի թողիլ ձեր յանցանքները»:[3]

Մենք բոլորս կարող ենք ստանալ աննկարագրելի խաղաղություն և համագործակցել մեր Փրկիչի հետ, եթե սովորենք ի սրտե ներել նրանց, ովքեր հանցանք են գործել մեր դեմ:

Այդ համագործակցությունը մեր կյանք է բերում Փրկիչի զորությունը այնպիսի ձևով, որը հնարավոր չէ շփոթել և երբևէ մոռանալ:

Պողոս Առաքյալը հորդորել է.

«Ուրեմն հագէք՝ ինչպէս Աստուծոյ ընտրուածներ՝ . . . ողորմասիրտ գթածութիւն, քաղցրութիւն, խոնարհութիւն, հեզութիւն, երկայնմտութիւն:

Իրար համբերելով, եւ իրար ներելով, . . . ինչպէս Քրիստոսն էլ ձեզ ներեց, այնպէս էլ դուք»:[4]

Տերն Ինքն է հայտարարել.

«Ուստի, ես ասում եմ ձեզ, որ դուք պետք է ներեք միմյանց. քանզի, ով իր եղբորը չի ներում նրա զանցանքները, դատապարտված կանգնած է Տիրոջ առաջ. քանզի նրա մեջ ավելի մեծ մեղք է մնում:

Ես՝ Տերս, կներեմ, ում որ կներեմ, բայց ձեզանից պահանջվում է ներել բոլոր մարդկանց»:[5]

Մեր Փրկիչի ու Քավիչի ուսմունքները հստակ են. մեղավորը պետք է պատրաստ լինի ներել մյուսներին, եթե ուզում է ինքը ներումստանալ:[6]

Եղբայրներ և քույրեր, կա՞ն մեր կյանքում մարդիկ, որոնք վնասել են մեզ: Արդյո՞ք մենք մեր մեջ պահում ենք մերժման և զայրույթի լիովին արդարացված զգացմունքներ: Արդյո՞ք մենք թույլ ենք տալիս, որ հպարտությունը չթողնի մեզ ներել և մոռանալ: Ես հրավիրում եմ բոլորիս ամբողջովին ներել և թույլ տալ, որ ապաքինումը գործի մեր ներսից: Եվ եթե անգամ ներումը հնարավոր չէ այսօր, իմացեք, որ եթե մենք ցանկանում ենք և աշխատում այդ ուղղությամբ, այն կգա, ինչպես եկավ, ի վերջո, ինձ համար եղբորս մահից հետո:

Խնդրում եմ նաև հիշել, որ ներման մեջ կարևոր դեր է խաղում ինքներս մեզ ներելը:

«Ահա, ով որ ապաշխարել է իր մեղքերից, ասել է Տերը,- նա ներվում է, և ես՝ Տերս, այլևս չեմ հիշում դրանք»:[7]

Ես աղերսում եմ, որ բոլորս այս օրը հիշենք և հետևենք Հիսուս Քրիստոսի օրինակին: Գողգոթայի խաչին գամված, տառապանքների մեջ, Նա արտասանեց այս խոսքերը. «Հայր, թողիր դորանց. որովհետեւ չգիտեն թե ինչ են անում»:[8]

Ունենալով ներող հոգի և գործելով ըստ դրա, ինչպես գործեցին ծնողներս և ավագ քույրս, մենք կարող ենք ըմբռնել Փրկիչի խոստումը.«Խաղաղություն եմ թողում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. ոչ թե ինչպես աշխարհքն է տալիս՝ ես տալիս եմ ձեզ. Ոչ թէ ինչպէս աշխարհքն է տալիս՝ ես տալիս եմ ձեզ. ձեր սիրտը չխռովի եւ չվախենայ»:[9]

Ես վկայում եմ, որ խաղաղությունը կմտնի մեր կյանք, եթե մենք ականջ դնենք Հիսուս Քրիստոսի ուսմունքներին և հետևենք Նրա օրինակին՝ ներելով մյուսներին: Երբ մենք ներենք, ես խոստանում եմ, որ Փրկիչը կամրացնի մեզ, և Նրա զորությունն ու ուրախությունը կհորդեն մեր կյանք:

Գերեզմանը դատարկ է: Քրիստոսն ապրում է: Ես ճանաչում եմ Նրան: Ես սիրում եմ Նրան: Ես երախտապարտ եմ Նրա շնորհի համար, որն ամրացնող զորություն է՝ բավարար բուժելու ամեն ինչ: Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ղուկաս 24.1–6:
2. Հովհաննես 3.16:
3. Մատթեոս 6.14–15:
4. Կողոսացիս 3.12–13, շղագրումն ավելացված է:
5. Վարդապետություն և Ուխտեր 64.9–10:
6. Տես James E. Talmage, *The Articles of Faith*, 12th ed. (1924), 110:
7. Վարդապետություն և Ուխտեր 58.42:
8. Ղուկաս 23.34:
9. Հովհաննես 14.27:

Երեց Գարի Ի. Սթիվենսոն
Տասներկու Առաքյալների Քվորումից

Մարգարեի սիրտը

Մենք կարող ենք ուրախանալ, որ Տիրոջ մարգարեն նշանակված է, և Տիրոջ գործը կատարվում է այն ձևով, ինչպես Նա է աստվածայնորեն պատվիրել։

Ես ջերմեռանդ աղոթել եմ, որ այս աստվածային իրադարձության ժամանակ Սուրբ Հոգին յուրաքանչյուրիս հետ լինի։ Այն, ինչին միասին ականատես եղանք, շատ տպավորիչ էր, երբ հանդիսավոր ժողովում հաստատվեց ավետարանի արդի տնտեսության 17-րդ մարգարեն։

Երբ ձգտում էի առաջնորդություն փնտրել, թե Տերն ինչ թեմայի մասին կցանկանար, որ խոսեի, միտքս ուղղվեց դեպի նոր կանչված Առաջին Նախագահության հետ վերջերս ունեցած մի զրույցը։ Այդ զրույցի ընթացքում խորհրդականներից մեկը նմանատիպ մի խոսք ասաց. «Ես խորապես հույս եմ տածում, որ Եկեղեցու անդամները կկարողանան հասկանալ, թե ինչ փառահեղ իրադարձություն է տեղի ունեցել նոր մարգարեի՝ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի կանչով, ինչ նշանակություն ու սրբազան բնույթ ունի այն հանդիսավոր ժողովը, որը տեղի կունենա գերագույն համաժողովի ժամանակ»։ Նա նկատեց, որ «վերջին նման իրադարձությունից10 տարի է անցել և շատերը՝ հատկապես Եկեղեցու երիտասարդությունը, նման փորձառություն չեն ունեցել կամ չեն հիշում»։

Այդ խոսքերը իմ ունեցած փորձառությունների մասին մտածելու առիթ տվեցին։ Առաջին մարգարեն, որին հիշում եմ, Նախագահ Դեյվիդ Օ Մակքեյն էր։ Ես 14 տարեկան էի, երբ նա մահացավ։ Հիշում եմ նրա մահվան հետ կապված կորստյան զգացումը, մայրիկիս աչքերի արցունքները և թախիծը, որ զգում էր մեր ողջ ընտանիքը։ Հիշում եմ, թե ինչպես էր աղոթքներում շուրթերիցս դուրս գալիս «խնդրում եմ օրհնել

Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյին» խոսքերը այնքան բնական, որ եթե ուշադիր չէի աղոթում, անգամ նրա մահից հետո, զգում էի, որ կրկնում եմ այդ նույն խոսքերը։ Ես համոզված չէի, որ սրտումս ու մտքումս նույն զգացումն ու համոզմունքը կունենայի հաջորդող մարգարեների հանդեպ։ Բայց գրեթե այնպես, ինչպես ծնողներն են սիրում յուրաքանչյուր հաջորդ երեխային, ես սեր ու կապվածություն զգացի և վկայություն ստացա Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի մասին, ով հաջորդեց նախագահ Մակքեյին, և նույն զգացումներն ունեցա յուրաքանչյուր հաջորդ մարգարեի՝ Հարոլդ Բ. Լիի, Սպենսեր Վ. Քիմբալի, Էզրա Թաֆթ Բենսոնի, Հովարդ Վ. Հանթերի, Գորդոն Բ. Հինքլիի, Թոմաս Ս. Մոնսոնի և այսօր՝ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հանդեպ։ Ես լիովին հաստատել եմ յուրաքանչյուր մարգարեին՝ բարձրացնելով թե՛ իմ ձեռքը, և թե՛ իմ սիրտը։

Մեր սիրելի մարգարեներից յուրաքանչյուրի մահից հետո թախիծի ու կորստի զգացում ապրելը բնական երևույթ է։ Բայց մեր տխրությանը մեղմանում է ուրախությամբ ու հույսով, որ գալիս է, երբ մենք ականատես ենք լինում Վերականգնման մեծ օրհնություններից մեկին՝ երկրի վրա ապրող մարգարեի կոչմանն ու հաստատմանը։

Այդ նպատակով ես կխոսեմ այս աստվածային գործընթացի մասին, որին ականատես ենք եղել վերջին 90 օրերի ընթացքում։ Ես կնկարագրեմ այն չորս մասով. նախ՝ մեր մարգարեի մահը և Առաջին նախագահության լուծարումը, երկրորդ՝ նոր Առաջին նախագահության վերակազմավորման նախորդող ժամանակահատվածը, երրորդ՝ նոր մարգարեի կանչը, և չորրորդ՝ նոր մարգարեի և Առաջին Նախագահության հաստատումը հանդիսավոր ժողովում։

Մարգարեի մահը

2018թ. հունվարի 2-ին մեր սիրելի մարգարե Թոմաս Ս. Մոնսոնը անցավ վարագույրի մյուս կողմը։ Նա հավիտյան տեղ կունենա մեր սրտերում։ Նախագահ Հենրի Բ. Այրինգը

Նախագահ Մոնսոնի հիշատակին խոսքեր ասաց, որոնք հստակ նկարագրվում են նրա նկատմամբ մեր զգացմունքները. «Փրկիչի նման նրա կյանքիառանձնահատկությունը կլինի իր անհատական մտահոգությունը աղքատների, հիվանդների, անգամ ողջ աշխարհի բոլոր անհատների մասին»:[1]

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը բացատրել է.

«Ինչպես որ մի աստղ թաքնվում է հորիզոնում և տեղ տալիս մեկ ուրիշին, այնպես էլ մահը կյանք է սերում:

Տիրոջ աշխատանքն անվերջ է: Նույնիսկ, երբ հզոր մի առաջնորդ է մահանում, Եկեղեցին ոչ մի ակնթարթ չի մնում առանց առաջնորդության Նախախնամության բարի ձեռքով, որ տվել է իր թագավորությանը շարունակականություն ու մշտնջենականություն: Ինչպես արդեն տեղի է ունեցել . . . մինչ այժմ ավետարանի արդի տնտեսության ժամանակ, մարդիկ ակնածանքով ծածկում են զերեզմանը, սրբում են արցունքները և իրենց հայացքն ուղղում են դեպի ապագան»:[2]

Առաքելական միջնիշխանություն

Մարգարեի մահվան և Առաջին Նախագահության վերակազմավորման միջև ժամանակաշրջանը համարվում է «առաքելական միջնիշխանություն»: Այդ ժամանակաշրջանի ընթացքում Տասներկուսի Քվորումը, քվորումի նախագահի ղեկավարության ներքո, միասնաբար կրում է Եկեղեցու առաջնորդության բանալիները: Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն ուսուցանել է. «Եկեղեցին միշտ ունի ղեկավարություն, իսկ եթե Եկեղեցու Նախագահության անդամները հեռանում են մահվան կամ այլ պատճառով, ապա Եկեղեցու հաջորդ ղեկավար մարմինը Տասներկու Առաքյալներն են, մինչև կրկին կկազմավորվի նախագահություն»:[3]

Միջնիշխանության վերջին ժամանակաշրջանը սկսվեց Նախագահ Մոնսոնի մահից հետո՝ 2018թ. հունվարի 2-ին և ավարտվեց 12 օր անց՝ հունվարի 14-ի կիրակի օրը: Հանգստության օրվա այդ առավոտյան Տասներկուսի Քվորումը հավաքվեց Սոլթ Լեյքի տաճարի վերնահարկում, ծոմապահությամբ ու աղոթքով՝ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի՝ Տասներկուսի քվորումի նախագահի և ավագ Առաքյալի նախագահության ներքո:

Նոր Մարգարեի կոչումը

Այդ սրբազան և հիշարժան հանդիպման ժամանակ, ըստ ավագության՝ 13 աթոռներով կիսաշրջան կազմած, լավագույնս հաստատված նախադեպ ունենալով, միաբան և միաձայն, Եղբայրները բարձրացրին ձեռքերը, առաջին հերթին՝ հաստատելով Առաջին Նախագահության կազմավորումը, այնուհետև, աջակցելով Նախագահ Ռասսել Մերիոն Նելսոնին՝ որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ: Այդ հաստատումից հետո Տասներկուսի Քվորումը շրջան կազմեց ու ձեռնադրեց Նախագահ Նելսոնին, և հաջորդ ավագ Առաքյալի ձայնով, նա կարգվեց ու ի սպաս դրվեց ծառայության:

Այնուհետև, Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հայտնեց իր խորհրդականների՝ Նախագահ Դալլին Հարրիս Օուքսի, Նախագահ Հենրի Բենյոն Այրինգիանունները, Նախագահ Օուքսը որպես Տասներկու Առաքյալների Քվորումի նախագահ և Նախագահ Մելվին Ռասսել Բալարդը որպես Տասներկու Առաքյալների Քվորումի գործող նախագահ: Նմանատիպ հաստատման քվեից հետո այդ եղբայրներից յուրաքանչյուրը Նախագահ Նելսոնի կողմից ի սպաս դրվեց իր համապատասխան պաշտոնում: Այդ ամենը խորապես սրբազան փորձառություն էր՝ Հոգու առատ դրսևորմամբ: Ես ձեզ բերում եմ իմ բացարձակ վկայությունը, որ այդ օրվա գործերում և իրադարձություններում զորավոր կերպով դրսևորվեց

Տիրոջ կամքը, որի համար մենք ջերմեռանդ աղոթում էինք:

Նախագահ Նելսոնի կարգումովու Առաջին Նախագահության վերակազմավորումով ավարտվեց առաքելական միջնիշխանությունը, և նոր կազմված Առաջին Նախագահությունը սկսեց գործել, որի արդյունքում երկրի վրա Տիրոջ թագավորության կառավարումը մեկ վայրկյան անգամ չընդհատվեց, ինչը նշանակալի է:

Հանդիսավոր ժողով

Այսօր առավոտյան աստվածային գործընթացը հասավ իր կիզակետին՝ ըստ սուրբ գրությունների հանձնարարության, որ ուրվագծված է Վարդապետություն և Ուխտերում. «Քանզի բոլոր բաները եկեղեցում պետք է կատարվեն կարգով, ընդհանուր համաձայնությամբ՝ հավատքի աղոթքով»[4] և «Մելքիսեդեկյան Քահանայությունից երեք Նախագահող Քահանայապետ . . . աջակցվելով եկեղեցու վստահությամբ, հավատքով ու աղոթքով, կազմում են Եկեղեցու Նախագահության քվորումը»:[5]

Երեց Դեյվիդ Բ. Հեյթը նկարագրել է վերջին հանդիսավոր ժողովը, որը նման էրժողովին, որին այսօր մասնակցեցինք:

«Մենք ականատես եղանք և մասնակցեցինք մի սրբազան իրադարձության՝ աստվածային գործեր կատարելու հանդիսավոր մի ժողովի: Ինչպես հին ժամանակներում, աշխարհով մեկ Սրբերը շատ ծոմ են պահել ու աղոթել, որ կարողանան տեսնել Տիրոջ Հոգու դրսևորումները, ինչի ականատեսը մենք եղանք . . . առավոտյան իրադարձությանը:

Հանդիսավոր ժողովը, ինչպես ենթադրում է անունը, նշանակում է սուրբ, հանդիսավոր և ակնածալից մի իրադարձություն, երբ Սրբերը ժողովվում են Առաջին Նախագահության ղեկավարության ներքո»:[6]

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, մենք կարող ենք ուրախանալ, նույնիսկ «Օվսա՜ննա» բացականչել, որ Տիրոջ խոսնակը՝ Աստծո մարգարեն, նշանակված է, կՏիրոջը հաճելի է, որ Նրա գործը կատարվում է այն ձևով, ինչպես Նա է աստվածայնորեն պատվիրել:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

Այդ աստվածային գործընթացի արդյունքում ունենք աստվածային կարգով կանչված ևս մեկ մարգարե: Ճիշտ՝ ինչպես Նախագահ Մոնսոնը, Նախագահ Նելսոնը ևս այս երկրի փառահեղ բնակիչներից մեկն է: Տերը նրան խորապես նախապատրաստել և առանձնահատուկ ձևով դաստիարակել է, որպեսզի առաջնորդի մեզ այս ժամանակաշրջանում: Մեծ օրհնություն է մեզ համար ունենալ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնին որպես սիրեցյալ և նվիրյալ մեր նախագահ՝ Եկեղեցու 17-րդ նախագահը ավետարանի այս վերջին տնտեսության ժամանակ:

Նախագահ Նելսոնը իրապես ականավոր մարդ է: Տասներկուսի Քվորումում ես հնարավորություն եմ ունեցել երկու տարուց ավել ծառայել նրա հետ որպես իմ քվորումի նախագահ: Ես ճամփորդել եմ նրա հետ և զարմացել նրա եռանդով, քանի որ մարդ պետք է արագ շարժվի, որ հասցնի քայլել նրա հետ: Իր կյանքի ընթացքում, ընդհանուր առմամբ, նա այցելել է 133 երկիր:

Նա հասնում է բոլորին՝ թե՛ երիտասարդներին, և թե՛ մեծահասակներին: Նա կարծես բոլորին ճանաչում է և անուններ հիշելու առանձնահատուկ պարգև ունի: Նրան ճանաչող յուրաքանչյուր մարդ զգում է, որ նրա լավագույն ընկերն է: Եվ դա ճիշտ է բոլորի համար, քանի որ նա անկեղծ

սեր և ուշադրություն է դրսևորում բոլորիս հանդեպ:

Նախագահ Նելսոնի հետ իմ ընկերակցությունը եղել է եկեղեցական պարտականություններում, սակայն ես ծանոթացել եմ նաև նախագահ Նելսոնի մասնագիտական կյանքին, որը նա անցել է նախքան Բարձրագույն Իշխանավոր կանչվելը: Շատերդ գիտեք, որ Նախագահ Նելսոնը համաշխարհային ճանաչում ունեցող սրտի վիրաբույժ է եղել և, իր բժշկական կարիերայի վաղ շրջանում, սրտի ու թոքերի աշխատանքը փոխարինող սարքի առաջատար մշակողներից էր: Նա աշխատում էր գիտահետազոտական թիմում, որը 1951 թվականին կատարեց սրտի առաջին բաց վիրահատությունը մարդուն սրտանոթային շրջանցման մեքենայի գործարկմամբ: Նախագահ Նելսոնը վիրահատել է Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի սիրտը նրա մարգարե դառնալուց ոչ շատ առաջ:

Հետաքրքիր է, որ երբ 34 տարի առաջ Տասներկուսի անդամ կանչվելով վերջ դրվեց սրտերի բուժման ու վերականգնման Նախագահ Նելսոնի *մասնագիտական բժշկական կարիերային*, միաժամանակ սկիզբը դաձավ ողջ կյանքումշարունակվող *եկեղեցական* ծառայությանը, որը նվիրված է տասնյակ հազարավոր մարդկանց սրտերի բուժմանն ու վերականգնմանը, որոնք վերականգնվել ու բժշկվել են նրա իմաստության, ծառայության և սիրո խոսքերով ու գործերով:

Քրիստոսանման սիրտ

Մտածելով ամենօրյա գործերում Քրիստոսանման սրտի դրսևորման մասին՝ ես տեսնում եմ Նախագահ Նելսոնին: Ես չեմ հանդիպել այդ հատկանիշի ավելի բարձր դրսևորման, քան Նախագահ Նելսոնի մոտ է: Նախագահ Նելսոնի Քրիստոսանման սրտի դրսևորումը նկատելու հնարավորությունը ինձ համար ուշագրավ դաս է եղել:

2015թ. հոկտեմբերին, Տասներկուսի անդամ կանչվելուց շաբաթներ անց, ես հնարավորություն ունեցա ավելի մոտիկից ծանոթանալ նախագահ

Նելսոնի մասնագիտական կյանքին: Ինձ հրավիրել էին մասնակցել մի միջոցառման, որտեղ նրան հարգանքի տուրք էին մատուցում՝ որպես սրտի վիրահատության նորարարներից մեկին: Երբ ներս մտա հանդիպման վայր, ես զարմացա, տեսնելով, թե որքան շատ մասնագետներ էին եկել հարգանքի տուրք մատուցելու Նախագահ Նելսոնին այն աշխատանքի համար, որ նա կատարել էր տարիներ առաջ:

Այդ երեկո բազմաթիվ մասնագետներ կանգնեցին և իրենց հարգանքն ու հիացմունքն արտահայտեցին նախագահ Նելսոնի՝ բժշկության մեջ ունեցած ակնառու ավանդի համար: Որքան էլ տպավորիչ էին ներկաներից յուրաքանչյուրի նկարագրությունը, Նախագահ Նելսոնի տարբեր ձեռքբերումների մասին, ինձ ամենից շատ տպավորեց այն զրույցը, որ ունեցա իմ կողքին նստած մի մարդու հետ: Նա չգիտեր, թե ով եմ ես, բայց ճանաչում էր Նախագահ Նելսոնին 1955 թվականից՝ որպես դոկտոր Նելսոն՝ համալսարանի կրծքավանդակի վիրաբուժության ամբիոնի կլինիկական օրդինատուրայի ծրագրի ղեկավար:

Այդ մարդը եղել էր նախագահ Նելսոնի ուսանողը: Նա կիսվեց բազմաթիվ հիշողություններով: Ամենահետաքրքիրը նախագահ Նելսոնի դասավանդման ոճի նկարագիրն էր, ինչը, նրա խոսքերով, մեծ հեղինակության էր արժանացել: Նա բացատրեց, որ սրտանոթային վիրաբուժության օրդինատորների ուսուցման մեծ մասը անցնում էր վիրահատական սենյակում: Այնտեղ՝ որպես լաբորատոր դասարան, օրդինատորները դիտում և վիրաբույժների հսկողության ներքո վիրահատություններ էին անում: Նա պատմեց, որ ամբիոնի որոշ վիրաբույժների ներկայությամբ վիրահատական սենյակի միջավայրը քառսային էր, մրցակցական, ճնշող և անգամ դժկամ: Այդ մարդը նկարագրում էր այն որպես ճնշող, երբեմն նույնիսկ ստորացնող միջավայր: Արդյունքում օրդինատոր վիրաբույժներին հաճախ թվում էր, թե իրենց կարիերան վտանգի տակ է:

Այնուհետև նա նկարագրեց նախագահ Նելսոնի վիրահատական սենյակում տիրող եզակի միջավայրը: Այնտեղ խաղաղ, հանգիստ ու արժանապատիվ մթնոլորտ էր: Օրդինատորներին վերաբերվում էին խորը հարգանքով: Սակայն գործի ընթացքը ցուցադրելուց հետո դոկտոր Նելսոնը ակնկալում էր, որ յուրաքանչյուր օրդինատոր ամենաբարձր մակարդակով կկատարի իր աշխատանքը: Շարունակելով՝ տղամարդը նկարագրեց, թե ինչպես էին դոկտոր Նելսոնի վիրահատական սենյակից դուրս գալիս լավագույն արդյունքներ ստացած հիվանդները և լավագույն վիրաբույժները:

Դա ամենևին չի զարմացնում ինձ: Սա այն է, ինչին անձամբ ականատես եմ եղել ու ճշմարտապես օրհնվել եմ Տասներկուսի Քվորումում: Ինչ-որ իմաստով, ես ինձ զգացել եմ նրա «օրդինատոր ուսանողների» թվում:

Նախագահ Նելսոնը դրական, հարգալից և ոգևորիչ ձևով մարդկանց ուսուցանելու, ուղղելու բացառիկ պարգև ունի: Նա Քրիստոսանման սրտի մարմնավորում և օրինակ է բոլորիս համար: Նրանից մենք սովորում ենք, որ ինչպիսի հանգամանքներում էլ հայտնվենք, մեր վարքն ու սիրտը կարող ենք համահունչ պահել Հիսուս Քրիստոսի ավետարանի սկզբունքներին:

Այժմ մենք օրհնություն ունենք աջակից լինել մեր մարգարե Նախագահ Ռասսել Մ. Նելսոնին: Իր կյանքի ընթացքում նա մեծարել է իր ունեցած բազաթիվ դերերը՝ որպես ուսանող, հայր, դասախոս, ամուսին, բժիշկ, քահանայության առաջնորդ, պապ և Առաքյալ: Նա կատարել է այդ դերերը նախկինում և շարունակում է կատարել հիմա՝ ունենալով մարգարեի սիրտ:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, այսօրվա հանդիսավոր ժողովին, որին ականատես և մասնակից ենք, ես ավելացնում եմ իմ վկայությունը, որ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը Տիրոջ ապրող խոսնակն է ողջ մարդկության համար: Ես ավելացնում եմ նաև իմ վկայությունը Հայր Աստծո մասին, Հիսուս Քրիստոսի և որպես մեր Փրկիչ ու Քավիչ նրա դերի մասին: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Henry B. Eyring, in Marianne Holman Prescott, “Apostles Share Thoughts about President Thomas S. Monson on Social Media,” Church News section of LDS.org, Jan. 12, 2018, news.lds.org.
2. Spencer W. Kimball, in Conference Report, Apr. 1970, 118.
3. *Եկեղեցու նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Ֆ. Սմիթ* (1998), էջ 237:
4. Վարդապետություն և Ուխտեր 28.13:
5. Վարդապետություն և Ուխտեր 107.22:
6. David B. Haight, “Solemn Assemblies,” *Ensign,* Nov. 1994, 14.

Երեց Լին Գ. Ռոբինս
Յոթանասունի Նախագահությունից

Յոթանասուն անգամ յոթը

Գայթակղության քարերով ու թերություններով լեցուն այս կյանքում, մենք բոլորս երախտապարտ ենք երկրորդ հնարավորությունն ունենալու համար։

Սխալները կյանքի մասն են կազմում։ Երբ սովորում ես հմտորեն դաշնամուր նվագել, անհնար է դա անել առանց հազարավոր, նույնիսկ, միլիոնավոր սխալներ կատարելու։ Օտար լեզու սովորելիս պետք է դիմակայել հազարավոր, նույնիսկ միլիոնավոր սխալների հուսահատեցնող ազդեցությանը։ Նույնիսկ աշխարհի հռչակավոր ատլետները շարունակում են սխալվել։

Ասված է, որ «հաջողությունը ձախողման բացակայություն չէ, այլ անցում ձախողումների միջով՝ առանց խանդավառությունը կորցնելու»։[1]

Լույսի լամպի իր գյուտի հետ կապված Թոմաս Էդիսոնը ենթադրելով ասել է. «Ես չեմ ձախողվել 1000 անգամ։ Լամպը 1000 քայլերի արդյունքում կատարված հայտնագործություն է»։[2] Չարլզ Ֆ. Քեթերինգը անհաջողությունները կոչել է «հաջողության ճանապարհի ուղեսյուներ»։[3] Բարեբախտաբար, մեր կատարած յուրաքանչյուր սխալը դառնում է իմաստության դաս, վերածելով գայթակղության քարերը վեր տանող աստիճանների։

Նեփիի անսասան հավատը օգնում էր նրան անցնել ձախողումների միջով, մինչև որ վերջապես ձեռք բերեց արույրե թիթեղները։ Մովսեսը տասն անգամ փորձեց, մինչև, ի վերջո, նրան հաջողվեց իսրայելացիների հետ փախչել Եգիպտոսից։

Մեզ համար զարմանալի է, որ եթե Նեփին ու Մովսեսը Տիրոջ

կողմից հովանավորվում էին, ապա ինչո՞ւ Տերը չէր միջամտում և օգնում, որ նրանք հաջողության հասնեին առաջին իսկ փորձից։ Ինչո՞ւ Նա թույլ տվեց նրանց, և ինչո՞ւ է թույլ տալիս մեզ սայթաքել և ձախողվել հաջողության հասնելու մեր փորձերում։ Այս հարցը բազմաթիվ կարևոր պատասխաններ ունի, որոնցից մի քանիսը հետևյալն են.

- Նախ, Տերը գիտի, որ «այս բոլոր բաները փորձառություն կտան [մեզ] և կլինեն [մեր] օգտի համար»։[4]
- Երկրորդ, որպեսզի թույլ տա մեզ «դառնություն ճաշակ[ել], որպեսզի սովորեն[ք] գնահատել բարին»։[5]
- Երրորդ, ապացուցելու, որ «պատերազմը Տիրոջն է»[6] և միայն Նրա շնորհով է, որ մենք կարող ենք իրականացնել Նրա աշխատանքը և դառնալ Նրա նման։[7]
- Չորրորդ, որ օգնի մեզ զարգացնել և խորացնել Քրիստոսանման հատկանիշներ, որոնք կարող են զտվել միայն հակադրության միջոցով[8] և «չարչարանքի հնոցում»։[9]

Այսպիսով, գայթակղության քարերով ու թերություններով լի կյանքում, մենք բոլորս երախտապարտ ենքերկրորդ հնարավորությունն ունենալու համար։

1970 թվականին, լինելով ԲՅՀ-ի նորեկ ուսանող, ես սկսեցի մասնակցել ֆիզիկայի հիմունքների դասընթացին, որը դասավանդում էր հայտնի պրոֆեսոր Ջեյ Բալիֆը։ Դասընթացի յուրաքանչյուր հատվածի ավարտից հետո նա քննություն էր նշանակում։ Եթե ուսանողը ստանում էր «բավարար» և ցանկանում էր ավելի բարձր գնահատական ստանալ, պրոֆեսոր Բալիֆը թույլ էր տալիս նրան վերահանձնել քննությունը։ Եթե ուսանողը երկրորդ փորձից ստանում էր «լավ» և դեռ բավարարված չէր գնահատականով, նա կարող էր երրորդ անգամ հանձնել թեստը, հետո՝ չորրորդ անգամ և այդպես շարունակ։ Բազմաթիվ անգամներ տալով երկրորդ հնարավորություն, նա ինձ օգնեց առաջադիմել և վերջապես արժանանալ «գերազանց» գնահատականի այդ առարկայից։

Նա բացառիկ իմաստուն պրոֆեսոր էր, ով ոգեշնչում էր իր աշակերտներին փորձել՝ նայելով ձախողմանը որպես մարզչի, ոչ թե որպես ողբերգության և չվախենալ ձախողումից, այլ սովորել դրանից:

Վերջերս ես զանգեցի այդ հրաշալի անձնավորությանը՝ ֆիզիկայի իմ դասընթացից 47 տարի անց: Ես հարցրի նրան, թե ինչո՞ւ էր նա թույլ տալիս ուսանողներին անսահմանափակ փորձեր կատարել գնահատականի ուղղման համար: Նա պատասխանեց. «Ես ցանկանում էի ուսանողների կողմից լինել»:

Երախտապարտ լինելով մեր սխալների կամ մտքի սայթաքումների դիմաց երկրորդ հնարավորությունն ունենալու համար, մենք բոլորս հրճվում ենքՓրկիչի շնորհով, որը տալիս է մեզ մեղքը կամ ձախողումները հաղթահարելու երկրորդ հնարավորությունը:

Ոչ ոք ավելի շատ մեր կողմից չէ, որքան Փրկիչը: Նա թույլ է տալիս

մեզ հանձնել և վերահանձնել Իր քննությունները: Նրան նմանվելու համար բնական մարդու հետ մեր ամենօրյա պայքարում մեզանից կպահանջվեն անհամար *երկրորդ հնարավորություններ*, ինչպես օրինակ՝ վերահսկել ախորժակը, սովորել համբերատարություն և ներողամտություն, հաղթահարել ծուլությունը, խուսափել անփույթ մեղքերից և սրանք պարզապես մի քանիսն են: Եթե սխալը բնորոշ է մարդուն, ապա քանի՞ ձախողումից հետո մեր բնույթը այլևս մարդկային չի լինի, այլ կլինի աստվածային: Հազարավո՞ր: Ավելի հավանական է՝ միլիոնավոր:

Իմանալով, որ նեղ ու անձուկ ճանապարհը ծածկված է փորձություններով և ձախողումներն ամենօրյա երևույթներ են լինելու մեզ համար, Փրկիչը մեծ գին է վճարել, որպեսզի մեզ այնքան հնարավորություններ տա, որքան կպահանջվի մեր մահկանացու փորձաշրջանը հաջողությամբ անցնելու համար: Հակադրությունը, որը Նա թույլ է տալիս, հաճախ թվում է, թե անհաղթահարելի է կամ անտանելի, սակայն Նա առանց հույսի չի թողնում մեզ:

Մեր հույսը կայուն պահելու համար, երբ կյանքում հանդիպում ենք փորձությունների, Փրկիչի շնորհը միշտ մեզ հետ է, միշտ ներկա է: Նրա շնորհը «օգնության կամ ուժի աստվածային միջոց է . . . , որը թույլ է տալիս տղամարդկանց և կանանց ակնկալել հավիտենական կյանք և վեհացում, նրանից *հետո*, երբ գործադրել են իրենց լավագույն ջանքերը»:[10] Նրա շնորհը և Նրա սիրող աչքերը մեր վրա են մեր ամբողջ ճամփորդության ընթացքում, երբ Նա ոգեշնչում է, թեթևացնում է բեռը, ամրապնդում է, ազատում է, պաշտպանում է, բուժում է և այլ կերպ ասած՝ «սատարում է իր ժողովրդին», նույնիսկ, եթե նրանք սայթաքում են նեղ ու անձուկ ճանապարհին:[11]

Ապաշխարությունը Աստծո անընդհատ հասանելի պարգևն է, որը թույլ է տալիս մեզ անցնել ձախողումների միջով՝ առանց խանդավառությունը կորցնելու: Ապաշխարությունը Նրա պահեստային ծրագիրը չէ այն դեպքերի համար, երբ հնարավոր է՝ ձախողվենք: *Ապաշխարությունը* Նրա ծրագիրն է, իմանալով հանդերձ, որ մենք ձախողվելու ենք: Սա ապաշխարության ավետարան է, և ինչպես նկատել է Նախագահ Ռասել Մ. Նելսոնը. «դա կլինի ողջ կյանքի տևողությամբ ուսումնական ծրագիր»:[12]

Կյանքի տևողությամբ այս ապաշխարության ծրագրում հաղորդությունն է Տիրոջ կողմից ընտրված եղանակը, որն անդադար հասանելիություն է տալիս մեզ դեպի Նրա ներողամտությունը: Երբ ճաշակում ենք հաղորդությունից կոտրված սրտով և փշրված հոգով, Նա մեզ ներում է տալիս շաբաթվա կտրվածքով, երբ ուխտի ճանապարհին առաջ ենք ընթանում մի ձախողումից մյուսը: Գրված է՝ «չնայած նրանց մեղքերին, որովայնս լի է կարեկցանքով նրանց հանդեպ»:[13]

Բայց քանի՞ անգամ Նա մեզ կների: Որքա՞ն է Նրա երկայնամտությունը: Մի առիթով Պետրոսը Փրկիչին հարցրեց. «Տէր, քանի՞ անգամ եթէ իմ եղբայրն ինձ դէմ մեղք անէ, ես ներեմ նորան. Մինչեւ եօ՞թն անգամ»:[14]

Ըստ երևույթին, Պետրոսը կարծում էր, թե *յոթը* բավականին մեծ թիվ էր, շեշտելով շատ անգամներ ներելու անհեթեթությունը և այն, որ այդ բարեգործությունը պետք է չափ ու սահման ունենա: Ի պատասխան, Փրկիչը պարզապես ասաց Պետրոսին, որ նույնիսկ հաշվել պետք չէ, պետք չէ ներման վրա սահմաններ դնել:

«Յիսուսը նորան ասեց. Չեմ ասում քեզ, մինչև եօթն անգամ այլ մինչեւ եօթանասուն անգամ եօթը»:[15]

Ակնհայտ է, որ Փրկիչը չէր ստեղծում մի բարձր սահմանաչափ, օրինակ՝ 490: Դա նույնը կլիներ, եթե ասենք, որ հաղորդություն ընդունելը սահմանափակվում է 490 անգամով, իսկ 491-րդ անգամ երկնային առուդիտորը միջամտեր և ասեր. «Ես շատ ցավում եմ, բայց ձեր ապաշխարության քարտը սպառվել է, այս պահից սկսած դուք ձեր հույսին եղեք»:

Տերը կիրառել է յոթանասուն անգամ յոթ մաթեմատիկան որպես փոխաբերություն Իր բացառիկ

Քավության, անչափ սիրո և անսահման շնորհի համար: «Այո՛, և *որքան հաճախ* որ իմ ժողովուրդն ապաշխարի, ես կներեմ նրանց, իրենց զանցանքները՝ իմ դեմ»:[16]

Սա չի նշանակում, որ հաղորդությունը մեղքի արտոնագիր է դառնում: Դա պատճառներից մեկն է, որ այս արտահայտությունն ընդգրկվել է Մորոնիի գրքում. «Բայց, որքան հաճախ որ նրանք ապաշխարում էին ու ներում փնտրում, *անկեղծ միտումով*, նրանք ներվում էին»:[17]

Անկեղծ միտումը ենթադրում է *անկեղծ ջանքեր* և իրական փոփոխություն: «Փոփոխություն»-ն այն գլխավոր բառն է, որը Սուրբ գրքերի ուղեցույցն օգտագործում է *ապաշխարությունը* սահմանելիս. «Մտքի և սրտի փոփոխություն, որը նոր վերաբերմունք է դրսևորում Աստծո, սեփական անձի և, առհասարակ, կյանքի հանդեպ»:[18] Այդ տեսակ փոփոխությունը հոգևոր *աճ* է բերում: Մեր հաջողությունն, արդեն, ոչ թե *անցումն է* մի ձախողումից դեպի մյուսը, այլ *աճն է* դրանց միջով անցնելիս, առանց խանդավառությունը կորցնելու:

Փոփոխության առումով եկեք ուշադրություն դարձնենք այս գաղափարին. «Փոխվող բաները նույնն են մնում»: Այդ փոքրիկ ակնհայտությունը չի ենթադրում վիրավորել ձեր բանականությունը, բայց Նախագահ Բոյդ Ք. Փաքերի կողմից ասված բացառիկ իմաստություն է, որին նա այսպիսի հավելում է արել. «Երբ մենք դադարում ենք փոխվել, *մենք դադարումենք լինել*»:[19]

Քանի որ մենք չենք ցանկանում *դադարել լինելուց,* մինչև չդառնանք մեր Փրկիչի նման,[20] մենք պետք է վեր կենանք ամեն անգամ, երբ ընկնում ենք, աճելու և առաջադիմելու ցանկությամբ՝ անկախ մեր թուլություններից: Մեր թուլության պահերին Աստված վստահեցնում է մեզ. «Բավական է քեզ իմ շնորհքը, որովհետև իմ զորությունը տկարության մեջ է կատարվում»:[21]

Մեր ֆիզիկական աճը կարելի է նկատել միայն լուսանկարման հաջորդական կադրերի կամ աճման աղյուսակների օգնությամբ: Նմանապես, մեր հոգևոր աճը սովորաբար աննկատ է, բացառությամբ, երբ նայում ես անցյալը ցույց տվող ժամանակի տեսապակու միջով: Իմաստուն կլիներ ժամանակ առ ժամանակ հայացք գցել այդ տեսապակու մեջ՝ տեսնելու մեր առաջընթացը և ոգեշնչվելու «առաջ մղվել[լ] Քրիստոսի հանդեպ հաստատակամությամբ, ունենալով հույսի կատարյալ պայծառություն»:[22]

Ես հավերժ երախտապարտ եմ մեր Երկնային Ծնողների և Փրկիչի սիրառատ բարության, համբերության և երկայնամտության համար, ովքեր թույլ են տալիս մեզ ունենալ անսպառ երկրորդ հնարավորություն մեր ճամփորդության ընթացքում դեպի Իրենց ներկայությունը: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Այս մեջբերումը վերագրվել է մի քանի հեղինակների, այդ թվում՝ Աբրահամ Լինքոլնին և Ուինստոն Չերչիլին:
2. Thomas Edison, in Zorian Rotenberg, “To Succeed, You Must Fail, and Fail More,” Nov. 13, 2013, insightsquared.com.
3. Charles F. Kettering, in Thomas Alvin Boyd, *Charles F. Kettering: A Biography* (1957), 40. This quotation has also often been attributed to C. S. Lewis.
4. Վարդապետություն և Ուխտեր 122.7 Նույնիսկ Փրկիչը «այն չարչարանքներիցը հնազանդութիւնը սովորեց» (Եբրայեցիս 5.8): Մինչ այս սուրբ գրությունները վերաբերում են մեր միջավայրի կամ անբարենպաստ պայմանների պատճառով մեր նեղություններին ու տառապանքներին, մեր կատարած սխալները նաև մեր օգտի համար են, եթե մենք սովորում ենք դրանցից:
5. Մովսես 6.55:
6. Ա Թագավորաց 17:47, տես նաև 1 Նեփի 3.29:
7. Տես Հակոբ 4.7:
8. Տես 2 Նեփի 2.11:
9. Եսայիա 48.10, 1 Նեփի 20.10:
10. Աստվածաշնչի բառարան, Շնորհ, շեշտադրումն ավելացված է:
11. Ալմա 7.12:
12. Russell M. Nelson, in Dallin H. Oaks and Neil L. Andersen, “Repentance” (address given at the seminar for new mission presidents, June 26, 2015), 11.
13. Վարդապետություն և Ուխտեր 101.9:
14. Մատթեոս 18.21:
15. Մատթեոս 18.22:
16. Մոսիա 26.30, շեշտադրումն ավելացված է:
17. Մորոնի 6.8, շեշտադրումն ավելացված է:
18. Սուրբ գրությունների ուղեցույց, Ապաշխարել, Ապաշխարություն, scriptures.lds.org.
19. Բոյդ Ք Փաքեր, Քինզլենդ Ջորջիա 8ցի համաժողով, 1997թ. օգոստոս:
20. Տես 3 Նեփի 27.27:
21. Բ Կորնթացիս 12.9, տես նաև Եթեր 12.27:
22. 2 Նեփի 31.20:

Երեց Նիլ Լ. Անդերսեն
Տասներկու Առաքյալների Քվորումից

Աստծո մարգարեն

Մարգարեն կանգնած չէ ձեր և Փրկիչի միջև։ Փոխարենը, նա կանգնած է ձեր կողքին և ցույց է տալիս ճանապարհը դեպի Փրկիչը։

Ես նույնպես ողջունում եմ Երեց Գերիտ Գոնգին և Երեց Ուլիսես Սոարեսին Տասներկուսի քվորումի անզուգական եղբայրության մեր շարքերում։

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնին՝ որպես Տիրոջ մարգարեի և որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահի հաստատման ժամանակ, մենք մասնակից եղանք Աստծուց հռչակված հանդիսավոր ժողովի՝ հանդիսավոր, քանի որ այս վերջին ժամի իրադարձությունները կանխատեսվել էին երկնքում դեռևս աշխարհի ստեղծումից առաջ։ Տեր Հիսուս Քրիստոսը, ով ղեկավարում է իր աշխատանքը, այսօր Նախագահ Այրինգի միջոցով Իր մարգարեին, Իր օծյալ առաջնորդին ներկայացրեց մեզ՝ Իր ուխտյալ ժողովուրդին, թույլ տալով մեզ հրապարակայնորեն արտահայտել մարգարեին հաստատելու և նրա խորհրդին հետևելու մեր պատրաստակամությունը։

Ցանկանում եմ, որ այն միլիոնավոր անդամները, ովքեր մեզ հետ չեն Համաժողովների այս կենտրոնում, իմանան, որ Նախագահ Նելսոնի հաստատման ընթացքում այս շենքում ներկա Տիրոջ Հոգին իսկապես ձեր սպասածի նման էր՝ լի հոգևոր ուժով։ Բայց երկնքից ղեկավարվող մեր ժողովը տեղի չի ունենում միայն այս Համաժողովների կենտրոնում, այլ ողջ աշխարհում՝ Ասիայի, Աֆրիկայի և Հյուսիսային Ամերիկայի հավաքատներում, Կենտրոնական և Հարավային Ամերիկայի ու Եվրոպայի տներում, Խաղաղ օվկիանոսի ավազանիերկրների և կղզիների տների ներքնազավիթներում։ Այս ժողովն այնտեղ է, որտեղ դուք եք գտնվում, նույնիսկ, եթե ձեր կապը միայն ձեր հեռախոսի ձայնն է։ Մեր բարձրացրած ձեռքերն իհարկե չէին կարող հաշվել մեր եպիսկոպոսները, բայց անշուշտ, ինչպես Աստծո հետ կապած մեր ուխտը, դրանք նկատվել են երկնքում և մեր գործողությունը գրանցվել է կյանքի գրքում։

Տերն ընտրում է Իր մարգարեին

Մարգարեի ընտրությունը Տերն Ինքն է կատարել։ Չկա քարոզարշավ, չկա բանավեճ, չկա պաշտոնի համար դիրք, չկա վիճաբանություն, անվստահություն, շփոթություն կամ խառնաշփոթություն։ Ես նույնպես հաստատում եմ, որ երկնքի զորությունը մեզ հետ էր տաճարի վերնահարկում, երբ մենք աղոթքով շրջապատեցինք Նախագահ Նելսոնին և զգացինք Տիրոջ անհերքելի հավանությունը նրա համար։

Որպես Աստծո մարգարե, Նախագահ Նելսոնի ընտրությունը դեռ շատ վաղուց էր արված։ Երեմիային տրված Տիրոջ խոսքերը վերաբերում են Նախագահ Նելսոնին. «Քեզ որովայնում չստեղծած՝ ես քեզ գիտէի, եւ արգանդից դեռ դու դուրս չեկած՝ ես քեզ սրբեցի, ես քեզ ազգերի մարգարէ եմ կարգել»։[1] Ընդամենը երեք տարի առաջ, 90 տարեկանում Երեց Նելսոնը չորրորդն էր ավագության մեջ, երեք ավագ առաքյալներից երկուսը տարիքով ավելի երիտասարդ էին իրենից։ Տերը, ով վերահսկում է կյանքը և մահը, ընտրում է Իր մարգարեին։ Նախագահ Նելսոնը 93 տարեկան հասակում զարմանալի առողջություն ունի։ Հուսով ենք, որ նա մեզ հետ կլինի ևս մեկ կամ երկու տասնամյակ, բայց այժմ մենք փորձում ենք համոզել նրան հեռու մնալ լեռնադահուկային լանջերից։

Կարկասոն, Ֆրանսիա

Նախագահ Նելսոնը իր 118-րդ ծոռի հետ։

Թեև, մենք մարգարեին հաստատում ենք որպես Տիրոջ օծյալ, թող պարզ լինի, որ մենք երկրպագում ենք միայն Աստծուն, մեր Երկնային Հորը և Նրա աստվածային Որդուն։ Մեր Փրկիչի՝ Հիսուս Քրիստոսի արժեքների, ողորմության և շնորհի միջոցով է, որ մենք կարող ենք մի օր նորից վերադառնալ նրանց ներկայությունը։[2]

Ինչո՞ւ ենք մենք հետևում մարգարեին։

Սակայն Հիսուսը նույնպես մի կարևոր ճշմարտություն ուսուցանեց մեզ ուղարկած Իր ծառաների մասին։ Նա ասաց. «Ով որ ձեզ ընդունում է, ինձ է ընդունում. և ով որ ինձ ընդունում է, ինձ ուղարկողին է ընդունում»։[3]

Տիրոջ մարգարեի ամենակարևոր դերն է՝ ուսուցանել մեզ Փրկիչի մասին և առաջնորդել մեզ դեպի Նա։

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնին հետևելու համար շատ տրամաբանական պատճառներ կան։ Նույնիսկ այն մարդիկ, ովքեր մեր հավատքից չեն, նրան փայլուն կանվանեին։ Նա 22 տարեկան հասակում բժիշկ էր, հարգված սրտի վիրաբույժ, և բաց սրտի վիրահատության զարգացման մեջ հայտնի նորարար։

Շատերը կընդունեն նրա իմաստությունը և դատողությունը. Ինը տասնամյակ սովորել է կյանքի և մահվան մասին, անշահախնդիր ապրել է և Աստծո զավակներին աշխարհի ամեն անկյունում ուսուցանել ու սիրել է, և ունեցել է հասունացող փորձառություն 10 երեխաների, 57 թոռների և 118 ծոռների հետ (այդ վերջին թիվը հաճախակի է փոփոխվում, վերջին ծոռնիկը ծնվեց այս չորեքշաբթի)։

Նրանք, ովքեր լավ են ճանաչում Նախագահ Նելսոնին, կասեն, որ կյանքի դժվարությունների ժամանակ նա պահպանել է հավատքը և խիզախությունը։ Երբ նրա 37 տարեկան դուստրը՝ Էմիլին, մահացավ քաղցկեղից, թողնելով սիրող ամուսնուն և հինգ անչափահաս երեխաներին, ես լսեցի, թե ինչպես նա ասաց. «Ես եղել եմ նրա հայրը, բժիշկ և Տեր Հիսուս Քրիստոսի առաքյալը, բայց ես ստիպված եմ խոնարհել գլուխս և ընդունել «Ոչ թե իմ կամքը՝ բայց քո կամքը լինի»»։[4]

Աշտարակի պահապանը

Չնայած մենք հիանում ենք այս բոլոր ազնիվ հատկանիշներով, ինչո՞ւ ենք մենք հետևում Նախագահ Նելսոնին։ Ինչո՞ւ ենք մենք հետևում մարգարեին։ Քանի որ Տեր Հիսուս Քրիստոսն է կանչել և նրան նշանակել Իր պահապանն աշտարակի վրա։

Կարկասոնը պարսպապատմի նշանավոր քաղաք է Ֆրանսիայում, որը կանգուն է մնացել միջնադարյան ժամանակներից։ Բարձր աշտարակները վեր են խոյանում պաշտպանված պատերից, որոնք կառուցվել են պահակախմբի համար, ովքեր գիշեր թե ցերեկ կանգնում էին այդ աշտարակներին՝ իրենց ուշադրությունը սևեռելով թշնամու վրա։ Երբ պահակը տեսնում էր, որ թշնամին մոտենում է, նրա նախազգուշացնող ձայնը պաշտպանում էր Կարկասոնի բնակիչներին մոտեցող վտանգից, որը նրանք չէին տեսնում։

Մարգարեն աշտարակի պահապանն է, ով մեզ պաշտպանում է հոգևոր վտանգներից, որոնք մենք, հնարավոր է, չտեսնենք։

Տերն ասել է Եզեկիելին. «Ես քեզ դէտ եմ դրել Իսրայէլի տան համար. եւ դու պետք է իմ բերանից խօսք լսես եւ զգուշացնես նորանց իմ կողմանէ»։[5]

Հաճախ, մենք խոսում ենք մարգարեին հետևելու անհրաժեշտության մասին, բայց նկատի ունեցեք այս ծանր բեռը, որը Տերը դրել է Իր մարգարեի վրա. «դու եթէ չխոսես ամբարշտին զգուշացնելու համար . . . , [և] այն ամբարիշտը . . . մեռնե իր անօրինության համար, . . . նորա արիւնը քո ձեռքիցն ես կպահանջեմ»։[6]

Մի մեծ անձնական վկայություն

Մենք ընդունում ենք Մարգարե Նելսոնին այնպես, ինչպես մենք կընդունեինք Պետրոսին կամ Մովսեսին, եթե ապրեինք նրանց օրերում։ Աստված ասաց Մովսեսին. «Ես քո բերանի հետ կլինիմ, եւ քեզ

կսովորեցնեմ ինչ որ պիտի խոսես»:[7] Տիրոջ մարգարեին մենք լսում ենք հավատքով, որ նրա խոսքերը «[Տիրոջ] բերանից են»:[8]

Արդյո՞ք դա կույր հավատք է: Ոչ, դա այդպես չէ: Մենք բոլորս ունենք հոգևոր վկայություն Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնման ճշմարտացիության մասին: Մեր ցանկությամբ և ընտրությամբ այս առավոտ ձեռքերի բարձրացմամբ մեր ցանկությունը հայտնեցինք, հաստատելով Տիրոջ մարգարեին, մեր վստահությամբ, «հավատքով, և աղոթքներով»[9] և նրա խորհրդին հետևելու պատրաստակամությամբ: Որպես Վերջին Օրերի Սրբեր, մենք արտոնություն ունենք անձնական վկայություն ստանալու, որ Նախագահ Նելսոնի կանչն Աստծուց է: Թեև իմ կինը՝ Քեթին, մոտավորապես երեք տասնամյակ անձամբ ճանաչում է Նախագահ Նելսոնին և ոչ մի կասկած չունի նրա աստվածային թիկնոցի մասին, իր ձեռնադրումից հետո սկսեց կարդալ վերջին 34 տարիների գերագույն համաժողովի նրա բոլոր ելույթները, աղոթելով, որ ավելի խորը համոզվի նրա մարգարեական դերի մասին: Ես խոստանում եմ, որ այդ մեծ վկայությունը կստանաք, եթե խոնարհ ու արժանիորեն փնտրեք այն:

Ինչո՞ւ ենք մենք այդքան պատրաստակամ Մարգարեի ձայնին հետևելու համար: Հավերժական կյանքը ջանասիրաբար փնտրողների համար մարգարեի ձայնը հոգևոր ապահովություն է հաղորդում չափազանց անհանգիստ ժամանակներում:

Մենք ապրում ենք մի մոլորակում, որտեղ միլիոնավոր ձայներ են բացականչում: Համացանցը, մեր սմարթֆոնները, խաղային ռռուցիկ արկղերը մեր ուշադրությունն են հրավիրում և իրենց ազդեցությամբ գրավում են մեզ, հուսալով, որ մենք կգնենք իրենց արտադրանքը և կընդունենք իրենց չափանիշները:

Տեղեկատվության և կարծիքների, կարծես թե, անսահման զանգվածը հիշեցնում է մեզ սուրբ գրությունների նախազգուշացումները՝ լինել «երերուած»,[10] «քամուց քշված»,[11] և հաղթահարել «խորամանկ նենգությունները» այն մարդկանց, ովքեր «մոլորեցնում են խաբեբայութեան խորամանկութիւնովը»:[12]

Տեր Հիսուս Քրիստոսին մեր հոգիները խոնարհելու համար պահանջվում է լսել նրանց, ում Նա ուղարկում է: Խառնաշփոթ աշխարհում մարգարեին հետևելը նման է խիստ ցուրտ եղանակին փափուկ, տաքուկ վերմակով փաթաթվելուն:

Մենք ապրում ենք պատճառաբանության, բանավեճերի, փաստարկների, տրամաբանության և բացատրություններիաշխարհում: «Ինչու» հարցադրումը դրականդրսևորում ունի մեր կյանքի բազմաթիվ տեսակետներում, թույլ տալով, որ մեր մտքի ուժն առաջնորդի այն բազմաթիվ ընտրությունները և որոշումները, որոնց մենք առնչվում ենք ամեն օր:

Սակայն Տիրոջ ձայնը հաճախ լսվում է առանց բացատրությունների:[13] Դեռ շատ վաղուց, երբ գիտնականները դեռ չէին ուսումնասիրել դավաճանության ազդեցությունը վստահող ամուսինների և երեխաների վրա, Տերը հայտարարել է. «Շնություն մի արա»:[14] Բացի զուտ բանականությանն ապավինելուց, մենք գնահատում ենք Սուրբ Հոգու պարգևը:

Մի զարմացեք

Մարգարեի բարյացակամ ձայնը հաճախ կլինի մի ձայն, որը մեզ կհորդորի փոխվել, ապաշխարել և վերադառնալ Տիրոջ մոտ: Երբ ուղղման կարիք կա, եկեք չուշացնենք: Եվ մի անհանգստացեք, երբ մարգարեի նախազգուշական ձայնը հակառակ է այսօրվա հանրային կարծիքներին: Զայրացած անհավատների ծաղրող խոսքերը միշտ առաջ են ընկնում, երբ մարգարեն սկսում է խոսել: Եթե դուք խոնարհ հետևեք Տիրոջ մարգարեի խորհուրդներին, ես խոստանում եմ ձեզ անվտանգության և խաղաղության լրացուցիչ օրհնություն:

Մի զարմացեք, եթե երբեմն ձեր անձնական տեսակետները սկզբում չեն համապատասխանում Տիրոջ մարգարեի ուսմունքներին: Դրանք սովորելու, խոնարհվելու պահեր են, երբ մենք աղոթում ենք մեր ծնկների վրա: Մենք առաջ ենք քայլում հավատքով, վստահելով Աստծուն, իմանալով, որ ժամանակի ընթացքում մենք ավելի շատ կստանանք հոգևոր հստակություն մեր Երկնային Հորից: Մի մարգարե Փրկիչի անզուգական պարգևը նկարագրել է՝ «Որդու կամքը կուլ գնացած լինելով Հոր կամքին»:[15] Աստծո կամքին մեր կամքը հանձնելը, ըստ էության, ոչ թե հանձնել է, այլ փառավոր հաղթանակի սկիզբը:

Ոմանք կփորձեն չափազանց խեղաթյուրել մարգարեի խոսքերը,

չհասկանալով, թե որն է նրա մարգարեական ձայնը և որն է նրա անձնական կարծիքը:

1982 թվականին՝ Բարձրագույն Իշխանավոր կանչվելուց երկու տարի առաջ, Եղբայր Ռասսել Մ. Նելսոնն ասաց. «Ես երբեք չեմ հարցնում ինքս ինձ, թե «երբ է մարգարեն խոսում մարգարեի ձայնով և երբ չի խոսում մարգարեի ձայնով»: Ինձ միշտ հետաքրքրել է. «Ինչպե՞ս կարող եմ ավելի շատ նմանվել նրան»: Եվ նա ավելացրել է. «Իմ [մտածելակերպն է եղել] դադարել հարցական նշան դնել մարգարեի արտահայտություններից հետո և փոխարենը դնել շեշտի նշան»:[16] Այդ կերպ է խոնարհ և հոգևոր մարդը որոշել կարգավորել իր կյանքը: Այժմ, 36 տարի անց, նա Տիրոջ մարգարեն է:

Մեծացնել Փրկիչի հանդեպ ձեր հավատքը

Իմ կյանքում ես հասկացել եմ, որ երբ աղոթքով ուսումնասիրում եմ Աստծո մարգարեի խոսքերը և ուշադիր, համբերությամբ, հոգևորապես հավասարեցնում եմ իմ կամքը ոգեշնչված ուսմունքների հետ, իմ հավատքը Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ միշտ աճում է:[17] Եթե մենք, խորհուրդները մի կողմ դնելով որոշենք, որ մենք ավելի լավ գիտենք, մեր հավատը կտուժի և մեր հավերժական հեռանկարը կխամրի: Ես ձեզ խոստանում եմ, որ երբ վճռականորեն հետևեք մարգարեին, ձեր հավատքը Փրկիչի հանդեպ կաճի:

Փրկիչն ասել է. «Բոլոր մարգարեները . . . վկայել են իմ մասին»:[18]

Մարգարեն կանգնած չէ ձեր և Փրկիչի միջև: Փոխարենը, նա կանգնած է ձեր կողքին և ցույց է տալիս ճանապարհը դեպի Փրկիչը: Մարգարեի մեծագույն պարտականությունը և թանկագին պարգևը մեզ համար նրա հաստատուն վկայությունն է, նրա վստահ գիտելիքն է, որ Հիսուսը Քրիստոսն է: Հին օրերի Պետրոսի նման մեր մարգարեն հայտարարում է «[Նա է] Քրիստոսը, կենդանի Աստծո Որդին»:[19]

Ապագայում, հետ նայելով մեր մահկանացու կյանքին, մենք կուրախանանք, որ երկիր ենք եկել կենդանի մարգարեի օրոք: Ես աղոթում եմ, որ այդ օրը մենք կարողանանք ասել.

Մենք լսեցինք նրան:

Մենք հավատացինք նրան:

Համբերությամբ և հավատքով մենք սովորեցինք նրա խոսքերը:

Մենք աղոթեցինք նրա համար:

Մենք կանգնեցինք նրա կողքին:

Մնացինք բավականաչափ խոնարհ, որպեսզի հետևենք նրան:

Մենք սիրեցինք նրան:

Ես բերում եմ իմ հանդիսավոր վկայությունը, որ Հիսուսը Քրիստոսն է, մեր Փրկիչն ու Քավիչը, կՆախագահ Ռասսել Մ. Նելսոնը Նրա օծյալ մարգարեն է Երկրի վրա: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Երեմիա 1.5:
2. Տես 2 Նեփի 2.8:
3. Մատթեոս 10.40:
4. Personal memory; also see Spencer J. Condie, *Russell M. Nelson: Father, Surgeon, Apostle* (2003), 235.
5. Եզեկիել 33.7:
6. Եզեկիել 33.8:
7. Ելից 4.12:
8. Վարդապետություն և Ուխտեր 21.5:
9. Վարդապետություն և Ուխտեր 107.22:
10. Եփեսացիս 4.14:
11. Հակոբոս 1.6:
12. Եփեսացիս 4.14:
13. Նախագահ Դալլին Հ. Օուքսը մի անգամ ասել է.

    «1988 թվականին տված իմ հարցազրույցի ժամանակ . . . ես բացատրել եմ աստվածային հայտնությանն աշխարհիկ պատճառաբանություններ տալու իմ կարծիքը.

    «Եթե դուք սուրբ գրությունները կարդալիս ունենաք հետևյալ հարցը ձեր մտքում. «Ինչո՞ւ Տերը պատվիրեց սա, կամ ինչո՞ւ Տերը պատվիրեց այն», դուք կհայտնաբերեք, որ հարյուր պատվիրաններից ամենաշատը մեկին է տրվել որևէ պաճառաբանում: Պատճառաբանումներ տալը Տիրոջ ուղին չէ: Մենք՝ [մահկանացուներս], կարող ենք պատճառաբանումներ ավելացնել հայտնությանը: Մենք կարող ենք պատճառաբանումներ ավելացնել պատվիրաններին: Երբ անում ենք այդ, մենք մնում ենք միայնակ մեր որոշումներում: Որոշ մարդիկ պատճառաբանումներ են ավելացնում [հայտնությանը] և պարզվում է, որ նրանք մեծապես սխալվում են: Կա մի դաս, որ կարող ենք սովորել դրանից: . . . Շատ վաղուց ես որոշել եմ, որ պետք է հավատք ունենամ պատվիրանի հանդեպ և հավատք չունենամ այն պատճառաբանումների հանդեպ, որոնք տրվել են դրա համար»: . . .

    « . . . Պատճառաբանումների այդ ամբողջ շարքն ինձ համար ավելորդ ռիսկ վերցնել է նշանակում: . . . Եկեք չանենք այն սխալները, որոնք արվել են անցյալում, փորձելով պատճառաբանումներ ավելացնել հայտնությանը: Պարզվում է, որ պատճառաբանումները մեծ չափով արհեստական են: Հայտնությունները նրանք են, ինչը մենք հաստատում ենք որպես Տիրոջ կամքը և դրանում է արժանահավատությունը» (*Life's Lessons Learned* [2011], 68–69):
14. Ելից 20.14:
15. Մոսիա 15.7:
16. Russell M. Nelson, in Lane Johnson, "Russell M. Nelson: A Study in Obedience," *Tambuli,* Jan. 1983, 26.
17. Նախագահ Հենրի Բ. Այրինգն ասել է. «Մեկ այլ մոլորություն է, որ մտածում ենք մարգարեների խորհուրդներն ընդունելը կամ չընդունելը ոչ այլ ինչ է, եթե ոչ լավ խորհուրդ ընդունել ու օգուտ քաղել կամ մնալ նույն տեղում: Սակայն մարգարեական խորհուրդը չընդունելու ընտրությունը փոխում է հենց այն հողը, որի վրա մենք կանգնած ենք: Այն դառնում է ավելի վտանգավոր: Մարգարեական խորհրդին չհետևելը թուլացնում է հետագայում ոգեշնչված խորհուրդ ընդունելու զորությունը: Լավագույն ժամանակը, երբ Տերը որոշեց օգնել Նոյին կառուցել տապանը, այն ժամանակ էր, երբ նա առաջին անգամ խնդրեց Տիրոջը: Դրանից հետո յուրաքանչյուր խնդրանք, յուրաքանչյուր ձախողում կթուլացներ Հոգին զգալու նրա կարողությունը: Եվ այսպիսով, ամեն անգամ նրա խնդրանքն ավելի հիմարկթվար, մինչև անձրևները սկսվեին: Իսկ հետո արդեն շատ ուշ է լինում» ("Finding Safety in Counsel," *Ensign,* May 1997, 25):
18. 3 Նեփի 20.24:
19. Մատթեոս 16.16, տես նաև Հովհաննես 6.69:

Նախագահ Դալլին Հ. Օուքս
Առաջին Նախագահության առաջին խորհրդական

Եկեղեցու պաշտոնյաների հաստատում

Նշենք, որ ապրիլյան համաժողովի այս նստաշրջանում ավանդաբար ներկայացված վիճակագրական հաշվետվությունն անմիջապես այս ժողովից հետո այժմ կթողարկվի LDS.org-ում և կընդգրկվի Եկեղեցու ամսագրերի համաժողովների համարում:

Այժմ ես հաստատման կներկայացնեմորոշ փոփոխություններ Եկեղեցու ղեկավարման, Եկեղեցու Բարձրագույն Պաշտոնյաների և Տարածքային Յոթանասունականների կազմում, որից հետո Եկեղեցու աուդիտի բաժնի գործադիր տնօրեն Եղբայր Քեվին Ռ. Ջերգենսենը կընթերցի տարեկան զեկույցը:

Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ ծառայելու իրենց կանչի հետ կապված առաջարկում ենք ազատել Երեց Ջերիթ Վ. Գոնգին և Երեց Ուլիսես Սոարեսին Յոթանասունի Նախագահության անդամներ ծառայելու իրենց պարտականությունից:

Ի լրումն, մենք առաջարկում ենք ազատել Երեցներ Քրեյգ Ս. Քրիսչենսենին, Լին Գ. Ռոբինսին և Խուան Ա. Ուսեդային Յոթանասունի Նախագահության անդամների իրենց ծառայությունից 2018թ. օգոստոսի 1-ից:

Ովքեր ցանկանում են իրենց շնորհակալությունը հայտնել այդ Եղբայրներին նրանց նվիրվածծառայության համար, խնդրում ենք արտահայտել դա:

Առաջարկվում են ազատման հետևյալ անձինք Տարածքային Յոթանասունականներիիրենց ծառայությունից. Սթիվեն Ռ. Բանգերթեր, Մեթյու Լ. Քարփենթեր, Մաթիաս Հելդ, Դեյվիդ Փ. Հոմեր, Քայլ Ս. Մակքեյ, Ռ. Սքոթ Ռունիա և Խուան Պաբլո Վիլար:

Ովքեր ցանկանում են միանալ մեզ և իրենց շնորհակալությունը հայտնել այս եղբայրներին իրենց պատրաստակամ ծառայության համար, խնդրում ենք քվեարկել ձեռքի բարձրացմամբ:

Առաջարկվում է անկեղծ երախտագիտությամբ ազատել Քույրեր Բոննի Լ. Օսկարսոնի, Քերոլ Ֆ. Մակքոնկիին և Նեյլ Ֆ. Մերիոթին որպես Երիտասարդ կանանց գերագույն նախագահություն: Նմանապես, ազատվում են նաև Երիտասարդ Կանանց գերագույն գերագույն խորհրդի անդամները:

Բոլոր նրանք, ովքեր ցանկանում են միանալ մեզ, արտահայտելով իրենց երախտագիտությունը այս քույրերին իրենց գերազանց ծառայության և նվիրման համար, խնդրում ենք արտահայտել դա:

Առաջարկվում է ազատման Քույր Բոննի Հ. Քորդոնը Երեխաների Միության գերագույն նախագահության առաջին խորհրդականի իր ծառայությունից:

Բոլորը, ովքեր ցանկանում են իրենց երախտագիտությունն արտահայտել Քույր Քորդոնին, կարող են արտահայտել ձեռքի բարձրացումով:

Առաջարկվում են հաստատման հետևյալ անձինք որպես Յոթանասունի Նախագահության անդամներ. Երեց Կարլ Բ. Քուք և Երեց Ռոբերտ Ս. Գեյ (ուժի մեջ է մտնում անմիջապես):

Հետևյալ անձինք նույնպես կծառայեն որպես Յոթանասունի

Նախագահության անդամներ 2018թ. օգոստոսի 1-ից. Երեց Տերենս Մ. Վինսոնը, Խոսե Ա. Տեշերան և Կարլոս Ա Գոդոյը։

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել։

Ովքեր դեմ են, նույնպես։

Առաջարկվում են հաստատման հետևյալ անձինք որպես նոր Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունականներ. Սթիվեն Ռ. Բանգերթեր, Մեթյու Լ. Քարփենթեր, Ջեկ Ն. Ջերարդ, Մաթիաս Հելդ, Դեյվիդ Փ. Հոմեր, Քայլ Մ. Մակքեյ, Խուան Պաբլո Վիլար և Տակաշի Վադա։

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել։

Ովքեր դեմ են, նույն ձևով։

Առաջարկվում են հաստատման հետևյալ անձինք որպես նոր Տարածքային Յոթանասունականներ. Ռիչարդ Կ. Ահաջի, Ալբերտո Ա. Ալվարեզ, Դուան Դ. Բելլ, Գլեն Բուրգես, Վիկտոր Ռ. Քալդերոն, Էրիել Ի. Չապարո, Դենիել Քորդովա, Ջոն Ն. Քրեյգ, Մայքլ Չեսլա, Վիլյամ Հ. Դայվիս, Ռիչարդ Ջ. Դեվրիես, Քայլը Գ. Դոմինգեզ, Շոն Դուգլաս, Մայքլ Ա. Դան, Քենեթ Ջ. Ֆըրմիջ, Էդգար Ֆլորես, Սիլվիո Ֆլորես, Սաուլո Գ. Ֆրանկո, Կառլոս Ա. Գենարո, Մարկ Ա. Գիլմոր, Սերջիո Ա. Գոմեզ, Ռոբերտո Գոնզալեզ, Վիհիլիո Գոնզալեզ, Սպենսեր Ռ. Գրիֆֆին, Մեթյու Ս. Հարդինգ, Դեյվիդ Ջ. Հարիս, Քեվին Ջ. Հաթաուեյ, Ռիչարդ Հոլզապֆել, Յուստաշ Իլունգա, Օկեչոկու Ի. Իմո, Պիտեր Մ. Ջոնսոն, Մայքլ Դ. Ջոնս, Փոնգի Ս. Քոնգոլո, Գ. Քենեթ Լի, Արետեմիո Ս. Մալիգոն, Էդգար Ա. Մանտիլա, Լինկոլն Պ. Մարտինս, Քլեմենթ Մ. Մաթսվագոթատա, Քարլ Ռ. Մոուրեր, Դենիել Ս. Մերը II, Գլեն Դ. Մելլա, Այզեկ Կ. Մորիսոն, Յուտակա Նագատոմո, Ալիսթերը Բ. Օջերս, Ռ. Ջեֆրի Փարքեր, Վիկտոր Պ. Պատրիկ, Դենիս Ի. Փինեդա, Հենրիք Ս. Սիմպլիսիո, Ջեֆրի Հ. Սինգեր, Մայքլ Լ. Սթահելի, Ջարոթ Սուբիանտորո, Ջեֆրի Կ. Վետցել, Մայքլ Ս. Ուիլսթեդ, Հելմուտ Ռոնդրա և Դեյվիդ Լ. Ռայթ։

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել։

Ովքեր դեմ են, նույնպես։

Առաջարկվում է, որ մենք ծառայության հաստատենք Բոնի Հ. Քորդոնին որպես Երիտասարդ Կանանց գերագույն նախագահ, Միշել Լին Քրեյգին՝ որպես առաջին խորհրդական և Ռեբեկա Լին Քրեյվենին՝ որպես երկրորդ խորհրդական։

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել։

Ովքեր դեմ են, կարող են ևս քվեարկել։

Առաջարկվում է հաստատման Լիզա Ռենե Հարկնեսը որպես Երեխաների Միության գերագույն նախագահության առաջին խորհրդական։

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել։

Ովքեր դեմ են, նույնպես։

Առաջարկվում են հաստատման մյուս Բարձրագույն Իշխանավորները, Տարածքային Յոթանասունականները և գերագույն օժանդակ կազմակերպությունների նախագահությունները ներկա կազմով։

Եկեղեցու աուդիտի բաժնի հաշվետվություն, 2017

Ներկայացրեց Քեվին Ռ. Ջերգենսենը
Գլխավոր տնօրեն, Եկեղեցու աուդիտի բաժին

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Առաջին Նախագահությանը

Շարգելի՛ Եղբայրներ, ինչպես ասվում է Վարդապետություն և Ուխտերի 120-րդ բաժնում տրված հայտնության մեջ, Եկեղեցու ֆոնդերի ծախսերը հաստատում է Տասանորդների տնօրինման խորհուրդը, որը կազմված է Առաջին Նախագահությունից, Տասներկու Առաքյալների Քվորումից և Նախագահող Եպիսկոպոսությունից։ Եկեղեցու միավորները ծախսում են ֆոնդերը ըստ հաստատված բյուջեների, քաղաքականությանը և ընթացակարգերի։

Եկեղեցու աուդիտի բաժինը, որը բաղկացած է հավաստագրված մասնագետներից և գործում է Եկեղեցու մյուս բաժիններից անկախ, պատասխանատու է աուդիտների անցկացման համար, որպեսզի խելամիտ վերահսկողություն հաստատվի ստացվող նվիրատվությունների, կատարվող ծախսերի և Եկեղեցու ակտիվները պահպանելու ուղղությամբ։

Հիմնվելով կատարված աուդիտի արդյունքների վրա, Եկեղեցու աուդիտի բաժինն այն կարծիքին է, որ 2017 թվականին բոլոր նյութական հարցերին առնչվող ստացված նվիրատվությունները, կատարված ծախսերը և Եկեղեցու ակտիվները հաշվառվել և տնօրինվել են համապատասխան Եկեղեցու հաստատված բյուջեների, քաղաքականությանը և հաշվապահական ընթացակարգերի։ Եկեղեցին հետևում է այն գործելաոճին, որն ուսուցանում է իր անդամներին և խորհուրդ է տալիս ապրել բյուջեի սահմաններում, խուսափել պարտքերից և խնայել կարիքի ժամանակների համար։

Հարգանքով ներկայացրեց՝
Եկեղեցու աուդիտի բաժին
Քեվին Ռ. Ջերգենսեն
Գլխավոր տնօրեն ■

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, նույնպես:

Նախագահ Նելսոն, քվեարկությունը տեղի ունեցավ: Մենք հրավիրում ենք բոլոր նրանց, ովքեր դեմ են քվեարկել այդ առաջարկներից որևէ մեկին, կապ հաստատել իրենց ցցերի նախագահների հետ:

Այս հաստատման արդյունքում մենք այժմ ունենք 116 Բարձրագույն Իշխանավոր: Նրանցից մոտ 40 տոկոսը ծնվել է Միացյալ Նահանգներից դուրս՝ Գերմանիայում, Բրազիլիայում, Մեքսիկայում, Նոր Զելանդիայում, Շոտլանդիայում, Հարավային Կորեայում, Գվատեմալայում, Արգենտինայում, Իտալիայում, Զիմբաբվեում, Ուրուգվայում, Պերուում, Հարավային Աֆրիկայում, Ամերիկյան Սամոայում, Անգլիայում, Պուերտո Ռիկոյում, Ավստրալիայում, Վենեսուելայում, Քենիայում, Ֆիլիպիններում, Պորտուգալիայում, Ֆիջիում, Չինաստանում, Ճապոնիայում, Չիլիում, Կոլումբիայում և Ֆրանսիայում:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, շնորհակալություն Եկեղեցու ղեկավարների համար ձեր շարունակական հավատքի և աղոթքների համար:

Այժմ նոր Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունականներին, Երիտասարդ Կանանց նոր գերագույն նախագահությանը և Երեխաների Միության գերագույն նախագահությունից Քույր Հարկնեսին հրավիրում ենք զբաղեցնել իրենց տեղերը բեմահարթակի վրա: ■

Երեց Դեյվիդ Ա. Բեդնար
Տասներկու Առաքյալների Քվորումից

Հեզ և սրտով խոնարհ

Հեզությունը Քավիչին բնութագրող հատկանիշ է և առանձնանում է արդարացի արձագանքով, պատրաստակամ հնազանդությամբ և ուժեղ ինքնավերահսկողությամբ:

Ես հրճվում եմ մեր Եկեղեցու ղեկավարներին հաստատելու սուրբ հնարավորության համար և ի սրտե ողջունում եմ Երեց Գոնգին և Երեց Սուարեսին Տասներկու Առաքյալների քվորումի կազմում: Այս հավատարիմ տղամարդկանց ծառայությունը կօրհնի ամբողջ աշխարհում գտնվող անհատներին և ընտանիքներին, և ես ուրախ եմ նրանց հետ ծառայելու և սովորելու հնարավորության համար:

Աղոթում եմ, որ Սուրբ Հոգին ուսուցանի և լուսավորի մեզ, երբ միասին սովորենք Փրկիչի աստվածային բնույթի հիմնական կողմի մասին,[1] որը մեզանից յուրաքանչյուրը պետք է ընդօրինակի:

Կներկայացնեմ մի քանի օրինակներ, որոնք լուսաբանումենայս Քրիստոսանման հատկանիշը, նախքան ավելի ուշ իմ ուղերձում որոշակի հատկանիշի մասին խոսելը: Խնդրում ենք ուշադիր լսել յուրաքանչյուր օրինակ և ինձ հետ միասին մտածել այն հարցերի հնարավոր պատասխանների շուրջ, որոնք կներկայացնեմ:

Օրինակ համար 1 Հարուստ երիտասարդը և Ամուղեկը

Նոր Կտակարանում մենք իմանում ենք մի հարուստ երիտասարդի մասին, ով հարցրեց Հիսուսին, «Բարի վարդապետ, ի՞նչ բարի գործ գործեմ որ յաւիտենական կեանքն ունենամ»:[2] Սկզբում, Փրկիչը հորդորեց նրան պահել պատվիրանները: Ապա, Վարդապետը երիտասարդին տվեց լրացուցիչ պահանջ, որը հարմարեցվեց նրա հատուկ կարիքներին և հանգամանքներին:

«Յիսուսը նորան ասեց. Եթէ կամենում ես կատարեալ լինել, գնա ունեցածներդ ծախիր եւ տուր աղքատներին, եւ զանձ կունենաս երկնքումը, եւ եկ հետեւիր ինձ»:

«Բայց երբ մարդը լսեց դա, նա տխրեց և հեռացավ տրտմած.

որովհետեւ շատ ինչքի տեր էր»:[3]

Հարուստ մարդու պատասխանը համեմատեք Ամուղեկի փորձառության հետ, որը նկարագրված է Մորմոնի Գրքում: Ամուղեկն աշխատասեր ու հաջողակ մարդ էր և ուներ շատ հարազատներ ու ընկերներ:[4] Նա իրեն նկարագրում էր որպես մի մարդու, ով բազմաթիվ անգամներ կանչվել է, բայց չի լսել. մի մարդու, ով գիտեր Աստծո բաները, բայց չի իմացել:[5] Լինելով լավ մարդ, Ամուղեկը շեղվում էր աշխարհիկ մտահոգություններով այնպես, ինչպես Նոր Կտակարանում նկարագրված հարուստը:

Թեև Ամուղեկը նախկինում կարծրացրել էր իր սիրտը, բայց հնազանդվելով հրեշտակի ձայնին, իր տանը հյուրընկալեց Ալմա մարգարեին և կերակրեց նրան: Ալմայի այցելության ժամանակ նա հոգեպես արթնացավ և կանչվեց Ավետարանը քարոզելու: Ապա, Ամուղեկը թողեց «բոլոր իր ոսկին, և արծաթը, և իր արժեքավոր բաները, . . . հանուն Աստծո խոսքի, նա՝ մերժված լինելով նրանցից, ովքեր մի ժամանակ նրա ընկերներն էին, և նաև իր հոր ու իր ազգականների կողմից»:[6]

Ձեր կարծիքով, ո՞րն էր հարուստ մարդու և Ամուղեկի պատասխանների տարբերության պատճառը:

Օրինակ համար 2 Պառանը

Մորմոնի Գրքում նկարագրված պատերազմի վտանգավոր ժամանակահատվածում Նեփիացիների բանակի զորապետ Մորոնիի և երկրի գլխավոր դատավոր ու կառավարիչ Պառանի միջև տեղի ունեցավ նամակների փոխանակում: Մորոնին, որի բանակը տառապում էր կառավարության կողմից անբավարար աջակցությունից, «դատապարտության ձևով» գրեց Պառանին[7] և մեղադրեց նրան ու իր ընկերակից ղեկավարներին անմտության, ծուլության, անտեսման և նույնիսկ դավաճանության մեջ:[8]

Պառանը կարող էր հեշտությամբ վիրավորվել Մորոնիից և նրա անտեղի մեղադրանքներից, սակայն չվիրավորվեց: Նա կարեկցանքով արձագանքեց և

նկարագրեց կառավարության դեմ ապստամբությունը, որի մասին Մորոնին տեղյակ չէր: Եվ Պառանը հայտարարեց.

«Ահա, ես ասում եմ քեզ, Մորոնի՛, որ ես չեմ ուրախանում քո մեծ չարչարանքներով, այո, դա վշտացնում է իմ հոգին: . . .

. . . Քո նամակում դու կշտամբել ես ինձ, բայց դա նշանակություն չունի. ես բարկացած չեմ, այլ հրճվում եմ քո սրտի մեծությամբ»:[9]

Ձեր կարծիքով, ո՞րն էր Մորոնիի մեղադրանքների դեմ Պառանի կշռադատված պատասխանի պատճառը:

Օրինակ համար 3: Նախագահ Ռասսել Մ. Նելսոն և Նախագահ Հենրի Բ. Այրինգ

Վեց ամիս առաջ տեղի ունեցած գերագույն համաժողովի ժամանակ նախագահ Ռասսել Մ. Նելսոնը նկարագրեց Մորմոնի Գրքի ճշմարտություններն ուսումնասիրելու, խորհելու և կիրառելու վերաբերյալ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի հրավերին ուղղված իր պատասխանը: Նա ասաց. «Ես փորձել եմ հետևել նրա խորհրդին: Այլ քայլերի հետ միասին ես կազմել եմ ցուցակներ այն մասին, թե ինչ *է* Մորմոնի Գիրքը, ինչ է այն *հաստատում*, ինչ է *հերքում*, ինչ է *կատարում*, ինչ է *հատակեցնում* և ինչ է *բացահայտում*: Մորմոնի Գիրքն այս տեսապակիների միջով քննելը խորը թափանցող և ոգեշնչող վարժանք էր: Ես ձեզանից յուրաքանչյուրին խորհուրդ եմ տալիս կարդալ այն»:[10]

Նախագահ Հենրի Բ. Այրինգը նույնպես ընդգծել է իր կյանքում Նախագահ Մոնսոնի խնդրանքի կարևորությունը: Նա նկատել է.

«Ես 50 տարի շարունակ ամեն օր կարդացել եմ Մորմոնի Գիրքը: Այսպիսով, ես միգուցե հիմնավորվածմտածեի, որ Նախագահ Մոնսոնի խոսքերն ուրիշ մեկի համար են: Բայց ձեզանից շատերի նման ես զգացի մարգարեի հորդորը, և նրա խոստումը հրավիրեց ինձ ավելի շատ ջանքեր գործադրել այդ ուղղությամբ: . . .

Երջանիկ արդյունքը ինձ և շատերիդ համար մարգարեի խոստման իրականացումն էր»:[11]

Ձեր կարծիքով, ի՞նչն է բացատրում Նախագահ Մոնսոնի հրավերի նկատմամբ այդ անհապաղ և սրտանց պատասխանները Տիրոջ Եկեղեցու այդ երկու ղեկավարների կողմից:

Ես չեմ առաջարկում, որ Ամուղեքի, Պառանի, Նախագահ Նելսոնի և Նախագահ Այրինգի հոգևորապես ուժեղ պատասխանները բացատրվեն Քրիստոնեական միայն մեկ հատկանիշով: Իհարկե, բազմաթիվ փոխկապակցված հատկանիշները և փորձառությունները հանգեցրին այն հոգևոր հասունությանը, որոնք արտացոլված են այս չորս ազնիվ ծառաների կյանքում: Բայց Փրկիչն ու Նրա մարգարեները կարևորեցին այն կարևոր որակը, որը մենք բոլորս պետք է ավելի լիարժեք հասկանանք և ձգտենք ներդնել մեր կյանքը:

Հեզություն

Խնդրում եմ ուշադրություն դարձնել այն հատկանիշին, որը Տերն օգտագործել է իրեն նկարագրելու համար. «ձեզ վերայ առէք իմ լուծը և ինձանից սովորեցէք. Որովհետև ես *հեզ եմ և սրտով խոնարհ.* և ձեր անձերի համար հանգստութիւն կգտնէք»:[12]

Ուսուցանելով, Փրկիչն ընդգծեց հեզությունը բոլոր այն

հատկանիշների և արժանիքների թվում, որոնք նա վերագրել էր իրեն:

Նմանատիպ օրինաչափություն է առկա 1829թ.-ին Նախագահ Ջոզեֆ Սմիթի կողմից ստացված հայտնության մեջ: Տերը հայտարարել է. «Սովորիր ինձանից և լսիր իմ խոսքերը. *քայլիր իմ Հոգու հեզությամբ,* և դու խաղաղություն կունենաս ինձանում»:[13]

Հեզությունը Քավիչին բնութագրող հատկանիշ է և առանձնանում է արդարացի արձագանքով, պատրաստակամ հնազանդությամբ և ուժեղ ինքնավերահսկողությամբ: Այս հատկանիշն օգնում է մեզ-լիարժեք հասկանալ Ամուղեքի, Պառոանի, Նախագահ Նելսոնի և Նախագահ Այրինգի համապատասխան արձագանքները:

Օրինակ, Նախագահ Նելսոնը և Նախագահ Այրինգը արդարացիորեն և արագարձագանքեցին Մորմոնի Գիրքը կարդալու և ուսումնասիրելու Նախագահ Մոնսոնի հորդորին: Թեև երկուսն էլ ծառայում էին Եկեղեցու կարևոր ու տեսանելի կոչումներում և տասնամյակներ շարունակ խորությամբ ուսումնասիրել էին սուրբ գրությունները, իրենց պատասխաններում նրանք ցույց չտվեցին վարանումի կամ մեծամտության և ոչ մի զգացում:

Ամուղեկը պատրաստակամ ընդունեց Աստծո կամքը, ընդունեց ավետարանը քարոզելու կոչը և հետևում թողեց իր հարմարավետ պայմանները և ծանոթ հարաբերությունները: Իսկ Պառոանը հասկացողությամբ և ինքնատիրապետմամբ գործեց, այլ ոչ թե դիմադրեց, երբ նա բացատրեց Մորոնիին, որ խնդիրներ են առաջանում կառավարության դեմ ապստամբության պատճառով:

Հեզության Քրիստոսանման հատկանիշը հաճախ սխալ է հասկացվում մեր ժամանակակից աշխարհում: Հեզությունն ուժեղ է, ոչ թե թույլ. ակտիվ է, ոչ թե պասիվ. խիզախ է, ոչ թե վախկոտ. զսպված է, ոչ թե սանձարձակ. համեստ է, ոչ թե ինքնամեծար. և բարի է, ոչ թե ամբարտավան: Հեզ անձը հեշտությամբ չի գրգռվում, չի պահանջում, ամբարտավան և պատրաստակամ չի ընդունում ուրիշների նվաճումները:

Մինչ *խոնարհությունը* սովորաբար նշանակում է գտնվել Աստծուց կախվածության մեջ և գտնվել Նրա առաջնորդության ու աջակցության շարունակական կարիքի մեջ, *հեզության* տարբերակիչ բնույթը հատուկ հոգևոր ընկալունակությունն է սովորել Սուրբ Հոգուց, և այն մարդկանցից, ովքեր կարող են երևալ ավելի քիչ ունակ, փորձառու կամ կրթված, ովքեր, միգուցե, կարևոր պաշտոններ չզրավեն, կամ,թվում է, ներդնելու շատ բան չունեն: Հիշենք, թե ինչպես Նեեմանը՝ Սիրիայի թագավորի բանակի զորավարը, հաղթահարեց իր հպարտությունը և հեզությամբ ընդունեց Եղիսեին հնազանդվելու իր ծառաների խորհուրդը և յոթ անգամ լվացվեց Հորդանան գետում:[14] Հեզությունը հիմնական պաշտպանությունն է հպարտ կուրությունից, որը հաճախ առաջանում է ճանաչումից, պաշտոնից, զորությունից, հարստությունից և ուրիշների գովքից:

Հեզություն՝ Քրիստոսանման հատկանիշ և հոգևոր պարգև

Հեզությունն այն հատկանիշն է, որը զարգանում է ցանկության, բարոյական ազատ կամքի ճիշտ օգտագործման և մեր մեղքերի թողության մշտական պահպանման շնորհիվ:[15] Այն նաև հոգևոր պարգև է, որին մենք կարող ենք պատշաճ կերպով հետամուտ լինել:[16] Սակայն մենք պետք է հիշենք, որ նպատակները, որոնց համար տրվում է այդպիսի օրհնությունը, պետք է օգնեն և ծառայեն Աստծո զավակներին:[17]

Երբ մենք մոտենում և հետևում ենք Փրկիչին, մեզ աստիճանաբար ավելի շատ հնարավորություն է տրվում նմանվել Նրան: Մենք զորանում ենք Հոգու կողմից՝ կարգապահ ինքնատիրապետման և շարունակական և հանգիստ վարքագծով: Այսպիսով, դառնում ենք հեզ՝ Վարդապետի աշակերտներ լինելու շնորհիվ, այլ ոչ թե պարզապես հեզությամբ գործելով:

Մովսեսը «վարժուեցաւ Եգիպտացիների բոլոր իմաստութիւնովը. եւ զօրաւոր էր խօսքերով եւ գործերով»:[18] Բայց նա «շատ հեզ էր երկրի եղած բոլոր մարդկանցից ավելի»:[19] Նրա գիտելիքներն ու կարողությունները կարող էին նրան հպարտ դարձնել: Փոխարենը, հեզության հոգևոր պարգևն ու հատկանիշը, որով նա օրհնվեց, նվազեցրեց գոռոզությունը նրա կյանքում և վեհացրեց Մովսեսին՝ որպես Աստծո նպատակների իրականացման գործիք:

Վարդապետը որպես հեզության օրինակ

Հեզության ամենահայտնի և իմաստալից օրինակները կարելի է տեսնել հենց Փրկիչի կյանքում:

Մեծ Քավիչը, ով «վայր իջավ բոլոր բաներից ցած»[20] և տառապեց, արյունահոսեց, և մահացավ

«որպեսզի *մաքրի* ամեն անարդարությունից»,[21] քնքշորեն *լվաց* Իր աշակերտների փոշոտ ոտքերը:[22] Նման հեզությունը Տիրոջ առանձնահատկությունն է՝ որպես ծառա և առաջնորդ:

Հիսուսը արդար արձագանքման և պատրաստակամ հնազանդության կատարյալ օրինակ հանդիսացավ, երբ Նա մեծապես տառապեց Գեթսեմանի պարտեզում:

«Եւ երբոր այն տեղը հասաւ, [Իր աշակերտներին] ասեց. Աղօթք արէք, որ փորձութեան մէջ չ'մտնէք:

Եվ նա 0. . . ծունր դրավ, աղոթք էր անում,

«Եվ ասում. Հայր, եթե կամիս այս բաժակը անցրու ինձանից, սակայն ոչ թե իմ կամքը՝ բայց քո կամքը լինի»:[23]

Փրկիչի հեզությունն այս հավերժական և ներողամիտ փորձառությամբ ցույց է տալիս Աստծո իմաստությունը մեր իմաստությունից վեր դնելու կարևորությունը բոլորիս համար:

Տիրոջ պատրաստակամ հնազանդության և ուժեղ ինքնատիրապետման հետևողականությունը ոգեշնչող և ուսուցանող է մեզ համար: Երբ տաճարի պահակները և հռոմեական զինվորների զինված բանակը ժամանեց Գեթսեմանի պարտեզ, որպեսզի զավթի ու ձերբակալի Հիսուսին, Պետրոսը սուրը հանեց և կտրեց քահանայապետի ծառայի աջ ականջը:[24] Ապա, Փրկիչը դիպավծառայի ականջին ու բուժեց այն:[25] Խնդրում ենք ուշադրություն դարձրեք, որ Նա հասավ օգնության ու օրհնեց իր հնարավոր գերեվարողին, օգտագործելով նույն երկնային զորությունը, որը կարող էր կանխել Նրա գերեվարումը և խաչվելը:

Մտածեք նաև, թե ինչպես Պիղատոսի առաջ Վարդապետը մեղադրվեց և դատապարտվեց խաչելության:[26] Իր դավաճանության ժամանակ Հիսուսը հայտարարեց «Կարծո՞ւմ ես թէ չեմ կարող հիմա իմ Հօրն աղաչել, որ հասցնէ ինձ աւելի քան տասնեւերկու գունդ հրեշտակներ»:[27] Բայց «թե ողջերի, թե մեռածների Հավերժական Դատավորը»[28] պարադոքսալ կերպով դատվեց ժամանակավոր

քաղաքական գործչի առջև: «Եվ [Հիսուսը] նորան ոչ մէկ բան էլ չ'պատասխանեց. Մինչեւ որ կուսակալն էլ շատ զարմացաւ»:[29] Փրկիչի հեզությունն ապացուցվում է Իր կարգապահ արձագանքում, ուժեղ զսպվածությամբ, և Իր անսահման զորությունն անձնական շահի համար գործադրելու չկամությամբ:

Խոստում և վկայություն

Մորմոնը բացահայտում է հեզությունը որպես մի հիմք, որից ծնվում են հոգևոր ունակություններն ու պարգևները:

«Ուստի, եթե մարդ ունի հավատք, նա անպայման պետք է ունենա հույս. քանզի առանց հավատքի չի կարող լինել որևէ հույս:

Եվ դարձյալ, ահա ես ասում եմ ձեզ, որ նա չի կարող ունենալ հավատք և հույս, եթե նա չլինի հեզ և սրտով խոնարհ:

Եթե այդպես է, նրա հավատքը և հույսը զուր է, քանզի ոչ մեկն ընդունելի չէ Աստծո առաջ, բացի հեզից և սրտով խոնարհից. և եթե մարդ հեզ է ու սրտով խոնարհ, և խոստովանում է Սուրբ Հոգու զորությամբ, որ Հիսուսը Քրիստոսն է, նա անպայման պետք է ունենա գթություն. քանզի եթե նա չունի գթություն, նա ոչինչ է. ուստի, նա անպայման պետք է ունենա գթություն»:[30]

Փրկիչը հայտարարեց. «Եվ երանելի են հեզերը, քանզի նրանք կժառանգեն երկիրը»:[31] Հեզությունն աստվածային բնույթի կարևոր կողմն է, որով կարող ենք օժտվել, ապա զարգացնել այն մեր կյանքում Փրկիչի Քավության շնորհիվ:

Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսը մեր հարություն առած և կենդանի Քավիչն է: Եվ ես խոստանում եմ, որ Նա կառաջնորդի, կպաշտպանի և կամրապնդի մեզ, երբ մենք քայլենք Նրա Հոգու հեզությամբ: Ես հայտարարում եմ իմ հաստատուն վկայությունն այս ճշմարտությունների և խոստումների մասին, Տեր Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Բ Պետրոս 1.4:
2. Մատթեոս 19.16:
3. Մատթեոս 19.21–22:
4. Տես Ալմա 10.4:
5. Տես Ալմա 10.5–6:
6. Ալմա 15:16:
7. Ալմա 60.2:
8. Տես Ալմա 60.5–33:
9. Ալմա 61.2, 9:
10. Ռասսել Մ. Նելսոն. «Վկայություն Մորմոնի Գրքի մասին. Ինչի՞ նման կլինի ձեր կյանքն առանց նրա»: *Լիահոնա,* նոյեմբեր 2017, 61:
11. Հենրի Բ. Այրինգ. «Մի վախեցեք բարիք գործել», *Լիահոնա,* նոյեմբեր 2017թ., 100:
12. Մատթեոս 11.29, շեշտադրումն ավելացված է:
13. Վարդապետություն և Ուխտեր 19.23, շեշտադրումն ավելացված է:
14. Տես Դ Թագավորաց 5.1–17:
15. Տես Մոսիա 4.12, 26, Մորոնի 8.25–26:
16. Տես Վարդապետություն և Ուխտեր 46.8:
17. Տես Վարդապետություն և Ուխտեր 46.8–9, 26:
18. Գործք Առաքելոց 7.22:
19. Թվոց 12.3:
20. Վարդապետություն և Ուխտեր 88.6:
21. Ա Հովհաննես 1.9, շեշտադրումն ավելացված է:
22. Տես Հովհաննես 13.4–5:
23. Ղուկաս 22.40–42:
24. Տես Հովհաննես 18.10:
25. Տես Ղուկաս 22.51:
26. Տես Մատթեոս 27.2, 11–26:
27. Մատթեոս 26.53:
28. Մորոնի 10.34:
29. Մատթեոս 27.14:
30. Մորոնի 7.42–44:
31. Մատթեոս 5.5:

Երեց Թեյլոր Գ. Գոդոյ
Յոթանասունից

Եվս մեկ օր

Մենք բոլորս ունենք «այսօր»-ը ապրելու համար, և մեր օրը հաջողակ դարձնելու բանալին զոհաբերելու պատրաստակամությունն է:

Մի քանի տարի առաջ իմ ընկերները մի գեղեցիկ երեխա ունեցան՝ Բրիգամ անունով: Ծնվելուց հետո Բրիգամին ախտորոշեցին Հանթերի համախտանիշ կոչվող մի հազվադեպ հանդիպող հիվանդություն, որը, ցավոք, նշանակում էր, որ Բրիգամը կարճ կյանք էր ունենալու: Մի օր, երբ Բրիգամն ու նրա ընտանիքը տաճարի տարածքում էին, Բրիգամը երկու անգամ կրկնեց մի տարօրինակարտահայտություն. «Եվս մեկ օր»: Հաջորդ օրը Բրիգամը մահացավ:

Ես մի քանի անգամ այցի եմ գնացել Բրիգամի գերեզմանին և ամեն անգամխորհել եմ այդ արտահայտության շուրջ՝ «Եվս մեկ օր»: Ես մտածում էի, թե դա ի՞նչ կարող էր նշանակել, ինչպիսի՞ն կլիներ իմ կյանքը, եթե ես իմանայի, որ միայն մեկ օր ունեմ ապրելու: Ես ինչպե՞ս կվերաբերվեի կնոջս, երեխաներիս և մյուսներին: Որքա՞ն համբերատար և քաղաքավարի ես կլինեի: Ինչպե՞ս հոգ կտանեի իմ մարմնի մասին: Որքա՞ն հաճախ ես կաղոթեի և կուսումնասիրեի սուրբ գրությունները: Ես կարծում եմ, որ այսպես թե այնպես, մենք բոլորս մի պահ ունենալու ենք «ևս մեկ օր» կոչվող միտքը այն մասին, որ պետք է իմաստուն ձևով օգտագործենք մեր ունեցած ժամանակը:

Հին Կտակարանում մենք կարդում ենք Հուդայի թագավոր Եզեկիայի մասին: Մարգարե Եսայիան հայտարարեց Եզեկիային, որ նա շուտով մահանալու է: Մարգարեի խոսքերը լսելով, Եզեկիան սկսեց աղոթել, աղերսել և ուժգին լաց լինել: Այդ ժամանակ, Աստված 15 տարով ավելացրեց Եզեկիայի կյանքը: (Տես Եսայիա 38.1–5):

Եթե մեզ ասվեր, որ կարճ ժամանակ ունենք ապրելու, հավանաբար մենք նույնպես կաղերսեինք կյանքի օրերն ավելացնելու համար, հիշատակելով մեր այն գործերը, որոնք պետք է կատարենք կամ կատարել ենք:

Անկախ այն ժամանակից, որը Տերն Իր իմաստությամբ որոշում է

տալ մեզանից յուրաքանչյուրին, մի բանում կարող ենք վստահ լինել՝ մենք բոլորս ունենք «այսօր»-ը ապրելու համար, և մեր օրը հաջողակ դարձնելու բանալին զոհաբերելու պատրաստակամությունն է:

Տերն ասել է. «Ահա, ներկան կոչվում է *այսօր*, մինչև Մարդու Որդու գալուստը, և *ճշմարիտ որ, սա զոհաբերության օր է*»: (ՎԱՌ 64.23, շեշտադրումն ավելացված է):

Զոհաբերություն բառը սերում է լատիներեն երկու բառերից, որոնցից մեկը նշանակում է «*սուրբ*», մյուսը՝ «*գործել*», այլ կերպ ասած՝ գործերը սրբացնել, վեհացնել:

«Զոհաբերությունը երկնքի օրհնություններ է բերում» (“Praise to the Man,” *Hymns,* no. 27).

Ինչպե՞ս է զոհաբերությունը նշանակալից և օրհնված դարձնելու մեր օրերը:

Նախ, անձնական զոհաբերությունը ամրապնդում է մեզ և արժեք տալիս այն բաներին, որոնք զոհաբերում ենք:

Մի քանի տարի առաջ ծոմապահության կիրակի օրը մի տարեց քույր եկավ ամբիոնի մոտ, որկիսվի իր վկայությամբ: Նա ապրում էր Իկիտոս քաղաքում, որը Պերուական Ամազոնում է գտնվում: Նա պատմեց, որ իր մկրտության պահից ի վեր միշտ նպատակ է ունեցել ստանալ Լիմա Պերու տաճարի արարողությունները: Այդ կինը պարտաճանաչ վճարել է լիարժեք տասանորդ և տարիներովտնտեսել իր փոքրիկ եկամուտը:

Տաճարում լինելու և այնտեղ սուրբ արարողությունները ստանալու հետ կապված նրա ուրախությունն արտահայտվեց հետևյալ խոսքերով. «Այսօր ես կարող եմ ասել, որ վերջապես պատրաստ եմ անցնել վարագույրից այն կողմ: Ես աշխարհի ամենաերջանիկ կինն եմ: Ես կարողացա հավաքել տաճար այցելելու համար անհրաժեշտ գումարը, դուք չգիտեք, թե որքան ժամանակ պահանջվեց, և յոթ օր գետով ու 18 ժամ ավտոբուսով ճամփորդելուց հետո վերջապես ես հասա Տիրոջ տունը: Երբ հեռանում էի այդ սուրբ տեղից, ես ասացի ինքս ինձ, որ տաճար գալու համար ինձանից

պահանջված այդքան զոհաբերություններից հետո ես թույլ չեմ տա, որ թեթևամտորեն վերաբերվեմ իմ կապած ցանկացած ուխտին: Դա կորուստ կլինի: Սա շատ լուրջ պարտավորություն է»:

Այս հաճելի քրոջից ես սովորեցի, որ անձնական զոհաբերությունը անգնահատելի ուժ է, որը խթանում է մեր որոշումներն ու վճիռները: Անձնական զոհաբերությունը խթանում է մեր գործողությունները, մեր պարտավորություններն ու մեր ուխտերը և իմաստ է հաղորդում սուրբ բաներին:

Երկրորդ, զոհաբերությունները, որոնք մենք կատարում ենք ուրիշների համար, իսկ ուրիշները մեր համար, հանգեցնում են օրհնությունների բոլորի համար:

Երբ ես ուսանում էի ատամնաբուժական քոլեջում, մեր տեղական տնտեսության ֆինանսական հեռանկարը առանձնապես խոստումնալից չէր: Գնաճը օր օրի վրա զգալի նվազեցնում էր արտարժույթի փոխարժեքները:

Հիշում եմ այն տարին, երբ ես պետք է անցնեի վիրահատական պրակտիկա: Ես պետք է ունենայի վիրաբուժական անհրաժեշտ բոլոր գործիքները նախքան այդ կիսամյակի սկիզբը: Իմ ծնողները տնտեսել էին անհրաժեշտ գումարը: Բայց մի գիշերվա ընթացքում կտրուկ փոփոխություններ տեղի ունեցան: Մենք գնացինք գործիքները գնելու և հայտնաբերեցինք, որ մեր ունեցած գումարը, որը նախատեսված էր բոլոր գործիքների համար, բավարար էր միայն մի քանի պինցետ վերցնելու, ուրիշ ոչինչ: Մենք տուն վերադարձանք ձեռնունայն և սրտնեղած այն մտքից, որ կորցնելու եմ քոլեջի մեկ տարին: Հետո հանկարծ մայրս ասաց. «Թեյլո՛ր, ե՛կ ինձ հետ, արի գնանք»:

Մենք գնացինք քաղաքի կենտրոն, որտեղ զարդերի առքուվաճառքի շատ կետեր կային: Երբ մենք հասանք մի խանութ, մայրս հանեց իր դրամապանակից թավշյա կապույտ փոքրիկ մի տոպրակ, որի մեջ դրված էր գեղեցիկ ոսկյա ապարանջան: Դրա վրա կար փորագրություն. «Սիրելի դստերս՝ հայրիկից»:

Այդ ապարանջանն իմ պապիկը նվիրել էր նրան իր ծննդյան օրվա առթիվ: Ապա, իմ աչքերի առաջ նա վաճառեց դա:

Երբ մայրս ստացավ գումարը, ինձ ասաց. «Եթե կա մի բան, որում ես համոզված եմ, ապա դա այն է, որ դու ատամնաբույժ ես դառնալու: Գնա՛, գնիր բոլոր անհրաժեշտ գործիքները»: Այժմ կարո՞ղ եք պատկերացնել, թե ես ինչպիսի ուսանող դարձա դրանից հետո: Ես ցանկանում էի լինել լավագույնը և շուտ ավարտել ուսումս, քանի որ գիտեի մորս կատարած զոհաբերության մեծ արժեքը:

Ես հասկացա, որ այն զոհաբերությունները, որոնք մեր սիրելիները կատարում են մեզ համար, թարմացնում են մեզ, ինչպես սառը ջուրը անապատում: Այդպիսի զոհաբերությունը բերում է մեզ հույս և շարժառիթ է հանդիսանում մեզ համար:

Երրորդ, մեր կատարած ցանկացած զոհաբերությունը փոքր է Աստծո Որդու կատարած զոհաբերության համեմատ:

Ի՞նչ արժեք ունի թեկուզ ոսկե ապարանջանը Աստծո Որդու զոհաբերության հետ համեմատած: Ինչպե՞ս կարող ենք հարգել այդ բացառիկ զոհաբերությունը: Ամեն օր կարող ենք հիշել, որ մենք ունենք ևս մեկ օր ապրելու և հավատարիմ լինելու համար: Ամուղեկն ուսուցանում էր. «Այո, ես կկամենայի, որ դուք գործի անցնեք և չկարծրացնեք ձեր սրտերն այլևս. քանզի ահա, հիմա է ժամանակը և ձեր փրկության օրը. և հետևաբար, եթե դուք կամենաք ապաշխարել և չկարծրացնեք ձեր սրտերը, փրկագնման մեծ ծրագիրն անհապաղ պիտի իրագործվի ձեզ համար» (Ալմա 34.31): Այլ կերպ ասած, եթե մենք Տիրոջն առաջարկենք կոտրված սրտի և փշրված հոգու զոհաբերությունը, ապա երջանկության ծրագրի օրհնություններն անմիջապես կդրսևորվեն մեր կյանքում:

Փրկագնման ծրագիրը հնարավոր է շնորհիվ Հիսուս Քրիստոսի զոհաբերության: Ինչպես Հիսուսն Ինքն է նկարագրել՝ զոհաբերությունը «ստիպեց ինձ, նույնիսկ Աստծուս, բոլորից մեծագույնիս, ցավից դողալ և արյունահոսել ամեն մի ծակոտիից և տառապել՝ թե մարմնով, թե ոգով,- և ես ցանկացա, որ գուցե չխմեմ դառը բաժակը և ընկրկեմ» (ՎևՈւ 19.18):

Այդ զոհաբերության շնորհիվ է, որ անկեղծ ապաշխարության գործընթացից հետո մենք կարող ենք զգալ, որ մեր սխալների ու մեղքերի բեռը թեթևացել է: Փաստորեն, մեղքը, ամոթը, ցավը, վիշտը և ինքնավստահության կորուստը փոխարինվում են մաքուր խղճով, երջանկությամբ, ուրախությամբ և հույսով:

Միևնույն ժամանակ, երբ հարգում ենք և շնորհակալ ենք Նրա զոհաբերության համար, մենք լցվում ենք բուռն ցանկությամբ՝ Աստծո ավելի լավ զավակներ լինելու համար, որ հեռու մնանք մեղքից և ավելի ամուր պահենք ուխտերը:

Այնուհետև, ինչպես Ենովսը, մեղքերի թողություն ստանալուց

հետո մենք ինքներս ցանկություն կունենանք զոհաբերել և օգնել մեր եղբայրներին և քույրերին բարեկեցության հարցում (տես Ենովս 1.9)։ Եվ մենք ավելի պատրաստակամ կլինենք ամեն «ևս մեկ օր» հետևել հրավերին, որը Նախագահ Հովարդ Վ. Հանթերն է հղել մեզ, ասելով. «Հարթեք վեճը։ Փնտրեք մոռացված ընկերոջը։ Հեռացրեք կասկածը և փոխարինեք դա վստահությամբ։ . . . Տվեք մեղմ պատասխան։ Քաջալերեք երիտասարդներին։ Հավատարմություն ցուցաբերեք խոսքով և գործով։ Պահեք խոստումը։ Հրաժարվեք ոխակալությունից։ Ներեք թշնամուն։ Ներողություն խնդրեք։ Փորձեք հասկանալ։ Քննեք ուրիշների հանդեպ ձեր պահանջները։ Նախ մտածեք մեկ ուրիշի մասին։ Եղեք բարի։ Եղեք բարյացակամ։ Մի քիչ ավելի շատ ծիծաղեք։ Հայտնեք ձեր երախտագիտությունը։ Ողջունեք անծանոթին։ Ուրախացրեք մի երեխայի սիրտը։ . . . Արտահայտեք ձեր սերը, և շարունակ արտահայտեք այն» (*Teachings of Presidents of the Church: Howard W. Hunter* [2015], 32; adapted from “What We Think Christmas Is,” *McCall’s,* Dec. 1959, 82–83).

Հուսով եմ, որ մենք կհագեցնենք մեր օրերը այն ազդակով և ուժով, որոնք մեր կատարած կամ ուրիշներից ստացած զոհաբերությունն է տալիս։ Հատուկ ձևով մենք կարող ենք վայելել խաղաղությունը և ուրախանալ նրանով, ինչ տալիս է մեզ Միածնի զոհաբերությունը, այն խաղաղությունը, որի մասինկարդում ենք. «Աղամն ընկավ, որպեսզի մարդիկ լինեն. և մարդիկ կան, որպեսզի ունենան ուրախություն» (տես 2 Նեփի 2.25)։ Այդ ուրախությունը իրական է, որը միայն զոհաբերությունը և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Քավությունը կարող են տալ։

Ես աղոթում եմ, որ մենք հետևենք Նրան, հավատանք, սիրենք Նրան, և զգանք սուրբ զոհաբերությամբ ցուցաբերած Նրա սերը, ամեն անգամ, երբ հնարավորություն ունենք ապրել ևս մեկ օր։ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն։ ■

Բոննի Լ. Օսկարսոն
Վերջերս ազատված Սփոփող Միության Գերագույն Նախագահ

Երիտասարդ Կանայք աշխատանքում

Յուրաքանչյուր երիտասարդ կին Եկեղեցում պիտի զգա գնահատված, ունենա ծառայելու հնարավորություններ և զգա, որ ինքն ունի ինչ-որ արժեքավոր բան, որը կարող է ներդնել այս աշխատանքում։

Մի տարի առաջ գերագույն համաժողովի քահանայության նիստի ժամանակ Եպիսկոպոս Ջերալդ Կոսեն խոսեց Եկեղեցու տղամարդկանց հետ, նկարագրելով, թե ինչպես են Ահարոնյան և Մելքիսեդեկյան քահանայություն կրողներն անբաժան գործընկերներ հանդիսանում փրկության աշխատանքն իրականացնելիս։[1] Այդ ուղերձը մեծ օրհնություն եղավ, օգնելով Ահարոնյան քահանայություն կրող երիտասարդ տղամարդկանց՝ տեսնելու իրենց դերը Աստծո արքայությունը երկրի վրա կառուցելու գործում։ Նրանց համատեղ ծառայությունն ամրապնդում է Եկեղեցին և առաջ բերում ավելի խորը դարձ և պարտավորություն երիտասարդ տղամարդկանց սրտերում, երբ նրանք տեսնում են իրենց ներդրումների արժեքը, և թե որքան հրաշալի է այս աշխատանքը։

Այսօր կցանկանայի, որ իմ խոսքերը լրացնեին այդ ուղերձը, մինչ ես կխոսեմ Եկեղեցու երիտասարդ կանանց մասին, ովքեր հավասարապես անհրաժեշտ և կարևոր են իրենց ընտանիքներում և Տիրոջ Եկեղեցում՝ Նրա աշխատանքն իրականացնելիս։

Եպիսկոպոս Կոսեի նման ես էլ իմ պատանեկության տարիների մեծ մասն անցկացրել եմ Եկեղեցու մի փոքրիկ ճյուղում, և ինձ հաճախ խնդրում էին կատարել հանձնարարություններ և կոչումներ, որոնք սովորաբար նախատեսված էին չափահասների համար։ Օրինակ, նրանք, ովքեր ընդգրկված էին երիտասարդների ծրագրում, հաճախ օգնում էին կազմակերպել և անցկացնել մեր միջոցառումներն ու հատուկ մրցումները։Մենք գրում էինք բեմականացումներ, կազմում երգչախումբ ճյուղի միջոցառումների համար և լիարժեք մասնակցություն էինք ունենում յուրաքանչյուր ժողովի ժամանակ։ Ես կանչվել էի որպես ճյուղի երաժշտության ղեկավար և ամեն շաբաթ հաղորդության ժողովին խմբավարում էի երգերը։ Դա հրաշալի փորձառություն էր 16 տարեկանում. յուրաքանչյուր կիրակի ճյուղում կանգնել բոլորի առջև և խմբավարել նրանց օրհներգերը կատարելիս։ Ես զգացի, որ իմ կարիքն ունեին և գիտեի, որ որոշակի

ներդրում կարող էի ունենալ: Մարդիկ այնտեղ ունեին իմ կարիքը, և ինձ դուր էր գալիս օգտակար լինել: Այդ փորձառությունն օգնեց վկայություն ձեռք բերել Հիսուս Քրիստոսի վերաբերյալ, և ինչպես Եպիսկոպոս Կոսեի դեպքում, այն խարսխեց իմ կյանքը ավետարանին ծառայելու վրա:

Յուրաքանչյուր անդամ պետք է իմանա, թե որքան է զգացվում իր կարիքը: Յուրաքանչյուր անձնավորություն որևէ կարևոր բան ունի ներդնելու և ունի յուրահատուկ տաղանդներ ու ունակություններ, որ օգնում են առաջ տանել այս կարևոր աշխատանքը: Մեր երիտասարդ տղամարդիկ ունեն Վարդապետություն և Ուխտերում նկարագրված Ահարոնյան քահանայության պարտականությունները, որոնք բավականին տեսանելի են: Գուցե այդքան էլ ակնհայտ չէ Եկեղեցու երիտասարդ կանանց, նրանց ծնողների և նրանց ղեկավարների համար, որ իրենց մկրտության օրվանից սկսած երիտասարդ կանայք ունեն ուխտի հետ կապված պարտականություններ՝ «սգալու նրանց հետ, ովքեր սգում են. այո, և մխիթարել նրանց, ովքեր կարիք ունեն մխիթարության, և կանգնելու, որպես Աստծո վկաներ բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում, որ [նրանք] կարող է լինեն, նույնիսկ՝ մինչև մահ»:[2] Երիտասարդ կանայք հնարավորություններ ունեն կատարելու այդ պարտականություններն իրենց ծխերում և ճյուղերում և երբ ծառայում են դասարանների նախագահություններում, երիտասարդների խորհուրդներում և այլ կոչումներում: Նույնիսկ երիտասարդ կինը Եկեղեցում պիտի զգա գնահատված, ունենա ծառայելու հնարավորություններ և զգա, որ ինքն ունի ինչ-որ արժեքավոր բան, որ կարող է ներդնել այս աշխատանքում:

Ձեռնարկ 2-ում մենք սովորում ենք, որ փրկության աշխատանքը մեր ծխերում ներառում է «անդամների միսիոներական աշխատանքը, նորադարձների պահպանումը, քիչ ակտիվ անդամների ակտիվացումը, տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքները և ավետարանի ուսուցումը»:[3] Այս աշխատանքը



ղեկավարվում է մեր հավատարիմ եպիսկոպոսների կողմից, ովքեր կրում են քահանայության բանալիներ իրենց ծխի համար: Երկար տարիներ մեր նախագահությունը տալիս է հետևյալ հարցը. «Նշված ոլորտներից որո՞ւմ չեն կարող մեր երիտասարդ կանայք ներգրավված լինել»: Պատասխանն այն է, որ նրանք որևէ բան ունեն ներդնելու այս աշխատանքի *բոլոր* ոլորտներում:

Օրինակ, վերջերս Լաս Վեգասի տարածքում հանդիպեցի մի քանի երիտասարդ կանանց, ովքեր կանչվել էին ծառայելու որպես ծխի տաճարային և ընտանեկան պատմության խորհրդատուներ: Նրանք խանդավառությամբ փայլում էին, որ կարող են ուսուցանել և օգնել իրենց ծխի անդամներին գտնել իրենց նախնիներին: Նրանք արժեքավոր հմտություններ ունեին կապված համակարգիչների հետ, սովորել էին, թե ինչպես օգտագործել FamilySearch-ը և խանդավառությամբ կիսվում էին ուրիշների հետ այդ գիտելիքներով: Պարզ երևում էր, որ նրանք վկայություններ և հասկացողություն ունեին մեր մահացած նախնիների անունները գտնելու կարևորության հետ կապված, որպեսզի նրանց համար տաճարում հնարավոր լինի կատարել կարևոր փրկող արարողությունները:

Ամիսներ առաջ ես հնարավորություն ունեցա փորձարկելու մի գաղափար երկու 14-ամյա երիտասարդ կանանց հետ: Ես ձեռք բերեցի ծխի խորհրդի երկու իրական օրակարգերի օրինակներ և մեկական օրինակ տվեցի Էմմային և Մեգիին: Ես խնդրեցի նրանց կարդալ օրակարգը և տեսնել՝ արդյոք ծխի խորհրդում կայինգործնական ծրագրեր, որոնց համաձայն նրանք կարող էին ծառայություն մատուցել: Էմման տեսավ, որ նոր ընտանիք էր գալիս իրենց ծուխ, և ասաց, որ կարող էր օգնել նրանց տեղափոխվել և դասավորել նրանց իրերը: Նա մտածեց, որ կարող էր ընկերանալ ընտանիքի երեխաների հետ և ծանոթացնել նրանց նոր դպրոցի հետ: Նա տեսավ, որ շուտով տեղի էր ունենալու ծխի ընթրիք և զգաց, որ շատ տարբեր եղանակներով կարող էր առաջարկել իր ծառայությունները:

Մեգին տեսավ, որ ծխում կային մի քանի ծեր մարդիկ, ովքեր ունեին այցելությունների և ընկերակցության կարիք: Նա ասաց, որ սիրով կայցելեր և կօգներ այդ հրաշալի ծեր անդամներին: Նա նաև զգաց, որ կարող էր օգնել ուսուցանել ծխի անդամներին, թե ինչպես ստեղծել և օգտագործել սոցիալական լրատվամիջոցների կայքերը: Այդ օրակարգերում իսկապես չկար մի կետ, որի հետ կապված այդ երկու երիտասարդ կանայք *չկարողանային* օգնել:

Արդյո՞ք նրանք, ովքեր նստում են ծխի խորհուրդներին կամ ծխում ունեն որևէ կոչում, նայում են երիտասարդ կանանց որպես արժեքավոր աղբյուրների, որոնք կարող են օգնել հոգալու մեր ծխերի շատ կարիքներ: Սովորաբար լինում են բազմաթիվ իրավիճակներ, երբ պահանջվում է որևէ մեկի ծառայությունը, և մենք հաճախ մտածում ենք միայն ծխի չափահասների մասին, որ հոգան այդ կարիքները: Ճիշտ ինչպես Ահարոնյան Քահանայություն կրողներն են հրավիրվել աշխատելու իրենց հայրերի և Մելքիսեդեկյան Քահանայություն կրող այլ տղամարդկանց հետ, մեր երիտասարդ կանայք կարող են կանչվել ծառայություն մատուցելու և ծխի անդամների կարիքները հոգալու համար իրենց մայրերի կամ այլ օրինակելի քույրերի հետ: Նրանք ունակ են, ձգտող և պատրաստակամ անելու շատ ավելին, քան պարզապես կիրակի օրերին եկեղեցի հաճախելը:

Երբ մենք խորհենք դերերի մասին, որ մեր երիտասարդ կանանցից

կակնկալվի ստանձնել մոտ ապագայում, մենք գուցե հարցնենք ինքներս մեզ, թե ինչպիսի փորձառություններ կարող ենք ապահովել նրանց համար այժմ, որոնք կօգնեն նրանց նախապատրաստվել լինել միսիոներներ, ավետարանի գիտակներ, Եկեղեցու օժանդակ կազմակերպությունների ղեկավարներ, տաճարային աշխատողներ, կանայք, մայրեր, ուսուցիչներ, օրինակներ և ընկերներ: Նրանք, ի դեպ, այժմ կարող են սկսել կատարել այդ դերերից շատերը: Երիտասարդներին հաճախ խնդրում են օգնել ուսուցանել դասեր կիրակի օրերին իրենց դասարաններում: Այժմ մեր երիտասարդ կանանց հնարավորություն է տրվում ծառայություն կատարել տաճարում, որ նախկինում կատարվել է արարողություններ կատարողների կամ կամավորների կողմից, երբ նրանք այցելեն իրենց երիտասարդական խմբերով, որպեսզի մկրտություններ կատարեն մահացածների համար: Երեխաների Միության մեր աղջիկներին այժմ հրավիրում են այցելել Տաճարի և Քահանայության Նախապատրաստության ժողովներին, որը կօգնի նրանց հասկանալ, որ նրանք նույնպես կարևոր մասնակիցներ են քահանայության ղեկավարած աշխատանքում: Նրանք սովորում են, որ տղամարդիկ, կանայք, երիտասարդները և երեխաները բոլորն էլ կարող են ստանալ քահանայության օրհնություններ և բոլորն էլ կարող են ակտիվ դեր խաղալ Տիրոջ աշխատանքն առաջ տանելու գործում:

Եպիսկոպոսնե՛ր, մենք գիտենք, որ ձեր պարտականությունները հաճախ ծանր են լինում, սակայն ճիշտ ինչպես ձեր կարևորագույն առաջնահերթություններից մեկն է նախագահել Ահարոնյան քահանայության քվորումներում, *Հեռնարկ 2*-ում նշված է, որ «եպիսկոպոսը և նրա խորհրդականները քահանայության ղեկավարություն են ապահովում Երիտասարդ Կանանց կազմակերպության համար: Նրանք հսկում և ամրացնում են յուրաքանչյուր երիտասարդ կնոջ՝ սերտորեն համագործակցելով ծնողների և Երիտասարդ Կանանց ղեկավարների հետ»: Այնտեղ նաև նշվում է, որ «եպիսկոպոսը և նրա խորհրդականները պարբերաբար մասնակցում են Երիտասարդ Կանանց ժողովներին, ծառայություններին և միջոցառումներին»:[4] Մենք երախտապարտ ենք այն եպիսկոպոսների համար, ովքեր ժամանակ են տրամադրում այցելելու Երիտասարդ Կանանց դասերին և ովքեր հնարավորություններ են տալիս երիտասարդ կանանց լինելու ավելին, քան միայն հանդիսատեսներ այս աշխատանքում: Շնորհակալ ենք ձեր հսկողության համար, որ երիտասարդ կանայք գնահատված մասնակիցներ դառնան ծխի անդամների կարիքները հոգալիս: Իմաստալից եղանակներով ծառայելու այս հնարավորությունները շատ ավելի են օրհնում նրանց, քան միջոցառումները, որոնց ժամանակ նրանք պարզապես զվարճանում են:

Եկեղեցու երիտասա՛րդ կանայք, ձեր պատանեկության տարիները կարող են զբաղված և հաճախ դժվարին լինել: Մենք նկատել ենք, որ ձեզանից շատերը պայքարում են ցածր ինքնագնահատականի, անհանգիստ վիճակների, մեծ լարվածության հանգամ դեպրեսիայի դեմ: Ձեր սեփական խնդիրների վրա կենտրոնանալու փոխարեն ձեր մտքերը դեպի ուրիշները սևեռելով գուցե չլուծեք այդ բոլոր խնդիրները, սակայն ծառայությունը հաճախ կարող է թեթևացնել ձեր բեռնը և ձեր խնդիրներն ավելի հեշտ լուծումներ կգտնեն: Ինքնագնահատականը բարձրացնելու լավագույն եղանակը ուրիշների հանդեպ մեր հոգատարության և ծառայության միջոցով ցույց տալն է, որ մենք շատ արժեքներ ունենք, որոնք կարող ենք ներդնել:[5] Ես խրախուսում եմ ձեզ, երիտասա՛րդ կանայք, բարձրացնել ձեր ձեռքերը կամավորներ լինելու համար և գործի դնել այդ ձեռքերը, երբ տեսնում եք կարիքներ ձեր շուրջը: Երբ դուք կատարեք ձեր ուխտի պարտականությունները և մասնակցեք Աստծո արքայության կառուցմանը, օրհնություններ կհորդեն ձեր կյանք և դուք կբացահայտեք աշակերտության մեծ ու հարատև ուրախությունը:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, մեր երիտասարդ կանայք հրաշալի են: Նրանք ունեն տաղանդներ, անսահման ոգևորություն ու եռանդ, և նրանք կարեկցող ու հոգատար են: Նրանք *ուզում* են ծառայել: Նրանք պետք է իմանան, որ գնահատված են և կարևոր դեր են խաղում փրկության աշխատանքում: Ճիշտ ինչպես երիտասարդ տղամարդիկ պատրաստվում են Ահարոնյան Քահանայությունում ավելի մեծ ծառայության համար, մինչ նրանք կստանան Մելքիսեդեկյան Քահանայությունը, մեր երիտասարդ կանայք պատրաստվում են դառնալ աշխարհի ամենահրաշալի կանանց կազմակերպության՝ Սփոփող Միության անդամները: Այս զեղեցիկ, ուժեղ, հավատարիմ երիտասարդ կանայք և երիտասարդ տղամարդիկ միասին նախապատրաստվում են լինել կանայք և ամուսիններ, մայրեր և հայրեր, ովքեր կստեղծեն ընտանիքներ, որոնք արժանի կլինեն Աստծո սելեստիալ արքայությանը:

Ես վկայում եմ, որ մեր Երկնային Հոր գործն է իրականացնել Իր զավակների անմահությունն ու հավերժական կյանքը:[6] Մեր թանկագին երիտասարդ կանայք կարևոր դեր ունեն օգնելու իրականացնել այս մեծ աշխատանքը: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Ջերալդ Կոսե, «Պատրաստեք ճանապարհը», *Լիահոնա,* մայիս 2017, 75–78:
2. Մոսիա 18.9:
3. *Հեռնարկ 2. Սպասավորել Եկեղեցում* (2010), էջ 22:
4. *Հեռնարկ 2*, 10.3.1:
5. Տես Մատթեոս 10.39:
6. Տես Մովսես 1.39:

Երեց Թանիելա Բ. Վակոլո
Յոթանասունից

Փրկարար արարողությունները մեզ սքանչելի լույս կբերեն

Արարողություններին մասնակցելով և դրանց հետ կապված ուխտերը պատվելով, դուք կստանաք սքանչելի լույս և պաշտպանություն մշտապեսմթագնող այս աշխարհում։

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, ես հրճվում եմ ձեզ հետ միասին ավետարանում կամ Քրիստոսի վարդապետության մեջ։

Երբ Երեց Նիլ Լ. Անդերսենը դեռ Յոթանասունական էր, ընկերներից մեկը մի օր հարցրեց նրան,թե ինչ զգացողություններ ունեցավ գերագույն համաժողովի ժամանակ 21000 մարդու առջև խոսելիս։ Երեց Անդերսենը պատասխանեց. «Հուզվածության պատճառն այդ 21000 մարդիկ չեն, այլ 15 Եղբայրները, որ նստած են հետևում»։ Ես մի լավ ծիծաղեցի այդ ժամանակ, բայց հիմա ես եմ զգում դա։ Որքան եմ ես սիրում և հաստատում այս 15 տղամարդկանց որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ։

Տերն ասաց Աբրահամին, որ իր սերնդի և քահանայության միջոցով երկրի բոլոր ընտանիքները կօրհնվեն «Ավետարանի օրհնություններով, . . . այսինքն՝ հավերժական կյանքի օրհնություններով» (Աբրահամ 2.11, տես նաև հատվածներ 2–10)։

Ավետարանի այս խոստացված օրհնությունները և քահանայությունը վերականգնվեցին երկրի վրա, որից հետո 1842թ. Մարգարե Ջոզեֆ Սմիթը օժտումը սպասավորեց ընդամենը մի քանի տղամարդկանց և կանանց համար։ Մերսի Ֆիլդինգ Թոմփսոնը նրանցից մեկն էր։ Մարգարեն ասաց նրան. «Այս [օժտումը] քեզ խավարից դուրս կբերիդեպի սքանչելի լույսը»։[1]

Այսօր ես ուզում եմ կենտրոնանալ փրկարար արարողությունների վրա, որոնք ինձ և ձեզ կբերեն սքանչելի լույսը։

Արարողություններ և ուխտեր

Հավատքին հավատարիմ գրքույկում մենք կարդում ենք. «Արարողությունը սրբազան, կանոնակարգված գործողություն է, որը կատարվում է քահանայության իշխանությամբ։ Արարողությունները, [որոնք] կարևոր են մեր վեհացման համար . . . կոչվում են փրկարար արարողություններ։ Դրանք են՝ մկրտությունը, հաստատումը, Մելքիսեդեկյան Քահանայության կարգումը (տղամարդկանց համար), տաճարի օժտումը և ամուսնության կնքումը»։[2]

Երեց Դեյվիդ Ա. Բեդնարն ուսուցանել է. «Փրկության և վեհացման արարողությունները, որոնք սպասավորվում են Տիրոջ վերականգնված Եկեղեցում, . . . ներկայացնում են լիազորված ուղիներ, որոնց միջոցով երկնքի զորությունները կարող են հորդել դեպի մեր անձնական կյանք»։[3]

Երկկողմանի մետաղադրամի նման, փրկության արարողություններն ուղեկցվում են Աստծո հետ կապվող ուխտերով։ Աստված մեզ

օրինություններ է խոստացել, եթե մենք հավատարմությամբ պատվենք այդ ուխտերը։

Ամուղեկ մարգարեն հայտարարել է. «Սա . . . է ժամանակը՝ նախապատրաստվելու հանդիպելու Աստծուն» (Ալմա 34.32)։ Ինչպե՞ս ենք նախապատրաստվում։ Արժանիորեն ստանալ արարողությունները Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի խոսքերի համաձայն՝ մենք պետք է նաև «մնանք ուխտի ուղու վրա»։ Նախագահ Նելսոնը շարունակել է. «Փրկիչին հետևելու ձեր պարտավորվածությունը՝ ուխտեր կապելով Նրա հետ և պահելով այդ ուխտերը, դուռ կբացի տղամարդկանց, կանանց և երեխաների համար նախատեսված հոգևոր բոլոր օրհնությունների և արտոնությունների առաջ»։[4]

Ջոն և Բոննի Նյումենները ձեզանից շատերի նման ստացել են Նախագահ Նելսոնի խոստացած հոգևոր օրհնությունները։ Մի կիրակի իրենց երեք երեխաների հետ եկեղեցի այցելելուց հետո Բոննին ասաց Ջոնին, ով Եկեղեցու անդամ չէր. «Ես չեմ կարող սա մենակ անել։ Դու պիտի որոշես. կամ դու կգաս իմ եկեղեցի մեզ հետ միասին, կամ դու ընտրիր եկեղեցի, որտեղ մենք կարող ենք գնալ միասին, բայց երեխաները պիտի իմանան, որ իրենց հայրը նույնպես սիրում է Աստծուն»։ Հաջորդ կիրակի և դրան հաջորդող բոլոր կիրակիներին Ջոնը ոչ միայն հաճախեց, այլև ծառայեց՝ դաշնամուր նվագելով շատ ծխերում, ճյուղերում և Երեխաների Միություններում տարիներ շարունակ։ Ես հնարավորություն ունեցա հանդիպել Ջոնի հետ 2015թ. ապրիլին, և այդ հանդիպման ժամանակ մենք քննարկեցինք, որ լավագույն միջոցը, որով նա կարող էր իր սերը ցուցաբերել Բոննի հանդեպ, նրան տաճար տանելն էր, սակայն դա չէր կարող տեղի ունենալ, եթե նա չմկրտվեր։

39 տարի Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի հաճախելուց հետո Ջոնը մկրտվեց 2015թ.-ին։ Մեկ տարի անց Ջոնը և Բոննին կնքվեցին Մեմֆիս Թեմպլի Տաճարում, Բոննիի՝ իր անձնական օժտումը ստանալուց 20 տարի անց։ Նրանց 47-ամյա որդին՝ Ռոբերտը, իր հոր մասին ասաց. «Հայրիկն իսկապես ծաղկել է այն օրվանից, երբ ստացել է քահանայությունը»։ Բոննին ավելացրեց. «Ջոնը միշտ եղել է երջանիկ և ուրախ անձնավորություն, սակայն արարողությունները ստանալով և իր ուխտերը պատվելով, նա ավելի հեզ դարձավ»։

Քրիստոսի Քավությունը և Նրա օրինակը

Շատ տարիներ առաջ Նախագահ Բոյդ Ք. Փաքերը նախազգուշացրել է. «Լավ վարքն առանց ավետարանի արարողությունների ոչ կփրկի, ոչ էլ կվեհացնի մարդկությանը»։[5] Բացի դրանից, մեզ անհրաժեշտ են ոչ միայն արարողությունները և ուխտերը, որպեսզի վերադառնանք մեր Հոր մոտ, այլև ունենք Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության կարիքը։

Բենիամին թագավորն ուսուցանել է, որ միայն Քրիստոսի անունով և միջոցով կարող է փրկություն գալ մարդկանց զավակներին (տես Մոսիա 3.17, տես նաև Հավատո Հանգանակ 1.3)։

Իր Քավության միջոցով Հիսուս Քրիստոսը փրկագնեց մեզ Ադամի Անկման հետևանքներից և հնարավոր դարձրեց մեր ապաշխարությունը և, ի վերջո, վեհացումը։ Իր կյանքով Նա օրինակ ծառայեց, որ մենք ստանանք փրկարար արարողությունները, որոնցում «բացահայտվում է աստվածայնության զորությունը» (ՎԿՈ 84.20)։

Երբ Փրկիչը ստացավ մկրտության արարողությունը՝ «կատարելու

ամեն արդարություն» (տես 2 Նեփի 31.5–6), սատանան փորձեց Նրան։ Նմանապես, մեր փորձություններն էլ չեն դադարում մկրտությունից կամ կնքումից հետո, սակայն սրբազան արարողությունները ստանալով և դրանց հետ կապված ուխտերը պատվելով, մենքլցվում ենք հրաշալի լույսով և ուժ ստանում՝ դիմակայելու և հաղթահարելու փորձությունները։

Նախազգուշացում

Եսայիան մարգարեացավ, որ վերջին օրերում «երկիրը պղծուած է լինելու . . . որովհետեւ . . . պատուիրանքը՝ փոխել [են]» (Եսայիա 24.5, տես նաև ՎԿՈ 1.15)։

Նմանատիպ նախազգուշացում տրվել է նաև Մարգարե Ջոզեֆ Սմիթին, որ ոմանք «դեպի [Տերն] են հակված իրենց շուրթերով, . . . [և] նրանք վարդապետություններ են ուսուցանում, որոնք մարդկանց պատվիրաններն են, և նրանք ունեն աստվածայնության կերպարանք, բայց ուրանում են նրա զորությունը» (Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.19)։

Պողոսը նույնպես նախազգուշացրել է, որ շատերը կունենան «աստուածպաշտութեան կերպարանք, բայց նորա զօրութիւնն ուրացած են. նորանցից էլ ետ քաշուիր» (Բ Տիմոթեոս 3.5)։ Ես կրկնում եմ, շրջվեք նրանցից։

Կյանքի բազմաթիվ զվարճություններն ու գայթակղությունները նման են «յափշտակող գայլերի» (Մատթեոս 7.15)։ Ճշմարիտ հովիվը կնախապատրաստի, կպաշտպանի և կնախազգուշացնի ոչխարներին և հոտին, երբ հայտնվեն այդ գայլերը (տես Հովհաննես 10.11–12)։ Որպես օգնական հովիվներ, ովքեր ձգտում են հետևել Բարի Հովվի կատարյալ կյանքի օրինակին, արդյո՞ք մենք մեր սեփական հոգու, ինչպես նաև ուրիշների հովիվները չենք։ Մարգարեների, տեսանողների և հայտնողների խորհրդով, ում մենք նոր հաստատեցինք, և Սուրբ Հոգու զորությամբ ու պարգևով մենք կարող ենք տեսնել մոտեցող գայլերին, եթե հսկենք և նախապատրաստված լինենք։ Ի հակադրություն դրա, եթե մենք անփույթ հովիվ ենք

մեր սեփական հոգու և ուրիշների հոգիների համար, գուցե կորուստներ լինեն: Անփութությունը հանգեցնում է կորստի: Ես հրավիրում եմ մեզանից յուրաքանչյուրին լինել հավատարիմ հովիվ:

Փորձառություն և վկայություն

Հաղորդությունը մի արարողություն է, որն օգնում է մեզ մնալ ուղու վրա, իսկ արժանիորեն ճաշակելը փաստում է այն մասին, որ մենք պահում ենք ուխտերը, որոնք կապված են մնացած բոլոր արարողությունների հետ: Տարիներ առաջ, երբ ես և կինս՝ Անիտան, ծառայում էինք Արկանզաս Փոքրիկ Ժայռ Միսիայում, ես գնացի ուսուցանելու երկու երիտասարդ միսիոներների հետ: Դասի ընթացքում լավ եղբայրը, ում մենք ուսուցանում էինք, ասաց. «Ես եղել եմ ձեր եկեղեցում, ինչո՞ւ եք դուք ուտում հացը և խմում ջուրն ամեն կիրակի: Մեր եկեղեցում մենք անում ենք դա տարին երկու անգամ՝ Զատիկի տոնին և Սուրբ Ծննդյան ժամանակ, և դա շատ նշանակալից է»:

Մենք կիսվեցինք նրա հետ, որ մեզ պատվիրվել է «հաճախ հավաքվել ճաշակելու հացից և գինուց» (Մորոնի 6.6, տես նաև Վեհ. 20.75): Մենք բարձրաձայն կարդացինք Մատթեոս 26 և 3 Նեփի 18 գլուխները: Նա պատասխանեց, որ, այնուամենայնիվ, չի տեսնում դրա անհրաժեշտությունը:

Ապա մենք կիսվեցինք հետևյալ համեմատությամբ. «Պատկերացրեք, որ ձեզ հետ տեղի է ունեցել լուրջ ավտովթար: Դուք վնասվել եք և կորցրել գիտակցությունը: Մի մարդ վազելով օգնության է հասնում և տեսնելով, որ դուք անգիտակից եք, հավաքում է շտապ օգնության համարը՝ 911: Ձեր մասին հոգ են տանում և դուք ուշքի եք գալիս»:

Մենք հարցրինք այդ եղբորը. «Հենց դուք ի վիճակի լինեք գիտակցելու, թե ինչ է կատարվում ձեր շուրջը, ի՞նչ հարցեր կունենաք»:

Նա ասաց. «Ես կցանկանայի իմանալ, թե ինչպես հայտնվեցի այդտեղ և ով գտավ ինձ: Ես կցանկանայի շնորհակալություն հայտնել նրան ամեն օր, քանի որ նա փրկեց իմ կյանքը»:

Մենք կիսվեցինք այս լավ եղբոր հետ, թե ինչպես է Փրկիչը փրկել մեր կյանքը, և մենք ինչպես պետք է շնորհակալություն հայտնենք Նրան ամեն օր, ամեն օր, ամեն օր:

Ապա մենք հարցրինք. «Իմանալով, որ Նա տվեց Իր կյանքը մեր և ձեր համար, որքա՞ն հաճախ եք դուք ուզում ուտել հացը և խմել ջուրը՝ որպես Նրա մարմնի և արյան խորհրդանիշ»:

Նա ասաց. «Ես հասկացա, հասկացա: Սակայն ևս մի բան: Ձեր եկեղեցին աշխույժ չէ մեր եկեղեցու նման»:

Դրան մենք այսպես արձագանքեցինք. «Ի՞նչ կանեիք, եթե Փրկիչ Հիսուս Քրիստոսը ներս մտներ ձեր դռնից»:

Նա ասաց. «Ես անմիջապես ծնկի կգայի»:

Մենք հարցրինք. «Արդյո՞ք դա այն չէ, ինչ դուք զգում եք, երբ մտնում եք Վերջին Օրերի Սրբերի ժողովատներ՝ ակնածանք Փրկիչի հանդեպ»:

Նա ասաց. «Ես հասկացա, հասկացա, հասկացա»:

Նա եկավ եկեղեցի այդ Զատիկի կիրակի օրը և շարունակեց վերադառնալ:

Ես հրավիրում եմ մեզանից յուրաքանչյուրին հարցնել ինքներս մեզ. «Ի՞նչ արարողություններ, ներառյալ հաղորդությունը, ես պետք է ստանամ, և ի՞նչ ուխտեր ես պետք է կապեմ, պահեմ և պատվեմ»: Ես խոստանում եմ, որ արարողություններին մասնակցելով և դրանց հետ կապված ուխտերը պատվելով, դուք կստանաք սքանչելի լույս և պաշտպանություն այսմշտապես մթագնող աշխարհում: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 441:
2. *Հավատքին Հավատարիմ. Ամերիկյան վկայակոչում* (2004), 39, տես նաև *Ձեռնարկ 2. Ծառայություն Եկեղեցում* (2010), 2.1.2:
3. Դեյվիդ Ա. Բեդնար, «Միշտ պահեք ձեր մեղքերի թողությունը», *Լիահոնա,* մայիս 2016, 60:
4. Ռասսել Մ. Նելսոն, «Միասին առաջ ընթանալով», *Լիահոնա,* ապրիլ 2018, 7:
5. Բոյդ Ք. Փաքեր, «Միակ ճշմարիտ եկեղեցին», *Ensign,* նոյ. 1985, 82:

Դեվին Գ. Դյուրան
Կիրակնօրյա Դպրոցի Գերագույն
Նախագահության Առաջին Խորհրդական

Ուսուցում տանը՝ ուրախալի և սրբազան պարտականություն

Ես աղերսում եմ երկնքի օգնությունը, երբ մենք ձգտենք լինել Քրիստոսանման ուսուցիչներ մեր տներում։

Իմ թանկագին կինը՝ Ջուլին և ես, վեց սիրելի զավակներ ենք մեծացրել և վերջերս մեր տունը դարձել դատարկ բույն։ Ինչպես եմ կարոտում մեր երեխաներին, երբ նրանք ողջ ժամանակ մեզ հետ մեր տանն էին։ Ես կարոտում եմ այն ժամանակը, երբ սովորում էի նրանցից և ուսուցանում նրանց։

Այսօր ես ուղղում եմ իմ մտքերը բոլոր ծնողներին և բոլոր նրանց, ովքեր ուզում են ծնող դառնալ։ Ձեզանից շատերը երեխաներ են մեծացնում այժմ։ Մյուսների համար այդ ժամանակը կարող է շուտով գալ։ Իսկ մյուսների համար ծնող դառնալը դեռևս կարող է լինել ապագա օրհնություն։Աղոթում եմ, որ մենք բոլորս ընդունենք երեխային ուսուցանելու ուրախալի և սրբազան պարտականությունը։[1]

Որպես ծնողներ, մենք ներկայացնում ենք մեր երեխաներին Երկնային Հորը և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին։ Մենք օգնում ենք մեր երեխաներին ասել իրենց առաջին աղոթքը։ Մենք առաջարկում ենք առաջնորդություն և աջակցություն, երբ նրանք մտնում են ուխտի արահետը[2] մկրտության միջոցով։ Մենք ուսուցանում ենք նրանց հնազանդվել Աստծո պատվիրաններին։ Մենք սովորեցնում ենք նրանց Իր զավակների համար Նրա ծրագրի մասին և օգնում ենք նրանց ճանաչել Սուրբ Հոգու շշունջները։ Մենք պատմում ենք նրանց հնադարյան մարգարեների մասին պատմություններ և

խրախուսում նրանց հետևել ապրող [մարգարեներին]։ Մենք աղոթում ենք ձեզ համար, սիրում ու հիանում ենք ձեզանով։ Մենք վկայում ենք մեր երեխաներին տաճարային օրհնությունների մասին և ձգտում լավ նախապատրաստել նրանց՝ ծառայելու լիաժամկետ միսիաներում։ Մենք սիրով խորհուրդ ենք տալիս մեր երեխաներին, երբ նրանք իրենք են դառնում ծնողներ։ Բայց, նույնիսկ, այդ ժամանակ մենք երբեք չենք դադարում նրանց ծնողները լինել։ Մենք երբեք չենք դադարում նրանց ուսուցիչները լինել։ Մենք երբեք չենք ազատվում այդ հավերժական կոչումներից։

Այսօր եկեք մտածենք մի քանի հրաշալի հնարավորությունների մասին, որոնք մենք ունենք մեր տներում մեր երեխաներին ուսուցանելու համար։

Ընտանեկան երեկոյի դաս

Եկեք սկսենք ընտանեկան երեկոյի դասից, որը բարձր առաջնահերթություն էր հավատքով լցված այնպիսի մի տանը, որտեղ ես եմ մեծացել։ Ես չեմ հիշում հատուկ դասեր, որոնք ուսուցանվեցին ընտանեկան երեկոյի ժամանակ, բայց ես իսկապես հիշում եմ, որ մենք երբեք ոչ մի շաբաթ բաց չէինք թողնում։[3] Ես գիտեի, թե ինչն էր կարևոր իմ ծնողների համար։[4]

Ես հիշում եմ իմ սիրելի ընտանեկան երեկոյի միջոցառումներից մեկը։ Հայրս հրավիրում էր իր երեխաներից մեկին «Ստուգարք» անցնել։ Նա տալիս էր երեխային մի շարք հրահանգներ, ինչպես օրինակ. «Առաջինը գնա խոհանոց և բաց արա և փակիր սառնարանը։ Ապա վազիր իմ ննջարան և իմ դարակից վերցրու մի զույգ գուլպա։ Հետո արի ինձ մոտ, երեք անգամ վեր ու վար թռիր և ասա. «Պապ, ես արեցի դա»։

Ես սիրում էի դա, երբ գալիս էր իմ հերթը։ Ես ցանկանում էի յուրաքանչյուր քայլը ճիշտ անել և ես շատ էի սիրում այն պահը, երբ կարող էի ասել «Պապ, ես արեցի դա»։ Այս վարժությունն օգնում էր կառուցել իմ վստահությունը Նմի անհանգիստ տղայի համար ավելի հեշտ

էր կենտրոնացնել ուշադրությունը, երբ մայրիկը կամ հայրիկը ուսուցանում էին ավետարանական որևէ սկզբունք:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին խորհուրդ է տվել. «Եթե դուք որևէ կասկածներ ունեք ընտանեկան երեկոյի զորության վերաբերյալ, փորձեք այն: Հավաքեք ձեր երեխաներին ձեր շուրջը, ուսուցանեք նրանց, բերեք վկայություն, միասին կարդացեք սուրբ գրությունները և լավ ժամանակ անցկացրեք»:[5]

Միշտ էլ կլինի ընդդիմություն ընտանեկան երեկո անցկացնելու համար:[6] Անկախ ամեն ինչից, ես հրավիրում եմ ձեզ ուղի գտնել շրջանցելու խոչընդոտները և ընտանեկան երեկոնառաջնահերթություն դարձնել:

Ընտանեկան աղոթքի ուսուցում

Ընտանեկան աղոթքը ևս մեկ գլխավոր հնարավորություն է ուսուցանելու համար:

Ես սիրում եմ, թե ինչպես է Նախագահ Էլդոն Ն. Թանների հայրն ուսուցանել նրան ընտանեկան աղոթքի ժամանակ:Նախագահ Թաններն ասել է հետևյալը.

«Հիշում եմ մի երեկո, երբ մենք ծնկի էինք իջել ընտանեկան աղոթքի համար, հայրս ասաց Տիրոջը. «Էլդոնը այսօր արել է մի բան, որը չպետք է աներ, նա զղջում է և եթե դու ներես նրան, նա այլևս չի անի դա»:

«Ավելի շատ դա ինձ վճռական դարձրեց այլևս չանել դա, քան պատժելը կաներ»:[7]

Երբ պատանի էի, ես երբեմն նեղվում էի մեր թվացյալ շափազանց շատ աղոթքներից, մտքումս մտածելով. «Մի՞թե չաղոթեցինք մի քանի րոպե առաջ»: Այժմ, որպես ծնող, ես գիտեմ, որ մենք չենք կարող երբևէ չափազանց շատ աղոթել՝ որպես ընտանիք:[8]

Ես միշտ տպավորվել եմ, թե ինչպես էր Երկնային Հայրը ներկայացնում Հիսուս Քրիստոսին՝ որպես Իր Միրելի Որդի:[9] Ես բավականություն եմ ստանում իմ երեխաների համար աղոթելուց, երբ նրանք լսում են, թե ինչպես եմԵրկնային Հորն արտահայտում իմ սերը իրենց հանդեպ: Թվում է, չկա ավելի լավ ժամանակ սեր հաղորդել մեր երեխաներին, քան երբ աղոթում ենք նրանց հետ կամ օրհնում նրանց: Երբ ընտանիքները հավաքվում են խոնարհ աղոթքի, հզոր և տևական դասեր են ուսուցանվում:

Կանչով ուսուցում

Ծնողական ուսուցումը նման է կանչով բժիշկի: Մենք միշտ պետք է պատրաստ լինենք ուսուցանել մեր երեխաներին, որովհետև երբեք չգիտենք, թե երբ հնարավորություն կտրվի:

Մենք Փրկիչի նման ենք, ում ուսուցումը հաճախ «տեղի չէր ունենում ժողովարանում, այլ ոչ պաշտոնական, առօրյա միջավայրում՝ Իր աշակերտների հետ հաց ուտելիս, ջրհորից ջուր հանելիս կամ թզենու կողքով անցնելիս»:[10]

Տարիներ առաջ, մայրս կիսվեց նրանով, որ իր երկու լավագույն ավետարանական զրույցները իմ եղբայր Մաթի հետ նա ունեցել էր, երբ մի անգամ լվացած սպիտակեղենն էր ծալում, իսկ մյուս անգամ՝ երբ մեքենայով տանում էր նրան ատամնաբույժի մոտ:Իմ մոր մեջ ինձ հիացնում էր իր երեխաներին ուսուցանելու նրա պատրաստակամությունը:

Նրա ծնողական ուսուցումը երբեք չէր վերջանում: Երբ ես ծառայում էի որպես եպիսկոպոս, մայրս, որ այդ ժամանակ 78 տարեկան էր, ասաց, որ մազերս կտրելու կարիք կար: Նա գիտեր որ ես պետք է օրինակ լինեի և չտատանվեց ասել ինձ այդ մասին: Ես սիրում եմ քեզ, Մամ:

Որպես հայր, ես պարտավոր եմէ անձնապես ուսումնասիրել և խորհել սուրբ գրությունների շուրջ, որպեսզի կարողանամ արձագանքել, երբ իմ երեխաները կամ թոռները ներկայացնում են կանչով ուսուցման հնարավորություն:[11] Ուսուցողական լավագույն պահերից մի քանիսը ծագում են որպես հարց կամ մտահոգություն [ընտանիքի]անդամի սրտում»:[12] Արդյո՞ք մենք լսում ենք այդ պահերին:[13]

Ես սիրում եմ Պետրոս Առաքյալի հրավերը. «Միշտ պատրաստ եղէք պատասխան տալու ամեն մարդու [և ես ավելացնում եմ երեխայի], որ ձեր մէջ եղած յոյսի համար պատճառ հարցնէ»:[14]

Երբ պատանի էի, ես ու հայրս բավականություն էինք ստանում, մրցելով միմյանց հետ, որ տեսնենք, թե ով ուներ ամենաուժեղ ձեռքսեղմումը: Մենք սեղմում էինք մեկս մյուսի ձեռքը որքան հնարավոր էր ուժեղ՝ ջանալով ցավի արտահայտություն առաջացնել միմյանց դեմքին: Այժմ դա այնքան էլ զվարճալի

չէ, բայց այդ ժամանակ ինչ-որ ձևով դա այդպես էր: Այդպիսի մի մարտից հետո հայրս նայեցաչքերիս մեջ և ասաց. «Դու ուժեղ ձեռքեր ունես, որդի՛ս: Հուսով եմ քո ձեռքերը միշտ ուժ կունենան, որ երբեք անպատշաճ չհպվեն որևէ երիտասարդ օրիորդի: Ապա նա պատվիրեց ինձ բարոյապես մաքուր մնալ և օգնել ուրիշներին անել նույնը:

Երեց Դուգլաս Լ. Քալիսթերը կիսվել է իր հոր մասին հետևյալով. «Աշխատանքից տուն գալիս մի օր հայրս ինքնաբուխ ասաց. «Այսօր ես վճարեցի տասանորդս: Ես տասանորդի չեկի վրա գրեցի «շնորհակալություն»: Ես այնքան երախտապարտ եմ Տիրոջը մեր ընտանիքն օրհնելու համար»:

Երեց Քալիսթերը այդ ժամանակ իր հարգանքի տուրքը մատուցեց իր ուսուցիչ հորը. «Նա ուսուցանեց հնազանդության ինչպես գործերը, այնպես էլ վերաբերմունքը:»[15]

Կարծում եմ իմաստուն կլինի ժամանակ առ ժամանակ հարցնել ինքներս մեզ. «Ի՞նչ եմ ուսուցանելու կամ ինչ եմ ուսուցանում երեխաներիս հնազանդության իմ գործերով և վերաբերմունքով»:

Սուրբ գրությունների ուսումնասիրությունն ընտանիքով

Ընտանիքով սուրբ գրությունների կանոնավոր ուսումնասիրությունը զորեղ միջոց է օգնել ձեր ընտանիքին սովորել ավետարանը:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ասել է. «Ծնողները կառչում են ոչ միայն Տիրոջ խոսքից, այլև ունեն աստվածային հանձնառություն՝ ուսուցանել այն իրենց երեխաներին»:[16]

Երբ ես և Ջուլին մեծացնում էինք մեր երեխաներին, մենք ձգտում էինք լինել հետևողական և ստեղծագործական: Մի տարի մենք որոշեցինք ընտանիքով կարդալ Մորմոնի Գիրքը իսպաներեն: Արդյո՞ք դաէր պատճառը, որ Տերը կանչեց մեր երեխաներից յուրաքանչյուրին ծառայել իսպանախոս միսիայում, ովքեր լիաժամկետ միսիա էին ծառայում: *Հնարավո՞ր է:*

Ես խորապես հուզվեցի, երբ Եղբայր Բրայան Կ. Աշթոնը կիսվեց ինձ հետ, որ նա և իր հայրը կարդացել են Մորմոնի Գրքի յուրաքանչյուր էջը միասին ավագ դպրոցում: Եղբայր Աշթոնը սիրում է սուրբ գրությունները: Դրանք գրված են նրա մտքում և նրա սրտում: Նրա հայրը ցանել է այդ սերմը, երբ Եղբայր Աշթոնը պատանի էր և այդ սերմը[17] աճել է՝ դառնալով ճշմարտության խորը արմատներով մի ծառ:Եղբայր Աշթոնն արել է նույնը իր ավագ երեխաների հետ:[18] Նրա ութ տարեկան որդին վերջերս հարցրել է նրան. «Պապ, երբ եմ ես կարդալու Մորմոնի Գիրքը քեզ հետ»:

Օրինակով ուսուցում

Ի վերջո, մեր ամենաազդեցիկ ծնողական ուսուցումը մեր օրինակով է: Մեզ խորհուրդ է տրվել լինել «օրինակ հավատացյալներին խոսքով, վարքով, սիրով, հոգով, հավատքով, սրբությունով»:[19]

Վերջերս կատարած մի ուղևորության ընթացքում ես և Ջուլիանայ-ցելեցինք եկեղեցի և տեսանք այս հատվածը գործի մեջ: Մի երիտասարդ տղամարդ, ով շուտով միսիա էր գնալու, խոսեց հաղորդության ժողովում:

Նա ասաց. «Դուք բոլորդ կարծում եք, որ հայրս այնքան լավ մարդ է եկեղեցում, բայց . . . », նա կանգ առավ և ես անհամբեր սպասում էի, թե ինչ էր ասելու հետո: Նա շարունակեց և ասաց. «Նա ավելի լավ մարդ է տանը»:

Ես հետո շնորհակալություն հայտնեցի այդ երիտասարդին՝ իր հորը մատուցած նրա ոգեշնչող տուրքի համար: Հետո ես պարզեցի, որ նրա հայրը ծխի եպիսկոպոսն էր: Չնայած այդ եպիսկոպոսը հավատարմությամբ էր ծառայում իր ծխին, բայց որդին զգացել էր, որ նա իր լավագույն աշխատանքը կատարել էր տանը:[20]

Երեց Դ. Թոդ Քրիսթոֆերսոնը խորհուրդ է տալիս. «Մենք շատ ուղիներ ունենք աճող սերնդին . . . ուսուցանելու համար, և մենք պետք է նվիրաբերենք մեր լավագույն մտածելակերպը և ջանքը դրանցից լիովին օգտվելու համար: Նախևառաջ, մենք պետք է շարունակենք խրախուսել և օգնել ծնողներին ավելի լավ և ավելի հետևողական ուսուցիչներ լինել . . . հատկապես օրինակով»:[21]

Այդ ձևով է ուսուցանում Փրկիչը:[22]

Անցյալ տարի, երբ մեր երկու փոքր երեխաների հետ արձակուրդում էինք, Ջուլին առաջարկեց, որ մենք փոխարինաբար մկրտություններ անենք ինչպես Սենթ Ջորջ, այնպես էլ Սան Դիեգո Տաճարներում: Ես տրտնջացի մտքումս, մտածելով. «Մենք հաճախում ենք տաճար տանը, իսկ այժմ մենք արձակուրդում

ենք գտնվում: Ինչո՞ւ չանենք ինչ-որ բան, որն ավելի համապատասխան լինի հանգստին»: Մկրտություններից հետո Ջուլին ցանկացավ տաճարից դուրս լուսանկարներ անել: Ես նորից լուռ տրտնջացի: Դուք կարող եք ենթադրել, թե ինչ պատահեց հետո՝ մենք լուսանկարվեցինք:

Ջուլին ուզում է, որ մեր երեխաները հիշողություններ ունենան, թե ինչպես մենք օգնեցինք մեր նախնիներին և ես նույնպես: Մենք կարիք չունեինք տաճարների կարևորության մասին պաշտոնական դասի: Մենք ապրում էինք դրանով շնորհիվ մի մոր, ով սիրում է տաճարը և ուզում, որ իր երեխաները կիսեն այդ սերը:

Երբ ծնողները փայփայում են միմյանց և արդար օրինակներ հանդիսանում, երեխաներն օրհնվում են հավերժ:

Եզրակացություն

Ձեզանից բոլորի համար, ովքեր ձգտում են լավագույնս ուսուցանել իրենց տներում, թող գտնեն խաղաղություն և ուրախություն իրենց ջանքերում: Եվ եթե զգում եք, որ կատարելագործմանկամ ավելի մեծ նախապատրաստության կարիք ունեք, խնդրում ենք խոնարհաբար արձագանքեք, երբ Հոգին հուշում է ձեզ և պարտավորվեք գործել:[23]

Երեց Լ. Թոմ Փերին ասել է. «Ցանկացած հասարակության կենսունակության, մարդկանց երջանկության, նրանց բարգավաճման և խաղաղության արմատները գտնվում են տանը երեխաներին սովորեցնելու մեջ:»[24]

Այո, իմ ընտանեկան բույնը այժմ դատարկ է, բայց ես դեռ կանչված եմ, պատրաստ և եռանդուն՝ գտնելու լրացուցիչ արժեքավոր հնարավորություններ ուսուցանել իմ մեծացրած երեխաներին, նրանց երեխաներին և մի օրհուսով եմ, իրենց երեխաներին:

Ես աղերսում եմ երկնքի օգնությունը, երբ ձգտում ենք լինել Քրիստոսանման ուսուցիչներ մեր տներում: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Վարդապետություն և Ուխտեր 68.25, 93.40:

   Երեց Լ. Թոմ Փերին ուսուցանել է. «Հակառակորդի ազդեցությունը լայն տարածում է գտել, և նա հարձակվում է, փորձելով աղճատել և քայքայել մեր հասարակության բուն հիմքը՝ ընտանիքը: Ծնողները պետք է գիտակցեն, որ տանն ուսուցանելն ամենասուրբ և ամենակարևոր պարտականությունն է» («Մայրերը երեխաներին սովորեցնում են տանը», *Լիահոնա,* մայիս 2010, 30):

   Առաջին նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը ուսուցանել են. «Ամուսինը և կինը սուրբ պատասխանատվություն են կրում՝ սիրելու և հոգ տանելու միմյանց ու երեխաների համար: «Որդիքը Տիրոջ ժառանգությունն են» (Սաղմոս 127.3): Ծնողների սուրբ պարտականությունն է՝ դաստիարակել երեխաներին սիրո և առաքինության մթնոլորտում, ապահովել նրանց նյութական և հոգևոր կարիքները, ուսուցանել նրանց սիրել և ծառայել մեկը մյուսին, պահել Աստծո պատվիրանները և օրինապաշտ քաղաքացիներ լինել, որտեղ էլ, որ ապրեն: Ամուսիններն ու կանայք՝ մայրերն ու հայրերը հաշվետու կլինեն Աստծո առջև այս պարտականությունների իրականացման համար» (Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* մայիս 2017, 145):
2. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Միասին առաջ ընթանալով», *Լիահոնա,* ապրիլ 2018, 7:
3. Երեց Դեյվիդ Ա. Բեդնարն ասել է. «Այսօր եթե դուք հարցնեք մեր չափահաս որդիներին, թե ինչ են նրանք հիշում ընտանեկան աղոթքի, սուրբ գրությունների ուսումնասիրության և ընտանեկան երեկոյի մասին, համոզված եմ, որ գիտեմ, թե նրանք ինչ կպատասխանեն: Նրանք հավանաբար չեն նշի որևէ որոշակի աղոթք կամ հատուկ դեպք սուրբ գրությունների ուսումնասիրության կամ որևէ հատկապես իմաստալիցնտանեկան երեկոյի դաս՝ որպես վճռական պահ իրենց հոգևոր զարգացման համար: Այն, ինչ նրանք կարող են ասել այն է, որ ընտանիքով մենք հետևողական էինք» («Ավելի ջանասեր և մտահոգ տանը», *Լիահոնա,* նոյեմբեր 2009, 19):
4. Տես “Home Can Be a Heaven on Earth,” *Hymns,* no. 298:
5. *Եկեղեցու նախագահների ուսմունքները. Գորդոն Բ. Հինքլի* (2016), 171:
6. Տես 2 Նեփի 2.11:
7. N. Eldon Tanner, “Never Be Ashamed of the Gospel of Christ,” *Ensign,* Feb. 1980, 4.
8. Տես 3 Նեփի 18.21:
9. Տես Մատթեոս 3.16–17, 3 Նեփի 11.6–8, Վարդապետություն և Ուխտեր 18.34–36, Ջոզեֆ Սմիթ — Պատմություն 1.17:
10. «Օգտվեք ուսուցանելու ինքնաբուխ պահերից», *Ուսուցանել Փրկիչի ձևով* (2016), 16: *Փրկիչի ձևով ուսուցանելը* ներառում է տանը ուսուցանելու համար բազմաթիվ խորհուրդներ և միջոցներ:
11. Տես Վարդապետություն և Ուխտեր 11.21, 84.85:
12. Ուսուցանել Փրկիչի ձևով, 16:
13. Տես «Լսիր», *Քարոզիր Իմ Ավետարանը՝ Միսիոներական ծառայության ուղեցույց* (2004), 185–86:
14. Ա Պետրոս 3.15:
15. Douglas L. Callister, “Most Influential Teacher—Emeritus Seventy Pays Tribute to Father,” Aug. 29, 2016, news.lds.org.
16. Ռասսել Մ. Նելսոն»,Կարգի բեր քո տունը,» *Լիահոնա, հունվար* 2002, 81:
17. Տես Ալմա 32.28–43:
18. Քույր Մելինդա Աշթոնը փոխարինում է իր ամուսնուն՝ Եղբայր Աշթոնին, երբ նա քաղաքից դուրս է գտնվում:
19. Ա Տիմոթեոս 4.12, տես նաև Ալմա 17.11:
20. Եպիսկոպոս Ջեֆրի Լ. Ստյուարտը ծառայում է Սաութգեյթի Երկրորդ Ծխում Սենթ Ջորջ, Յուտայում: Սամուելը՝ նրա որդին այժմ ծառայում է Կոլումբիայի Մեդելին Միսիայում:
21. Դ. Թոդ Քրիսթոֆերսոն. «Զորացնել աճող սերնդի հավատքը և երկարատև դարձը», գերագույն համաժողովի ղեկավարության ժողով, սեպտեմբեր, 2017:
22. Տես 3 Նեփի 27.21, 27:
23. Տես Վարդապետություն և Ուխտեր 43.8–9:
24. Լ. Թոմ Փերի, «Մայրերը երեխաներին սովորեցնում են տանը»,30:



Երեց Դեյլ Գ. Ռենլանդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Ընտանեկան պատմություն և տաճարային աշխատանք. կնքում և բժշկում

Երբ մենք հավաքում ենք մեր ընտանեկան պատմությունները և տաճար գնում մեր նախնիների համար, Աստված կատարում է այս խոստացված օրհնությունները վարագույրի երկու կողմերում։

Ընտանեկան հարաբերությունները կարող են լինել հատուցվող, իսկ դրանցից մի քանիսը դժվար փորձառություններ են, որոնց մենք հանդիպում ենք։Մեզանից շատերը ընտանիքներում տարբեր տեսակի ճեղքվածքների են բախվում։Այդպիսի ճեղքվածք առաջացավայս վերջին օրերում Հիսուս Քրիստոսի Եկեղեցու Վերականգնման երկու հերոսների միջև։ Փարլի և Օրսոն Պրատները եղբայրներ էին և կարգված Առաքյալներ։ Յուրաքանչյուրը հանդիպեց հավատքի փորձության, բայց հաղթահարեց անսասան վկայությամբ։ Երկուսն էլ զոհաբերեցին և մեծ ներդրում կատարեցին ճշմարտության գործի համար։

Նավուի ժամանակաշրջանում նրանց փոխհարաբերությունները լարվեցին, 1846թ.-ին հասնելով գագաթնակետին՝ թեժ,

հրապարակային առճակատման։ Առաջացավ մի խորը և երկարատև ճեղքվածք։ Փարլին սկզբում գրեց Օրսոնին վեճը հարթելու համար, բայց Օրսոնը չպատասխանեց։ Փարլին հրաժարվեց գրելուց, զգալով, որ նամակագրությունն ավարտված էր մեկընդմիշտ, մինչև այն նորից չսկսվեր Օրսոնի կողմից։[1]

Մի քանի տարի անց 1853 թվականի մարտին, Օրսոնն իմացավ Ուիլյամ Պրատի՝ եղբայրների ամենավաղ ամերիկյան նախնու հետնորդների մասին մի գիրք հրատարակելու նախագծի վերաբերյալ։ Օրսոնը սկսեց արտասվել «փոքր երեխայի պես», երբ նա տեսավ ընտանեկան պատմության այդ գանձարանը։ Նրա սիրտը փափկեց և նա որոշեց վերականգնել կապը իր եղբոր հետ։

Օրսոնը գրեց Փարլիին. «Այժմ, իմ սիրելի՛ եղբայր, մեր Լեյտենանտ Ուիլյամ Պրատ Նախնու հետնորդների մեջ չկան մարդիկ, ովքեր կարող են ունենալ այնքան խորը շահագրգռվածություն, որ որոնեն նրա հետնորդներին, որքան մենք»։ Օրսոնը առաջիններից մեկն էր, որ հասկացավ, որ Վերջին Օրերի Սրբերը պարտավորություն ունեն որոնել և կազմել ընտանեկան պատմություններ, որպեսզի մենք կարողանանքփոխարինաբար կատարել արարողություններ մեր նախնիների համար։ Նրա նամակը շարունակվում էր. «Մենք գիտենք, որ մեր հայրերի Աստծո ձեռքն է այս ամենում։ . . . Ես կկամենայի ներողություն խնդրել, որ քեզ գրելիս այդքան ետ եմ մնացել։ . . . Հուսով եմ, դու կներես ինձ»։[2] Չնայած նրանց անսասան վկայություններին, նրանց սերը իրենց նախնիների հանդեպ այն խթանն էր, որն ապաքինեց ճեղքվածքը, ամոքեց ցավը և նգզտեց ու հասցրեց ներողամտություն։[3]

Երբ Աստված ուղղորդում է մեզ անել ինչ-որ բան, Նա հաճախ շատ նպատակներ է պահում մտքում։ Ընտանեկան պատմությունը և տաճարային աշխատանքը ոչ միայն մահացածների համար է, այն օրհնում է նաև ապրողներին։ Օրսոնի և Փարլիի համար, այնմեկ մեկու

դարձրեց նրանց սրտերը: Ընտանեկան պատմությունը և տաճարային աշխատանքն ապահովեց զորություն՝ բժշկելու այն, ինչը բժշկման կարիք ուներ:

Որպես Եկեղեցու անդամներ, մենք ունենք աստվածայնորեն նշանակված պատասխանատվություն՝ որոնել մեր նախնիներին և կազմել ընտանեկան պատմություններ: Սա ավելին է քան խրախուսվող հոբբին, որովհետև փրկության արարողությունները անհրաժեշտ են Աստծո բոլոր զավակների համար:[4] Մենք պետք է գտնենք մեր սեփական նախնիներին, ովքեր մահացել են՝ առանց ստանալու փրկության արարողություններ: Մենք կարող ենք փոխարինաբար կատարել տաճարային արարողություններ, իսկ մեր նախնիները կարող են ընտրել ընդունել արարողությունները:[5] Մեզ խրախուսում են նաև օգնել ծխի և ցցի անդամներին՝ իրենց ընտանիքի անդամների անունների հետ աշխատելիս: Ուղղակի ապշեցուցիչ է, որ ընտանեկան պատմության և տաճարային աշխատանքի միջոցով մենք կարող ենք օգնել փրկագնել մահացածներին:

Բայց, երբ մասնակցում ենք ընտանեկան պատմության և տաճարային աշխատանքին այսօր, մենք նաև հայց ենք ներկայացնում «բժշկության» օրհնություններին, որոնք խոստացվել են մարգարեներին և առաքյալներին:[6] Այս օրհնությունները ևս ուղղակի ապշեցուցիչ են իրենց մասշտաբով, առանձնահատկություններով և մահկանացու կյանքում ունեցած հետևանքներով: Այս երկար ցուցակն ընդգրկում է հետևյալ օրհնությունները.

- Փրկիչի և Նրա քավիչ զոհաբերության վերաբերյալ մեծացող ըմբռնում,
- Սուրբ Հոգու ազդեցության մեծացում,[7] որ ուժ և ուղղություն զգանք մեր սեփական կյանքում,
- Հավատքի մեծացում, որպեսզի դարձը դեպի Փրկիչը դառնա խորն ու մնայուն,
- Սովորելու և ապաշխարելու մեծացող ունակություն և

դրդապատճառ[8] այն հասկացողության շնորհիվ, թե ով ենք մենք, որտեղից ենք գալիս և ավելի հստակ հեռանկար, թե ուր ենք գնում:
- Մեր սրտերում մաքրագործման, սրբագործման և ազդեցությունների չափավորման մեծացում,
- Տիրոջ սերը զգալու ունակության մեծացում՝ ուժեղացող ուրախության միջոցով,
- Մեծացող ընտանեկան օրհնություններ, անկախ մեր ներկա, անցյալ կամ ապագա ընտանեկան իրավիճակից կամ որքան մեր ընտանեկան ծառը կարող է անկատար լինել,
- Մեծացող սեր և գնահատանք նախնիների և ապրող ազգականների հանդեպ, այսպիսով մենք այլևս մենակ չենք զգում,
- Մեծացող զորություն զանազանելու այն, ինչ կարիք ունի բժշկության և այդպիսով Տիրոջ օգնությամբ, ծառայել ուրիշներին,
- Մեծացող պաշտպանություն գայթակղություններից և հակառակորդի ուժգնացող ազդեցությունից, և
- Մեծացող օգնությունորոգել վշտացածներին, կոտրված կամ մտահոգ սրտերը և առողջացնել վիրավորվածներին:[9]

Եթե դուք աղոթել եք այս օրհնություններից որևէ մեկի համար, մասնակցեք ընտանեկան պատմության և տաճարային աշխատանքին: Երբ դա անեք, ձեր աղոթքները պատասխան կստանան: Երբ մահացածների համար արարողություններ են կատարվում, երկրի վրա գտնվող Աստծո զավակները բժշկվում են:Զարմանալի չէ, որ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը որպես Եկեղեցու նախագահ իր առաջին ուղերձում, հայտարարեց. «Տաճարում երկրպագությունը և ձեր ծառայությունը ձեր նախնիներին կօրհնեն ձեզ ավելի մեծ անձնական հայտնություններով և խաղաղությամբ, ու կամրացնեն ուխտի ուղու վրա մնալու ձեր վճռականությունը»:[10]

Մի ավելի վաղ մարգարե նույնպես տեսավ օրհնությունները՝ ինչպես ապրողների, այնպես էլ մահացածների համար:[11] Մի երկնային սուրհանդակ ցույց տվեց Եզեկիելին տաճարից դուրս բխող ջրով մի տեսիլք: Եզեկիելին ասվեց.

«Այս ջրերը դուրս են գալիս . . . եւ իջնում են անապատը եւ գնում են դեպի [մեռյալ] ծովը . . . , [որ] առողջանան նորա ջրերը:

Եւ պիտի լինի որ ամեն կենդանի շունչ, որ շարժում է այն ամեն տեղերում, ուր որ այն կրկնակի գետը գնում է, պիտի ապրէ, . . . եւ նորանք պիտի բժշկուին, եւ ամենքը պիտի կենդանանան, ուր որ գետը գնայ»:[12]

Ուշագրավ են ջրի երկու հատկանիշներ: Նախ, չնայած փոքրիկ գետակը վտակներ չուներ, որքան հեռու էր այն հոսում, այնքան վերածվում էր հզոր գետի, դառնալով ավելի լայն և ավելի խորը: Նմանատիպ մի բան տեղի է ունենում օրհնությունների հետ, որոնք հոսում են տաճարից, երբ անձնավորությունները կնքվում են որպես ընտանիք: Իմաստալի աճ է տեղի ունենումեթ գնալով կառաջ գալով սերունդների միջով, երբ կնքող արարողությունները զոդում են ընտանիքները միմյանց հետ:

Երկրորդ, գետը վերակենդանացնում էր այն ամենը, ինչին դիպչում էր: Տաճարային օրհնությունները նմանապես ունեն բժշկելու ապշեցուցիչ ունակություն: Տաճարային օրհնությունները կարող են բժշկել սրտեր, կյանքեր և ընտանիքներ:

Թույլ տվեք պարզաբանել: 1999 թվականին Թոդ անունով մի երիտասարդ գիտակցությունը կորցրեց իր ուղեղում պայթած արյան անոթից: Չնայած Թոդը և նրա ընտանիքը Եկեղեցու անդամներ էին, նրանց գործունեությունն անկանոն էր, ոչ ոք չէր զգացել տաճարի օրհնությունները: Թոդի կյանքի վերջին գիշերը նրա մայրը՝ Բեթին նրա մահճակալի մոտ նստած՝ Թոդի ձեռքը սեղմելով ասաց. «Թոդ, եթե դու իսկապես պետք է գնաս, ես խոստանում եմ, որ հոգ կտանեմ, որ քո տաճարային աշխատանքներն արվեն»: Հաջորդ առավոտ հայտնեցին, որ Թոդի ուղեղը մահացել էր: Վիրաբույժները փոխպատվաստեցին Թոդի սիրտը իմ հիվանդին՝ Ռոդ անունով միհիանալի անձնավորության:

Փոխպատվաստումից մի քանի ամիս հետո Ռոդն իմացավ իր սրտի դոնորի ընտանիքի ինքնության մասին և նրանց հետ նամակագրություն սկսեց: Մոտ երկու տարի անց Թոդի մայրը՝ Բեթին, հրավիրեց Ռոդին ներկա լինել, երբ նա գնաց տաճար առաջին անգամ: Ռոդը և Բեթին առաջին անգամ հանդիպեցին անձնապես Յուտայի Մենթ Ջորջի Տաճարի սելեստիալ սենյակում:

Որոշ ժամանակ անց, Թոդի հայրը՝ Բեթիի ամուսինը, մահացավ: Մի քանի տարի անց Բեթին հրավիրեց Ռոդին փոխարինաբար ներկայացնել իր որդուն՝ նրա տաճարային արարողությունները ստանալու համար: Ռոդը երախտագիտությամբ արեց դա և փոխանորդական աշխատանքը գաթենակետին հասավ կնքման սենյակում՝ Յուտայի Մենթ Ջորջ Տաճարում: Բեթին կնքվեց իր մահացած ամուսնու հետ, ծնկի եկած խորանի մյուս կողմում իր թոռան հետ, ով ծառայում էր որպես փոխանորդ: Այնուհետև, արցունքները հոսեցին Բեթիի այտերով, և նա նշան արեց Ռոդին միանալ իրենց խորանի մոտ: Ռոդը ծնկի իջավ նրանց կողքին, գործելով որպես փոխանորդ նրա որդու՝ Թոդի համար, ում սիրտը դեռ բաբախում էր Ռոդի կրծքավանդակում: Ռոդի սրտի դոնորը՝ Թոդը, այդ ժամանակ կնքվեց իր ծնողների հետ ողջ հավերժության համար: Թոդի մայրը պահեց իր խոստումը, որը նա տվել էր իր մեռնող որդուն տարիներ առաջ:

Բայց պատմությունը դրանով չավարտվեց: Իր սրտի փոխպատվաստումից տասնհինգ տարի անց, Ռոդը նշանվեց, և ամուսնության կնքումը խնդրեց ինձ կատարել Յուտայի Պրովոյի Տաճարում: Հարսանիքի օրը ես հանդիպեցի Ռոդին և նրա սքանչելի հարսնացուին՝ Քիմին, մի սենյակում, որը կնքման սենյակինկից էր, որտեղ սպասում էին նրանց ընտանիքները և ամենամոտ ընկերները: Ռոդի և Քիմի հետ կարճատև հանդիպումից հետո ես հարցրի՝ արդյո՞ք հարցեր ունեին:

Ռոդն ասաց. «Այո: Իմ դոնոր ընտանիքն այստեղ է և ցանկանում են հանդիպել ձեզ հետ»:

Ինձ դա հանկարծակիի բերեց և ես հարցրի. «Դու նկատի ունես՝ նրանք այստե՞ղ են: Հենց հիմա՞»:

Ռոդը պատասխանեց. «Այո»:

Ես քայլ կատարեցի, շրջանցելով անկյունը և կնքման սենյակից դուրս կանչեցի դոնոր ընտանիքին: Բեթին, նրա դուստրը և փեսան միացան մեզ: Ռոդը ողջագուրվեց Բեթիի հետ, շնորհակալություն հայտնեց նրան գալու համար, իսկ հետոհինձ ներկայացրեց նրան: Ռոդն ասաց. «Բեթի, սա Երեց Ռենլանդն է»: Նա էր բժիշկը, ով հոգ տարավ ձեր որդու սրտի մասին այդքան շատ տարիներ: Նա անցավ սենյակով և գրկեց ինձ: Եվ հաջորդ մի քանի րոպեների ընթացքում գրկախառնություններ էին և ուրախության արցունքներ:

Մեր ինքնատիրապետումը վերագտնելուց հետո, մենք գնացինք կնքման սենյակ, որտեղ Ռոդն ու Քիմը կնքվեցին ժամանակի և ողջ հավերժության համար: Ռոդը, Քիմը, Բեթին և ես կարող ենք վկայել, որ երկինքը շատ մոտիկ էր, որ մեզ հետ էին մյուսները այդ օրը, ովքեր նախկինում անցել էին մահկանացու կյանքի վարագույրի միջով:

Աստված Իր անսահման կարողությամբ կնքում է և բժշկում մարդկանց և ընտանիքներին, չնայած ողբերգությանը, կորստին և դժվարությանը: Մենք երբեմն համեմատում ենք տաճարում ունեցած զգացումներն ու փորձառությունը երկնքի մի ակնթարթի հետ:[13] Այդ օրը Յուտայի Պրովոյի Տաճարում Ք. Ս. Լյուիսի այս միտքն արձագանքում էր իմ մտքում. «[Մահկանացուներն] ասում ենորոշ ժամանակավոր տառապանքի մասին, որ. «Ոչ մի ապագա երանություն չի կարողդրան փոխհատուցել», չիմանալով, որ Երկինքը, երբ ձեռք է բերվում, կաշխատի ետընթացնույնիսկ այդ հոգեվարքը կդարձնի փառք: . . . Օրհնվածները կասեն. «Մենք երբեք չենք ապրել որևէ այլ տեղ, բացի Երկնքից»:[14]

Աստված կզորացնի, կօգնի և կբարձրացնի մեզ,[15] և Նա կսրբագործի մեզ համար մեր խորագույն վիշտը:[16] Երբ մենք հավաքում ենք մեր ընտանեկան պատմությունները և տաճար գնում մեր նախնիների համար, Աստված կատարում է այս խոստացված օրհնություններից շատերը՝ միաժամանակ վարագույրի երկու կողմերում: Մենք օրհնվում ենք նմանապես, երբ մեր ծխերում և ցցերում օգնում ենք ուրիշներին անել նույնը: Անդամները, ովքեր մոտ չեն ապրում տաճարներին, նույնպես ստանում են այս օրհնությունները՝ մասնակցելով ընտանեկան պատմության աշխատանքին՝ հավաքելով իրենց նախնիների անունները տաճարային արարողություններ կատարելու համար:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը զգուշացրել է. «Մենք կարող ենք ողջ օրվա ընթացքում ոգեշնչում ստանալ տաճարի և ընտանեկան պատմության փորձառությունների մասին, որ ուրիշներն են ունեցել: Սակայն մենք պետք է ինչ-որ բան անենք, որպեսզի իրականում ինքներս զգանք այդ ուրախությունը: Նա շարունակել է. «Ես հրավիրում եմ ձեզ աղոթքով խորհել, թե ինչպիսի զոհաբերություն, և ցանկալի է ժամանակի զոհաբերություն, դուք կարող եքանել այս տարի, որպեսզի ավելի շատ ընտանեկան պատմության և տաճարայինաշխատանք կատարեք»:[17] Երբ ընդունեք Նախագահ Նելսոնի հրավերը, դուք կհայտնագործեք, կհավաքեք և կմիացնեք ձեր ընտանիքը: Եզեկիելի նկարագրած գետի նման, լրացուցիչ օրհնություններ կհոսեն դեպի ձեզ և ձեր ընտանիքը: Դուք կգտնեք բժշկություն նրա համար, ինչը կարիք ունի բժշկվելու:

Օրսոն և Փարլի Պրատները զգացինիրենց ընտանեկան պատմության և տաճարային աշխատանքների բժշկող և կնքող ազդեցությունները այս տնտեսության սկզբում: Բեթին, նրա ընտանիքը և Ռոդը զգացին դա: Դուք նույնպես կարող եք: Իր քավիչ զոհաբերության միջոցով Հիսուս Քրիստոսն առաջարկում է այս օրհնությունները բոլորին, ինչպես մահացածներին, այնպես էլ՝ ապրողներին: Այս օրհնությունների շնորհիվ, մենք կգտնենք, որ փոխաբերական իմաստով. «երբեք չենք ապրել որևէ այլ տեղ, բացի . . . Երկնքից»:[18] Ես վկայում եմ այս մասին Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. See Parley P. Pratt to Orson Pratt, May 25, 1853, Orson Pratt Family Collection, Church History Library; in Terryl L. Givens and Matthew J. Grow, *Parley P. Pratt: The Apostle Paul of Mormonism* (2011), 319.
2. Orson Pratt to Parley P. Pratt, Mar. 10, 1853, Parley P. Pratt Collection, Church History Library; in Givens and Grow, *Parley P. Pratt*, 319.
3. Ուշագրավ է, որ Օրսոն Պրատը ոչ միայն օգնեց հրատարակել գիրքը Ուիլյամ Պրատի հետնորդների մասին, այլև մի քանի տարի անց 1870 թվականին Օրսոն Պրատը և նրա ընտանիքը կատարեցին ավելի քան 2.600 մկրտություններ մահացածների համար՝ այն անձանց համար, ովքեր գրքում էին, Սոլթ Լեյք Սիթիի Օժտման Տանը (see Breck England, *The Life and Thought of Orson Pratt* [1985], 247):
4. Տես Joseph Smith, *History of the Church,* 6:312–13:
5. Տես "Names Submitted for Temple Ordinances," First Presidency letter, Feb. 29, 2012: Նրանք, ում անունները ներկայացվել են տաճարային փոխարինող ծեսերի համար, պետք է ազգակցական կապ ունենան ներկայացնողի հետ: Առանց բացառությունների եկեղեցու անդամները չպետք է ներկայացնեն անուններ որևէ չլիազորված խմբի կողմից, ինչպես օրինակ նշանավոր մարդկանց և Հրեական Հոլոքոստի զոհերի վերաբերյալ:
6. Տես Dallin H. Oaks, "In Wisdom and Order," *Tambuli,* Dec. 1989, 18–23; D. Todd Christofferson, "The Redemption of the Dead and the Testimony of Jesus," *Liahona,* Jan. 2001, 10–13; Boyd K. Packer, "Your Family History: Getting Started," *Liahona,* Aug. 2003, 12–17; Thomas S. Monson, "Constant Truths for Changing Times," *Liahona,* May 2005, 19–22; Henry B. Eyring, "Hearts Bound Together," *Liahona,* May 2005, 77–80; M. Russell Ballard, "Faith, Family, Facts, and Fruits," *Liahona,* Nov. 2007, 25–27; Russell M. Nelson, "Salvation and Exaltation," *Liahona,* May 2008, 7–10; Russell M. Nelson, "Generations Linked in Love," *Liahona,* May 2010, 91–94; David A. Bednar, "The Hearts of the Children Shall Turn," *Liahona,* Nov. 2011, 24–27; Richard G. Scott, "The Joy of Redeeming the Dead," *Liahona,* Nov. 2012, 93–95; Quentin L. Cook, "Roots and Branches," *Liahona,* May 2014, 44–48; Thomas S. Monson, "Hastening the Work," *Liahona,* June 2014, 4–5; Henry B. Eyring, "The Promise of Hearts Turning," *Liahona,* July 2014, 4–5; David A. Bednar, "Missionary, Family History, and Temple Work," *Liahona,* Oct. 2014, 14–19; Neil L. Andersen, " 'My Days' of Temples and Technology," *Liahona,* Feb. 2015, 26–33; Neil L. Andersen, "Sharing the Temple Challenge," Family Discovery Day, Feb. 2015, LDS.org; Quentin L. Cook, "The Joy of Family History Work," *Liahona,* Feb. 2016, 22–27; Gary E. Stevenson, "Where Are the Keys and Authority of the Priesthood?" *Լիահոնա,* մայիս 2016, 29–32, Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Ի զովասանք նրանց, ովքեր փրկում են», *Լիահոնա,* մայիս 2016, 77–80, Քվենթին Լ. Քուք, Տեսեք ձեզ տաճարում», *Լիահոնա,* մայիս 2016, 97–101, Դեյլ Գ. Ռենլանդ, Ռութ Լ. Ռենլանդ, և Աշլի Ռ. Ռենլանդ, «Ընտանեկան պատմություն և և տաճարային օրհնություններ», *Լիահոնա,* փետ. 2017, 34–39, Դալլին Հ. Օուքս և Քրիսթեն Մ. Օուքս, Միացված հավերժական ընտանիքներով», Family Discovery Day, Mar. 2018, LDS.org.
7. Տես Վարդապետություն և Ուխտեր 109.15:
8. Տես Վարդապետություն և Ուխտեր 109.21:
9. Տես Boyd K. Packer, "Balm of Gilead," *Ensign,* Nov. 1987, 16–18; Jeremiah 8:22; 51:8:
10. Ռասսել Մ. Նելսոն, «Միասին առաջ ընթանալով», *Լիահոնա,* ապրիլ 2018, 7:
11. Տես Եզեկիել 40–47, Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Եզեկիել»:
12. Եզեկիել 47.8–9:
13. Տես Spencer W. Kimball, "Glimpses of Heaven," *Ensign,* Dec. 1971, 36–37:
14. C. S. Lewis, *The Great Divorce: A Dream* (2001), 69.
15. Տես Եսայիա 41.10:
16. Տես "How Firm a Foundation," *Hymns,* no. 85:
17. Ռասել Մ. Նելսոն և Ուենդի Ու. Նելսոն, «Բացեք երկինքները տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքի միջոցով», *Լիահոնա,* հոկտեմբեր 2017, 19:
18. Lewis, *The Great Divorce,* 69.

Դուգլաս Դ. Հոլմս
Երիտասարդ Տղամարդկանց Գերագույն
Նախագահության առաջին խորհրդական

Ինչ պետք է իմանա Ահարոնյան քահանայության յուրաքանչյուր կրողը

Ահարոնյան Քահանայության ձեր կարգումը կարևոր դեր ունի՝ օգնել Աստծո զավակներին ստանալ Քրիստոսի քավիչ զորությունը։

Ողբայրնե՛ր, մեծ պատիվ է ձեզ հետ լինել այս պատմական համաժողովին։ Երբ ես միսիայի նոր նախագահ էի, ոգևորվել էի, երբ մեզ միացավ միսիոներների առաջին խումբը։ Մեր փորձառու միսիոներներից մի քանիսը պատրաստվում էին նրանց հետ կարճատև հանդիպում ունենալ։ Ես նկատեցի, որ նրանք մանկական աթոռներ էին շարել շրջանաձև դասավորությամբ։

«Ինչո՞ւ են այստեղ փոքր աթոռներ շարված»,- հարցրեցի ես։

Միսիոներները համեստորեն ասացին. «Նոր միսիոներների համար են»։

Ես կարծում եմ, որ այն, թե ինչպես ենք մենք նայում ուրիշներին, զգալիորեն ազդում է նրանց ընկալման վրա, թե ով են իրենք և ինչպիսին կարող են դառնալ։[1] Մեր նոր միսիոներները մեծ աթոռների վրա նստեցին այդ օրը։

Երբեմն, ես վախենում եմ, որ մենք մեր Ահարոնյան Քահանայություն կրող երիտասարդներին փոխաբերական իմաստով մանկական աթոռներ ենք տալիս նստելու, փոխանակ օգնենք նրանց հասկանալ, որ Աստված նրանց սրբազան վստահության է արժանացրել և տվել է կարևոր աշխատանք։

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը մեզ խորհուրդ էր տվել նպաստել, որ երիտասարդ տղամարդիկ հասկանան՝ «ինչ է նշանակում լինել Աստծո քահանայության կրողներ։ Նրանք պետք է առաջնորդվեն հոգևոր իրազեկվածությամբ՝ իրենց կոչմանսրբության մասին»։[2]

Այսօր ես աղոթում եմ, որ Սուրբ Հոգին ուղղորդի մեզ ավելի լավ հասկանալ Ահարոնյան Քահանայության զորությունն ու սրբությունը և ոգեշնչի մեզ ավելի ջանասիրաբար կենտրոնանալ քահանայության մեր պարտականությունների վրա։ Ուղերձս Ահարոնյան Քահանայության բոլոր կրողների համար է, ընդգրկելով նաև նրանց, ովքեր Մելքիսեդեկյան Քահանայություն են կրում։

Երեց Դեյլ Գ. Ռենլանդն ուսուցանել է, որ քահանայության դերն է՝ Աստծո զավակների համար հասանելի դարձնել Հիսուս Քրիստոսի քավիչ զորությունը։[3] Մեր կյանքում Քրիստոսի քավիչ զորությունը ստանալու համար մենք պետք է հավատք ունենանք Նրա հանդեպ, ապաշխարենք մեր մեղքերի համար, արարողությունների միջոցով սուրբ ուխտեր կապենք և պահենք ու ստանանք Սուրբ Հոգին։[4] Սրանք միանգամյա սկզբունքներ չեն, այլ գործում են միասին, ամրապնդելով և կառուցելով մեկը մյուսին առաջընթացի շարունակական գործընթացում՝ «[գալ] Քրիստոսի մոտ և կատարելագործվե[լ] Նրանում»։[5]

Այսպիսով, ո՞րն է Ահարոնյան Քահանայության դերն այստեղ։ Ինչպե՞ս է այն մեզ համար հասանելի դարձնում Քրիստոսի քավիչ զորությունը։ Ես համոզված եմ, որ պատասխանը բանալիների մեջ է, որոնք կրում է Ահարոնյան Քահանայությունը՝ հրեշտակների սպասավորության և նախապատրաստական ավետարանի բանալիները։[6]

Հրեշտակների սպասավորություն

Եկեք սկսենք հրեշտակների սպասավորության մի գործոնից։ Նախքան Աստծո զավակները կկարողանան հավատք ունենալ Հիսուս Քրիստոսի հանդեպ, նրանք պետք է իմանան Նրա մասին և նրանց պետք է ուսուցանվի Նրա ավետարանը։ Ինչպես ասել է Պողոս Առաքյալը.

«Ինչպե՞ս հավատան, որից չլսեցին. և ինչպես լսեն առանց քարոզողի.

Եւ ինչպե՞ս քարոզեն, եթե չուղարկվին . . .

Ուրեմն հավատքը լսելուց է, և լսելը՝ Աստուծոյ խոսքիցը»։[7]

Ժամանակների սկզբից Աստված «հրեշտակներ ուղարկվեց՝ սպասավորելու մարդկանց զավակներին, հայտնի դարձնելու Քրիստոսի գալուստի վերաբերյալ»։[8] Հրեշտակները երկնային էակներ են, որոնք հայտնում են Աստծո ուղերձը։[9] Եվ եբրայերենում, և՛ հունարենում *հրեշտակ* բառի արմատը նշանակում է «պատվիրակ»։[10]

Անվան պես հրեշտակները Աստծո կողմից ուղարկված լիազորված պատվիրակներ են, որոնք հայտարարում են Նրա խոսքը և այդպիսով կառուցում հավատք, և մենք, Ահարոնյան Քահանայություն կրողներս, կարգված ենք «ուսուցանե[լու] և բոլորին հրավիրե[լու] գալ Քրիստոսի մոտ»:[11] Ավետարանի քարոզումը քահանայական պարտականություն է: Եվ այդ զորության հետ կապված պարտականությունը միայն մարգարեների կամ նույնիսկ միսիոներների համար չէ: Այն ձեզ համա՞ր է:[12]

Ուրեմն, ինչպե՞ս ենք ստանում այդ զորությունը: Ինչպե՞ս է 12-ամյա սարկավագը կամ մեզանից յուրաքանչյուրը Աստծո զավակների սրտերում հավատ առաջացնում Քրիստոսի հանդեպ: Մենք սկսում ենք քննել Նրա խոսքը, որ դրա զորությունը մեզանում լինի:[13] Նա խոստացել է, որ եթե այդպես անենք, կունենանք «Աստծո զորությունը՝ մարդկանց համոզելու համար»:[14] Կարող է հնարավորություն լինել ուսուցանել քվորումի ժողովին կամ այցելել որևէ անդամի տուն: Կարող է ոչ պաշտոնական որևէ իրավիճակ լինել՝ զրույց ընկերոջ կամ ընտանիքի անդամի հետ: Այս իրավիճակներում, եթե պատրաստված լինենք, ապա կարող ենք ուսուցանել ավետարանը, ինչպես հրեշտակներն են անում՝ Սուրբ Հոգու զորությամբ:[15]

Վերջերս լսեցի Ջեյքոբի մասին, Պապուա Նոր Գվինեայից մի Ահարոնյան Քահանայություն կրողի, ով վկայել էր Մորմոնի Գրքի զորության մասին և թե ինչպես էր այն օգնել իրեն դիմադրել չարին և հետևել Հոգուն: Նրա խոսքերը զորացրին իմ և մյուսների հավատքը: Իմ հավատքը զորացավ նաև, երբ լսեցի, թե ինչպես են Ահարոնյան Քահանայության կրողները ուսուցանում և վկայում իրենց քվորումի ժողովներին:

Երիտասարդ տղանե՛ր, դուք լիազորված պատվիրակներ եք: Ձեր խոսքերով ու գործերով դուք կարող եք Քրիստոսի հանդեպ հավատք առաջացնել Աստծո զավակների սրտերում:[16] Ինչպես ասել է Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը, «Նրանց համար դուք սպասավորող հրեշտակի պես կլինեք»:[17]

Նախապատրաստական Ավետարան

Քրիստոսի հանդեպ աճող հավատքը միշտ հանգեցնում է փոխվելու և ապաշխարելու ցանկության:[18] Այդպիսով, տրամաբանական է, որ հրեշտակների սպասավորության բանալին զուգորդվելու է նախապատրաստական ավետարանի բանալիով, որն «ապաշխարության և մկրտության ավետարանն է, և մեղքերի թողության»:[19]

Եթե ուսումնասիրեք Ահարոնյան Քահանայության ձեր պարտականությունները, դուք պարզ հանձնարարություն կտեսնեք՝ հրավիրել մարդկանց ապաշխարելու և բարելավվելու:[20] Սա չի նշանակում, որ մենք կանգնում ենք փողոցի եզրին, գոչելով. «Ապաշխարեցէք»: Ավելի շուտ դա նշանակում է, որ *մենք* ենք ապաշխարում, ներում և երբ մենք ծառայում ենք ուրիշներին, առաջարկում ենք հույս և խաղաղություն, որոնք ապաշխարությունն է տալիս,

Քահանաները, ովքեր մկրտեցին Մբուելոնգոյի ընտանիքին Սիդնեյում, Ավստրալիա, հասկացել էին, թե ինչ է նշանակում «լիազորված լինել Հիսուս Քրիստոսի կողմից»:

քանի որ մենք ինքներս անցել ենք դրա միջով:

Ես եղել եմ Ահարոնյան Քահանայություն կրողների հետ, երբ այցելում էին իրենց քվորումի անդամներին: Ես ականատես եմ եղել, թե ինչպես են նրանք զգուշորեն հոգ տանում և օգնում, որ իրենց եղբայրները զգան Աստծո սերը: Ես լսել եմ, թե ինչպես է այդ երիտասարդներից մեկն իր հասակակիցներին վկայություն տալիս ապաշխարության զորության վերաբերյալ: Երբ նա խոսեց, սրտերը փափկեցին, պարտավորություններ ստանձնվեցին և զգացվեց Քրիստոսի բժշկող զորությունը:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ուսուցանել է. «Մի բան է ապաշխարելը: Ուրիշ բան է, որ մեր մեղքերը թողնվեն կամ ներվեն: Սա իրականություն դարձնելու զորությունը Ահարոնյան քահանայության մեջ է»:[21] Ահարոնյան Քահանայության մկրտության և հաղորդության արարողությունները վկայում են մեր ապաշխարության մասին և ամբողջական են դարձնում այն մեղքերի թողության համար:[22] Նախագահ Դալլին Հ. Օուքսը բացատրել է դա այս կերպ. «Մեզ պատվիրված է ապաշխարել մեր մեղքերը և գալ դեպի Տերը կոտրված սրտով և փշրված հոգով և ճաշակել հաղորդությունը . . . Երբ մենք այս եղանակով նորոգում ենք մեր մկրտության ուխտերը, Տերը նորոգում է մեր մկրտության մաքրագործող ազդեցությունը»:[23]

Եղբայրնե՛ր, սա սրբազան արտոնություն է՝ սպասավորել այնպիսի արարողություններ, որոնք Փրկիչի քավիչ զորության շնորհիվ ապաշխարող սրտերին տալիս են մեղքերի թողություն:[24]

Վերջերս ինձ պատմեցին մի քահանայի մասին, ով առաջին անգամ դժվարանում էրհաղորդությունն օրհնել: Երբ նա դա արեց, զորավոր հոգի իջավ նրա և հավաքվածների վրա: Ավելի ուշ այդ ժողովի ժամանակ, նա պարզ ու հստակ վկայություն բերեց Աստծո զորության մասին, որը զգացել էր այդ արարողության ընթացքում:

Սիդնեյում (Ավստրալիա) քահանաների քվորումի չորս անդամներ մկրտեցին Մբուելոնգո ընտանիքի անդամներին: Այդ քահանաներից մեկի մայրը պատմեց ինձ, թե այդ փորձառությունն ինչ զորավոր ազդեցություն էր ունեցել իր որդու վրա: Քահանաները սկսել էին հասկանալ, թե ինչ է նշանակում «լիազորված լինելով Հիսուս Քրիստոսի կողմից»:[25]

Ինչպես տեղյակ եք, քահանաներն այժմ կարող են մասնակցել տաճարում մահացածների համար կատարվող մկրտություններին: Իմ 17-ամյա որդին վերջերս ինձ մկրտեց մեր նախնիներից մի քանիսի համար: Մենք երկուսս էլ խորը երախտագիտություն զգացինք Ահարոնյան Քահանայության համար նիզգուտ Աստծո զավակների փրկության գործելու արտոնության համար:

Երիտասա՛րդ տղաներ, ջանասիրաբար կատարելով քահանայության ձեր պարտականությունները, դուք մասնակցում եք Աստծո աշխատանքին՝ «իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը»:[26] Այսպիսի փորձառությունները պատրաստում են ձեզ միսիոներների նման սովորեցնել ապաշխարություն և մկրտել նորադարձներին: Դրանք նաև պատրաստում են ձեզ կյանքի տևողությամբ ծառայության Մելքիսեդեկյան քահանայության շարքերում:

Հովհաննես Մկրտիչը մեր օրինակն է

Ահարոնյան Քահանայության կրողնե՛ր, մենք արտոնություն և պարտականություն ունենք ծառայակիցներ լինելու Հովհաննես Մկրտիչին: Հովհաննեսը ուղարկվել էր որպես լիազորված պատվիրակ՝ վկայելու Քրիստոսի մասին, և հրավիրելու բոլորին ապաշխարել ու մկրտվել, այսինքն, նա գործի էր դրել Ահարոնյան Քահանայության բանալիները, որոնց մասին մենք խոսեցինք: Հովհաննեսն ասել է. «Ես ջրով եմ մկրտում ձեզ ապաշխարության համար. բայց իմ ետևից եկողն ինձանից զորավոր է . . . նա ձեզ կմկրտէ Սուրբ Հոգով և կրակով»:[27]

Այսպիսով, Ահարոնյան Քահանայությունը, հրեշտակների սպասավորության և նախապատրաստական ավետարանի բանալիներով, Աստծո զավակների համար ճանապարհ է պատրաստում Մելքիսեդեկյան Քահանայության միջոցով Սուրբ Հոգու պարգևը ստանալու համար, ամենամեծ պարգևը, որը մենք կարող ենք ստանալ այս կյանքում:[28]

Ի՜նչ կարևոր պարտականություն է Աստված տվել Ահարոնյան Քահանայության կրողներին:

Հրավեր և խոստում

Ծնողնե՛ր և քահանայության ղեկավարնե՛ր, կարո՞ղ եք ըմբռնել

Նախագահ Մոնսոնի խորհրդի կարևորությունը՝ օգնել երիտասարդ տղամարդկանց հասկանալ, թե «ինչ է նշանակում լինել Աստծո քահանայության կրողներ»:[29] Ահարոնյան Քահանայությունը հասկանալն ու մեծարելը կպատրաստի երիտասարդներին լինել Մելքիսեդեկյան Քահանայության հավատարիմ կրողներ, զորավոր միսիոներներ և առաքինի ամուսիններ ու հայրեր: Իրենց ծառայության միջոցով նրանք կհասկանան և կզգան քահանայության զորության իրականությունը, զորություն՝ գործելու Քրիստոսի անունով Աստծո զավակների փրկության համար:

Երիտասա՛րդ տղամարդիկ, Աստված ձեզ համար աշխատանք ունի:[30] Ահարոնյան Քահանայության ձեր կարգումը կարևոր դեր ունի՝ օգնել Նրա զավակներին ստանալ Քրիստոսի քավիչ զորությունը: Ես ձեզ խոստանում եմ, որ եթե այս սուրբ պարտականությունները ձեր կյանքի կենտրոնում դնեք, դուք կզգաք Աստծո զորությունը առանձնահատուկ կերպով: Դուք կհասկանաք ձեր ինքնությունը՝ որպես Աստծո որդի, կանչված սուրբ կոչմամբ՝ կատարել Նրա աշխատանքը: Եվ Հովհաննես Մկրտիչի պես դուք կպատրաստեք ճանապարհը Նրա Որդու գալուստի համար: Այս ճշմարտությունների մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Սիա թե ինչ պատահեց Մովսեսի հետ: Աստծո հետ իր ուշագրավ հանդիպումից հետո նա սկսեց իրեն ուրիշ կերպ տեսնել՝ որպես Աստծո որդի: Այս հեռանկարն օգնեց նրան դիմադրել սատանային, որը նրան անվանեց «մարդու որդի» (տես Մովսես 1.1–20): Տես նաև Թոմաս Ս. Մոնսոն, «Տեսեք նրանց ինչպիսին նրանք կարող են դառնալ», *Լիահոնա,* նոյեմբեր 2012, 68–71, Դեյլ Գ. Ռենլանդ, «Աստծո աչքերով», *Լիահոնա,* նոյեմբեր 2015, 93–94:
2. Thomas S. Monson, general conference leadership meeting, Mar. 2011.
3. Տես Դեյլ Գ. Ռենլանդ, «Քահանայությունը և Փրկիչի քավող զոհաբերությունը», *Լիահոնա,* նոյեմբեր 2017, 64–67:
4. Տես 2 Նեփի 31–32, 3 Նեփի 11.30–41, 27.13–21, Եթեր 4.18–19, Մովսես 6.52–68, 8.24:
5. Մորոնի 10.32, տես նաև *«Քարոզիր իմ Ավետարանը. Միսիոներական ծառայության ուղեցույց»* (2004), 6:
6. Տես Վարդապետություն և Ուխտեր 13.1, 84.26–27, 107.20:
7. Հռովմայեցիս 10.14–15, 17 Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է այս նույն ճշմարտությունը. «Հավատը գալիս է Աստծո խոսքը լսելով, Աստծո ծառաների վկայության միջոցով. այդ վկայությանը մշտապես մասնակցում է մարգարեության և հայտնության Հոգին», (*Եկեղեցու նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* [2007], 385):
8. Մորոնի 7.22, տես Ալմա12.28–30, 13.21–24, 32.22–23, 39.17–19, Հելաման 5.11, Մորոնի 7.21–25, 29–32. Վարդապետություն և Ուխտեր 20.35, 29.41–42, Մովսես 5.58, Մատթեոս 28.19, Հռովմայեցիս 10.13–17:
9. Տես George Q. Cannon, *Gospel Truth,* sel. Jerreld L. Newquist (1987), 54:
10. Տես James Strong, *The New Strong's Exhaustive Concordance of the Bible* (1984), Hebrew and Chaldee dictionary section, 66, Greek dictionary section, 7:
11. Վարդապետություն և Ուխտեր 20.59:
12. Տես Հենրի Բ. Այրինգ, «Որ նա նույնպես կարողանա ամրանալ», *Լիահոնա,* նոյեմբեր 2016, 75–78, Ալմա 17.3, Հելաման 5.18, 6.4–5, Վարդապետություն և Ուխտեր 28.3:
13. Տես Ա Հովհաննես 2.14, Ալմա 17.2, 26.13, 32.42: *Fulfilling My Duty to God: For Aaronic Priesthood Holders* is a valuable tool to help accomplish this.
14. Վարդապետություն և Ուխտեր 11.21, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 84.85:
15. Տես 2 Նեփի 32.3, Վարդապետություն և Ուխտեր 42.14, 50.17–22:
16. Տես Մորոնի 7.25:
17. Russell M. Nelson, "Honoring the Priesthood," *Ensign,* May 1993, 40; see also Alma 27:4.
18. Տես Ալմա 34.17, Հելաման 14.13:
19. Վարդապետություն և Ուխտեր 84.27:
20. Տես Վարդապետություն և Ուխտեր 20.46, 51–59, 73–79: *Fulfilling My Duty to God: For Aaronic Priesthood Holders* is a valuable tool to help us understand our duties.
21. Gordon B. Hinckley, "The Aaronic Priesthood—a Gift from God," *Ensign,* May 1988, 46.
22. Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնն ուսուցանել է. «Ջրով մկրտությունը ապաշխարության գործընթացի վերջնական կամ հաղթական քայլն է: Մեղքից հրաժարումը, հնազանդության մեր ուխտի հետ համատեղ, ավարտում է մեր ապաշխարությունը, իսկապես, ապաշխարությունն անավարտ է մնում առանց այդ ուխտի», ("Building Faith in Christ," *Liahona,* Sept. 2012, 14–15) Տես նաև Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Ապաշխարության աստվածային պարգևը», *Լիահոնա,* նոյեմբեր 2011, 38–41, Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն՝ Մատթեոս 26.24 (Աստվածաշնչի հավելված):

    Հաղորդության արարողությունը մեզ տալիս է «հնարավորություն ամեն շաբաթ նորոգել այն սրբազան ուխտերը, որոնք թույլ են տալիս մեզ ճաշակել Փրկիչի քավիչ շնորհից մկրտության և հաստատման նույն մաքրագործող ազդեցությամբ» ("Understanding Our Covenants with God," *Liahona,* July 2012, 21). See also Dallin H. Oaks, "Always Have His Spirit," *Ensign,* Nov. 1996, 59–61.
23. Dallin H. Oaks, "The Aaronic Priesthood and the Sacrament," *Liahona,* Jan. 1999, 44.
24. Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը բացատրել է. «Փրկության և վեհացման արարողությունները, որոնք սպասավորվում են Տիրոջ վերականգնված Եկեղեցում, շատ ավելին են, քան ծեսերը կամ խորհրդանշական ներկայացումները: Դրանք ավելի շուտ ներկայացնում են լիազորված ուղիներ, որոնց միջոցով երկնքի զորությունները կարող են հորդել դեպի մեր անձնական կյանք» («Միշտ պահեք ձեր մեղքերի թողությունը», *Լիահոնա,* մայիս 2016, 60)
25. Վարդապետություն և Ուխտեր 20.73:
26. Մովսես 1.39:
27. Մատթեոս 3.11:
28. Եկեղեցական շատ ղեկավարներ Սուրբ Հոգին անվանել են մահկանացության մեծագույն պարգև:

    Նախագահ Դալլին Հ. Օուքսն ասել է. «Սուրբ Հոգու շարունակական ընկերակցությունն ամենաթանկ բանն է, որ կարող ենք ունենալմահկանացու կյանքում», ("The Aaronic Priesthood and the Sacrament," *Liahona,* Jan. 1999, 44).

    Երեց Բրյուս Ռ. Մակքոնկին ուսուցանել է. «Եթե հավերժության տեսանկյունից խոսենք, հավերժական կյանքը Աստծո բոլոր պարգևներից ամենամեծն է: Բայց փոքրացնելով տեսանկյունն այնպես, որ միայն այս կյանքը դիտվի, Սուրբ Հոգու պարգևը ամենամեծ նվերն է, որը կարող է վայելել մահկանացուն» ("What Is Meant by 'The Holy Spirit'?" *Instructor,* Feb. 1965, 57):

    Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆը վկայել է. «Եթե Սուրբ Հոգին ձեզ հետ է, և ամեն մեկը պետք է ունենա, ես կասեմ ձեզ, որ չկա ավելի մեծ պարգև, չկա ավելի մեծ օրհնություն, չկա ավելի մեծ վկայություն, տրված մարդուն երկրի վրա: Դուք կարող եք ունենալ հրեշտակների սպասավորումը, դուք կարող եք տեսնել շատ հրաշքներ, բազմաթիվ հրաշալիքներ երկրի վրա, բայց ես պնդում եմ, որ Սուրբ Հոգու պարգևն ամենամեծ պարգևն է, որը կարող է շնորհվել մարդուն» (*Teachings of Presidents of the Church: Wilford Woodruff* [2004], 49):

    Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը հավելել է. «Աստծո պատվիրանների հնազանդվելով և Եկեղեցու ղեկավարների հոգևոր խորհրդին հետևելով, մենք մեծապես կենտրոնանում ենք Հոգու ընկերակցությանը հասնելու վրա: Հիմնականում ավետարանի բոլոր ուսմունքներն ու միջոցառումները կենտրոնացած են մեր կյանքում Սուրբ Հոգին ստանալու միջոցով դեպի Քրիստոսը գալու վրա» («Մտացիր Սուրբ Հոգին», *Լիահոնա,* նոյեմբեր 2010, 97):
29. Thomas S. Monson, general conference leadership meeting, Mar. 2011.
30. Տես Մովսես 1.6:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

Երաժշտական ելույթ

Մենք հայտարարում ենք Մելքիսեդեկյան Քահանայության մեր քվորումների զգալի վերակազմավորման մասին, որպեսզի ավելի արդյունավետ դարձնենք Տիրոջ աշխատանքը:

Շնորհակալությո՛ւն, Երե՛ց Հոլմս, ձեր կարևոր ուղերձի համար:

Սիրելի՛ եղբայրներ, մենք շատ ենք կարոտում Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնին և Երեց Ռոբերտ Դ. Հեյլսին: Այնուամենայնիվ, մենք «մասնակցում ենք Տիրոջ գործին»:[1]

Ես երախտապարտ եմ բոլոր տղամարդկանց, ովքեր կրում են սուրբ քահանայություն: Դուք հույսն եք Քավիչի, ով ցանկանում է «որ ամեն մարդ կարողանա խոսել Տեր Աստծո, այսինքն՝ աշխարհի Փրկիչի անունով»:[2] Նա ցանկանում է, որ Իր *բոլոր* կարգված որդիները ներկայացնեն Իրեն, խոսեն Իր անունից, գործեն Իր անունից և օրհնեն աշխարհով մեկ սփռված Աստծո զավակների կյանքն այնպես, որ «հավատքն ավելանա [ողջ] երկրի վրա»:[3]

Ձեզանից ոմանք ծառայում են այնտեղ, որտեղ Եկեղեցին սերունդներ առաջ է հաստատվել: Մյուսները ծառայում են այնտեղ, որտեղ Եկեղեցին համեմատաբար նոր է հաստատվել: Ոմանց համար ձեր ծխերը մեծ են: Մյուսների համար նրանց ճյուղերը փոքր են և իրարից շատ հեռու: Անկախ ձեր անձնական հանգամանքներից, ձեզանից յուրաքանչյուրը քահանայության քվորումի անդամ է, սովորելու և ուսուցանելու աստվածային պարտականությամբ՝ սիրելով և ծառայելով ուրիշներին:

Այս երեկո, մենք հայտարարում ենք Մելքիսեդեկյան Քահանայության քվորումների զգալի վերակազմավորման մասին, որպեսզի ավելի արդյունավետ դարձնենք Տիրոջ աշխատանքը: *Յուրաքանչյուր ծխում քահանայապետերը և երեցներն այժմ կմիավորվեն երեցների մեկ քվորումի կազմում:* Այս ճշգրտումը մեծապես կբարելավվի քահանայություն կրող տղամարդկանց կարողությունները և ունակությունները, որպեսզի ծառայեն ուրիշներին: Ապագա երեցները նույնպես կմասնակցեն և կվերահսկվեն այդ քվորումի կողմից: Յուրաքանչյուր ցցում, ցցի նախագահությունը կշարունակի նախագահել ցցի քահանայապետերի քվորումի վրա: Սակայն այդ քվորումը բաղկացած կլինի *ներկայիս* քահանայության կոչումներից, որոնց մասին մանրամասն կբացատրվի ավելի ուշ:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնը և Երեց Ռոնալդ Ա. Ռասբանդն այժմ ավելի մանրամասն կուսուցանեն այս կարևոր ճշգրտումների մասին:

Երկար ամիսներ այդ փոփոխությունները ենթարկվել են ուսումնասիրության: Մենք հրատապ անհրաժեշտություն ենք զգացել բարելավելու մեր անդամների մասին հոգ տանելու եղանակները և զեկուցել նրանց հետ ունեցած շփումների մասին: Այդ գործն ավելի լավ կազմակերպելու համար մենք պետք է ամրապնդենք մեր քահանայության քվորումները, որպեսզի ավելի շատ ցուցումներ տանք սիրով և աջակցությամբ սպասավորելու վերաբերյալ, ինչպես որ Տերը ցանկանում է Իր Սրբերի համար:

Այդ ճշգրտումները ոգեշնչված են Տիրոջ կողմից: Երբ կիրառենք դրանք, մենք ավելի արդյունավետ կգործենք, քան նախկինում:

Մենք ներգրավված ենք Ամենազոր Աստծո գործին: Հիսուսը Քրիստոսն է: Մենք Նրա խոնարհ ծառաներն ենք: Աստված օրհնի ձեզ եղբայրնե՛ր, երբ մենք սովորենք և կատարենք մեր պարտականությունը, ես աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. «Տեր Աստծո գործին բոլորս մասնակցենք» *Օրհնեցեք,* հմր. 10:
2. Վարդապետություն և Ուխտեր 1.20:
3. Վարդապետություն և Ուխտեր 1.21:

Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն
Տասներկու Առաքյալների Քվորումից

Երեցների Քվորում

Երբ Մելքիսեդեկյան Քահանայության մեկ քվորումում միաբանվում են քահանայություն կրողները, որպեսզի իրագործեն փրկության աշխատանքի բոլոր կետերը։

Եկեղեցու այս վերջին տնտեսության կազմավորումից շատ չանցած Տերը հայտնեց. «Եվ ձեր հավատքի աղոթքով դուք պիտի ստանաք իմ օրենքը, որպեսզի իմանաք՝ ինչպես կառավարել իմ եկեղեցին և բոլոր բաներում ճիշտ լինել իմ առաջ»։[1] Այս սկզբունքով շարժվել են Եկեղեցում և խոստումն այդ օրից ի վեր պահվել է Տիրոջ կողմից։ Քահանայության կազմակերպման և ծառայության օրինակները ժամանակ առ ժամանակ հայտնաբերվել են Մարգարե Ջոզեֆ Սմիթից սկսած, երբ քահանայության պաշտոններն ու քվորումներն առաջին անգամ հաստատվել են մեր օրերում։ Նախագահներ Բրիգամ Յանգի, Ջոն Թեյլորի, Սպենսեր Վ. Քիմբալի և այլոց ղեկավարման տարիներին զգալի բարելավումներ են իրականացվել Տասներկու Առաքյալների, Յոթանասունի, քահանայապետերի Մելքիսեդեկյան և Ահարոնյան քահանայության այլ պաշտոններում ու քվորումներում։[2] Այժմ, մի քանի րոպե առաջ արված Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի պատմական հայտարարության մեջ արվեց ևս մեկ կարևոր ճշգրտում։

Թույլ տվեք կրկնել որոշ նախադասություններ նրա արած հայտարարությունից. «Այս երեկո, մենք հայտարարում ենք Մելքիսեդեկյան Քահանայության քվորումների զգալի վերաձևակերպման մասին, որպեսզի ավելի արդյունավետ դարձնենք Տիրոջ աշխատանքը»։ *Յուրաքանչյուր ծխում քահանայապետերը և երեցներն այժմ կմիավորվեն երեցների մեկ քվորումի կազմում* . . . և [ցցի քահանայապետերի] քվորումի կազմը հիմնված կլինի քահանայության *ներկայիս* կոչումների վրա»։

Նախագահ Նելսոնն ավելացրել է.

«Երկար ամիսներ այդ փոփոխությունները ենթարկվել են ուսումնասիրության։ Մենք հրատապ

անհրաժեշտություն ենք զգացել բարելավել մեր անդամների մասին հոգ տանելու եղանակները։ . . . Այդ գործն ավելի լավ կազմակերպելու համար մենք պետք է ամրապնդենք մեր քահանայության քվորումները, որպեսզի ավելի շատ ցուցումներ տանք սիրով և աջակցությամբ սպասավորելու վերաբերյալ, ինչպես որ Տերը ցանկանում է Իր Սրբերի համար։

Այդ ճշգրտումները ոգեշնչված են Տիրոջ կողմից։ Երբ կիրառենք դրանք, մենք ավելի արդյունավետ կգործենք, քան նախկինում»։[3]

Առաջին Նախագահության ցուցումներով, Երեց Ռոնալդ Ա. Ռասբանդը և ես կավելացնենք որոշ տեղեկություններ, որոնք վստահ ենք, որ կպատասխանի ձեր ունեցած հարցերին։

Երեցների և քահանայապետերի քվորումներ։

Նախ, վերահաստատելու համար, թե ինչ փոփոխություններ են կատարվում ծխերի քահանայապետերի խմբերում և երեցների քվորումներում։ Ծխերում, երեցների քվորումների և քահանայապետերի խմբերի անդամները կմիավորվեն մեկ Մելքիսեդեկյան Քահանայության քվորումում՝ ունենալով քվորումի մեկ նախագահ։ Այդ քվորումը, որը կավելանա քանակով և միասնությամբ, կկոչվի «երեցների քվորում»։ Քահանայապետերի խմբերը կդադարեցվեն։ Երեցների քվորումն իր մեջ ընդգրկում է ծխի բոլոր երեցներին, ապագա երեցներին և այն քահանայապետերին, ովքեր ներկայումս *չեն* ծառայում եպիսկոպոսության, ցցի նախագահության, բարձրագույն խորհրդի կամ գործող հայրապետի կոչումներում։ Ցցերի քահանայապետերի քվորումները բաղկացած կլինեն այն քահանայապետերից, ովքեր ծառայում *են* ցցի նախագահության, եպիսկոպոսության, բարձրագույն խորհրդի և գործող հայրապետի կոչումներում։

Երեցների Քվորումի Նախագահություն։

Ինչպե՞ս պետք է կազմավորվի երեցների քվորումի նախագահությունը։ Ցցի նախագահությունը կազատի

քահանայապետերի խմբերի ներկա ղեկավարներին և երեցների քվորումի նախագահություններին և յուրաքանչյուր ծխում կկանչի երեցների քվորումի նոր նախագահի և խորհրդականների: Երեցների քվորումի նոր նախագահությունը կարող է կազմված լինել տարբեր տարիքի և փորձառություն ունեցող երեցներից և քահանայապետերից, ովքեր միասին կծառայեն մեկ քվորումի նախագահությունում: Քվորումի նախագահ կամ նախագահության խորհրդական կարող է ծառայել երեցի կամ քահանայապետի կոչում ունեցող անձը: Քահանայապետերի կողմից սա Երեցների քվորումի «գրավում» չէ: Մենք ակնկալում ենք, որ երեցները և քահանայապետերը միասին աշխատեն քվորումի նախագահության և քվորումի ծառայության ցանկացած համակցության մեջ: Քվորումի այդ փոփոխությունները պետք է կատարվեն՝ որքան հնարավոր է շուտ:

Երեցների Քվորումի քահանայության կոչումները:

Արդյո՞ք քվորումի կառուցվածքի այս ճշգրտումը փոխում է քվորումի անդամների քահանայության կոչումները: Ոչ, այս գործողությունը չի չեղարկում քահանայության որևէ կոչում, որը նախկինում կարող էր տրված լինել: Ինչպես գիտեք, տղամարդն իր կյանքում կարող է կարգվել քահանայության տարբեր կոչումների, և նորը ստանալիս, նա չի կորցնում նախկինում տրված իր կարգումները: Թեև, որոշ դեպքերում քահանայություն կրողը միևնույն ժամանակ կարող է ծառայել մեկից ավելի կոչումներում, ինչպես որ քահանայապետը կարող է ծառայել հայրապետի կամ եպիսկոպոսի կոչումներում, նա սովորաբար չի գործում քահանայության իր բոլոր կոչումներում միաժամանակ: Օրինակ, Եպիսկոպոսներն ու Յոթանասունականներն ակտիվ չեն ծառայում այդ կոչումներում, երբ նրանք հետ են կանչվում կամ ստանում են պատվավոր իշխանավորի կոչում: Այդպիսով, քահանայության այլ պաշտոն կամ պաշտոններ կրող տղամարդը երեցների քվորումի անդամ լինելու ժամանակ ծառայում է որպես երեց:

Տարիներ առաջ Նախագահ Բոյդ Կ. Փաքերը նկատել է, որ «Քահանայությունն ավելի մեծ է, քան դրա պաշտոններից որևէ մեկը: . . . Քահանայությունը բաժանելի չէ: Երեցն ունի նույնքան քահանայություն, որքան Առաքյալը: (Տես ՎևՈւ 20.38:) Երբ մարդուն [շնորհվում է քահանայություն], նա ստանում է դա ամբողջությամբ: Սակայն, քահանայության մեջ կան պաշտոններ՝ իշխանության և պատասխանատվության բաժանումներ: . . . Երբեմն, պաշտոնների մասին խոսում են «մեկը մյուսից բարձր կամ ցածր»: «Բարձր» կամ «ցածր» աստիճանների փոխարեն Մելքիսեդեկյան Քահանայության պաշտոնները ներկայացնում են ծառայության տարբեր ոլորտներ»:[4] Եղբայրնե՛ր, ես անկեղծ հույս ունեմ, որ մենք այլևս չենք օգտագործի Մելքիսեդեկյան Քահանայության մեկ պաշտոնից մեկ այլ պաշտոնի «առաջխաղացման» եզրույթը:

Երեցները կշարունակեն ձեռնադրվել քահանայապետեր, երբ նրանք կանչվեն ցցի նախագահություն, բարձրագույն խորհուրդ կամ եպիսկոպոս, կամ այլ դեպքերում, երբ որոշվում է ցցի նախագահի կողմից՝ աղոթքով քննարկման և ոգեշնչման

միջոցով: Երբ ցցի նախագահությունում, բարձրագույն խորհրդում կամ եպիսկոպոսությունում իրենց ծառայության ժամանակը լրանա, քահանայապետերը կվերադառնան իրենց ծխի երեցների քվորում:

Ցուցումներ Երեցների Քվորումի Նախագահի համար

Ո՞վ է առաջնորդում երեցների քվորումի նախագահի աշխատանքը: Ցցի նախագահն իր ցցի սահմաններում նախագահում է Մելքիսեդեկյան Քահանայությունը: Հետևաբար, երեցների քվորումի նախագահն անմիջականորեն պատասխանատու է ցցի նախագահին, որն ուսուցում և առաջնորդություն է տրամադրում ցցի նախագահության և բարձրագույն խորհրդի միջոցով: Եպիսկոպոսը, որպես ծխի նախագահող քահանայապետ, նույնպես պարբերաբար հանդիպում է երեցների քվորումի նախագահին: Եպիսկոպոսը խորհուրդակցում էնրա հետ և տալիս է համապատասխան առաջնորդություն այն մասին, թե ինչպես լավագույնս ծառայել և օրհնել ծխի անդամներին՝ ներդաշնակ աշխատելով ծխի բոլոր կազմակերպությունների հետ:[5]

Այդ փոփոխությունների նպատակը

Որո՞նք են Մելքիսեդեկյան Քահանայության քվորումների այդ ճշգրտումների նպատակները: Երբ Մելքիսեդեկյան Քահանայության մեկ քվորումի կազմում միաբանվում են քահանայություն կրողները, որպեսզի իրագործեն փրկության աշխատանքի բոլոր կետերը, այդ թվում՝ տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքը, որը նախկինում համակարգվում էր քահանայապետերի խմբերի կողմից: Այն հնարավորություն է տալիս ցանկացած տարիքի և ծագում ունեցող քվորումի անդամներին օգտվել կյանքի տարբեր փուլերում գտնվող անդամների մտածելակերպից և փորձից: Այն նաև լրացուցիչ հնարավորություններ է ընձեռում փորձառու քահանայություն կրողներին խորհուրդ տալ ապագա երեցներին, նոր անդամներին, երիտասարդ չափահասներին և Եկեղեցու ակտիվ գործունեությանը վերադարձողներին: Ես չեմ կարող պատշաճ կերպով արտահայտել, թե որքան ոգևորված եմ այն մտքից, թե ապագայում ինչ կարևոր դեր են կատարելու երեցների քվորումները: Այս քվորումներում խաչաձևվող իմաստությունը, փորձը, ունակությունը և ուժը կանխատեսում են Եկեղեցու քահանայության ծառայության նոր օրը և նոր չափանիշը:

Քսան տարի առաջ, գերագույն համաժողովի ժամանակ ես պատմեցի մի պատմություն, որն առաջին անգամ պատմել էր Յոթանասունից Երեց Վոն Ջ. Ֆեզերդսթոնը, որը, կարծում եմ, արժե պատմել այստեղ:

1918թ.-ին եղբայր Ջորջ Գոթսը մի գյուղացի էր, ով շաքարի ճակնդեղ էր աճեցնում Լեհիում (Յուտա): Այդ տարի ձմեռը շուտ եկավ և հողի մեջ սառեց նրա շաքարի ճակնդեղի մեծ մասը: Ջորջի և նրա կրտսեր որդի Ֆրենսիսի համար բերքահավաքը դանդաղ ու դժվար էր: Միևնույն ժամանակ գրիպի համաճարակ տարածվեց: Մարսափելի հիվանդությունը խլեց Ջորջի որդի՝ Չարլզի և նրա երեք փոքր երեխաների, երկու փոքր դուստրերի և որդու, կյանքը: Վեց օրվա ընթացքում սգացող Ջորջ Գոթսը երեք անգամ գնաց Օգդեն (Յուտա), որպեսզի հուղարկավորության համար դիակները տուն բերի: Այդ սարսափելի միջադեպից հետո Ջորջն ու Ֆրենսիսն իրենց սայլակով գնացին շաքարի ճակնդեղի դաշտ:

[Ճանապարհին] նրանք տեսան հարևան գյուղացիներին, ովքեր բեռնված սայլակները տեղափոխում էին գործարան: Նրանց կողքով անցնելիս այդ մարդիկ ողջույններ էին հղում. «Բարև, հորեղբա՛յր Ջորջ», «Ցավում եմ, Ջո՛րջ», «Դաժան ճակատագիր, Ջո՛րջ», «Դու շատ ընկերներ ունես, Ջո՛րջ»:

Վերջին սայլի մեջ . . . պեպենոտ Ջասպեր Ռոլֆն էր: Նա ուրախ ողջունեց ու բացականչեց. «Դրանք վերջինն են հորեղբայր Ջորջ»:

[Եղբայր Գոթսը] շրջվեց դեպի Ֆրենսիսն ու ասաց. «Երանի այդ բոլորը մերը լինեին»:

Երբ մոտեցան ագարակի դարպասին, Ֆրենսիսը ցատկեց շաքարի ճակնդեղի կարմիր գույնի մեծ սայլից և բացեց դարպասը, որպեսզի [հայրը] մտնի դաշտ: [Ջորջը] կանգնեցրեց սայլը, . . . և արագ աչքի անցկացրեց դաշտը: . . . Դաշտում ոչ մի շաքարի ճակնդեղ չկար: Ապա, հասկացավ, թե ինչ էր նկատի ունեցել Ջասպեր Ռոլֆը, երբ բացականչել էր «Դրանք վերջինն են հորեղբայր Ջորջ»:

[Ջորջը] սայլից ցած իջավ, վերցրեց մեկ բուռ շաքանակագույն հող, որը նա շատ էր սիրում, հետո վերցրեց . . . շաքարի ճակնդեղի ցողունը և մի բոպե նայեց իր աշխատանքի այդ խորհրդանիշերին, կարծես չէր հավատում իր աչքերին:

Այնուհետև, [նա] նստեց ճակնդեղի ցողունների կույտի վրա, այդ մարդը, ով վեց օրվա ընթացքում բերել էր իր սիրելի չորս մարդկանց դիակները, դագաղներ պատրաստել, գերեզմաններ փորել և, նույնիսկ, օգնել թաղման շորերի հարցում, այդ զարմանահրաշ մարդը, ով երբեք տեղի չէր տվել կամ նահանջել, ոչ էլ տատանվել էր այս ցնցող փորձառությունից, նստեց ճակնդեղի ցողունների կույտի վրա և փոքր երեխայի նման սկսեց հեկեկալ:

Ապա, նա կանգ առավ, սրբեց աչքերը . . . նայեց երկնքին և ասաց. «Շնորհակալությու՛ն, Հա՛յր մեր ծխի երեցների համար»:[6]

Այո, շնորհակալ եղեք Աստծուն քահանայության տղամարդկանց և այն ծառայության համար, որ նրանք դեռ կկատարեն անհատներին և ընտանիքներին բարձրացնելու և Սիոնի հաստատման համար:

Առաջին Նախագահությունը, Տասներկու Առաքյալների քվորումը և Յոթանասունի նախագահությունն այս ճշգրտումները քննարկել են երկար ժամանակ: Բազմաթիվ աղոթքներից, քահանայության քվորումների սուրբգրային հիմունքներն ուշադիր ուսումնասիրելուց և հաստատում ստանալուց հետո, որ դա է Տիրոջ կամքը, մենք միահամուռ կերպով առաջ ենք շարժվում դեպի այն, ինչն իրականում ևս մեկ քայլ է վերականգնման գործընթացում: Տիրոջ առաջնորդությունը դրսևորվում է և ես ուրախանում եմ դրա համար, երբ վկայում եմ Նրա, Նրա քահանայության և քահանայության ձեր կարգումների վերաբերյալ, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 41.3:
2. Տես, for example, William G. Hartley, "The Priesthood Reorganization of 1877: Brigham Young's Last Achievement," in *My Fellow Servants: Essays on the History of the Priesthood* (2010), 227–64; "To the Seventies," in James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints* (1965), 352–54; Hartley, "The Seventies in the 1880s: Revelations and Reorganizing," in *My Fellow Servants,* 265–300; Edward L. Kimball, *Lengthen Your Stride: The Presidency of Spencer W. Kimball* (2005), 254–58; Susan Easton Black, "Early Quorums of the Seventies," in David J. Whittaker and Arnold K. Garr, eds., *A Firm Foundation: Church Organization and Administration* (2011), 139–60; Richard O. Cowan, "The Seventies' Role in the Worldwide Church Administration," in *A Firm Foundation,* 573–93:
3. Ռասսել Մ. Նելսոն, «Ներածական ելույթ», *Լիահոնա,* մայիս 2018, 54:
4. Boyd K. Packer, "What Every Elder Should Know—and Every Sister as Well: A Primer on Principles of Priesthood Government," *Tambuli,* Nov. 1994, 17, 19.
5. Տես *Ձեռնարկ 2. Սպասավորել Եկեղեցում* (2010), 7.3.1:
6. D. Todd Christofferson, "The Priesthood Quorum," *Liahona,* Jan. 1999, 47; see also Vaughn J. Featherstone, "Now Abideth Faith, Hope, and Charity," *Ensign,* July 1973, 36–37.

Երեց Ռոնալդ Ա. Ռասբանդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Տե՛ս, արքայական զորքը

Ինչպիսի՞ ուրախություն կլինի, որ բոլոր Մելքիսեդեկյան քահանայության կրողներն ունենան համատեղ ուսուցանելու, սովորելու և ծառայելու օրհնությունը:

Քահանայության իմ սիրելի՛ եղբայրներ, մեծ խոնարհություն եմ զգում, կանգնելով ձեր առաջ այս պատմական առիթով, մեր թանկագին մարգարե և Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հանձնարարությամբ: Շատ սիրում և աջակցում եմ Աստծո այս մարդկանց՝ որպես մեր նոր Առաջին Նախագահություն: Իմ վկայությունն եմ ավելացնում Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնի և Տասներկու Առաքյալների քվորումի իմ մյուս եղբայրների վկայությանը, որ այս երեկո հայտարարված փոփոխությունները Աստծո կամքով են:

Ինչպես նշեց Նախագահ Նելսոնը, Եկեղեցու ավագ եղբայրները երկար ժամանակ աղոթքով խորհել ու քննարկել են այդ հարցերը: Նպատակ է եղել փնտրել Տիրոջ կամքը և ամրապնդել Մելքիսեդեկյան Քահանայության քվորումները: Արդյունքում ոգեշնչում է եկել, և այսօր երեկոյան մեր մարգարեն հայտնի դարձրեց Տիրոջ կամքը: «Որովհետեւ Տեր Եհովան ոչ մի բան չի անիլ, եթե չյայտնէ իր խորհուրդը իր ծառաներին՝ մարգարէներին»:[1] Որքան օրհնված ենք մենք, որ այսօր ունենք ապրող մարգարե:

Մեր կյանքի ընթացքում ես և քույր Ռասբանդը աշխարհով մեկ ճամփորդել ենք Եկեղեցական և մասնագիտական տարբեր հանձնարարություններով: Ես տեսել եմ եկեղեցական միավորների գրեթե ամեն տեսակի կազմաձև. Ռուսաստանում՝ փոքր ճյուղ, որտեղ Մելքիսեդեկյան քահանայություն կրողների թիվը կարելի է մեկ ձեռքի մատների վրա հաշվել, Աֆրիկայում՝ նոր և աճող ծուխ, որտեղ քահանայապետերն ու երեցները միասին են հավաքվում, քանի որ Մելքիսեդեկյան քահանայություն կրողների ընդհանուր թիվը ցածր է, և լավ հաստատված ծխեր, որտեղ երեցների թվի մեծության պատճառով անհրաժեշտ է եղել քվորումը բաժանել երկու քվորումների:

Ամեն տեղ, ուր գնացել ենք, մենք ականատես ենք եղել, թե ինչպես է Տիրոջ աջակցությունը գնացել Նրա ծառաներից առաջ, նախապատրաստելով մարդկանց, ինչպեսև ճանապարհ պատրաստելով, որպեսզի Նրա բոլոր զավակները օրհնվեն՝ ըստ իրենց կարիքների: Մի՞թե

Նա չի խոստացել, որ «[կգնա մեր] առջևից և կլինի [մեր] աջ կողմում և [մեր] ձախ կողմում, և որ [Նրա] Հոգին [կլինի մեր] սրտերում, և [Նրա] հրեշտակները՝ [մեր] շուրջը»:[2]

Մտածելով բոլորիդ մասին, ես վերհիշում եմ հետևյալ հիմնը. «Տե՛ս, արքայական զորքը»:

Տե՛ս, արքայական զորքը,
Դրոշով, սուր ու վահանով
Անցնում է հաղթական երթը,
Կյանքի ռազմի դաշտում:
Շարքերը, ռազմիկները
Միաբան են, քաջ, ուժով,
Զորագլխին հետևում են
Իրենց ուրախ երգով:[3]

Երեց Քրիստոֆերսոնը պատասխանեց մի քանի հարցերի, որոնք, համոզված եմ, կառաջանան, երբ հայտարարվեց, որ քահանայապետերի խմբերն ու երեցների քվորումները ծխի մակարդակով կմիավորվեն որպես Մելքիսեդեկյան Քահանայության եղբայրների մեկ միաբան, հզոր բանակ:

Այս կանոնակարգումները կօգնեն երեցների քվորումներին և Սփոփող Միություններին ներդաշնակեցնել իրենց աշխատանքը: Դրանք կհեշտացնեն քվորումների համագործակցությունը եպիսկոպոսության և ծխի խորհրդի հետ: Եվ եպիսկոպոսին հնարավորություն կտան ավելի շատ պատասխանատվություններ հանձնարարել երեցների քվորումի և Սփոփող Միության նախագահներին, որպեսզի եպիսկոպոսը և նրա խորհրդականները կարողանան կենտրոնանալ իրենց առաջնային պարտականությունների վրա, մասնավորապես, ղեկավարելով երիտասարդ կանանց և Ահարոնյան Քահանայություն կրող երիտասարդ տղամարդկանց:

Փոփոխությունները արտասովոր բան չեն Եկեղեցու կազմակերպություններում ու նրանց գործառույթներում: 1883 թվականին Տերն ասաց Նախագահ Ջոն Թեյլորին. «[Ինչ վերաբերում է իմ Եկեղեցու և Քահանայության կառավարմանն ու կազմակերպությանը . . . ժամանակ առ ժամանակ, իմ նշանակած հայտնության աղբյուրներով ես ձեզ կհայտնեմ այն ամենը, ինչ անհրաժեշտ է իմ եկեղեցու ապագա զարգացման և կատարելագործման համար, որն անհրաժեշտ կլինի իմ թագավորության կանոնավորման ու առաջընթացի համար»:[4]

Այժմ մի քանի խոսք ձե՛զ, եղբայրնե՛ր, որ քահանայապետեր եք. իմացեք, որ մենք սիրո՛ւմ ենք ձեզ: Մեր Երկնային Հայրը սիրում է ձեզ: Դուք արքայական քահանայության այրուձին եք, և մենք չենք կարող առաջ տանել այս աշխատանքը առանց ձեր բարության, ծառայության, փորձառության ու արդարակեցության: Ալման ուսուցանել է, որ տղամարդիկ կոչվում են քահանայապետեր իրենց մեծ հավատքի ու բարի գործերի շնորհիվ, որպեսզի ուսուցանեն ու ծառայեն մարդկանց:[5] Այդ փորձառության կարիքը թերևս ավելի մեծ է այժմ, քան երբևէ եղել է:

Շատ ծխերում մենք, հնարավոր է, ունենանք քահանայապետեր, որոնք հնարավորություն ունեն ծառայելու երեցի նախագահության ներքո՝ որպես քվորումի նախագահ: Մենք ունենք նախադեպը, երբ երեցները նախագահում են քահանայապետերին. Կան երեցներ, որ ներկայումս ծառայում են որպես ճյուղերի նախագահներ աշխարհի մի շարք շրջաններում, որտեղ ճյուղի սահմաններում քահանայապետեր են բնակվում և կան ճյուղեր, որտեղ միայն երեցների քվորում կա կազմավորված, որի կազմում քահանայապետեր կան:

Ինչպիսի՞ ուրախություն կլինի, որ *բոլոր* Մելքիսեդեկյան քահանայության կրողներն ունենան ծխի բոլոր

անդամներին համատեղուսուցանելու, սովորելու և ծառայելու օրհնությունը: Որտեղ էլ լինեք, ինչ հանգամանքներում էլ լինեք, մենք հրավիրում ենք ձեզ աղոթքով, հավատարմությամբ և ուրախությամբ ընդունել առաջնորդելու կամ առաջնորդվելու և որպես քահանայության եղբայրների մեկ մարմին միաբան ծառայելու նոր հնարավորությունները:

Այժմ ես կանդրադառնամ լրացուցիչ հարցերի, որոնք, հնարավոր է, պարզաբանման կարիք ունենան, մինչ առաջ ենք ընթանում սուրբ քահանայության Իր քվորումների կազմավորման Տիրոջ կամքը իրականացնելիս:

Որո՞նք են ճշգրտումները ցցի քահանայապետերի քվորումի համար: Ցցի քահանայապետերի քվորումները կշարունակեն գործել: Ցցերի նախագահությունները կշարունակեն ծառայել որպես ցցի քահանայապետերի քվորումների նախագահություն: Սակայն, ինչպես նշեց Երեց Քրիստոֆերսոնը, ցցի քահանայապետերի քվորումի կազմում կընդգրկվեն *ուվյալ պահին* ծառայող ցցի նախագահության, ծխերի եպիսկոպոսությունների, ցցի բարձրագույն խորհրդի անդամները և գործող հայրապետը: Ծխերի և ցցերի գործավարներն ու գործադիր քարտուղարները ցցի քահանայապետերի քվորումի անդամ չեն համարվի: Երբ գործող ծառայության մեջ գտնվող քահանայապետը, հայրապետը, Յոթանասունականը կամ Առաքյալը այցելում է ծուխ և ցանկանում է մասնակցել քահանայության հավաքին, նա կհաճախի երեցների քվորում:

Ժամանակին՝ իրենց գործող կոչումից ազատվելուց հետո, այդ եղբայրները կվերադառնան իրենց բնակության միավորները որպես երեցների քվորումի անդամներ:

Ո՞րն է ցցի քահանայապետերի քվորումի *դերը*: Ցցի նախագահությունը հանդիպում է քահանայապետների քվորումի անդամների հետ՝ միասին խորհրդակցելու, վկայելու և ուսուցանելու նպատակով: Ցցի ժողովները կշարունակվեն այնպես, ինչպես ուղղորդում է Եկեղեցու ձեռնարկը՝ երկու կանոնավորումով.

Առաջինն այն է, որ ծխերում ու ցցերում այլևս չեն անցկացվի քահանայության գործադիր հանձնախմբի ժողովներ: Եթե ծխում հատուկ խնդիր է ծագում՝ նուրբ ընտանեկան կամ բարօրության անսպասելի խնդիր, այն կարող է լուծվել՝ հրավիրելով եպիսկոպոսության ընդլայնված ժողով: Մյուս պակաս զգայուն հարցերը կարող են քննարկվել ծխի խորհրդում: Այն, ինչ հայտնի էր որպես ցցի քահանայության գործադիր հանձնախմբի ժողով, այժմ կկոչվի «բարձրագույն խորհրդի ժողով»:

Երկրորդ՝ այսուհետ ցցի կարգված քահանայապետերի տարեկան ժողովներ չեն անցկացվի: Ինչևէ, ցցի նախագահությունը կշարունակի անցկացնել ցցի քահանայապետերի քվորումի ամենամյա ժողով իր գործող կազմով, ինչպես հայտարարվեց այսօր:

Կարո՞ղ է ծուխը մեկից ավելի քվորում ունենալ: Պատասխանն է՝ այո: Վարդապետություն և Ուխտեր 107 բաժնի 89 հատվածի ոգով, երբ ծուխը սովորականից շատ Մելքիսեդեկյան քահանայության ակտիվ անդամներ ունի, ղեկավարները կարող են կազմավորել ավելի քան մեկ երեցների քվորում: Նման դեպքերում՝ տարիքի, փորձի և քահանայության պաշտոնների ուժի առումով, յուրաքանչյուր քվորում պետք է ունենա ողջամիտ հավասարակշռություն:

Ես վկայում եմ, որ երբ մենք առաջ շարժվենք, կատարելով քվորումի այս ոգեշնչված վերափոխումը մեր ծխերում և ցցերում, մենք կտեսնենք բազմաթիվ օրհնություններ: Թույլ տվեք պարզապես մի քանի օրինակ հիշատակել:

Եպիսկոպոսի ղեկավարության ներքո՝ քահանայության ավելի շատ եղբայրներ կարող են օժանդակել փրկության աշխատանքին: Այն կներառի Իսրայելի հավաքումը տաճարային և ընտանեկան պատմության միջոցով, աշխատանքը կարիքի մեջ գտնվող ընտանիքների ու անհատների հետ և օգնություն միսիոներներին, որ հոգիներ բերեն Հիսուս Քրիստոսի մոտ:

Երբ նախկին նախագահող ղեկավարները վերադառնան, իրենց փորձով կիսվելով երեցների քվորումի հետ, քվորումի անդամները ավելի մեծ ուժ կստանան:

Քվորումի ներսում շնորհների ու կարողությունների ավելի մեծ բազմազանություն կլինի:

Ավելի մեծ ճկունություն և հասանելիություն կլինի ծխի և քվորումի ընթացիկ ու հրատապ կարիքների բավարարման և տարբեր ծառայողական հանձնարարությունների կատարման համար:

Դաստիարակության և միաբանության աճ կլինի, երբ նոր երեցներն ու փորձառու քահանայապետերը՝ կողք կողքի, քվորումի հավաքներին և հանձնարարություններ կատարելիս կկիսվեն իրենց փորձառություններով:

Եպիսկոպոսները և ճյուղի նախագահները, հուսանք, կթեթևանան, որպեսզի մեծարեն հոտը հովվելու և կարիքավորներին ծառայելու իրենց կոչումը:

Մենք գիտակցում ենք, որ յուրաքանչյուր ծուխ և ճյուղ տարբեր է: Հասկանալով տարբերությունները՝ մենք հույս ունենք, որ այս գերագույն համաժողովից հետո դուք առանց հետաձգելու կիրականացնեք այդ փոփոխությունները: Աստծո մարգարեն հրահանգ է տվել մեզ: Նրան հետևելը մեծ օրհնություն ու պատասխանատվություն է: Եկեք այն իրականացնենք արդարությամբ ու ջանասիրությամբ:

Հիշեցնում եմ՝ քահանայության իշխանությունը տրվում է ի սպաս դրվելով ու կարգվելով, բայց քահանայության իրական զորությունը՝ Տեր Հիսուս Քրիստոսի անունով գործելու զորությունը, գալիս է միայն արդար ապրելով:

Տերը հայտարարել է մարգարե Ջոզեֆ Սմիթին՝ Վերականգնման մարգարեին.

«Ահա, տե՛ս, ես հոգ կտանեմ ձեր հոտերի համար, և երեցներ կբարձրացնեմ և կուղարկեմ նրանց մոտ:

Ահա, ես կարագացնեմ իմ աշխատանքն իր ժամանակին»:[6]

Իսկապես, սա մի ժամանակ է, երբ Տերն արագացնում է Իր աշխատանքը:

Եկեք օգտագործենք հնարավորությունը՝ մտածելու և բարելավելու մեր կյանքը, ավելի շատ համապատասխանելով Նրա կամքին, որպեսզի արժանի լինենք այն բազմաթիվ օրհնություններին, որոնք նա խոստացել է ճշմարիտ և հավատարիմ մարդկանց:

Եղբայրնե՛ր, շնորհակալություն եմ հայտնում այն բոլոր գործերի համար, որ դուք անում եք այս հրաշալի աշխատանքի մասը լինելու համար: Թող որ մենք առաջ ընթանանք այս մեծ ու պատվավոր գործում:

Երբ ռազմը ավարտվի,
Եվ կռիվ, մարտ դադարեն,
Հովտում խաղաղության,
Երբ բոլորը հավաքվեն:
Հավերժական Արքայի,
Գահի մոտ հավաքված
Փառքը հավերժական
Տաղով կգովերգեն.

Հաղթանակ, հաղթանակ՝
փրկագնման շնորհիվ:
Հաղթանակ, Քրիստոսի՝
Տեր Հիսուսի շնորհիվ:
Հաղթանակ, հաղթանակ,
հաղթանակ՝
Տեր Հիսուսի շնորհիվ:[7]

Այսօր բոլորս կանգնած ենք որպես Տիրոջ վկաներ, հայտնելով Նրա կամքը Իր մարգարեի՝ Նախագահ Ռասել Մ. Նելսոնի միջոցով: Ես վկայում եմ, որ նա այսօր Տիրոջ մարգարեն է այստեղ՝ երկրի վրա: Ես բերում եմ իմ վկայությունը Տեր Հիսուս Քրիստոսի մասին, ով մեր Քավիչն ու Փրկիչն է: Սա նրա աշխատանքն է. և սա Նրա կամքն է, ում մասին ես բերում եմ իմ վկայությունը Հիսուս Քրիստոսի անունով՝ ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ամովս 3.7:
2. Վարդապետություն և Ուխտեր 84.88:
3. “Behold! A Royal Army,” *Hymns,* no. 251.
4. In James R. Clark, comp., *Messages of the First Presidency of The Church of Jesus Christ of Latter-day Saints* (1965), 2:354.
5. Տես Ալմա 13:
6. Վարդապետություն և ուխտեր 88.72–73:
7. “Behold! A Royal Army,” *Hymns,* no. 251.

Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության երկրորդ խորհրդական

Ոգեշնչված ծառայություն

Մենք Սուրբ Հոգին ամենից շատ ստանում ենք այն ժամանակ, երբ կենտրոնանում ենք ուրիշներին ծառայելու վրա: Սա ինչու մենք քահանայության պարտականություն ունենք ծառայելու Փրկիչին:

Իմ սիրելի՛ եղբայրներ, ես երախտապարտ եմ այս պատմական գերագույն համաժողովին ձեզ հետ խոսելու հնարավորության համար: Մենք հաստատեցինք Նախագահ Ռասսել Մ. Նելսոնին՝ որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու 17-րդ Նախագահ: Ունենալով նրա հետ ամեն օր աշխատելու օրհնությունը, ես զգացել եմ Հոգու հաստատումը, որ Նախագահ Նելսոնը կանչված է Աստծո կողմից Տիրոջ ճշմարիտ Եկեղեցին ղեկավարելու համար:

Ես նաև վկայություն ունեմ, որ Տերը կանչել է Երեց Գերիթ Վ. Գոնգին և Երեց Ուլիսես Սոարեսին ծառայելու որպես Տասներկու Առաքյալների Քվորումի անդամներ: Ես սիրում և հաստատում եմ նրանց: Իրենց ծառայությամբ նրանք շատ կյանքեր ու սերունդներ կօրհնեն ամբողջ աշխարհում:

Այս համաժողովը պատմական է ևս մեկ պատճառով: Նախագահ Նելսոնը հայտարարել է Իր Եկեղեցու համար Տիրոջ կազմակերպած ծրագրում ոգեշնչված առաջընթացի մասին:Այդ ծրագիրը ներառում է նոր կառուցվածք ծխերի և ցցերի քահանայության քվորումների համար, որպեսզի մենք կարողանանք ավելի լավ կատարել քահանայության մեր պարտականությունները: Այդ բոլոր պարտականությունները կապված են այն հոգատարության հետ, որ քահանայությունը ցուցաբերում է Հոր զավակների հանդեպ:

Իր Սրբերին սիրառատ հոգատարությամբ ապահովելու Տիրոջ ծրագիրը տարիների ընթացքում իրականացվել է տարբեր եղանակներով: Նավուի վաղ շրջանում Մարգարե Ջոզեֆ Սմիթը մի կազմակերպված եղանակի կարիք ուներ, որպեսզի հոգ տաներ քաղաք եկող մեծ թվով կարիքավոր նորադարձների մասին: Նրանց թվում էին իմ նախապապերից չորսը՝ Այրինգները, Բենիոնները, Ռոմնիները և Սմիթները:Մարգարեն կազմակերպեց այդ Սրբերի մասին հոգ տանելու ջանքերը ըստ աշխարհագրության: Իլինոյսում քաղաքի այդ բաժանմունքները կոչվեցին ծխեր:

Երբ Սրբերը տեղափոխվում էին հարթավայրերով, նրանք կազմակերպված «խմբերով» հոգ էին տանում միմյանց մասին: Իմ հայրական նախապապերից մեկը վերադառնում էր ներկայիս Օկլահոմայի իր միսիայից, երբ տեսավ մի խումբ մարդկանց բեռնասայլի վրա: Նա այնքան էր թուլացել հիվանդության պատճառով, որ իր զուգընկերոջ հետ պառկած էր մի փոքր բեռնասայլում:

Խմբի ղեկավարը երկու երիտասարդ կանանց ուղարկեց, որ օգնեն լքված բեռնասայլում գտնվող անծանոթներին: Նրանցից մեկը՝ մի երիտասարդ քույր, ով դարձի էր եկել Շվեյցարիայում, նայեց միսիոներներից մեկին և կարեկցանք զգաց նրա հանդեպ: Իմ նախապապին փրկեց այդ Սրբերի խումբը: Նա բավականին կազդուրվեց և ճանապարհի մնացած մասը քայլեց դեպի Սոլթ Լեյքի Հովիտ իր երիտասարդ փրկարարի հետ կողք կողքի: Նրանք սիրահարվեցին և ամուսնացան: Նա դարձավ իմ նախապապը՝ Հենրի Այրինգը, իսկ այդ աղջիկը դարձավ իմ նախատատը՝ Մարիա Բոմելի Այրինգը:

Տարիներ անց, երբ մարդիկ հիշում ու խոսում էին մայրցամաքով տեղափոխվելու մասին, նա ասում էր. «Օհ, ոչ, դժվար չէր: Մինչ մենք քայլում էինք, ամբողջ ճանապարհին խոսում էինք, թե ինչ հրաշք էր, որ մենք երկուսս գտանք Հիսուս Քրիստոսի ճշմարիտ ավետարանը: Դա իմ հիշողությունների ամենաերջանիկ ժամանակն էր»:

Այդ ժամանակից սկսած, Տերն օգտագործել է տարբեր ուղիներ, օգնելով Իր Սրբերին հոգ տանել միմյանց մասին: Այժմ, Նա օրհնել է մեզ զորացած ու միասնական քվորումներով՝ ծխի ու ցցի մակարդակով. քվորումներ, որոնք համաձայնեցված աշխատում են ծխի բոլոր կազմակերպությունների հետ:

Աշխարհագրական սահմաններով բոլոր ծխերը, խմբերը և հզորացված քվորումները պետք է ունենան առնվազն երկու բան, որպեսզի հաջողությամբ իրականացնեն Տիրոջ ցանկությունը առ այն, որ Իր Սրբերը հոգ տանեն միմյանց մասին այնպես, ինչպես Ինքն է հոգ տանում նրանց մասին: Սրբերը հաջողության են հասնում, երբ Քրիստոսանման սեր են ցուցաբերում միմյանց հանդեպ՝ վեր կանգնելով անձնական շահից: Սուրբ գրություններն այն կոչում են «գթություն . . . Քրիստոսի մաքուր սեր» (Մորոնի 7.47): Եվ նրանք հաջողության են հասնում, երբ Սուրբ Հոգին ուղղորդում է հոգացողին՝ տեղեկացնելով, թե, ըստ Տիրոջ, ինչ կարիք ունի այն մարդը, ում Նա փորձում է օգնել:

Ժամանակ առ ժամանակ վերջին շաբաթների ընթացքում, Եկեղեցու անդամները իմ ներկայությամբ վարվում էին այնպես, կարծես ինչ-որ ձևով նրանք նախազգացել էին, թե Տերն ինչ էր պատրաստվում անել, ինչպես հայտարարվեց այստեղ այսօր: Թույլ տվեք երկու օրինակով կիսվել ձեզ հետ: Առաջինը մի պարզ հաղորդության ժողովի ելույթ է 14-ամյա Ահարոնյան Քահանայության մի ուսուցչի կողմից, ով հասկանում է, թե քահանայություն կրողներն ինչ կարող են իրականացնել՝ ծառայելով Տիրոջը: Երկրորդը՝ Մելքիսեդեկյան Քահանայություն կրող է, ով, Քիստոսանման սիրով ոգեշնչված, ծառայում է մի ընտանիքի:

Նախ, թույլ տվեք կիսվել ծխի հաղորդության ժողովին երիտասարդ տղայի ելույթի խոսքերով:Ես այնտեղ էի: Փորձեք հիշել, թե ինչպիսին էիք դուք, երբ 14 տարեկան էիք, և լսեք, որ հասկանաք, թե այդքան երիտասարդ տղամարդուց ինչ գիտելիք է ակնկալվում.

«Ինձ իրոք դուր է գալիս, որ ես մեր ծխի ուսուցիչների քվորումի անդամ եմ 14 տարիս լրանալուց հետո: Ուսուցիչը դեռևս ունի սարկավագի բոլոր պարտականությունները՝ գումարած մի քանի նոր պարտականություններ:

Քանի որ մեզանից ոմանք ուսուցիչներ են, ուրիշներն էլ մի օր կդառնան ուսուցիչներ, ուստի կարևոր է, որ

բոլորս ավելին իմանանք ուսուցիչների պարտականությունների մասին:

Նախ, Վարդապետություն և Ուխտեր 20.53-ում ասվում է. «Ուսուցչի պարտականությունն է՝ միշտ հսկել եկեղեցու վրա, լինել նրա հետ և ամրապնդել այն»:

Հաջորդը, Վարդապետություն և Ուխտեր 20.54–55-ում ասվում է.

«Եվ հետևել, որ եկեղեցում չլինի անօրինություն, ոչ կոպտություն միմյանց հանդեպ, ոչ էլ ստախոսություն, ոչ բամբասանք, ոչ էլ չարախոսություն.

Եվ հետևել, որ եկեղեցին հաճախ հավաքվի միասին, և նաև հետևել, որ բոլոր անդամները կատարեն իրենց պարտականությունը»:

Երիտասարդ տղամարդը շարունակեց.

«Տերն ասում է մեզ, որ մեր պարտականությունն է հոգ տանել ոչ միայն Եկեղեցու, այլև այն մարդկանց մասին, ովքեր Եկեղեցու ներսում են, այնպես, ինչպես Քրիստոսը հոգ կտաներ, քանի որ սա Նրա Եկեղեցին է: Եթե մենք փորձում ենք պահել պատվիրանները, բարի լինել միմյանց հանդեպ, ազնիվ լինել, լավ ընկերներ լինել և բավականություն ստանալ միասին լինելուց, ապա կկարողանանք Հոգին ունենալ մեզ հետ և իմանալ, թե Երկնային Հայրն ինչ է ցանկանում, որ մենք անենք: Եթե մենք այդպես չվարվենք, ապա չենք կարող կատարել մեր կոչումները»:

Նա շարունակեց՝ ասելով.

«Երբ ուսուցիչն ընտրում է ճիշտ օրինակ ծառայել՝ լինելով լավ տնային ուսուցիչ, ողջունելով մարդկանց Եկեղեցում, պատրաստելով հաղորդությունը և լինելով խաղարարար, նա ընտրում է պատվել իր քահանայությունը և կատարել իր կոչումը:

Լինել լավ ուսուցիչ չի նշանակում պատասխանատու լինել միայն այն ժամանակ, երբ եկեղեցում ենք կամմասնակցում ենք Եկեղեցու միջոցառումներին: Պողոս Առաքյալն ուսուցանել է. «Օրինակ եղիր հավատացյալներին խոսքով, վարքով, սիրով, հավատքով, սրբությունով» (Ա Տիմոթեոս 4.12):

Ապա երիտասարդ տղամարդն ասաց.

«Կարևոր չէ, թե որտեղ ենք մենք կամ ինչ ենք անում, մենք կարող ենք արդարակեցության լավ օրինակ լինել բոլոր ժամանակներում և բոլոր տեղերում:

«Ես և հայրս Բրաունների տնային ուսուցիչներն ենք:[1] Ամեն անգամ, երբ մենք այցելում ենք նրանց, մենք հրաշալի ժամանակ ենք անցկացնում՝ զրուցելով և ծանոթանալով նրանց հետ: Մի բան, որ ինձ շատ է դուր գալիս Բրաունների ընտանիքում, այն է, որ նրանք բոլորն էլ պատրաստ են լսել և միշտ լավ պատմություններ ունեն մեզ հետ կիսվելու:

Երբ մենք լավ ենք ճանաչում ծխի անդամներին տնային ուսուցման շնորհիվ, ավելի հեշտ է դառնում կատարել ուսուցչի հաջորդ պարտականությունը՝ անդամներին ողջունել եկեղեցում: Օգնելով մարդկանց ընդունված զգալ և ընդգրկված լինել եկեղեցում, կօգնենք ծխի բոլոր անդամներին սիրված զգալ և պատրաստված՝ ճաշակելու հաղորդությունից:

Ողջունելով անդամներին, ովքեր գալիս են եկեղեցի, ուսուցիչներն օգնում են յուրաքանչյուր կիրակի պատրաստել հաղորդությունը: Ես իրոք բավականություն եմ ստանում՝ փոխանցելով ու պատրաստելով հաղորդությունը այս ծխում, քանի որ բոլորն այնքան հարգալից են: Ես միշտ զգում եմ Հոգին, երբ պատրաստում ու փոխանցում եմ հաղորդությունը: Սա իրոք օրհնություն է ինձ համար, և ես կարողանում եմ անել դա ամեն կիրակի:

Որոշ ծառայություններ, ինչպես հաղորդության բաժանումն է, մարդիկ տեսնում են և դրա համար շնորհակալություն հայտնում, բայց ուրիշ ծառայություններ, ինչպես հաղորդության պատրաստումը, սովորաբար ոչ ոք չի նկատում: Կարևոր *չէ*, արդյո՞ք մարդիկ *տեսնում են* մեզ ծառայելիս, կարևորն այն է, որ Տերը գիտե, որ մենք ծառայում ենք Նրան:

Որպես ուսուցիչներ, մենք պետք է միշտ փորձենք զորացնել Եկեղեցին, մեր ընկերներին և մեր ընտանիքին՝ կատարելով մեր քահանայական պարտականությունները: Միշտ չէ, որ հեշտ է, բայց Տերը պատվիրաններ չի տալիս մեզ «առանց ուղի պատրաստելու [մեզ]համար, որպեսզի[մենք] կարողանան իրագործել այն, ինչ նա պատվիրել է[մեզ]» (1 Նեփի 3.7):

Երբ երիտասարդ տղամարդը եզրափակում էր, ես շարունակում էի հիանալ նրա հասունության և իմաստության մակարդակով: Նա ամփոփեց, ասելով. «Ես գիտեմ, որ մենք ավելի լավը կդառնանք, եթե որոշենք հետևել [Հիսուս Քրիստոսին]»:

Քահանայության ծառայության մեկ այլ պատմություն պատմեցին մի ամիս առաջ մի ծխի հաղորդության ժողովին: Ես կրկին ներկա էի: Այս դեպքում, Մելքիսեդեկյան քահանայություն փորձառու կրողը խոսելիս չգիտեր, որ ինքը ճշտությամբ նկարագրում է այն, ինչ Տերը ցանկանում է, որ տեղի ունենա հզորացված քահանայության քվորումի հետ: Ահա, թե նա ինչ ընդհանուր առմամբ.

Նա և իր տնային ուսուցման զուգընկերը կցված էին ուսուցանելու յոթ ընտանիքների: Համարյա բոլորը *չէին* ցանկանում, որ իրենց այցելեին: Երբ տնային ուսուցիչները գնում էին նրանց բնակարանները, նրանք հրաժարվում էին բացել դուռը: Երբ ուսուցիչները զանգում էին, նրանք չէին պատասխանում: Երբ հաղորդագրություն էին թողնում, հետադարձ զանգ չէին ստանում: Այս ավագ զուգընկերը, ի վերջո, որոշեց ծառայել այդ ընտանիքներին նամակներ գրելով: Նա նույնիսկ սկսեց օգտագործել վառ դեղին ծրարներ՝ հույս ունենալով պատասխան ստանալ:

Ընտանիքների թվում կար մի ոչ ակտիվ ամուրի քույր, ով ներգաղթել էր Եվրոպայից: Նա ուներ երկու երեխա:

Նրա հետ կապ հաստատելու մի քանի փորձերից հետո ուսուցիչը հաղորդագրություն ստացավ: Նա պարզապես տեղեկացնում էր, որ ինքը շատ զբաղված է տնային ուսուցիչների հետ հանդիպելու համար: Նա միանգամից երկու տեղում էր աշխատում, ու նաև ծառայում զինված ուժերում: Նա ոստիկանության սպա էր, և նրա մասնագիտական կարիերայի նպատակն էր դառնալ խուզարկու, վերադառնալ իր հայրենի երկիր և աշխատել այնտեղ:

Տնային ուսուցիչը չէր կարողանում այցելել նրան իր տանը: Նա պարբերաբար գրում էր կնոջը: Ամեն ամիս ձեռագիր նամակ էր ուղարկում, որում ավելացնում էր տոնական բացիկներ յուրաքանչյուր երեխայի համար:

Նա ոչ մի արձագանք չէր ստանում: Բայց կինը գիտեր՝ ովքեր էին իր տնային ուսուցիչները, ինչպես կապվել նրանց հետ, և նրանք շարունակում էին կատարել իրենց քահանայության ծառայությունը:

Հետո մի օր ուսուցիչը մի հրատապ հաղորդագրություն ստացավ կնոջից: Նա հուսահատված էր և օգնության կարիք ուներ: Նա չգիտեր, թե ով է եպիսկոպոսը, բայց գիտեր, թե ովքեր են իր տնային ուսուցիչները:

Մի քանի օրից նա պետք է մեկներ նահանգից մեկամսյա զինավարժությունների: Նա չէր կարող վերցնել երեխաներին իր հետ: Նրա մայրը, ով հոգ էր տանում երեխաների մասին, նոր էր մեկնել Եվրոպա, որպեսզի խնամեր իր ամուսնուն, ով անհապաղ բժշկական օգնության կարիք ուներ:

Այս ոչ ակտիվ քրոջ գումարը բավական էր իր կրտսեր զավակին Եվրոպայի տոմս գնելու համար, բայց 12-ամյա որդու՝ Էրիկի տոմսի համար գումար չուներ:[2] Նա հարցրեց իր տնային ուսուցչին՝ արդյոք նա կարող էր մի ՎՕՍ ընտանիք գտնել, ովքեր իրենց վրա կվերցնեին Էրիկի խնամքը հաջորդ մեկ ամսում:

Տնային ուսուցիչը գրեց նրան, որ կանի հնարավոր ամեն բան նրան օգնելու համար: Հետո նա կապվեց իր քահանայության ղեկավարների հետ: Եպիսկոպոսը, ով նախագահող քահանայապետ էր, հավանություն տվեց ծխի խորհրդի անդամներին, ներառյալ Սփոփող Միության նախագահին դիմելու նրա գաղափարին:

Սփոփող Միության նախագահը արագ գտավ չորս լավ ՎՕՍ ընտանիքներ, ովքեր Էրիկի տարիքի երեխաներ ունեին և կվերցնեին նրան իրենց տուն մեկ շաբաթով: Հաջորդ մի ամսում այդ ընտանիքները սենյակ հատկացրին Էրիկին իրենց, առանց այն էլ արդեն մարդաշատ բնակարաններում, կերակրում էին նրան, ընդգրկում նախօրոք պլանավորված ընտանեկան ամառային միջոցառումներում, բերում էին եկեղեցի, ընդգրկում ընտանեկան երեկոներում և այլն:

Ընտանիքները, որոնք ունեին Էրիկի տարիքի տղաներ, ընդգրկում էին նրան սարկավագների քվորումի ժողովներում ու միջոցառումներում: Այդ 30 օրում Էրիկն իր կյանքում առաջին անգամ եկեղեցի էր գալիս ամեն կիրակի:

Երբ նրա մայրը զորավարժանքներից տուն վերադարձավ, Էրիկը շարունակեց հաճախել Եկեղեցի, սովորաբար այս ՎՕՍ կամավորական ընտանիքներից մեկի կամ ուրիշների հետ, ովքեր աջակցում էին նրան, ներառյալ իր մայրիկի այցելող ուսուցիչների հետ: Ի վերջո, նա կարգվեց սարկավագ և կանոնավոր սկսեց հաղորդություն բաժանել:

Այժմ եկեք տեսնենք, թե ինչպիսին կլինի Էրիկի ապագան: Մենք չենք զարմանա, եթե նա ղեկավար դառնա Եկեղեցում իր մոր հայրենիքում, երբ իր ընտանիքը վերադառնա այնտեղ, և այս ամենը այն բանի շնորհիվ, որ Սրբերը միասնական աշխատեցին եպիսկոպոսի ղեկավարությամբ՝ ծառայելով Սուրբ Հոգու առաջնորդությամբ և իրենց սրտում եղած գթության շնորհիվ:

Մենք գիտենք, որ գթությունը կարևոր է, որպեսզի փրկվենք Աստծո արքայությունում: Մորոնին գրել է. «Եթե դուք չունենաք գթություն, դուք ոչ մի կերպ չեք կարող փրկվել Աստծո արքայությունում» (Մորոնի 10.21, տես նաև Եթեր 12.34):

Մենք գիտենք նաև, որ գթությունը մեզ շնորհված պարգև է այն ամենի համար, ինչ մենք կարող ենք անել: Մենք պետք է «աղոթենք Հորը, սրտի ողջ կորովով, որ կարողանանք լցված լինել այդ սիրով, որը նա շնորհել է բոլոր նրանց, ովքեր նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդներն են» (Մորոնի 7.48):

Ինձ թվում է, որ մենք Սուրբ Հոգին ամենից շատ ստանում ենք այն ժամանակ, երբ կենտրոնանում ենք ուրիշներին ծառայելու վրա: Ահա ինչու մենք քահանայության պարտականություն ունեք ծառայելու Փրկիչին: Երբ զբաղված ենք ուրիշներին ծառայելով, մենք ավելի քիչ ենք մտածում մեր մասին և Սուրբ Հոգին կարող է ավելի պատրաստակամ գալ մեզ մոտ և ամբողջ կյանքում օգնել մեզ մեր ջանքերում, որ գթության պարգևը շնորհվի մեզ:

Ես բերում եմ իմ վկայությունը, որ Իր ծրագրում Տերն արդեն սկսել է մի մեծ առաջընթաց, որպեսզի մեր քահանայության ծառայության մեջ մենք դառնանք ավելի ոգեշնչված ու գթասիրտ:Ես երախտապարտ եմ Նրա սիրո համար, որը Նա այնքան շռայլորեն տալիս է մեզ: Ես այսպես վկայում եմ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Անունը փոխված է:
2. Անունը փոխված է:

Նախագահ Դալլին Հ. Օուքս
Առաջին Նախագահության առաջին խորհրդական

Քահանայության զորությունները

Սուրբ քահանայության մեծարումը ձեր ընտանիքներում և Եկեղեցու ձեր կոչումներում էական է Տիրոջ աշխատանքի համար։

Իմ սիրելի՛ եղբայրներ, մենք հայտնությամբ տրված հայտարարություն լսեցինք Նախագահ Ռասսել Մ. Նելսոնից։ Մենք կարևոր մանրամասներ լսեցինք Երեց Քրիստոֆերսոնից, Երեց Ռասբանդից և Նախագահ Այրինգից։ Այն, ինչ դեռ պիտի ասվի, այդ թվում՝ Նախագահ Նելսոնի կողմից, կմանրամասնի, թե դուք՝ Տիրոջ ղեկավարներդ և քահանայություն կրողներդ, ինչ պիտի անեք ձեր պարտականություններում։ Օգնելով այդ հարցում, ես կդիտարկեմ որոշ հիմնական սկզբունքներ, որոնք կառավարում են քահանայությունը, որը դուք կրում եք։

Ի. Քահանայություն

Մելքիսեդեկյան Քահանայությունը սուրբ իշխանություն է, որը Աստված տվել է Իր աշխատանքը կատարելու համար՝ իրականացնել «մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39)։ 1829թ. քահանայությունը շնորհվեց Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին, Փրկիչի Առաքյալների՝ Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի կողմից (տես ՎԵՈՒ 27.12)։ Այն սուրբ է և զորավոր, վեր է նկարագրելու մեր ունակությունից։

Քահանայության *բանալիները* զորություններ են, որոնցով ղեկավարվում է քահանայության իշխանության գործադրումը։ Այսպիսով, երբ Առաքյալները Մելքիսեդեկյան Քահանայություն շնորհեցին Ջոզեֆին և Օլիվերին, նրանք նաև բանալիներ տվեցին նրանց քահանայության գործադրումը ղեկավարելու համար (տես ՎԵՈՒ 27.12–13)։ Սակայն ոչ բոլոր բանալիներն էին տրվել այդ ժամանակ։ Բոլոր բանալիներն ու գիտելիքը, որ անհրաժեշտ են «ժամանակների լրության այս տնտեսության» համար (ՎԵՈՒ 128.18), տրվում են «տող առ տող» (հատված 21)։ Լրացուցիչ բանալիներ տրվեցին յոթ տարի անց Կիրթլենդի Տաճարում (տես ՎԵՈՒ 110.11–16)։ Այդ բանալիները տրվել են ղեկավարելու քահանայության իշխանությունը լրացուցիչ հանձնարարություններում, որոնք եղան այդ ժամանակ՝ ընդգրկելով մկրտությունը մահացածների համար։

Մելքիսեդեկյան Քահանայությունը կարգավիճակ չէ կամ պիտակ։ Դա սուրբ զորություն է, որը վստահվում է կրողին Աստծո աշխատանքի համար՝ հոգուտ Նրա զավակների։ Մենք միշտ պետք է հիշենք, որ մարդիկ, ովքեր կրում են քահանայությունը, «քահանայություն»-ը *չեն*։ Տեղին չէ ասել «քահանայությունը և կանայք»։ Հարկավոր է ասել «քահանայության *կրողները* և կանայք»։

II. Ծառայության սպասավորություն

Այժմ, եկեք մտածենք, թե Տեր Հիսուս Քրիստոսն ինչ է ակնկալում նրանցից, ովքեր կրում են Իր քահանայությունը՝ ինչպես պետք է մենք հոգիներ բերենք Նրա մոտ։

Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն ուսուցանել է. «Արդարացի է ասվել, որ Եկեղեցին կազմակերպված է կատարյալ ձևով։ Միակ խնդիրն այն է, որ այդ կազմակերպությունները լիովին չեն գիտակցում իրենց վրա դրված պարտականությունները։ Երբ նրանք լիովին գիտակցեն իրենց առաջ դրված պահանջները, նրանք

ավելի մեծ հավատարմությամբկկատարեն իրենց պարտականությունները, և Տիրոջ աշխատանքը կլինի շատ ավելի ամուր, զորավոր և ազդեցիկ աշխարհում»:[1]

Նախագահ Սմիթը նաև զգուշացրել է.

«Աստվածատուր պատվավոր կոչումները . . . որոնք կապված են Սուրբ քահանայության մի քանի պաշտոնների և կարգերի հետ, չպետք է օգտագործվեն կամ համարվեն որպես մարդու կողմից ստեղծված կոչումներ: Դրանք զարդարանքի համար չեն կամ չեն արտահայտում գերիշխանություն, այլ ավելի շուտ նշանակում են խոնարհ ծառայություն մեկ Տիրոջ աշխատանքում, որին մենք ընտրել ենք ծառայել: . . .

Մենք տքնում ենք հոգիների փրկության համար, և մենք պետք է զգանք, որ դա մեր վրա դրված ամենամեծ պարտականությունն է:Հետևաբար, մենք պետք է ցանկություն ունենանք զոհաբերել ամեն ինչ, եթե անհրաժեշտ է, Աստծո սիրո, մարդկանց փրկելու և երկրի վրա Աստծո թագավորության հաղթանակի համար»:[2]

III. Քահանայության պաշտոնները

Տիրոջ Եկեղեցում Մելքիսեդեկյան Քահանայության պաշտոնները տարբեր գործառույթներ ունեն: Վարդապետություն և Ուխտերում հղում է կատարվում քահանայապետերին՝ որպես «նախագահներ կամ ծառայողներ . . . ամենուրեք սփռված տարբեր ցցերի վրա» (ՎևՈւ 124.134): Երեցների մասին գրված է, որ «սպասավորներ լինեն [Տիրոջ] եկեղեցու համար» (ՎևՈւ 124.137): Ահա այլ ուսմունքներ այս առանձին գործառույթների մասին:

Քահանայապետը պաշտոնավարում է և սպասավորում հոգևոր բաներում (տես ՎևՈւ 107.10, 12): Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը նաև ուսուցանել է. «Կարգվելով քահանայապետ, նա պետք է զգա, որ պարտավորված է . . . օրինակ լինել տարեցների ու երիտասարդների համար, ովքեր արժանի են օրինակ վերցնել, իրեն դնելով արդարության ուսուցչի պաշտոնում, ոչ միայն ցուցումներով, այլ հատկապես օրինակով՝ տալով երիտասարդներին տարիքի փորձից առաջացող օգուտը և, այդպիսով, անհատապես դառնալով զորություն այն համայնքի մեջ, որտեղ նա ապրում է»:[3]

Երեցի պարտականությունների մասին Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Բրյուս Ռ. Մակքոնկին ուսուցանել է. «Երեցը Տեր Հիսուս Քրիստոսի սպասավորն է: . . . Նա լիազորված է կանգնել իր Տիրոջ տեղում . . . իր մերձավորներին սպասավորելիս: Նա Տիրոջ գործակալն է»:[4]

Երեց Մակքոնկին քննադատել է այն միտքը, որ ինչ-որ մեկը «պարզապես երեց» է: «Եկեղեցու յուրաքանչյուր երեց կրում է նույնքան քահանայություն, որքան Եկեղեցու Նախագահը . . . »,- ասել է նա: Ո՞վ է երեցը: Նա հովիվ է, հովիվ, որը ծառայում է Բարի Հովվի փարախում»:[5]

Բարի Հովվի փարախում սպասավորելու այս կարևոր դերում տարբերություն չկա Մելքիսեդեկյան Քահանայության քահանայապետի և երեցի պաշտոնների միջև: Վարդապետություն և Ուխտերի նշանակալից բաժին 107-ում Տերը հայտարարում է. «Ըստ Մելքիսեդեկյան Քահանայության կարգի քահանայապետերն իրավունք ունեն պաշտոնավարելու իրենց դիրքում, նախագահության ղեկավարության ներքո հոգևոր բաներում սպասավորելիս և նաև երեցի, քահանայի (ըստ Ղևտական կարգի), ուսուցչի, սարկավագի և անդամի պաշտոնում [կամ Ահարոնյան Քահանայության պաշտոններում]» (ՎևՈւ 107.10, տես նաև հատված 12):

Ամենակարևոր սկզբունքը բոլոր քահանայություն կրողների համար Մորմոնի Գրքում Հակոբ մարգարեի կողմից ուսուցանված սկզբունքն է: Երբ Հակոբը և նրա եղբայր Հովսեփը սրբագործվեցին որպես քահանաներ և ուսուցիչներ մարդկանց համար, Հակոբը բացականչեց. «Եվ մենք մեծարեցինք մեր պաշտոնը Տիրոջ համար, վերցնելով մեր վրա պատասխանատվությունը, որ մարդկանց մեղքերը մեր գլխին դրվեն, եթե մենք չսովորեցնենք նրանց Աստծո խոսքը ողջ ջանասիրությամբ» (Հակոբ 1.19):

Եղբայրնե՛ր, մեր պարտականությունները՝ որպես քահանայություն կրողներ, լուրջ են: Ուրիշ կազմակերպություններ կարող են բավարարվել կատարման աշխարհիկ չափանիշներով՝ իրենց ուղերձը հղելով և կատարելով մյուս գործառույթները: Բայց մենք, որ կրում ենք Աստծո քահանայությունը, ունենք աստվածային զորություն, որը կառավարում է նույնիսկ Աստծո սելեստիալ արքայության մուտքը: Մենք ունենք նպատակ և պատասխանատվություն,

որը Տերը սահմանել է Վարդապետություն և Ուխտերի հայտնությամբ տրված նախաբանում: Մենք պետք է հայտարարենք աշխարհին.

«Այլ, որ ամեն մարդ կարողանա խոսել Տեր Աստծո, այսինքն՝ աշխարհի Փրկչի անունով.

Որ նաև հավատքն ավելանա երկրի վրա.

Որ իմ հավիտենական ուխտը հաստատվի.

Որ իմ ավետարանի լրիվությունը թույլերի և պարզամիտների միջոցով հռչակվի աշխարհի ծայրերում» (ՎԿՈ 1.20–23):

Այս սուրբ հանձնարարությունն իրականացնելու համար մենք պետք է հավատարիմ լինենք, «մեծարելով» մեր քահանայության կոչումներն ու պարտականությունները (տես ՎԿՈ 84.33): Նախագահ Հարոլդ Բ. Լին բացատրել է, թե ինչ է նշանակում մեծարել քահանայությունը, ասելով. «Երբ մարդը դառնում է քահանայություն կրող, նա դառնում է Տիրոջ գործակալը: Նա պետք է իր կոչմանը վերաբերվի որպես Տիրոջ հանձնարարության: Դա է նշանակում մեծարել քահանայությունը»:[6]

Ուրեմն, եղբայրնե՛ր, եթե Տերն անձամբ խնդրեր ձեզ օգնել Իր որդիներից կամ դուստրերից որևէ մեկին, ինչպես որ Նա անում է Իր ծառաների միջոցով, կկատարեի՞ք դա: Եվ դա կատարելիս, կվարվեի՞ք՝ ինչպես Նրա գործակալը, «Տիրոջ հանձնարարության տակ», ապավինելով Նրա խոստացած օգնությանը:

Նախագահ Լին քահանայության մեծարման վերաբերյալ ևս մի ուսմունք ունի. «Երբ դուք խոշորացույցի միջով եք նայում որևէ առարկայի, այն ավելի մեծ է երևում, քան անզեն աչքով նայելիս, դա է խոշորացույցը կամ մեծացնող ապակին: Ուստի . . . եթե որևէ մեկը մեծարում է քահանայությունը, նշանակում է՝ ավելի մեծ է դարձնում, քան այն սկզբում երևում էր, և ավելի կարևոր է դարձնում, քան որևէ մեկը կարծել էր՝ դա է այն եղանակը, որով դուք մեծարում եք ձեր քահանայությունը»:[7]

Ահա քահանայությունը մեծարող քահանայության կրողի մի օրինակ: Այս պատմությունը ես լսել եմ Երեց Ջեֆրի Դ. Էրիքսոնից, Այդահոյի ցցի համաժողովի իմ զուգընկերոջից: Ջեֆրին որոշել էր հրաժարվել ուսումից և ընդունել գրավիչ աշխատանքի մի առաջարկ, քանի որ երիտասարդ ամուսնացած երեցը, ծայրահեղ աղքատ էր և չէր կարող ավարտել քոլեջը: Մի քանի օր անց երեցների քվորումի նախագահը եկել էր նրանց տուն: «Դու հասկանո՞ւմ ես իմ կրած քահանայության բանալիների կարևորությունը»,- հարցրել է երեցների քվորումի նախագահը: Ջեֆրիի դրական պատասխանից հետո նախագահն ասել է նրան, որ երբ լսել է քոլեջից դուրս գալու մտադրության մասին, Տերը չարչարել է նրան անքուն գիշերներով, Ջեֆրիին այս ուղերձը տալու համար. «Որպես երեցների քվորումի նախագահ, ես խորհուրդ եմ տալիս քեզ չհեռանալ քոլեջից: Դա Տիրոջ ուղերձն է քեզ»:Ջեֆրին մնացել էր քոլեջում: Տարիներ անց, երբ հանդիպեցի նրան, նա հաջողակ գործարար էր և քահանայություն կրողների լսարանի առաջ նա պատմում էր, որ «այդ [խորհուրդը] մեծ փոփոխություն կատարեց իմ կյանքում»:

Քահանայության մի կրող մեծարել էր իր քահանայությունն ու կոչումը, և «մեծ փոփոխություն» եղավ Աստծո մեկ այլ զավակի կյանքում:

IV. Քահանայությունն ընտանիքում

Մինչև այս պահը ես խոսում էի քահանայության գործածման մասին Եկեղեցում: Այժմ կխոսեմ քահանայության մասին ընտանիքում: Կսկսեմ



բանալիներից: Այն սկզբունքը, որ քահանայության իշխանությունը կարող է գործածվել միայն մեկի ղեկավարության ներքո, ով կրում է այդ գործառույթի բանալիները, առանցքային է Եկեղեցում, բայց չի վերաբերում քահանայության իշխանության կիրառմանը ընտանիքում:[8] Քահանայություն կրող հայրը նախագահում է իր ընտանիքում իր ունեցած քահանայության իշխանությամբ: Նա կարիք չունի ունենալու քահանայության բանալիների ղեկավարությունը կամ հաստատումը, որպեսզի խորհուրդ տա իր ընտանիքի անդամներին, անցկացնի ընտանեկան ժողովներ, քահանայության օրհնություններ տա իր կնոջն ու երեխաներին և առողջության օրհնություններ տա ընտանիքի անդամներին կամ ուրիշներին:

Եթե հայրերը մեծարեն քահանայությունն իրենց ընտանիքներում, դա ավելի շատ առաջ կտանի Եկեղեցու առաքելությունը, քան մյուս գործառույթները, որ նրանք կարող են անել: Մելքիսեդեկյան Քահանայություն կրող հայրերը պետք է պահեն պատվիրանները, որպեսզի նրանք ունենան քահանայության զորությունը՝ օրհնություններ տալու իրենց ընտանիքի անդամներին: Հայրերը նաև պետք է զարգացնեն ընտանեկան սիրալիր հարաբերություններ, որպեսզի ընտանիքի անդամները ցանկանան օրհնություն խնդրել իրենց հայրերից: Եվ ծնողները պետք է խրախուսեն, որ ընտանիքում քահանայության շատ օրհնություններ տրվեն:

Հայրե՛ր, գործեք որպես «հավասար գործընկերներ» ձեր կանանց հետ, ինչպես ուսուցանում է ընտանիքի մասին հռչակագիրը:[9] Նաև, հայրե՛ր, երբ արտոնություն եք ունենում գործածել ձեր քահանայության իշխանության զորությունն ու ազդեցությունը, դա արեք «համոզումով, երկայնամտությամբ, մեղմությամբ և հեզությամբ և անկեղծ սիրով» (ՎԿՈ 121.41): Բարձր մակարդակով քահանայության իշխանության գործածումը շատ կարևոր է ընտանիքում: Նախագահ Հարոլդ Բ. Լին այս խոստումն էր տվել, երբ դարձել էր

Եկեղեցու Նախագահ. «Քահանայության իշխանությունը, որը դուք կրում եք, ավելի հրաշալի դրսևորում է ունենում, երբ ձեր տանը ճգնաժամ է լինում, լուրջ հիվանդություն կամ կարևոր որոշում, որը պետք է ընդունվի: . . . Օժտված լինելով քահանայության զորությամբ, որը Ամենակարող Աստծո զորությունն է, հրաշքներ կատարելու զորություն, եթե Տերը կամենա դա անել, և որպեսզի մենք օգտագործենք այդ քահանայությունը, մենք պետք է արժանի լինենք գործածելու այն: Եթե թերանանք այս սկզբունքը հասկանալ, կթերանանք ստանալ այդ հզոր քահանայությունը կրելուց բխող օրհնությունները»:[10]

Իմ սիրելի՛ եղբայրներ, ձեր ունեցած սուրբ քահանայության մեծարումը էական է Տիրոջ աշխատանքի համար ձեր ընտանիքներում և Եկեղեցու ձեր կոչումներում:

Ես վկայում եմ Նրա մասին, ում պատկանում է այդ քահանայությունը: Նրա քավիչ տառապանքների, զոհաբերության և հարության շնորհիվ բոլոր տղամարդիկ և կանայք ունեն անմահության և հավերժական կյանքի հնարավորություն: Յուրաքանչյուրս պետք է հավատարիմ և ջանասեր լինենք մեր մասը կատարելով Աստծո՝ մեր Հավերժական Հոր մեծ աշխատանքում, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Եկեղեցու նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Ֆ. Սմիթ* (1998), էջ 343:
2. *Teachings: Joseph F. Smith,* 340, 343.
3. Ջոզեֆ Ֆ. Սմիթ, *Ավետարանի վարդապետություն*, 5-րդ թողարկում, (1939), 182:
4. Bruce R. McConkie, “Only an Elder,” *Ensign*, June 1975, 66, բնօրինակի շեշտադրումը պահպանված չէ:
5. Bruce R. McConkie, “Only an Elder,” 66, բնօրինակի շեշտադրումը պահպանված չէ:
6. *Teachings of Presidents of the Church: Harold B. Lee* (2000), 93.
7. *Teachings of Harold B. Lee,* ed. Clyde J. Williams [1996], 499:
8. Տես Դալլին Հ. Օուքս, “Priesthood Authority in the Family and the Church,” *Liahona,* Nov. 2005, 24–27.
9. Տես «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* մայիս 2017, 145:
10. *Teachings: Harold B. Lee,* 97.



Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

Սպասավորել Աստծո զորությամբ և իշխանությամբ

Մենք կծառայենք Նրա անունով, Նրա զորությամբ և իշխանությամբ և Նրա սիրառատ բարությամբ:

Իմ սիրելի՛ եղբայրներ, շնորհակալություն Տիրոջը և Նրա սուրբ աշխատանքին ձեր նվիրվածության համար: Իսկապես ուրախություն է լինել ձեզ հետ: Որպես Առաջին Նախագահություն, մենք շնորհակալ ենք ձեր աղոթքների և աջակցության համար: Մենք շնորհակալ ենք կյանքում ձեր օրինակի և Տիրոջը ձեր ծառայության համար: Գործին ձեր նվիրվածությունը և ձեր անձնազոհ ծառայությունը նույնքան կարևոր է ձեր կոչումներում, որքան նվիրվածությունն ու ծառայությունը մեր կոչումներում: Ծառայելով ամբողջ կյանքս Եկեղեցում, ես հասկացել եմ, որ իսկապես կարևոր չէ, թե *որտեղ է* մարդը ծառայում: Տիրոջ համար կարևոր է, թե *ինչպես է* մարդը ծառայում:

Ես խորին երախտագիտությունս եմ հայտնում Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնին, ով ավելի քան 50 տարի շարունակ եղել է իմ օրինակը: Եվ նրա խորհրդականների, Նախագահ Հենրի Բ. Այրինգի և Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆի հանդեպ մեծ հարգանք եմ տածում: Ես բարձր եմ գնահատումնրանց ծառայությունը Տիրոջը և Նրա մարգարեներին: Այդ երկու նվիրված ծառաները նոր հանձնարարություններ են ստացել: Նրանք շարունակում են ծառայել եռանդով և նվիրվածությամբ: Ես հարգում և սիրում եմ նրանց:

Հրաշալի օրինություն է ծառայել Տիրոջ ճշմարիտ և կենդանի Եկեղեցում՝ Նրա իշխանությամբ և զորությամբ: Աստծո քահանայության վերականգնումը, այդ թվում քահանայության բանալիները, Վերջին Օրերի արժանավոր Սրբերի համար բացում են հոգևոր օրհնություններից ամենամեծը: Տեսնում ենք, թե ամբողջ աշխարհում ինչպես են այդ օրհնությունները հոսում կանանց, տղամարդկանց և երեխաների կյանք:

Տեսնում ենք հավատարիմ կանանց, ովքեր հասկանում են իրենց կոչումների, իրենց օժտման և տաճարային այլ արարողություններին բնորոշ զորությունը: Այս կանայք գիտեն, թե ինչպես պետք է դիմեն երկնքի ուժերին, որպեսզի

պաշտպանեն և ամրապնդեն իրենց ամուսիններին, իրենց երեխաներին և սիրելիներին: Նրանք հոգևորապես ամուր կանայք են, ովքեր իրենց կոչումներում խիզախորեն առաջնորդում, ուսուցանում և ծառայում են Աստծո զորությամբ և իշխանությամբ:[1] Որքա՜ն շնորհակալ եմ նրանց:

Նմանապես, մենք տեսնում ենք հավատարիմ տղամարդկանց, ովքեր արժանիորեն կիրառում են քահանայության այդ արտոնությունները: Նրանք առաջնորդում ու ծառայում են՝ զոհաբերելով Տիրոջ ձևով՝ սիրով, բարությամբ և համբերությամբ: Իրենց ունեցած քահանայության զորությամբ նրանք օրհնում, առաջնորդում, պաշտպանում և զորացնում են ուրիշներին: Նրանք հրաշքներ են պարգևում նրանց, ում ծառայում են՝ ապահով պահելով իրենց ամուսնություններն ու ընտանիքները: Նրանք խուսափում են չարիքից և Իսրայելի զորեղ երեցներն են:[2] Ես անչափ շնորհակալ եմ նրանց:

Այժմ, թույլ տվեք մի մտահոգություն հայտնել: Ահա դա. չափից շատ եղբայրներ և քույրեր լիովին չեն հասկանում քահանայության զորության և իշխանության սկզբունքը: Նրանք գործում են այնպես, կարծես ավելի շատ կբավարարեն իրենց սեփական եսասիրական ցանկություններն ու ախորժակը, քան կօգտագործեն Աստծո զորությունը Նրա զավակներին օրհնելու համար:

Վախենում եմ, որ մեր եղբայրներից և քույրերից շատերը չեն հասկանում այն արտոնությունները, որոնք կարող են նրանցը լինել:[3] Օրինակ, մեր եղբայրներից ոմանք այնպես են գործում, կարծես չեն հասկանում, թե ինչ է քահանայությունը և ինչ կարող են անել դրանով: Թույլ տվեք որոշ անվանական օրինակներ բերեմ:

Վերջերս ես այցելեցի հաղորդության մի ժողովի, որտեղ նորածին երեխային պետք է անուն և հայրական օրհնություն տրվեր: Այդ երիտասարդ հայրը թանկագին նորածնին պահեց իր գրկում, շնորհեց նրա անունը, իսկ հետո մի գեղեցիկ *աղոթք* ասաց: Սակայն, նա երեխային օրհնություն *չտվեց*: Այդ հրաշալի մանկիկն անուն ստացավ, բայց օրհնություն չստացավ: Այդ սիրելի երեցը չգիտեր աղոթքի ու քահանայության օրհնության տարբերությունը: Քահանայության իր իշխանությամբ և զորությամբ նա կարող էր օրհնել իր նորածնին, բայց չարեց դա: Ես մտածեցի. «Ինչպիսի՜ բաց թողնված հնարավորություն»:

Թույլ տվեք կիսվել այլ օրինակներով: Մենք ճանաչում ենք եղբայրների, ովքեր քույրերին ձեռնադրում են որպես Երեխաների Միության, Երիտասարդ Կանանց կամ Սփոփող Միության ղեկավարներ և ուսուցիչներ, սակայն չեն օրհնում նրանց, չեն օրհնում իրենց կոչումները կատարելու զորությամբ: Նրանք միայն հորդորներ և հրահանգներ են տալիս: Մենք տեսնում ենք արժանի հոր, ով չի կարողանում իր կնոջը և իր զավակներին քահանայության օրհնություններ տալ, երբ դա հենց այն է, ինչ նրանց անհրաժեշտ է: Քահանայության զորությունը վերականգնվել է այս երկրի վրա, և դեռ շատ եղբայրներ ու քույրեր կյանքում անցնում են սարսափելի փորձություններ՝ առանց որևէ ճշմարիտ քահանայության օրհնության: Ինչպիսի՜ ողբերգություն: Դա մի ողբերգություն է, որ կարող ենք վերացնել:

Եղբայրնե՛ր, մենք կրում ենք Աստծո սուրբ քահանայությունը: Մենք ունենք Նրա իշխանությունը՝ օրհնելու Իր ժողովրդին: Միայն մտածեք այն ուշագրավ հավաստիացման մասին, երբ Նա ասաց. «ում որ դու օրհնես, ես կօրհնեմ»:[4] Մեր արտոնությունն է՝ գործել Հիսուս Քրիստոսի անունով, որպեսզի ըստ Նրա կամքի օրհնենք Աստծո զավակներին: Ցցերի նախագահնե՛ր և եպիսկոպոսնե՛ր, խնդրում ենք համոզվեք, որ ձեր ղեկավարած քվորումների յուրաքանչյուր անդամը հասկանում է, թե ինչպես պետք է

քահանայության օրհնություն շնորհի և պահի անձնական արժանավորությունը և հոգևոր պատրաստվածությունը, որպեսզի լիովին շնորհի Աստծո զորությունը:[5]

Քահանայություն կրող բոլոր եղբայրներին ես հրավիրում եմ ոգեշնչել անդամներին՝ պահպանել իրենց ուխտերը, ծոմ պահել և աղոթել, ուսումնասիրել սուրբ գրությունները, երկրպագել տաճարում և ծառայել հավատքով՝ որպես Աստծո տղամարդիկ և կանայք: Մենք կարող ենք օգնել բոլորին տեսնել հավատքի աչքով, որ հնազանդությունն ու արդարությունը նրանց ավելի կմոտեցնեն Հիսուս Քրիստոսին, թույլ կտան վայելել Սուրբ Հոգու ընկերակցությունը և ուրախություն գտնել կյանքում:

Տիրոջ ճշմարիտ և կենդանի Եկեղեցու առանձնահատկությունը միշտ կլինի Աստծո զավակներին և նրանց ընտանիքներին ծառայելու կազմակերպված և ուղղված ջանքերը:[6] Քանի որ սա Նրա Եկեղեցին է, մենք՝ Նրա ծառաները, կծառայենք անհատին, ինչպես Նա ծառայեց:[7] Մենք կծառայենք Նրա անունով, Նրա զորությամբ և իշխանությամբ և Նրա սիրառատ բարությամբ:

Մոտ 60 տարի առաջ Բոստոնում ինձ հետ տեղի ունեցած փորձառությունն ինձ ուսուցանեց, թե որքան զորեղ կարող է լինել մեկ առ մեկ ծառայելու արտոնությունը: Այդ ժամանակ ես մշտական վիրաբույժ էի Մասաչուսեթսի գլխավոր հիվանդանոցում՝ հերթափոխով աշխատելով մի օր ցերեկը, մի օր գիշերը և երկու շաբաթը մեկ անգամ՝ շաբաթկիրակի օրերին: Կնոջս, երեխաներիս և Եկեղեցու գործունեության համար ես սահմանափակ ժամանակ ունեի: Այնուամենայնիվ, մեր ճյուղի նախագահը հանձնարարեց ինձ այցելել Վիլբուր և Լեոնորա Քոքսերի տուն, հույս ունենալով, որ Եղբայր Քոքսը կարող է ակտիվանալ եկեղեցում: Նա և Լեոնորան կնքվել էին տաճարում:[8] Սակայն, Վիլբուրը շատ տարիներ չէր հաճախել եկեղեցի:

Ես իմ զուգընկերոջ հետ գնացի նրանց տուն: Երբ ներս մտանք, Քույր Քոքսը ջերմորեն ողջունեց մեզ,[9] բայց Եղբայր Քոքսը կտրուկ քայլեց մյուս սենյակ և ծածկեց դուռը:

Ես մոտեցա փակ դռանը և թակեցի այն: Մի րոպե անց ես հազիվ լսեցի՝ «Ներս եկեք» արտահայտությունը: Ես բացեցի դուռը և տեսա Եղբայր Քոքսին՝ նստած սիրողական ռադիոընդունիչի կողքին: Այդ փոքրիկ սենյակում նա վառեց ծխախոտը: Հասկանալի էր, որ իմ այցն այդքան էլ ողջունելի չէր:

Ես հիացմուքով աչքի անցկացրեցի սենյակը և հարցրեցի. «Եղբայր Քոքս, ես միշտ ցանկացել եմ ավելին իմանալ սիրողական ռադիոյի մասին: Կցանկանայի՞ք ուսուցանել ինձ այդ մասին: Կներեք, որ այս երեկո այդքան երկար չեմ կարող մնալ, բայց կարելի՞ է մեկ ուրիշ անգամ այցելել»:

Մի պահ նա վարանեց, իսկ հետո համաձայնվեց: Դա սկիզբն էր հրաշալի ընկերության: Ես վերադարձա և նա ուսուցանեց ինձ: Ես սկսեցի սիրել ու հարգել նրան: Հետագա մեր այցելությունների միջոցով այդ մարդու մեծությունը բացահայտվեց: Մենք և մեր հավերժական զուգընկերները դարձանք լավ ընկերներ: Ապա, որոշ ժամանակ անց մեր ընտանիքը տեղափոխվեց: Տեղի ղեկավարները շարունակեցին հոգ տանել Քոքսի ընտանիքի մասին:[10]

Այդ առաջին այցելությունից ութ տարի անց ստեղծվեց Բոստոնի ցիցը:[11] Կարո՞ղ եք գուշակել, թե այդ ցցի առաջին նախագահն ով էր: Այո՛: Եղբայր Քոքսը: Հետագա տարիներին նա ծառայեց որպես միսիայի նախագահ և տաճարի նախագահ:

Տարիներ անց, ինձ, որպես Տասներկուսի Քվորումի անդամի հանձնարարվեց Սանպետ Գավառում (Յուտա) ստեղծել նոր ցից: Գործնական հարցազրույցների ժամանակ հաճելիորեն զարմացած էի, երբ կրկին հանդիպեցի իմ սիրելի բարեկամ Եղբայր Քոքսին: Ոգեշնչված, ես նրան կանչեցի որպես նոր ցցի հայրապետ: Նրան կարգելուց հետո մենք գրկախառնվեցինք և արտասվեցինք: Սենյակում ներկա մարդիկ մտածում էին, թե ինչու են այս երկու հասուն տղամարդիկ լալիս: Սակայն մենք գիտեինք: Եվ Քույր Քոքսը գիտեր: Մեր արցունքները ուրախության արցունքներ էին: Մենք լուռ հիշում էինք ավելի քան 30 տարի առաջ նրանց տանը մի երեկո սկսված սիրո և ապաշխարության հրաշալի ուղին:

Պատմությունը դրանով չավարտվեց: Եղբայր և Քույր Քոքսի ընտանիքը աճել էր և այժմ նրանք ունեին 3 զավակ, 20 թոռ և 54 ծոռ: Ավելացրեք նրանց ազդեցությունը հարյուրավոր միսիոներների, տաճար այցելած հազարավոր մարդկանց և ավելի քան հարյուրավոր այն մարդկանց, ովքեր հայրապետական օրհնություններ ստացանԵղբայր Վիլբուր Քոքսի ձեռքից: Նրա և Լեոնորայի ազդեցությունը կշարունակվի տարածվել աշխարհով մեկ սփռված նրանց բազմաթիվ սերունդների մեջ:

Վիլբուրի և Լեոնորայի պատմություններն ամեն շաբաթ կրկնվում են Եկեղեցում, և հուսով եմ, կրկնվում են ամեն օր: Տեր Հիսուս Քրիստոսի նվիրյալ ծառաները Նրա գործը կատարում են Նրա զորությամբ և իշխանությամբ:

Եղբայրնե՛ր, կան դռներ, որ մենք կարող ենք բացել, քահանայության օրհնություններ, որ կարող ենք տալ, սրտեր, որ կարող ենք բժշկել, բեռներ, որ կարող ենք բարձրացնել, վկայություններ, որ կարող ենք ամրապնդել, կյանքեր, որ կարող ենք փրկել և ուրախություն, որ կարող ենք բերել Վերջին Օրերի Սրբերի տները, որովհետև մենք կրում ենք Աստծո քահանայությունը: Մենք տղամարդիկ ենք, ովքեր «կանչվել ու պատրաստվել են աշխարհի հիմնադրումից ի վեր, համաձայն Աստծո կանխագիտության, [մեր] խիստ մեծ հավատքի ու բարի գործերի», որպեսզի կատարենք այս աշխատանքը:[12]

Այս երեկո ես հրավիրում եմ ձեզ բառացիորեն բարձրանալ ինձ հետ մեր հրաշալի հավերժական եղբայրության հետ միասին: Երբ կարդամ ձեր քահանայության պաշտոնը, խնդրում եմ ոտքի կանգնել և մնալ կանգնած: Մարկավագնե՛ր, խնդրում եմ ոտքի կանգնեք: Ուսուցիչնե՛ր, ոտքի կանգնեք: Քահանանե՛ր: Եպիսկոպոսնե՛ր: Երեցնե՛ր:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանավորները և Բարձրագույն Պաշտոնյաները

ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ


Դալլին Հ. Օուքս
Առաջին Խորհրդական

Ռասսել Մ. Նելսոն
Նախագահ


Հենրի Բ. Այրինգ
Երկրորդ Խորհրդական

ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՔՎՈՐՈՒՄ

Մ. Ռասսել Բալլարդ

Ջեֆրի Ռ. Հոլլանդ

Դիտեր Ֆ. Ուխդորֆ

Դեյվիդ Ա. Բեդնար

Քվենթին Լ. Քուք

Դ. Թոդ Քրիստոֆերսոն

Նիլ Լ. Անդերսեն

Ռոնալդ Ա. Ռասբանդ

Գարի Ի. Սթիվենսոն

Դեյլ Գ. Ռենլանդ

Ջերիթ Վ. Գոնգ


Ուլիսես Սոարես

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Լ. Ռիթնի Ջենթոն

Քրեյգ Ս. Քրիչենսեն

Լին Գ. Ռոբինս

Խուան Ա. Ուսեդա

Պատրիկ Քիրոն

Քարլ Բ. Քուք

Ռոբերտ Ս. Գեյ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԻԵԽԱՆԱՎՈՐ ՅՈԹԱՆԱՍՈՒՆԱԿԱՆՆԵՐ

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅՈՒՆ



Դին Մ. Դեյվիս
Առաջին Խորհրդական

Ջերալդ Կոսե
Նախագահող Եպիսկոպոս

Վ. Քրիսթոֆեր Վադել
Երկրորդ Խորհրդական

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐ

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑ



Դեվին Գ. Դյուրան
Առաջին Խորհրդական

Թեդ Ռ. Քայլսթեր
Նախագահ

Բրայըն Ք. Էջթոն
Երկրորդ Խորհրդական

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՅՔ



Մաքլ Դ. Քրեյգ
Առաջին Խորհրդական

Բոննի Հ. Քորդոն
Նախագահ

Բեքի Քրեյմեն
Երկրորդ Խորհրդական

ՍՓՈՓՈՂ ՄԻՈՒԹՅՈՒՆ



Շարոն Յուբանք
Առաջին Խորհրդական

Ջին Բ. Բիկգհեմ
Նախագահ

Ռեյնա Ի. Սբուրտո
Երկրորդ Խորհրդական

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՈՒՄԲ



Լիզա Լ. Հարկնես
Առաջին Խորհրդական

Ջոյ Դ. Ջոնս
Նախագահ

Քրիստինա Բ. Ֆրանկո
Երկրորդ Խորհրդական

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏՂԱՄԱՐԴԻԿ



Դուգլաս Դ. Հոլմս
Առաջին Խորհրդական

Սթիվեն Վ. Օուեն
Նախագահ

Մ. Ջոզեֆ Բրոու
Երկրորդ Խորհրդական

Քահանայապետե՛ր: Հայրապետե՛ր: Յոթանասունականնե՛ր: Առաքյալնե՛ր:

Այժմ, եղբայրնե՛ր, խնդրում եմ մնալ կանգնած և մեր երգչախմբի հետ միասին երգել «Rise Up, O Men of God» երգի բոլոր երեք քառյակները:[13] Երգելու ընթացքում հիշեք Աստծո ուժեղ բանակում ձեր ունեցած պարտականության մասին, որպեսզի օգնեք աշխարհը նախապատրաստել Տիրոջ Երկրորդ Գալուստին: Դա է մեր պարտականությունը: Դա է մեր արտոնությունը: Ես վկայում եմ այս մասին Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Ռասսել Մ. Նելսոն «Խնդրանք իմ քույրերին», *Լիահոնա,* նոյ. 2015, 96:
2. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Քահանայության զորություն ունենալու վարձը,» *Լիահոնա,* մայիս 2016, 66–69, տես նաև Ալմա 13.7–8, Վարդապետություն և Ուխտեր 84.17–20, 35–38:
3. Տես Վարդապետություն և Ուխտեր 84.19–22, 107.18–19, Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Ծննդոց 14.30–31 (Աստվածաշնչի հավելվածում):
4. Վարդապետություն և Ուխտեր 132.47:
5. Քահանայության իշխանության և անձնական արդարության միջև կապն ավելի լիարժեք է մշակված Ռասսել Մ. Նելսոնի՝ «Քահանայության զորություն ունենալու գինը» ելույթում, 66–69, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 121.34–37, 41–44:
6. Անհատներին և ընտանիքներին ծառայելու կազմակերպված, ուղղված ջանքերի էական դերն ակնհայտ է այն վայրում և այն ժամանակ, երբ Հիսուս Քրիստոսի եկեղեցին հաստատվում է: Օրինակ, տես Ղուկաս 10.1–20, Գործք Առաքելոց 6.1–6, Եփեսացիս 4.11–14, Մոսիա 18.9, 18–19, 27–29, Վարդապետություն և Ուխտեր 20.42, 51, 57:
7. Տես 3 Նեփի 17.9–10, 20–21:
8. Մանթի Յուտա տաճար, հունիսի 15, 1937թ.:
9. Տարիներ շարունակ Լեոնորայի ծոմապահությունը և ամեն երկուշաբթի աղոթելն իրոք զորեղ և դրական ազդեցություն ունեցան:
10. 1954թ-ին ճյուղի նախագահ Իրա Թերրին կանչեց Վիլբուրին ծառայելու Կիրակնօրյա Դպրոցի վերակացու: Վիլբուրն ընդունեց այդ կոչումը և ընդմիշտ դադարեցրեց իմաստության Խոսքին հակասող բոլոր սովորությունները: Իր կյանքի մնացած մասը նա նվիրեց Փրկիչի աշխատանքին ծառայելուն:
11. 1962 թվականին:
12. Ալմա 13.3:
13. "Rise Up, O Men of God," *Hymns,* no. 324.

Երեց Լարի Ե. Ուիլսոն
Յոթանասունից

Վերցրեք Սուրբ Հոգին որպես ձեզ առաջնորդ

Ի՞նչ անզուգական պարգև է տրվում նրանց, ովքեր իրենց հավատքը դնում են Հիսուս Քրիստոսում: Այդ պարգևը Սուրբ Հոգին է:

Այս Զատիկի կիրակի օրը մեր մտքերն ուղղվում են դեպի Տեր Հիսուս Քրիստոսի Հարությունը և դեպի այն դատարկ գերեզմանը, որը հույս է տալիս ամեն հավատացյալի Քրիստոսի հաղթանակի հանդեպ, որն այլապես որոշակի պարտություն կլիներ: Ես հավատում եմ Պողոս Առաքյալ նման, որ ճիշտ ինչպես Աստված «Քրիստոսին մեռելներից յարուցանեց [այդպես էլ] [Նա] [մեր] մահկանացու մարմիններն էլ կկենդանացնէ իր Հոգովը, որ [մեզանում] բնակուած է»:[1]

Կենդանացնել նշանակում է ողջ դարձնել: Ճիշտ ինչպես Քրիստոսը բերում է մեր մարմինները ետ դեպի կյանք ֆիզիկական մահից հետո Իր Հարության զորության միջոցով, այնպես էլ կարող է կենդանացնել մեզ կամ ողջ դարձնել մեզ հոգևոր մահից:[2] Մովսեսի գրքում մենք կարդում ենք Ադամի մասին, որը ենթարկվեց այդպիսի կենդանացման. «Եվ այդպես [Ադամը] մկրտվեց, և Աստծո Հոգին իջավ նրա վրա, և այդպես նա ծնվեց Հոգուց, և կենդանացավ ներսի մարդում»:[3]

Ի՞նչ անզուգական պարգև է տրվում նրանց, ովքեր իրենց հավատքը դնում են Հիսուս Քրիստոսում: Այդ պարգևը Սուրբ Հոգին է, ով տալիս է մեզ ինչպես Նոր Կտակարանն է կոչում «կյանք Քրիստոսում»:[4] Բայց արդյո՞ք մենք երբեմն այդպիսի պարգևը համարում ենք բնականոն մի բան:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, արտասովոր արտոնություն է «ունենալ . . . Սուրբ Հոգին որպես [մեր] առաջնորդ»,[5] ինչպես դա նկարագրվում է հետևյալ պատմության մեջ:

Կորեական պատերազմի ընթացքում Կրտսեր Լեյտենանտ Ֆրանկ Բլերը ծառայում էր Ճապոնիայում տեղակայված զորքեր տեղափոխող նավի վրա:[6] Նավը բավականաչափ մեծ չէր, որպեսզի պաշտոնական քահանա ունենար, այսպիսով նավապետը խնդրեց Եղբայր Բլերին լինել նավի ոչ պաշտոնական քահանան, նկատելով, որ երիտասարդը հավատքի և սկզբունքի անձնավորություն էր՝ մեծապես հարգվածողջ անձնակազմի կողմից:

Կրտսեր լեյտենանտ Բլերը գրել է. «Մեր նավն ընկավ մի վիթխարի թայֆունի մեջ: Ալիքները մոտ 45 ոտնաչափ [14 մ] բարձրություն ունեին: Ես ժամապահ էի . . . որի ընթացքում մեր երեք շարժիչներից մեկը

դադարեց աշխատել և զեկուցվեց, որ նավի կենտրոնական մասում ճեղք էր բացվել: Մեզ մնացել էին երկու շարժիչ, որից մեկը գործում էր կիսով չափ: Մենք լուրջ վտանգի մեջ էինք:

Կրտսեր Լեյտենանտ Բլերն ավարտեց իր հերթափոխը և պատրաստվում էր քնել, երբ նավապետը թակեց նրա դուռը: Նա խնդրեց. «Չէի՞ր աղոթի այս նավի համար»: «Իհարկե կաղոթեմ»,- համաձայնվեց Կրտսեր Լեյտենանտ Բլերը:

Այդ պահին Կրտսեր Լեյտենանտ Բլերը գուցե պարզապես այսպես աղոթեր. «Երկնայի՛ն Հայր, խնդրում եմ օրհնիր մեր նավը և ապահով պահիր մեզ»,- իսկ հետո գնար քնելու: Փոխարենը, նա աղոթեց, որ իմանա, թե ինչ կարող էր անել ինքը *այդ պահին*, որպեսզի օգներ ապահովել նավի անվտանգությունը: Ի պատասխան Եղբայր Բլերի աղոթքին, Սուրբ Հոգին հուշեց նրան գնալ կամրջակ, խոսել նավապետի հետ և ավելի շատ տեղեկություն իմանալ: Նա պարզեց, որ նավապետը փորձում էր որոշել, թե ինչ արագությամբ գործարկեր նավի շարժիչները:Կրտսեր Լեյտենանտ Բլերը վերադարձավ իր նավախուցը կրկին աղոթելու:

Նա աղոթեց. «*Ի՞նչ կարող եմ անել*, որ օգնեմ հաղթահարել շարժիչների հետ կապված խնդիրը»:

Ի պատասխան՝ Սուրբ Հոգին շշնջաց, որ նա պետք է քայլեր նավի շուրջ բոլորը և ուշադիր դիտարկում կատարեր՝ ավելի շատ տեղեկություն հավաքելու համար: Նա կրկին վերադարձավ նավապետի մոտ և թույլտվություն խնդրեց տախտակամածով քայլելու համար: Այնուհետև, մեջքին փրկագոտի կապած, նա դուրս եկավ փոթորիկի մեջ:

Կանգնած նավախելին, նա զննում էր թե ինչպես էին վիթխարի թիապտուտակները դուրս գալիս ջրից, երբ նավը հասնում էր ալիքի գագաթին: Միայն մեկն էր լիովին աշխատում, և այն շատ արագ էր պտտվում: Այս դիտարկումներից հետո Կրտսեր Լեյտենանտ Բլերը մեկ անգամ ևս աղոթեց: Նրա ստացած հստակ պատասխանն էր, որ լավ վիճակում մնացած շարժիչը խիստ մեծ լարվածության տակ էր և պետք է դանդաղեցվեր: Այսպիսով, նա վերադարձավ նավապետի մոտ և տվեց այդ խորհուրդը: Նավապետը զարմացավ, ասելով նրան, որ նավի ինժեները հենց նոր խորհուրդ էր տվել հակառակը, որ նրանք մեծացնեն լավ վիճակում գտնվող շարժիչի արագությունը, որպեսզի դուրս գային փոթորիկից: Սակայն, նավապետն ընտրեց հետևել Կրտսեր Լեյտենանտ Բլերի առաջարկին և դանդաղեցրեց շարժիչի արագությունը: Մինչև արևածագ նավը հասավ անվտանգ հանգիստ ջրեր:

Միայն երկու ժամ հետո լավ վիճակում գտնվող շարժիչը միանգամից դադարեց աշխատել: Կես ուժով աշխատող մյուս շարժիչով նավը կարողացավ հասնել նավահանգիստ:

Նավապետն ասաց Կրտսեր Լեյտենանտ Բլերին. «Եթե մենք չդանդաղեցնեինք այդ շարժիչը, մենք կկորցնեինք այն փոթորիկի մեջտեղում:»

Առանց այդ շարժիչի ոչ մի կերպ հնարավոր չէր լինի կառավարել: Նավը շուռ կգար և կխորտակվեր: Նավապետը շնորհակալություն հայտնեց ՎՕՍ սպային և ասաց, որ հավատում էր, որ Կրտսեր Լեյտենանտ Բլերի հոգևոր տպավորությունները փրկեցին նավը և դրա անձնակազմը:

Դե այս պատմությունը միանգամայն դրամատիկ է: Եվ չնայած մենք, հավանական է, չհանդիպենք այդպիսի ծանր հանգամանքների, այս պատմությունը պարունակում է կարևոր ուղեգծեր այն մասին, թե մենք ինչպես *կարող ենք* ավելի հաճախակի ստանալ Հոգու առաջնորդությունը:

Առաջինը, երբ խոսքը վերաբերում է հայտնությանը, մենք պետք է պատշաճորեն հարմարեցնենք մեր ընդունիչը երկնքի հաճախականության հետ: Կրտսեր Լեյտենանտ Բլերն ապրում էր մաքուր և հավատարիմ կյանքով: Եթե նա հնազանդ չլիներ, նա *չէր* կարող ունենալ հոգևոր վստահություն, որն անհրաժեշտ է աղոթելու համար, ինչպես որ նա արեց իր նավի ապահովության համար՝ ստանալով այդպիսի առանձնահատուկ առաջնորդություն: Մենք յուրաքանչյուրս պետք էջանք թափենք համապատասխանեցնելու մեր կյանքը Աստծո պատվիրանների հետ, որպեսզի ուղղորդվենք Նրա կողմից:

Երբեմն մենք չենք կարողանում լսել երկնքի ազդանշանը, որովհետև մենք արժանի չենք: Ապաշխարությունն ու հնազանդությունը կրկին հստակ հաղորդակցության հասնելու ուղին են: Հին Կտակարանի *ապաշխարել* բառը նշանակում է «շրջվել» կամ «շրջադարձ կատարել»:[7] Երբ

հեռու եք զգում Աստծուց, դուք պետք է ընդամենը որոշում ընդունեք շրջվել մեղքից, շրջադարձ կատարելով և հանդիպել Փրկիչին, որտեղ դուք կգտնեք Նրան՝ Իր ձեռքերը պարզած ձեզ սպասելիս: Նա ձգտում է առաջնորդել ձեզ և դուք ուղղակի մի աղոթքի հեռավորության վրա եք այդ առաջնորդությունը կրկին ստանալու համար:[8]

Երկրորդը, Կրտսեր Լեյտենանտ Բլերն ուղղակի չխնդրեց Տիրոջը *լուծել* իր խնդիրը: Նա հարցրեց, թե լուծման մաս լինելու համար ի՞նչ *կարող էր նա անել:* Նմանապես, մենք կարող ենք հարցնել. «Տեր ի՞նչ պետք է անեմ *լուծման մաս լինելու համար:* Աղոթքով մեր խնդիրները թվարկելու և Տիրոջից դրանց լուծումը խնդրելու փոխարեն, մենք պարտավոր ենք որոնել նախաձեռնող ուղիներ՝ ստանալու Տիրոջ օգնությունը, պարտավորվելով գործել Հոգու առաջնորդության համաձայն:

Կրտսեր Լեյտենանտ Բլերի պատմության մեջ կա մի երրորդ կարևոր դաս: Կարո՞ղ էր նա աղոթել այդպիսի հանգիստ համոզվածությամբ, եթե նա նախորդ առիթների ժամանակ ստացած չլիներ առաջնորդություն: Թայֆունի վրա հասնելը ժամանակ չէ Սուրբ Հոգու պարգևը փոշուց մաքրել և պարզել, թե ինչպես օգտագործել այն: Այս երիտասարդը հստակորեն հետևում էր մի ձևանմուշ, որը նախկինում շատ անգամներ էր օգտագործել, ներառյալ՝ որպես լիաժամկետ միսիոներ: Մենք պետք է վերցնենք Սուրբ Հոգին՝ որպես մեզ առաջնորդ հանգիստ ջրերում, որպեսզի Նրա ձայնը անսխալ լինի մեզ համար ամենակատաղի փոթորիկների մեջ:

Ոմանք գուցե մտածեն, որ մենք չպետք է սպասենք ամենօրյա առաջնորդություն Հոգուց, որովհետև «լավ չէ, որ[Աստված] պատվիրի բոլոր բաներում», որպեսզի չլինի թե ծույլ ծառաներ դառնանք:[9] Այս սուրբ գրությունը, համենայն դեպս, տրվել էր որոշ վաղ միսիոներների, ովքեր խնդրեցին Ջոզեֆ Սմիթին հայտնություն ձեռք բերել, որը նրանք իրենք պետք է ստացած լինեին իրենց համար: Նախորդ մի հատվածում Տերն ասել էր նրանց գալ միսիոներական դաշտ. *«ինչպես որ կխորհրդակցեն միմյանց և ինձ հետ»*.[10]

Այդ միսիոներները կամենում էին մի հատուկ հայտնություն իրենց ճամփորդական ծրագրերի մասին:Նրանք դեռ չէին սովորել որոնել իրենց սեփական ուղղությունը անձնական հարցերում: Եվ Տերը անվանեց այս վերաբերմունքը ծույլ: Վաղ օրերի Եկեղեցու անդամները, հավանական է, այնքան հուզված էին ճշմարիտ մարգարե ունենալու համար, որ նրանք իրենց համար ինքնուրույն հայտնություն ստանալ սովորելու ձախողման վտանգի տակ էին: Հոգևորապես ինքնապահով լինելը իր սեփական կյանքի համար Տիրոջ ձայնը Նրա Հոգու միջոցով լսելն է:

Ալման խորհուրդ տվեց իր որդուն. «Խորհուրդ արա Տիրոջ հետ *քո բոլոր գործերում»*:[11] Այս ձևով ապրելը, որը մենք հաճախ կոչում ենք «Հոգով ապրել», բարձր արտոնություն է:Այն բերում է իր հետ հանգստության և վստահության զգացում, ինչպես նաև Հոգու պտուղները, ինչպես օրինակ՝ սեր, ուրախություն և խաղաղություն:[12]

Կրտսեր Լեյտենանտ Բլերի հայտնություն ստանալու ունակությունը փրկեց նրան և նրա նավակիցներին մոլեգնող փոթորիկից: Այսօր այլ տեսակի փոթորիկներ են մոլեգնում: Կենաց ծառի առակը Մորմոնի Գրքում[13] տալիս է հզոր պատկեր, թե ինչպես հասնել հոգևոր ապահովության այդպիսի աշխարհում: Այս երազը պատմում է մեզ հանկարծակի բարձրացող խավարի մշուշների մասին, որոնք բերում են հոգևոր կործանում Եկեղեցու անդամներին, ովքեր քայլում են արահետով՝ ետ դեպի Աստված:[14]

Այս պատկերի մասին մտածելիս, մտքիս աչքով տեսնում եմ մարդկանց ամբոխներ, ովքեր ճամփորդում են այդ արահետով, ոմանք ձեռքերով ամուր բռնած երկաթյա ձողից, բայց շատ ուրիշներ ուղղակի հետևում են իրենցից առաջ գնացող մարդկանց ոտնահետքերին:Այս վերջին մոտեցումը պահանջում է քիչ միտք կամ ջանք:Դուք կարող եք ուղղակի անել կամ մտածել, ինչ ուրիշներն են անում և մտածում: Սա լավ է գործում արևոտ եղանակին: Բայց խաբեության փոթորիկները և կեղծության մշուշները բարձրանում են առանց զգուշացնելու: Այդպիսի իրավիճակներում Սուրբ Հոգու ձայնին ծանոթ լինելըհոգևոր կյանքի և մահվան հարց է:

Նեփիի հզոր խոստումն է, որ «ովքեր ականջ կդնեն Աստծո խոսքին, և . . . *ամուր կբռնեն դրանից,* . . . երբեք չեն կորչի, ոչ էլ գայթակղությունները և հակառակորդի կրակոտ նետերը կարող են հաղթել նրանց՝ կուրացնելով, տանելով նրանց դեպի կործանում»:[15]

Բավարար չէ միայն հետևել արահետի վրա ձեր առջևում գտնվող մարդկանց ոտնահետքերին: Մենք չենք կարող ուղղակի անել և մտածել այն, ինչ ուրիշներին են անում և մտածում, մենք պետք է ապրենք ուղղորդվող կյանքով: Մենք յուրաքանչյուրս պետք է ունենանք մեր սեփական ձեռքը երկաթյա ձողի վրա: Այդ ժամանակ մենք կարող ենք գնալ դեպի Տերը խոնարհ վստահությամբ, գիտենալով, որ Նա «ձեռքներս բռնած կառաջնորդի [մեզ] և կպատասխանի [մեր] աղոթքներին»:[16] Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հռովմայեցիս 8.11, տես նաև Հովհաննես 14.16:
2. Տես 2 Նեփի 2.21, Ալմա 42.9:
3. Մովսես 6.65:
4. Հելաման 8.2, տես նաև 2 Նեփի 25.25:
5. Վարդապետություն և Ուխտեր 45.57:
6. Պատմությունը կիսվել է Ֆրանկ Բլերի թույլտվությամբ: Եղբայր Բլերը, այժմ 89 տարեկան, ներկա էր Համաժողովների Կենտրոնում այս ելույթի առթիվ:
7. Եբրայերեն բառը, որը թարգմանվել է «դարձի եկեք», օրինակ, Եզեկիել 14.6-ում *shoob* բառն է (տառադարձված): Այն նշանակում է «դարձի եկեք» կամ «ետ դարձեք»: (Տես James Strong, *Strong's Exhaustive Concordance of the Bible* [1890], no. 7725:)
8. Տես Հակոբ 6.5, Մովսես 16.12, Ալմա 5.33, 19.36, 29.10, 3 Նեփի 9.14:
9. Վարդապետություն և Ուխտեր 58.26:
10. Վարդապետություն և Ուխտեր 58.25, շեշտադրումն ավելացված է:
11. Ալմա 37.37, շեշտադրումն ավելացված է:
12. Տես Գաղատացիս 5.22:
13. Տես 1 Նեփի 8, 12, 15:
14. Տես 1 Նեփի 8.23–24, 12.17:
15. 1 Նեփի 15.24, շեշտադրումն ավելացված է:
16. Վարդապետություն և Ուխտեր 112.10:

Ռեյնա Ի. Աբուրտո
Սփոփող Միության Գերագույն
Նախագահության երկրորդ խորհրդական

Լինենք միաբան

Որպեսզի հասնենք մեր վսեմ նպատակակետին, մենք միմյանց կարիքը ունենք և պետք է միաբան լինենք։

Աշխարհի ամենառուշագրավ արարածներից մեկը Միապետ թիթեռն է։ Երբ ամուսնուս ընտանիքի հետ Սուրբ Ծննդյան տոներին ուղևորվում էինք Մեքսիկա, մենք այցելեցինք թիթեռների ապաստարան, որտեղ միլիոնավոր «միապետ» թիթեռներ անցկացնում են ձմեռը։ Շատ հաճելի է ներկա լինել այդպիսի տպավորիչ տեսարանի և խորհել միասնության ու աստվածային օրենքներին հնազանդվելու այս օրինակի մասին, որ Աստծո արարածներն են ցուցադրում։[1]

«Միապետ» թիթեռները հմուտ թռչողներ են։ Նրանք օգտագործում են արեգակի դիրքը, որպեսզի գտնեն իրենց անհրաժեշտ ուղղությունը։ Ամեն գարնան նրանք ճամփորդում են հազարավոր կիլոմետրեր՝ Մեքսիկայից Կանադա, իսկ աշնանը վերադառնում են Մեքսիկայի նույն սրբազան սոճու անտառները։[2] Նրանք այդպես թռչում են ամեն տարի, թափահարելով իրենց փոքրիկ թևերով։ Նրանք իրենց ուղևորության ընթացքում գիշերը հավաքվում են ծառերի վրա հոծ խմբերով, որպեսզի պաշտպանվեն ցրտից և գիշատիչներից։[3]

Թիթեռների խումբը կոչվում է խճանկար։[4] Մի՞թե դա գեղեցիկ պատկեր չէ։ Խճանկարում յուրաքանչյուր թիթեռ յուրահատուկ է և տարբեր, սակայն այս թվացյալ փխրուն արարածներին սիրառատ Արարիչն օժտել է գոյատևման, ճամփորդելու, բազմանալու և կյանք տարածելու ունակությամբ, երբ նրանք թռչում են մի ծաղկից մյուսը՝ տարածելով ծաղկափոշին։ Եվ, չնայած, յուրաքանչյուր թիթեռ յուրահատուկ է, նրանք աշխատում են միասին՝ աշխարհը դարձնելով ավելի գեղեցիկ ու արգասաբեր վայր։

«Միապետ» թիթեռների նման, մենք ևս մեր երկնային տունը վերադառնալու ճանապարհին ենք, որտեղ կմիանանք մեր Երկնային Ծնողների հետ։[5] Թիթեռների նման, մեզ ևս տրվել են աստվածային հատկանիշներ, որոնք մեզ թույլ են տալիս խուսանավել կյանքում, որպեսզի «լցնենք [մեր] ստեղծման չափը»։[6] Նրանց նման, եթե մենք էլ միավորենք մեր սրտերը,[7] Տերը կպաշտպանի մեզ, ինչպես «հավն է իր թևերի տակ հավաքում իր ճտերին»,[8] և կդարձնի մեզ մի գեղեցիկ խճանկար։

Տղանե՛ր և աղջիկնե՛ր, երիտասա՛րդ կանայք և երիտասա՛րդ տղամարդիկ, մենք միասին ենք այս ճանապարհին։ Որպեսզի հասնենք մեր վսեմ նպատակակետին, մենք միմյանց կարիքը ունենք և պետք է միաբան լինենք։ Փրկիչը պատվիրել է մեզ. «Եղեք մեկ. և եթե դուք մեկ չեք, դուք իմը չեք»։[9]

Հիսուս Քրիստոսը Իր Հայր Աստծո հետ միաբանության բարձրագույն օրինակն է։ Նրանք մեկ են նպատակով, սիրով և գործերով՝ «Որդու կամքը կուլ գնացած լինելով Հոր կամքին»։[10]

Մենք ինչպե՞ս կարող ենք հետևել Իր Հոր հետ միաբանության Տիրոջ կատարյալ օրինակին և

Ինչպես Մոնարիկյան թիթեռները վերադառնում են իրենց տունը Մեքսիկայում, մենք մեր ճանապարհորդության մեջ ենք դեպի մեր երկնային տուն։

ավելիմիաբանված լինել Նրանց ու միմյանց հետ:

Մի ոգեշունչ օրինակ է զետեղված Գործք Առաքելոց 1.14-ում: Մենք կարդում ենք. «[Տղամարդիկ] միշտ *միաբան* աղօթք եւ աղաչանք էին անում կանանց հետ»:[11]

Կարծում եմ, կարևոր է, որ «միաբան» բառը մի քանի անգամ կրկնվում է Առաքելոց գրքում, որտեղ մենք կարդում ենք այն մասին, թե Հիսուս Քրիստոսի հետևորդներն ինչ արեցին անմիջապես այն բանից հետո, երբ որպես հարություն առած էակ, Նա համբարձվեց երկինք, կարդում ենք նաև օրհնությունների մասին, որ նրանք ստացան իրենց ջանքերի շնորհիվ: Կարևոր է նաև, որ մենք նման օրինակներ գտնենք հավատարիմների մեջ Ամերիկա մայրցամաքում այն ժամանակ, երբ Տերը այցելեց ու ծառայեց նրանց: «Միաբան» նշանակում է՝ համաձայնության մեջ, միասնական և բոլորը միասին:

Որոշ գործեր, որ հավատարիմ Սրբերը միաբան կատարում էին երկու վայրերում էլ, հետևյալն էին՝ վկայում էին Հիսուս Քրիստոսի մասին, ուսումնասիրում էին Աստծո խոսքը և սիրով ծառայում միմյանց:[12]

Տիրոջ հետևորդները մեկ էին նպատակով, սիրով և գործերով: Նրանք գիտեին, թե ովքեր էին իրենք, ինչ պետք է անեին, և անում էին այդ Աստծո ու միմյանց հանդեպ սիրով: Նրանք հոյակապ խճանկարի մասն էին, որը միաբան առաջ էր ընթանում:

Օրհնությունները, որ նրանք ստանում էին, լի էին Սուրբ Հոգով, հրաշքներ էին տեղի ունենում նրանց մեջ, Եկեղեցին աճում էր, հակառակություն չկար մարդկանց միջև, և Տերը օրհնում էր նրանց բոլոր բաներում:[13]

Մենք կարող ենք ենթադրել, որ պատճառը, որով նրանք այդքան միաբան էին, այն էր, որ իրենք անձամբ գիտեին Տիրոջը: Նրանք մոտ էին Նրան և վկա էին եղել Նրա աստվածային առաքելությանը, Նրա գործած հրաշքներին ու Նրա Հարությանը: Նրանք տեսել ու շոշափել էին Նրա ձեռքերն ու ոտքերը: Նրանք անշուշտ գիտեին,

որ Նա էր խոստացված Մեսիան՝ աշխարհի Քավիչը: Նրանք գիտեին, որ «Նա է ողջ բժշկության, խաղաղության և հավերժական առաջընթացի աղբյուրը»:[14]

Նույնիսկ, եթե մենք չենք տեսել Փրկիչին մեր աչքերով, մենք կարող ենք իմանալ, որ Նա ապրում է: Երբ մենք մոտենանք Նրան, երբ մենք ձգտենք Սուրբ Հոգու միջոցով անձնական վկայություն ստանալ Նրա աստվածային առաքելության մասին, մենք ավելի լավ կհասկանանք մեր նպատակը, Աստծո սերը կբնակվի մեր սրտերում,[15] մենք վճռականություն կունենանք մեկ լինելու մեր ընտանիքների, ծխերի և համայնքների խճանկարում և կծառայենք միմյանց «ավելի նոր, ավելի լավ եղանակներով»:[16]

Հրաշքները պատահում են, երբ Աստծո զավակները աշխատում են միասին, ուղղորդվելով Հոգու կողմից, որ հասնեն կարիքավորներին:

Մենք այնքան շատ պատմություններ ենք լսել բարեկամական սիրո մասին, որ մարդիկ ցուցադրում են աղետների ժամանակ: Օրինակ, երբ անցյալ տարի Հյուստոն քաղաքը տուժեց մեծ ջրհեղեղից, մարդիկ մոռացան իրենց սեփական կարիքների մասին և գնացին փրկարարական աշխատանքներ կատարելու: Երեցների քվորումի նախագահը օգնության կոչ արեց համայնքին և արագ կազմավորվեց 77 նավակներից բաղկացած շարժակազմ: Փրկարարները գնում էին ջրհեղեղից տուժած տարածքները և ընտանիքներին տեղափոխում մեր ժողովատներից մեկը, որտեղ նրանք ստանում էին օթևան և շատ անհրաժեշտ օգնություն: Անդամներն ու ոչ անդամները աշխատում էին միասին մեկ նպատակով:

Չիլիի Սանտյագո քաղաքում Սփոփող Միության նախագահը ցանկություն հայտնեց օգնել իր համայնքի ներգաղթյալներին, ովքեր եկել էին Հաիթիից: Խորհրդակցելով իր քահանայության ղեկավարների հետ, նա և այլ ղեկավարներ հանդես եկան ներգաղթյալների համար իսպաներենի դասեր անցկացնելու գաղափարով, որպեսզի օգնեին նրանց ավելի լավ ինտեգրվել իրենց նոր համայնքում: Ամեն կիրակի առավոտ միսիոներները մեկտեղ հավաքվում էին իրենց պատրաստակամ ուսանողների հետ: Միաբանության զգացումը այդ շենքում ոգեշնչող օրինակ էր այն մարդկանց, ովքեր ունեին տարբեր ծագում, բայց ծառայում էին միաբանությամբ:

Մեքսիկայում հազարավոր անդամներ ժամերով ճամփորդեցին, որպեսզի օգնեն երկու խոշոր երկրաշարժերից փրկված մարդկանց: Նրանք եկան գործիքներով, մեքենայական սարքավորումներով և մերձավորի հանդեպ սիրով: Երբ կամավորները միասին հավաքվեցին մեր ժողովատներից մեկում՝ սպասելով հրահանգների, Իքսյուհաթան քաղաքի քաղաքապետը հուզվեց և արցունքները հոսեցին նրա աչքերից, երբ տեսավ «Քրիստոսի մաքուր սիրո» այդպիսի դրսևորումը:[17]

Տերը հիմա մեզ հնարավորություն է տալիս ամեն ամիս խորհրդակցել քահանայության քվորումների և Սփոփող Միությունների հետ միասին, որպեսզի մենք բոլորս կարողանանք եռանդուն մասնակիցներ լինել մեր ծխերի ու ճյուղերի խճանկարում, որում մենք բոլորս տեղ ունենք և որտեղ կա բոլորիս կարիքը:

Մեր ճանապարհները տարբեր են, սակայն մենք քայլում ենք միասին: Մեր ճանապարհ ասելով նկատի

չունենք, թե մենք ինչ ենք արել կամ որտեղ ենք եղել, դա վերաբերում է նրան, թե մենք ուր ենք գնում և ինչ ենք դառնում միաբանվելով: Երբ մենք խորհրդակցում ենք միասին՝ առաջնորդվելով Սուրբ Հոգու կողմից, կարող ենք տեսնել՝ թե որտեղ ենք մենք և որտեղ մենք պետք է լինենք: Սուրբ Հոգին մեզ տալիս է տեսլական, որը չենք կարող տեսնել մեր բնական աչքերով, քանի որ «հայտնությունը ամենուրեք մեր մեջ է»,[18] և երբ ի մի ենք բերում այդ հայտնությունը, մենք ավելի շատ բան ենք հասկանում:

Երբ մենք աշխատում ենք միաբան, մեր նպատակը պետք է լինի փնտրել և կատարել Տիրոջ կամքը, մեր խթանը պետք է լինի սերը, որը զգում ենք Աստծո և մերձավորի հանդեպ,[19] և մեր մեծագույն ցանկությունը պետք է լինի «ջանասիրաբար աշխատելը»,[20] որպեսզի կարողանանք ուղի պատրաստել մեր Տիրոջ փառահեղ վերադարձի համար: Միակ ուղին, որով կկարողանանք անել այդ, միաբան լինելն է:

«Միապետ» թիթեռների նման, եկեք միասին նպատակասլաց շարունակենք մեր ուղին, յուրաքանչյուրս ներդնելով մեր ավանդն ու հատկանիշները, աշխատենք այս աշխարհը դարձնել ավելի գեղեցիկ ու արգասաբեր, ամեն անգամ կատարելով մի փոքր քայլ, և Աստծո պատվիրանների հետ լինել ներդաշնակ:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսը խոստացել է մեզ, որ երբ մենք հավաքվենք Իր անունով, Նա կլինի մեր մեջ:[21] Ես վկայում եմ, որ Նա ապրում է և Նա հարություն է առել այնպիսի մի գեղեցիկ զարնանային առավոտ, ինչպիսին այսօր է: Նա է բոլոր միապետերի Միապետը, «թագավորների Թագավորը և տերերի Տերը»:[22]

Թող մենք մեկ լինենք Հոր և Նրա Միածին Որդու մեջ, երբ առաջնորդվում ենք Սուրբ Հոգով, այս է իմ խոնարհ աղոթքը, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Աբրահամ 3.26, 4.7, 9-12, 15, 18, 21, 24–25:
2. Կա մի հետաքրքիր փաստ «Միապետ» թիթեռների մասին. նրանք փոխում են երեք սերունդ, մինչ կատարում են իրենց ուղևորությունը դեպի Կանադա: Սակայն մի «առաջնակարգ սերունդ» կատարում է ամբողջ ճամփորդությունը դեպի հարավ՝ Մեքսիկա, անցկացնում է ձմեռն այնտեղ և կատարում առաջին վերադարձի շրջանը դեպի հյուսիս: (Տես "Flight of the Butterflies" [video, 2012]; "'Flight': A Few Million Little Creatures That Could," WBUR News, Sept. 28, 2012, wbur.org:)
3. Տես "Why Do Monarchs Form Overnight Roosts during Fall Migration?" learner.org/jnorth/tm/monarch/sl/17/text.html:
4. Տես "What Is a Group of Butterflies Called?" amazingbutterflies.com/frequentlyaskedquestions.htm, տես նաև "kaleidoscope," merriam-webster.com: *Kaleidoscope* բառը հունարեն *kalos* (գեղեցիկ) և *eidos* (ձև) բառերից է:
5. Տես «Ընտանիք. Հայտարարություն աշխարհին», *Լիահոնա, մայիս* 2017, 145:
6. Վարդապետություն և Ուխտեր 88.19, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 88.25:
7. Տես Մոսիա 18.21:
8. 3 Նեփի 10.4:
9. Վարդապետություն և Ուխտեր 38.27:
10. Մոսիա 15.7:
11. Գործք Առաքելոց 1.14, ավելացված շեշտադրում:
12. Որոշ բաներ, որ Սրբերն անում էին Երուսաղեմում. ընտրեցին նոր Մարգարե և «ձեզանից եօթը վկայուած մարդիկ ընտրեցէք» և հաստատեցին նրանց (տես Գործք Առաքելոց 1.26, 6.3–5), միասին հավաքվում էին Պենտեկոստեի օրը (տես Գործք Առաքելոց 2.1), վկայում էին Հիսուս Քրիստոսի մասին (Գործք Առաքելոց 2.22–36, 3.13–26, 4.10, 33, 5.42), մարդկանց ապաշխարության էին կանչում և մկրտում էին նրանց (տես Գործք Առաքելոց 2.38–41), շարունակում էին եղբայրներ լինել հացը կտրելիս և աղոթքի մեջ (տես Գործք Առաքելոց 2.42), միասին էին և ամեն բան ընդհանուր էր (տես Գործք Առաքելոց 2.44–46, 4.34–35), հաճախում էին տաճար (տես Գործք Առաքելոց 2.46), «հաց էին կտրում տներում, եւ ուրախութիւնով եւ սրտի միամտութիւնով կերակուր էին ուտում» (տես Գործք 2.46), օրհնում էին Աստծուն և «բոլոր ժողովրդի առաջին շնորհք ունէին» (տես Գործք Առաքելոց 2.47), հնազանդ էին հավատքին (տես Գործք 6.7), շարունակ աղոթում էին և «աղօթքին եւ խօսքի պաշտամունքին հետեւինք» (տես Գործք Առաքելոց 6.4): Որոշ բաներ, որ Սրբերն անում էին Ամերիկա մայրցամաքում. քարոզում էին Քրիստոսի ավետարանը (տես 3 Նեփի 28.23), կազմավորում էին Քրիստոսի եկեղեցին (տես 4 Նեփի 1.1), մկրտում էին մարդկանց (տես 4 Նեփի 1.1), ամեն մարդ արդար էր վարվում մեկը մյուսի հետ (տես 4 Նեփի 1.2), նրանց մեջ բոլոր բաներն ընդհանուր էին (տես 4 Նեփի 1.3), կրկին կառուցեցին քաղաքներ (տես 4 Նեփի 1.7–9), ամուսնանում էին (տես 4 Նեփի 1.11), նրանք քայլում էին՝ ըստ այն պատվիրանների, որոնք ստացել էին իրենց Տիրոջից (տես 4 Նեփի 1.12), շարունակում էին ծոմապահությունով ու աղոթքով, (տես 4 Նեփի 1.12), հաճախ հավաքվելով միասին, ինչպես աղոթելու, այնպես էլ լսելու Տիրոջ խոսքը (տես 4 Նեփի 112):
13. Որոշ օրհնություններ, որոնք Սրբերը ստացան Երուսաղեմում. Նրանք լցված էին Սուրբ Հոգով (տես Գործք Առաքելոց 2.4, 4.31), նրանք ստացան լեզուների և մարգարեության պարգևները և խոսում «Աստծո հրաշալի գործերի մասին» (տես Գործք Առաքելոց 2.4–18), «շատ հրաշքներ եւ նշաններ էլ էին գործվում առաքեալների ձեռովը» (տես Գործք Առաքելոց 2.43), հրաշքներ էին տեղի ունենում (տես Գործք Առաքելոց 3.1–10, 5.18–19, 6.8, 15), ավելի շատ մարդիկ էին միանում Եկեղեցուն (տես Գործք Առաքելոց 2.47, 5.14): Որոշ օրհնություններ, որոնք Սրբերը ստացան Ամերիկա մայրցամաքում. մարդիկ դարձի էին գալիս դեպի Տերը (տես 3 Նեփի 28.23, 4 Նեփի 1.2), սերունդը օրհնվեց (տես 3 Նեփի 28.23), նրանց մեջ չկային հակառակություններ և վիճաբանություններ,(տես 4 Նեփի 1.2, 13, 15, 18), չկային հարուստ և աղքատ (տես 4 Նեփի 1.3), նրանք բոլորը դարձվել էին ազատ, և երկնային պարգևի ճաշակողներ (տես 4 Նեփի 1.3), երկրում դեռ շարունակվում էր խաղաղություն տիրել (տես 4 Նեփի 1.4), եղան հզոր հրաշքներ գործված (տես 4 Նեփի 1.5, 13), Տերը խիստ բարգավաճեցրեց նրանց (տես 4 Նեփի 1.7, 18), ժողովուրդը զորացավ, և շատ արագ բազմացավ, և դարձավ մի չափազանց գեղեցիկ և հմայիչ ժողովուրդ (տես 4 Նեփի 1.10), նրանք օրհնվում էին՝ ըստ այն մեծաքանակ խոստումների, որոնք Տերը տվել էր նրանց (տես 4 Նեփի 1.11), «չկար ոչ մի հակառակություն երկրում Աստծո սիրո շնորհիվ, որը բնակվում էր մարդկանց սրտերում» (տես 4 Նեփի 1.15), «չկային նախանձություններ, ոչ էլ պայքարներ, ոչ էլ խլրտումներ, ոչ էլ պոռնկություններ, ոչ էլ ստախոսություններ, ոչ էլ սպանություններ, ոչ էլ որևէ ձևի հեշտասիրություն. և, անկասկած, ավելի երջանիկ ժողովուրդ չէր կարող լինել այն բոլոր ժողովուրդների մեջ, որոնք ստեղծվել էին Աստծո ձեռքով» (տես 4 Նեփի 1.16), «չկային ո՛չ ավազակներ, ո՛չ մարդասպաններ, ո՛չ էլ կային Լամանացիներ կամ որևէ այլ տեսակի -ացիներ. այլ նրանք մեկ էին՝ Քրիստոսի զավակները և Աստծո արքայության ժառանգները» (տես 4 Նեփի 1.17), Տերն օրհնում էր նրանց բոլոր իրենց գործերում (տես 4 Նեփի 1.18):
14. Ջին Բ. Բինգամ, «Եւ ձեր ուրախութիւնը լցուած լինի», *Լիահոնա,* նոյեմբեր 2017, 85:
15. Տես 4 Նեփի 1.15:
16. Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Եկեղեցու պատվիրակները», *Լիահոնա,* նոյեմբեր 2016, 62:
17. Մորոնի 7.47:
18. Նիլ Լ. Անդերսեն, «Օժանդակներն օգտագործում են նոր ուսուցման գրադարանը», *Լիահոնա,* ապրիլ 2011, 76:
19. Տես Մատթեոս 22.37–40:
20. Հակոբ 5.61:
21. Տես Մատթեոս 18.20:
22. Ա Տիմոթեոս 6.12:

Երեց Մասիմո Դե Ֆեո
Յոթանասունից

Մաքուր սեր՝ Հիսուս Քրիստոսի յուրաքանչյուր ճշմարիտ հետևորդի իսկական նշան

Հիսուս Քրիստոսի ավետարանը կենտրոնացած է մեր հանդեպ Հոր և Փրկիչի սիրո վրա և Նրանցու միմյանց հանդեպ մեր սիրո վրա։

Ենք սիրում ենք և կարոտում Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնին և մենք սիրում ու հաստատում ենք Նախագահ Ռասսել Մ. Նելսոնին։ Նախագահ Նելսոնը հատուկ տեղ ունի իմ սրտում։

Երբ ես երիտասարդ հայր էի, մեր փոքրիկ որդին, ով հինգ տարեկան էր, մի օր տուն եկավ դպրոցից և հարցրեց իր մորը. «Ինչպիսի՞ աշխատանք է կատարում հայրիկը»։ Հետո նա բացատրեց, որ իր նոր համադասարանցիները սկսեցին վիճել իրենց հայրիկների աշխատանքի վերաբերյալ։ Մեկն ասաց, որ իր հայրը քաղաքի ոստիկանապետն էր, մինչ մյուսը հպարտ հայտարարեց, որ իր հայրը մեծ ընկերության ղեկավար էր։

Այսպիսով, երբ հարցրեցին իր հայրիկի մասին, որդիս պարզապես ասաց. «Իմ հայրն աշխատում է գրասենյակում համակարգչի վրա»։ Հետո նկատելով, որ իր պատասխանը տպավորություն չգործեց իր նոր

փոքրիկ ընկերների վրա, նա ավելացրեց. «Եվ ի դեպ, հայրս տիեզերքի առաջնորդն է»։

Ենթադրում եմ դա եղավ խոսակցության ավարտը։

Ես ասացի կնոջս. «Ժամանակն է նրան ուսուցանել որոշ մանրամասներ փրկության ծրագրի մասին, և թե ով է իրականում պատասխանատուն»։

Բայց, երբ մենք ուսուցանեցինք մեր երեխաներին փրկության ծրագիրը, նրանց սերը Երկնային Հոր և Փրկիչի հանդեպ աճեց, երբ նրանք իմացան, որ դա սիրո ծրագիր էր։ Հիսուս Քրիստոսի ավետարանը կենտրոնացած է մեր հանդեպ Հոր և Փրկիչի սիրո վրա և Նրանցու միմյանց հանդեպ մեր սիրո վրա։

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն ասել է. «Ողջ հավերժության առաջին մեծ *պատվիրանն է* սիրել Աստծուն մեր *ողջ* սրտով, զորությամբ, մտքով և ուժով, դա է առաջին մեծ պատվիրանը։ Բայց ողջ հավերժության առաջին մեծ *ճշմարտությունն* է, որ Աստված սիրում է *մեզ Իր* ողջ սրտով, զորությամբ, մտքով և ուժով։ Այդ սերը հավերժության հիմնական սկզբունքն է, և այն պետք է լինի հավերժության հիմնական սկզբունք մեր առօրյա կյանքում»։[1]

Լինելով մեր առօրյա կյանքի հիմնաքարը, մաքուր սերը պահանջ է Հիսուս Քրիստոսի յուրաքանչյուր ճշմարիտ աշակերտի համար։

Մորմոն մարգարեն ուսուցանել է. «Ուստի, իմ սիրելի՛ եղբայրներ, աղոթեք Հորը, սրտի ողջ կորովով, որ դուք կարողանաք լցված լինել այդ սիրով, որը նա շնորհել է բոլոր նրանց, ովքեր նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդներն են»։[2]

Հիսուս Քրիստոսի յուրաքանչյուրճշմարիտ աշակերտի համար սերն է իսկապես ճշմարիտ նշանը։

Ճշմարիտ աշակերտները սիրում են ծառայել։ Նրանք գիտեն, որ ծառայելը ճշմարիտ սիրո և ուխտի արտահայտություն է, որ նրանք կատարել են մկրտության ժամանակ։[3] Անկախ Եկեղեցում իրենց կոչումներից կամ հասարակության մեջ իրենց դերից, նրանքաճող ցանկություն են զգում սիրել և ծառայել Տիրոջը և մեկը մյուսին։

Ճշմարիտ աշակերտները սիրում են ներել: Նրանք գիտեն, որ Փրկիչի Քավությունը ծածկում է մեզանից յուրաքանչյուրի բոլոր մեղքերն ու սխալները: Նրանք գիտեն, որ գինը, որ Նա վճարեց «ամեն ինչ ներառող գին է»: Հոգևոր հարկերը, վճարները, տուգանքներն ու մեղադրանքները՝ կապված մեղքերի, սխալների և անիրավությունների հետ, բոլորը ծածկվում են: Ճշմարիտ աշակերտները արագ են ներում և արագ են ներողություն խնդրում:

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, եթե դուք մաքառում եք ուժ գտնել ներելու համար, մի մտածեք, թե ինչ են ուրիշներն արել ձեզ, այլ մտածեք այն մասին, թե ինչ է Փրկիչն արել ձեզ համար, և դուք կգտնեք խաղաղություն Նրա Քավության փրկագնող օրհնություններում:

Ճշմարիտ աշակերտները սիրում են ենթարկվել Տիրոջը՝ խաղաղությունն իրենց սրտերում: Նրանք խոնարհ են և ենթարկվող, որովհետև նրանք սիրում են Նրան: Նրանք ունեն հավատք՝ լիովին ընդունելու Նրա կամքը, ոչ միայն այն, թե ինչ Նա անում է, այլև, թե ինչպես և երբ: Ճշմարիտ աշակերտները գիտեն, որ իսկական օրհնությունները միշտ նրանք չեն, ինչ իրենք են կամենում, այլ այն, ինչ Տերն է կամենում իրենց համար:

Ճշմարիտ աշակերտները Տիրոջն ավելի են սիրում, քան աշխարհը և անսասան են ու հաստատուն իրենց հավատքում:Նրանք մնում են ուժեղ և ամուր փոփոխվող և խճճված աշխարհում: Ճշմարիտ աշակերտները սիրում են լսել Հոգու և մարգարեների ձայնը և չենշփոթվում աշխարհի ձայներից: Ճշմարիտ աշակերտները սիրում են «կանգնել սուրբ վայրերում»[4] և սիրում են սուրբ դարձնել այն վայրերը, որտեղ իրենք են կանգնում: Ուր էլ որ նրանք գնում են, բերում են սեր Տիրոջ հանդեպ և խաղաղություն ուրիշների սրտերին: Ճշմարիտ աշակերտները սիրում են հնազանդվել Տիրոջ պատվիրաններին և նրանք հնազանդվում են, որովհետև սիրում են Տիրոջը:Երբ նրանք սիրում և պահում են իրենց ուխտերը, նրանց սրտերը նորոգվում են և նրանց բուն էությունն է փոխվում:

Մաքուր սերըՀիսուս Քրիստոսի յուրաքանչյուր ճշմարիտ հետևորդի իսկական նշանն է:

Ես իմ մայրիկից սովորեցի մաքուր սիրո մասին: Նա Եկեղեցու անդամ չէր:

Մի օր շատ տարիներ առաջ ես այցելեցի մայրիկիս, ով մաքառում էր քաղցկեղի դեմ: Ես գիտեի, որ նա մահանալու էր, բայց ես մտահոգված էի, որ նա տառապում էր: Ես ոչինչ չասացի, բայց ինձ լավ ճանաչելով, նա ասաց. «Տեսնում եմ մտահոգված ես»:

Ապա, ի զարմանս ինձ, նա հարցրեց թույլ ձայնով. «Կարո՞ղ ես սովորեցնել ինձ, թե ինչպես աղոթեմ: Ես ուզում եմ քեզ համար աղոթել: Ես գիտեմ, որ սկսում եք՝ ասելով. «Սիրելի Երկնային Հայր», բայց հետո ի՞նչ պետք է ասեմ»:

Երբ ես ծնկի իջա նրա մահճակալի կողքին և նա աղոթեց ինձ համար, ես զգացի մի սեր, որը երբեք չէի զգացել նախկինում:Այն պարզ, ճշմարիտ, մաքուր սեր էր: Չնայած նա չգիտեր փրկության ծրագրի մասին, նա իր սրտում ուներ իր սիրո անձնական ծրագիրը, մոր սիրո ծրագիրը իր որդու համար: Նա, ցավերի մեջ մաքառելով, նույնիսկ ուժ գտավ աղոթելու:Ես հազիվ էի լսում նրա ձայնը, բայց անշուշտ զգում էի նրա սերը:

Հիշում եմ, որ մտածեցի. «Ինչպես կարող է մեկը, ով այդպիսի մեծ ցավերի մեջ է, աղոթել մեկ ուրիշի համար: Նա է այն մեկը, ով կարիքի մեջ է»:

Այդ ժամանակ միտքս եկավ հստակ պատասխան՝ մաքուր սեր: Նա այնքան շատ էր սիրում ինձ, որ մոռացել էր իր մասին: Նույնիսկ ճգնաժամի մեջ, նա ինձ ավելի էր սիրում, քան իրեն:

Այժմ, սիրելի՛ եղբայրներ և քույրեր, միթե՞ սա այն չէ, ինչ Փրկիչն արեց: Իհարկե, հավերժական և շատ ավելի լայնածավալ հեռանկարով: Բայց Իր մեծագույն ցավի մեջ պարտեզում այն գիշեր, Նա էր այն մեկը, ով օգնության կարիք ուներ, տառապելով մի ձևով, որը մենք, նույնիսկ, չենք կարող պատկերացնել կամ ըմբռնել: Բայց վերջում, Նա մոռացավ Իր մասին և աղոթեց մեզ համար, մինչև Նա վճարեց լրիվ գինը: Ինչպե՞ս կարողացավ Նա անել այդ: Մեր և Հոր հանդեպ Իր մաքուր սիրո շնորհիվ, ով ուղարկեց Նրան: ՆաՀորը և մեզ ավելի շատ էր սիրում, քան Իրեն:

Նա վճարեց մի բանի համար, որը Նա չէր արել: Նա վճարեց մեղքերի համար, որոնք Նա չէր գործել: Ինչո՞ւ: Մաքուր սիրո համար: Վճարելով լրիվ գինը, Նա մի դիրքում էր, որ մատուցեր մեզ օրհնությունները Իր վճարածի համար, եթե մենք ապաշխարենք: Ինչո՞ւնա մատուցեց դա: Կրկին և միշտ մաքուր սեր:

Մաքուր սերըՀիսուս Քրիստոսի յուրաքանչյուր ճշմարիտ հետևորդի իսկական նշանն է:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասել է. «Թող որ մենք սկսենք այժմ, հենց այս օրը, արտահայտենք սեր բոլոր Աստծո զավակներին, լինեն նրանք մեր ընտանիքի անդամները, մեր ընկերները, մեր ծանոթները, թե միանգամայն անծանոթներ: Երբ մենք վեր ենք կենում ամեն առավոտ, եկեք որոշենք արձագանքել սիրով և բարությամբ, ինչ էլ որ պատահի մեր ճանապարհին»:[5]

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, Հիսուս Քրիստոսի ավետարանը սիրո ավետարան է: Ամենամեծ պատվիրանը սիրո մասին է: Ինձ համար, այդ ամբողջը սիրո մասին է: Հոր սիրո, ով զոհաբերեց Իր Որդուն մեզ համար: Փրկիչի սիրո մասին, ով զոհաբերեց ամեն ինչ մեզ համար: Մոր կամ հոր սիրո մասին, ովքեր կտան ամեն ինչիրենց երեխաների համար: Նրանց սիրո մասին, ովքեր ծառայում են լռելյայն և հայտնի չեն մեզանից շատերի համար, բայց հայտնի են Տիրոջը: Նրանց սիրո մասին, ովքեր ներում են ամեն ինչ և միշտ: Նրանց սիրո մասին, ովքեր տալիս են ավելի շատ, քան իրենք ստանում են:

Ես սիրում եմ իմ Երկնային Հորը: Ես սիրում եմ իմ Փրկիչին: Ես սիրում եմ ավետարանը: Ես սիրում եմ այս Եկեղեցին: Ես սիրում եմ իմ ընտանիքին: Ես սիրում եմ այս սքանչելի կյանքը: Ինձ համար այդ ամբողջը սիրո մասին է:

Թող Փրկիչի Հարության այս հիշատակի օրը լինի հոգևոր նորոգման օր մեզանից յուրաքանչյուրի համար: Թող այս օրը լինի սիրով լի կյանքի սկիզբը. «մեր ամենօրյա կյանքի հիմնաքարը»:

Թող մեր սրտերը լցված լինեն Քրիստոսի մաքուր սիրով՝ Հիսուս Քրիստոսի իսկական աշակերտի ճշմարիտ նշանով: Ես աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով՝ ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Տէրը էգուց ձեր միջումը հրաշքներ է անելու» *Լիահոնա*, մայիս 2016, 127:
2. Մորոնի 7.48:
3. Տես Մոսիա 18.10:
4. Վարդապետություն և Ուխտեր 45.32:
5. Թոմաս Ս. Մոնսոն,«Սեր՝ Ավետարանի էությունը», *Լիահոնա*, մայիս 2014, 94:



Երեց Կլաուդիո Դ. Զիվիկ
Յոթանասունից

Ով որ մինչև վերջը համբերէ՝ նա կփրկվի

Եկեք հավատարիմ լինենք նրան, ինչին հավատում ենք և ինչի մասին գիտենք:

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, ես բարձր եմ գնահատում իմ զգացմունքներով ձեզ հետ կիսվելու այս հնարավորությունը:

Մի քանի տարի առաջ ես և կինս ներկա էինք Սոլթ Լեյք Սիթիում Եկեղեցու Պատմության Թանգարանում երեխաների ինտերակտիվ ցուցահանդեսի բացման արարողությանը: Արարողության ավարտին Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը մոտեցավ մեզ և սեղմեց մեր ձեռքերը, ասելով. «Համբերեք և կտոնեք ձեր հաղթանակը». մի խորիմաստ ուսմունք, որի ճշմարտությունը բոլորս կարող ենք հաստատել:

Փրկիչը հավաստիացրել է մեզ, որ «ով որ մինչև վերջը համբերէ՝ նա կփրկվի»:[1]

Համբերել նշանակում է «հաստատուն մնալ Աստծո պատվիրաններին հավատարիմ լինելու որոշման մեջ՝ անկախ գայթակղությանից, ընդդիմությունից և դժվարություններից»:[2]

Անգամ նրանք, ովքեր ունեն զորեղ հոգևոր փորձառություններ և մատուցել են հավատարիմ ծառայություն, մի օր կարող են շեղվել ուղուց կամ դառնալ ոչ ակտիվ, եթե չհամբերեն մինչև վերջ: Թող որ մենք միշտ ընդգծված պահենք մեր մտքում և սրտում «Դա ինձ հետ չի պատահի» արտահայտությունը:

Երբ Հիսուս Քրիստոսն ուսուցանում էր Կապիառնայում քաղաքում, «նորա աշակերտներից շատերը ետ գնացին և այլևս ման չէին գալի Նորա հետ:

Հիսուսն էլ ասեց այն տասներկուսին. Մի՞թե դուք էլ ուզում եք գնալ»:[3]

Ես հավատում եմ, որ այսօր Հիսուս Քրիստոսը հարցնում է մեզ բոլորիս, ովքեր Իր հետ սուրբ ուխտեր են կապել. «Մի՞թե դուք էլ ուզում եք գնալ»:

Ես աղոթում եմ, որ բոլորս, խորապես մտորելով այն մասին, թե ինչ են մեզ համար պահում հավերժությունները, կարողանան պատասխանել Սիմոն Պետրոսի նման. «Տէր, ո՞ւմ մօտ գնանք. յաւիտենական կեանքի խօսքեր ունիս դու»:[4]

Եկեք հավատարիմ լինենք նրան, ինչին հավատում ենք և ինչի մասին գիտենք: Եթե մենք չենք ապրում ըստ մեր գիտելիքի, ապա եկեք փոխվենք: Մեղսավորները, որոնք մնում են իրենց մեղքերի մեջ և չեն ապաշխարում, ավելի ու ավելի խորն են սուզվում անիրավության մեջ, մինչև որ սատանան վերցնում է նրանց իր մոտ, մեծապես նվազեցնելով ապաշխարելու, ներվելու և հավերժության օրհնություններով օրհնվելու նրանց հնարավորությունը:

Ես շատ արդարացումներ եմ լսել նրանցից, ովքեր դադարել են ակտիվորեն մասնակցել Եկեղեցում և կորցրել են Երկրի վրա մեր ճանապարհորդության նպատակի ճիշտ պատկերացումը: Ես հորդորում եմ նրանց խորհել և վերադառնալ, քանզի հավատում եմ, որ ոչ ոք չի կարող արդարացումներ բերել մեր Տեր Հիսուս Քրիստոսի առաջ:

Երբ մենք մկրտվում ենք, սուրբ ուխտեր ենք կապում՝ ոչ թե որևէ մարդու, այլ Փրկիչի հետ, համաձայնվելով մեզ վրա վերցնել «Հիսուս Քրիստոսի անունը, ունենալով վճռականություն՝ ծառայելու Նրան մինչև վերջ»:[5]

Հաղորդության ժողովին մասնակցելը կարևոր եղանակներից է, որով կարող ենք գնահատել Նրան ծառայելու մեր վճռականությունը, մեր հոգևոր ամրությունը և Հիսուս Քրիստոս հանդեպ մեր հավատքի աճը:

Հանգստության օրվա ամենակարևոր գործերից մեկը հաղորդության ընդունումն է: Տերը մահից առաջ բացատրել է այս արարողությունը Իր Առաքյալներին: Նույնը Նա արել է Ամերիկյան մայրցամաքում: Նա ասաց մեզ, որ եթե մենք մասնակցենք այդ արարողությանը, դա վկայություն կլինի Հոր համար, որ մենք միշտ կհիշենք Նրան և Նրա խոստումները, որ այդ դեպքում Նրա Հոգին մեզ հետ կունենանք:[6]

Իր որդի Միբլոնին տված Ալմա Կրտսերի ուսմունքներում մենք իմաստուն խորհուրդ և նախազգուշացում ենք գտնում, որն օգնում է մեզ հավատարիմ մնալ մեր ուխտերին.

«Տես որ դու չբարձրամտանաս մինչև հպարտություն. այո, տես որ դու չպարծենաս քո սեփական իմաստությամբ, ոչ էլ քո շատ ուժով:

Գործածիր համարձակություն, բայց ոչ բռնադատություն. և նաև տես որ դու սանձես բոլոր քո կրքերը, որ դու լցվես սիրով. տես որ դու զերծ մնաս անգործությունից»:[7]

Մի քանի տարի առաջ արձակուրդի ժամանակ ես որոշեցի առաջին անգամ նավարկելփչովի նավակով: Ես վարձակալեցի նավակը և եռանդով լցված դուրս եկա ծով:

Մի քանի րոպե անց ալիքը շուռ տվեց նավակս: Մեծ դժվարությամբ, մի ձեռքում պահելով թիակը, իսկ մյուսում՝ նավակը, ես կարողացա ոտքերիս վրա կանգնել:

Ես փորձեցի կրկին թիավարել իմ նավակը, սակայն միայն մի քանի րոպե անց նավակը նորից շուռ եկավ: Ես համառորեն շարունակում էի կրկին ու կրկին փորձել նավակը պահել ջրի վրա, մինչև որնավարկությունից հասկացող մի մարդ ասաց ինձ, որ, հավանաբար, նավակում ճաք կար և ջուրը լցվում էր ներս, որի հետևանքով այն դառնում էր անկայուն և անվերահսկելի: Ես քաշելով հանեցի նավակը ափ, բացեցի խցանը, և՝ այո, մեծ քանակությամբ ջուր թափվեց դուրս:

Կարծում եմ, երբեմն մենք կյանքի միջով անցնում ենք մեղքերով, ինչպես իմ նավակի ճաքի դեպքում, ինչը խանգարում է մեր հոգևոր աճին:

Եթե մենք շարունակենք մեր մեղքերը, կմոռանանք մեր ուխտերը, որոնք կապել ենք Տիրոջ հետ, անընդհատ շուռ գալով, որովհետև անհավասարակշռություն է ստեղծվում մեր կյանքում այդ մեղքերի պատճառով:

Ինչպես իմ նավակի ճաքերը, այնպես էլ մեր կյանքի ճաքերը պետք է վերացվեն: Որոշ մեղքերից ապաշխարելու համար ավելի շատ ջանք կպահանջվի, քան մյուսների:

Հետևաբար, մենք պետք է հարցնենք ինքներս մեզ. Որտե՞ղ ենք մենք գտնվում Փրկիչի ու Նրա ուսմունքների նկատմամբ մեր վերաբերմունքի առումով: Կարո՞ղ է պատահել, որ մենք Պետրոսի իրավիճակում ենք, երբ նա

ուրացավ Հիսուս Քրիստոսին: Թե՞ մենք հասել ենք այն կետին, որտեղ ունենք վերաբերմունք և վճռականություն, որը նա ունեցավ, երբ մեծ առաքելություն ստացավ Փրկիչից:[8]

Մենք պետք է ձգտենք հետևել բոլոր պատվիրաններին և մեծ ուշադրություն դարձնել այն պատվիրաններին, որոնք առավել բարդ են մեզ համար: Տերը կլինի մեր կողքին, օգնելով մեզ կարիքի և թուլության ժամանակ, և եթե մենք դրսևորենք անկեղծ ցանկություն ու գործենք համապատասխանաբար, Նա մեր թույլ կողմերը կդարձնի ուժեղ:[9]

Հնազանդությունը մեզ մեղքը հաղթահարելու ուժ կտա: Մենք պետք է նաև հասկանանք, որ մեր հավատքի փորձությունը պահանջում է, որ մենք հնազանդվենք՝ հաճախ արդյունքները չիմանալով:

Ես առաջարկում եմ մի բանաձև, որը կօգնի մեզ համբերել մինչև վերջ.

1. Ամեն օր աղոթեք և կարդացեք սուրբ գրությունները:
2. Ամեն շաբաթ ճաշակեք հաղորդությունը կոտրված սրտով և փշրված հոգով:
3. Վճարեք տասանորդը և ծոմի ամսական նվիրատվությունները:
4. Երկու տարին մեկ անգամ, իսկ երիտասարդների համար՝ տարին մեկ անգամ, թարմացրեք տաճարային երաշխավորագիրը:
5. Կյանքի ողջ ընթացքում ծառայեք Տիրոջ գործին:

Թող ավետարանի մեծ ճշմարտությունները կայունացնեն մեր միտքը, և թող մենք զերծ պահենք մեր կյանքը ճաքերից, որոնք կարող են խոչընդոտել այս կյանքի ծովով մեր ապահով ճամփորդությանը:

Տիրոջ ճանապարհով ընթանալու մեջ հաջողություն ունենալը գին ունի, իսկ դրան հասնելու միակ եղանակը այդ գինը վճարելն է:

Որքան երախտապարտ եմ ես, որ մեր Փրկիչը համբերել է մինչև վերջ, ավարտելով Իր մեծ քավիչ զոհաբերությունը:

Նա տառապեց մեր մեղքերի, ցավերի, ընկճախտերի, վշտերի, թուլությունների և վախերի համար, այնպես որ Նա գիտի ինչպես մեզ օգնել, ինչպես ոգեշնչել մեզ, ինչպես սփոփել մեզ և ինչպես ուժեղացնել մեզ, որպեսզի կարողանանք դիմանալ և ստանալ պսակը, որը պահված է նրանց համար, ովքեր չեն նահանջի:

Յուրաքանչյուրիս համար կյանքը տարբեր է: Բոլորս ունենք փորձությունների ժամանակ, երջանկության ժամանակ, որոշումներ կայացնելու ժամանակ, խոչընդոտներ հաղթահարելու ժամանակ և հնարավորություններից օգուտ քաղելու ժամանակ:

Ինչպիսին էլ լինեն մեր անձնական հանգամանքները, ես վկայում եմ, որ մեր Երկնային Հայրը մշտապես ասում է. «Ես սիրում եմ ձեզ: Ես սատարում եմ ձեզ: Ես ձեզ հետ եմ: Մի հանձնվեք: Ապաշխարեք և համբերեք, մնալով ուղու վրա, որը ես ձեզ ցույց տվեցի: Եվ ես հավաստիացնում եմ ձեզ, որ մենք կտեսնենք միմյանց մեր սելեստիալ տանը»: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մատթեոս 24.13:
2. Սուրբ գրությունների ուղեցույց, «Համբերել», scriptures.lds.org.
3. Հովհաննես 6.66–67:
4. Հովհաննես 6.68:
5. Վարդապետություն և Ուխտեր 20.23:
6. Տես 3 Նեփի 18.7:
7. Ալմա 38.11–12:
8. Տես Մարկոս 16.15:
9. Եթեր 12.27:

Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության երկրորդ խորհրդական

Որպեսզի Նրա Հոգին ձեզ հետ լինի

Ես աղոթում եմ իմ ողջ սրտով, որ դուք լսեք Հոգու ձայնը, որն ուղարկվում է ձեզ այնպես առատորեն։

Իմ եղբայրնե՛ր և քույրե՛ր, ես երախտապարտ եմ Տիրոջ հանգստության օրը ձեզ հետ խոսելու հնարավորության համար՝ Իր Եկեղեցու զերագույն համաժողովում, այս Զատիկի տոներին։ Ես շնորհակալություն եմ հայտնում մեր Երկնային Հորը Նրա Միրելի Որդու պարգևի համար, ով կամավոր եկավ երկիր՝ լինելու մեր Քավիչը։ Ես երախտապարտ եմ, իմանալով, որ Նա քավեց մեր մեղքերը և բարձրացավ Հարությամբ։ Ամեն օր ես օրհնված եմ՝ իմանալով, որ Նրա Քավության շնորհիվ ես գուցե մի օր հարություն կառնեմ, որ հավերժ ապրեմ սիրառատ մի ընտանիքում։

Ես գիտեմ այդ բաները *այն միակ ուղիով,* որ մեզանից ամեն մեկը կարող է իմանալ։ Սուրբ Հոգին խոսել է իմ մտքում և իմ սրտում, որ դրանք ճշմարիտ են, ոչ թե մեկ անգամ, այլ հաճախակի։ Ես ունեցել եմ այդ մշտական սփոփանքի կարիքը։ Մենք բոլորս ապրում ենք ողբերգություն, որի ընթացքում մենք Հոգու հավաստիացման կարիքն ենք ունենում։ Ես դա զգացի մի օր, երբ կանգնած էի իմ հայրիկի հետ հիվանդանոցում։ Մենք նայում էինք մայրիկիս, մինչ նա մի քանի անգամ մակերեսային շունչ քաշեց և ապա դադարեց շնչելուց։ Մինչ մենք նայում էինք նրա դեմքին, նա ժպտում էր, քանի որ ցավն անցել էր։ Մի քանի լուռ րոպեներից հետո հայրս առաջինը խոսեց։ Նա ասաց. «Փոքրիկ աղջիկը տուն գնաց»։

Նա ասաց դա մեղմորեն։ Նա կարծես խաղաղության մեջ էր։ Նա հաղորդում էր մի բան, որը գիտեր՝ ճիշտ է։ Նա լուռ սկսեց հավաքել մայրիկի անձնական իրերը։ Նա դուրս եկավ հիվանդանոցի միջանցք՝ շնորհակալություն հայտնելու բուժքույրերիցև բժիշկներից յուրաքանչյուրին, ովքեր խնամել էին նրան օրեր շարունակ։

Հայրս այդ պահին Սուրբ Հոգու ընկերակցությունն ուներ՝ զգալով, իմանալով և անելով այն, ինչ նա արեց այդ օրը։ Նա ստացել էր խոստումը, ինչպես շատերն են ստացել. «Որպեսզի նրանք նրա Հոգին միշտ իրենց հետ ունենան» (ՎևՈ 20.79)։

Իմ նպատակն է այսօր մեծացնել Սուրբ Հոգին ստանալու ձեր ցանկությունը և ձեր ունակությունը։ Հիշեք, Նա Աստվածագլխի երրորդ անդամն է։ Հայրը և Որդին հարություն առած էակներ են։ Սուրբ Հոգին հոգեղեն անձնավորություն է։ (Տես ՎևՈ 130.22։) Ձեր ընտրությունն է՝ արդյո՞ք ընդունել Նրան և ողջունել Նրան ձեր սրտում ու մտքում։

Պայմանները, ըստ որոնց մենք կարող ենքստանալ այդ զերագույն օրհնությունը, հստակեցվում են այն խոսքերում, որոնք ասվում են ամեն շաբաթ, բայց երևի միշտ չէ, որ ներթափանցում են մեր սրտերն ու մտքերը։ Որպեսզի Հոգին ուղարկվի մեզ, մենք պետք է «միշտ հիշենք» Փրկիչին և «պահենք Նրա պատվիրանները» (ՎևՈ 20.77)։

Տարվա այս ժամանակն օգնում է մեզ հիշել Փրկիչի զոհաբերությունը և Նրա համբարձումը գերեզմանից, որպես հարություն առած էակ։ Մեզանից շատերը պահում են այդ տեսարանների պատկերները մեր հիշողության մեջ։ Մի անգամ Երուսաղեմում ես կնոջս հետ կանգնած էի մի գերեզմանի մոտ։ Շատերը հավատում էին, որ դա այն գերեզմանն էր, որից խաչված Քրիստոսը դուրս եկավ որպես հարություն առած և կենդանի Աստված։

Հարգալից ուղեկցորդը այդ օրը ուղղեց իր ձեռքը դեպի գերեզմանը և ասաց մեզ. «Եկեք, տեսեք դատարկ գերեզմանը»։

Մենք կռացանք, որ մտնենք։ Պատի մոտտեսանքմի քարե նստարան։ Բայց իմ միտքը եկավ մեկ այլ պատկեր, այնպես իրական,

ինչպես այն, ինչ տեսա այդ օրը: Դա Մարիամն էր, ումԱռաքյալները թողել էինգերեզմանի մոտ: Դա այն էր, ինչ Հոգին թույլ տվեց ինձ տեսնել և նույնիսկ լսել մտքումս, այնպես հստակ, կարծես ես այնտեղ էի եղել:

«Բայց Մարիամը գերեզմանի մոտ կանգնած էր դուրսը եւ լաց էր լինում. եւ լաց լինելիս ծռուեց մտիկ տուաւ գերեզմանի մեջ.

Եւ տեսնում է երկու հրեշտակ՝ սպիտակ հանդերձներով նստած, մէկը գլխի կողմին, եւ միուսը ոտների կողմին, որտեղ որ Յիսուսի մարմինը դրուած էր [եղել]:

Եւ նորանք ասեցին նորան. Ով կին, ինչո՞ւ ես լաց լինում, Նորանց ասեց. Նորա համար որ իմ Տիրոջը վեր առան, եւ չգիտեմ՝ թէ ուր դրին նորան:

Եւ երբոր սա ասեց, դարձաւ իր յետին կողմը, եւ Յիսուսին տեսաւ՝ կանգնած. Եւ չգիտէր թէ Յիսուսն է:

Յիսուսը նորան ասեց. Կին, ինչո՞ւ ես լաց լինում, ո՞ւմ ես որոնում. Նա էլ կարծելով թէ պարտիզպանն է, ասեց նորան. Տէր, եթե դու վեր առար նորան, ասիր ինձ՝ ուր ես դրել նորան, որ ես վեր առնեմ նորան:

Յիսուսը նորան ասեց. Մարիամ. Եւ նա դարձաւ և ասեց նորան. Ռաբբունի, որ կթարգմանուի Վարդապետ:

Յիսուսը նորան ասեց. Մի դպչիր ինձ, որովհետեւ դեռ չեմ վեր ելել իմ Հօր մօտ. բայց դու գնա իմ եղբայրների մօտ, և նորանց ասիր. Ես վեր եմ ելնում իմ Հօր մօտ և ձեր Հօր մոտ, իմ Աստուծոյ մօտ և ձեր Աստուծոյ մօտ» (Հովհաննես 20.11–17):

Ես աղոթեցի, որպեսզի ինձ թույլ տային զգալ ինչ-որ բան, որ Մարիամը զգաց գերեզմանի մոտ և ինչ մյուս երկու աշակերտները զգացին Էմմաուսի ճանապարհին, երբ քայլում էին հարություն առած Փրկիչի հետ, մտածելով, թե Նա Երուսաղեմ եկած այցելու էր:

«Եւ նորանք բռնադատեցին նորան և ասեցին. Մնա մեզ հետ, որովհետեւ իրիկուայ դէմ է եւ օրն իջել է. Եւ նա մտաւ որ նորանց հետ մնայ:

Եւ եղաւ երբոր նա նորանց հետ սեղան նստեց, հաց առաւ՝ օրհնեց, կտրեց եւ տուաւ նորանց:

Եւ նորանց աչքերը բացուեցան եւ նորան ճանաչեցին. եւ նա աներեւոյթ եղաւ նորանցից:

Եւ իրար ասեցին. Չէ՞ որ մեր սրտերը բորբոքվում էին մեզանում, երբոր ճանապարհին մեզ հետ խօսում էր, եւ ինչպէս գրքերը բաց էր անում մեզ համար» (Ղուկաս 24.29–32):

Այդ խոսքերից մի քանիսը կրկնվեցին հաղորդության ժողովի ժամանակ, որին ես մասնակցել էի 70 տարի առաջ: Այդ օրերին հաղորդության ժողովները անցկացվում էին երեկոյան: Դրսում մութ էր: Ժողովի մասնակիցները երգում էին այս ծանոթ խոսքերը:Ես բազմիցս լսել էի դրանք: Բայց իմ տևական հիշողությունը որոշակի գիշերվա վերաբերյալ մի զգացողություն է: Դա մոտեցնում է ինձ Փրկիչին: Գուցե, եթե ես արտասանեմ խոսքերը, այն կրկին կգա մեզ բոլորիս:

Մնա ինձ հետ այս երեկո,
Օրն անցավ, գնաց,
Երեկոյան ստվերներն են խտանում,
Գիշերն է մոտենում:
Սրտիս խորքից ողջույն հյուրին,
Իմ տանը մնա:

Մնա ինձ հետ այս երեկո,
Քո քայլքն այսօր ինձ հետ
Միրտս ներսումս այրեց,
Երբ խոսում էի քեզ հետ:
Անկեղծ խոսքերդ հոգիս լցրեցին
Եվ պահեցին քեզ մոտիկ:

Օ՜ Փրկիչ, մնա այս գիշեր ինձ հետ,
Տես, երեկո է:
Օ՜ Փրկիչ, մնա այս գիշեր ինձ հետ,
Տես, երեկո է:[1]

Ավելի թանկ, քան հիշողությունը իրադարձությունների մասին, հիշողությունն է մեր սրտերին Սուրբ Հոգու դիպչելու մասին և Նրա մշտական հաստատումը ճշմարտության մասին: Ավելի թանկ, քան մեր աչքերով տեսնել, կամ հիշելասված և կարդացած խոսքերը,զգացողությունների մտաբերումն է, որոնք ուղեկցել են Հոգու հանդարտ ձայնին: Ինչպես ճամփորդները Էմմաուսի ճանապարհին, ես էլ եմ հազվադեպ զգացել մեղմ, բայց անտարակույս այրոց սրտումս: Ավելի հաճախ դա լույսի և հանգիստ վստահության զգացում է:

Մենք ունենք Սուրբ Հոգու անգին խոստումը որպես ուղեկից, և մենք նաև ունենք ճշմարիտ հրահանգներ, թե ինչպես հայցել այդ պարգևը: Այս խոսքերն ասվում են Տիրոջ լիազորված ծառայի կողմից՝ ձեռքերը դրված մեր գլխին. «Ստացի՛ր Սուրբ Հոգին»:

Այդ պահին ես և դուքունենք վստահություն, որ Նա կուղարկվի: Բայց մեր պարտականությունն է՝ ընտրել բացել մեր սրտերը ողջ կյանքում Հոգու ծառայությունը ստանալու համար:

Մարգարե Ջոզեֆ Սմիթի փորձառությունները առաջարկում են մի ուղեցույց: Նա սկսեց և շարունակեց իր ծառայությունը որոշումով, որ իր անձնական իմաստությունը բավական չէր, որ հասկանար, թե ինչ ուղղության պետք է հետևեր: Նա ընտրեց խոնարհ լինել Աստծո առաջին:

Հետո Ջոզեֆն ընտրեց հարցնել Աստծուց: Նա աղոթեց հավատքով, որ Աստված կպատասխաներ: Պատասխանը եկավ, երբ նա պատանի էր: Այդ ուղերձները եկան, երբ նա կարիք ուներ իմանալու, թե ինչպես Աստված կկամենար, որ Իր Եկեղեցին հաստատվեր: Սուրբ Հոգին մխիթարում էր և առաջնորդում նրան իր կյանքի ընթացքում:

Նա հնազանդվում էր ոգեշնչմանը, երբ դժվար էր լինում: Օրինակ, նա ստացավ ուղղորդում Տասներկուսին Անգլիա ուղարկել, երբ նրանց կարիքն ամենաշատն ուներ: Նա ուղարկեց նրանց:

Նա ընդունեց ուղղում և սփոփանք Հոգուց, երբբանտարկված էր, և Սրբերը ահավոր ճնշված էին: Եվ նա հնազանդվեց, երբ Քարթիջի ճանապարհը բռնեց, նույնիսկ, գիտենալով, որ [գնում էր] մահացու վտանգին դեմ հանդիման:

Մարգարե Ջոզեֆ Սմիթն օրինակ է հանդիսացել մեզ համար, թե ինչպես ստանալ շարունակվող հոգևոր ուղղորդում և սփոփանք Սուրբ Հոգու միջոցով:

Առաջին ընտրությունը, որ նա կատարեց, Աստծո առաջին խոնարհ լինելն էր:

Երկրորդը՝ Տեր Հիսուս Քրիստոսին հավատքով աղոթելն էր:

Երրորդը՝ ճշգրտորեն հնազանդվելն էր: Հնազանդությունը կարող է նշանակել արագ շարժվել: Այն կարող է նշանակել նախապատրաստվել: Կամ այն կարող է նշանակել համբերությամբ սպասել հետագա ոգեշնչման:

Եվ չորրորդը՝ աղոթելն է, իմանալու համար ուրիշների կարիքներն

ու սրտերը և ինչպես օգնել նրանց Տիրոջ համար: Ջոզեֆն աղոթեց վշտի մեջ գտնվող Սրբերի համար, երբ բանտում էր: Ես հնարավորություն եմ ունեցել դիտարկել Աստծո մարգարեներին, երբ նրանք աղոթում էին, ոգեշնչում խնդրում, ուղղություն ստանում և ըստ դրա գործում:

Ես տեսել եմ, թե որքան հաճախ նրանց աղոթքները մարդկանց մասին էին, ում նրանք սիրում էին և ծառայում: Ուրիշների համար նրանց մտահոգությունը, թվում էր, բացում էր նրանց սրտերը ոգեշնչում ստանալու համար: Դա կարող է ճիշտ լինել ձեզ համար:

Ոգեշնչումը կօգնի մեզ ծառայել ուրիշներին Տիրոջ համար: Դուք տեսել եք դա ձեր փորձառությամբ, ինչպես ես: Մի անգամ, երբ կինս որոշ ժամանակ լարվածություն ուներ անձնական կյանքում, իմ եպիսկոպոսն ասաց ինձ. «Ամեն անգամ, երբ լսում եմ, որ ծխում ինչ որ մեկը օգնության կարիք ունի, ևգնում եմ այնտեղ օգնելու, գտնում եմ, որ ձեր կինը ինձանից առաջ եղել է այնտեղ: Ինչպե՞ս է նա կարողանում անել դա»:

Նա նման է բոլորին, ովքեր մեծ ծառայողներ են Տիրոջ արքայությունում: Թվում է, նրանք անում են երկու բան: Մեծ ծառայողները որակավորվում են Սուրբ Հոգու համար՝ որպես գրեթե մշտական ուղեկից: Եվ նրանք որակավորվում են գթության պարգևի համար, որը Քրիստոսի մաքուր սերն է: Այդ պարգևները աճում են նրանց մեջ, քանի որ նրանք օգտագործում են դրանք Տիրոջը ծառայելու սիրուց մղված:

Ուղին, որով աղոթքը, ոգեշնչումը և Տիրոջ սերը գործում են միասին մեր ծառայության մեջ, ինձ համար նկարագրվում է կատարյալ ձևով այս խոսքերում.

«Եթե իմ անունովը մի բան խնդրէք, ես կանեմ:

Եթէ ինձ սիրում էք,իմ պատուիրանքները պահեցէք:

Եւ ես Հօրը կ'աղաչեմ եւ ուրիշ Մխիթարիչ կ'տայ ձեզ. որ մնայ ձեզ հետ յաւիտեան:

Ճշմարտութեան Հոգին, որին աշխարհքս կարող չէ ընդունել. որ չէ տեսնում նորան. եւ ոչ. էլ ճանաչում նորան. բայց դուք նորան ճանաչում էք, որովհետեւ ձեզ մօտ է մնում եւ ձեզ հետ կ'լինի:

Ձեզ որբ չեմ թողիլ. կգամ ձեզ մոտ:

Մի փոքր ժամանակ էլ, եւ աշխարհքն էլ չի տեսնիլ ինձ, բայց դուք կտեսնեք ինձ. Որովհետեւ ես կենդանի եմ, եւ դուք կենդանի կլինիք:

Այն օրը դուք կճանաչէք, որ ես իմ Հօր մէջ եմ, եւ դուք ինձանում, եւ ես ձեզանում:

Ով որ իմ պատուիրանքներն ունի եւ նորանց պահում է, նա է ինձ սիրողը. եւ ինձ սիրողն իմ Հօրիցը կսիրուի. եւ ես կսիրեմ նորան, եւ ինձ կյայտնեմ նորան» (Հովհաննես 14.14–21):

Ես բերում եմ իմ անձնական վկայությունը, որ Հայրն այս պահին տեղյակ է ձեր մասին, ձեր զգացմունքների և ձեր շուրջ գտնվող ամենքի

հոգևոր ու աշխարհիկ կարիքների մասին: Ես բերում եմ վկայություն, որ Հայրը և Որդին ուղարկում են Սուրբ Հոգին բոլորին, ովքեր ունեն այդ պարգևը, խնդրում են այդ օրհնությունը և ձգտում արժանի լինել դրան: Ոչ Հայրը, ոչ Որդին, ոչ էլ Սուրբ Հոգին չեն ներխուժումներ կյանք: Մենք ազատ ենք ընտրության մեջ: Տերն ասել է բոլորին.

«Ահա, Ես դռան առաջին կանգնած եմ եւ թակում եմ. եթէ մէկը լսէ իմ ձայնը եւ դուռը բանայ, կ'մտնեմ նորա մօտ եւ ընթրիք կ'անեմ նորա հետ, եւ նա ինձ հետ:

Ով որ յաղթում է, կտամ նորան, որ ինձ հետ նստի իմ աթոռի վերայ, ինչպէս ես էլ յաղթեցի եւ նստեցի իմ Հոր հետ նորա աթոռի վերայ»:

Ով որ ականջ ունի թող լսէ ինչ որ Հոգին ասում է» (Հայտնություն 3.20–22):

Ես աղոթում եմ իմ ողջ սրտով, որ դուք լսեք Հոգու ձայնը, որն ուղարկվում է ձեզ այնպես առատորեն: Եվ ես աղոթում եմ, որ դուք միշտ բացեք ձեր սրտերը Նրան ընդունելու համար: Եթե մենք ջանասիրաբար պահենք պատվիրանները և խնդրենք հավատքով, պատասխանները կգան Տիրոջ ուրույն ճանապարհով և Նրա ուրույն ժամանակին: Աստված արեց դա պատանի Ջոզեֆ Սմիթի հետ: Նա անում է դա այսօր մեր ապրող մարգարե Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի համար: Նա դրել է ձեզ Աստծո մյուս զավակների ուղու վրա, որպեսզի դուք ծառայեք նրանց Իր համար: Ես գիտեմ այդ՝ ոչ միայն իմ աչքերի տեսածով , այլիմ սրտին ուղղված Հոգու ավելի զորեղ շշուկների միջոցով:

Ես զգացել եմ Հոր և Նրա Սիրելի Որդու սերըԱստծո բոլոր զավակների հանդեպ այս աշխարհում և Իր զավակների հանդեպ՝ հոգևոր աշխարհում: Ես զգացել եմ Սուրբ Հոգու սփոփանքն ու ուղղորդումը: Աղոթում եմ, որ դուք մշտապես ունենաք Հոգին ձեզ հետ ուղեկից ունենալու ուրախությունը: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄ

1. "Abide with Me; 'Tis Eventide," *Hymns,* no. 165.



Նախագահ Դալլին Հ. Օուքս
Առաջին Նախագահության առաջին խորհրդական

Փոքր և հասարակ բաներ

Մենք պետք է հիշենք, որընդհանրապես և որոշակի ժամանակի ընթացքում փոքր թվացող բաները իրականացնում են մեծ բաներ:

I.

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, ձեզ նման, ես խորապես զգացվեցի, կատարելագործվեցի և ոգեշնչվեցի ուղերձներից, երաժշտությունից և միասինանցկացվածայս ժամանակի զգացմունքներից: Համոզված եմ, որ խոսում եմ ձեզ համար՝ արտահայտելով շնորհակալություն մեր եղբայրներին և քույրերին, ովքեր, որպես գործիքներ Տիրոջ ձեռքերում, տվեցին մեզ այս միասնական ժամանակի զորացնող ազդեցությունը:

Երախտապարտ եմԶատիկի կիրակի օրը այս լսարանի համար խոսելու համար: Այսօր մենք միանում ենք մյուս քրիստոնյաների հետ՝ տոնելով Տեր Հիսուս Քրիստոսի Հարությունը: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամների համարՀիսուս Քրիստոսի ճշգրիտ Հարությունը հանդիսանում է մեր հավատքի սյունը:

Քանի որ մենք հավատում ենք Հիսուս Քրիստոսի ճշգրիտ Հարության Աստվածաշնչի և Մորմոնի Գրքի պատմություններին, մենք նաև հավատում ենք բազմաթիվ սուրբգրային ուսմունքներին, որ նմանատիպ հարություն տեղի կունենա բոլոր մահկանացուների հետ, ովքեր երբևէ ապրել են այս երկրի վրա: Այդ հարությունը տալիս է մեզ ինչպես Պետրոս Առաքյալն է կոչել «կենդանի հույս» (Ա Պետրոս 1.3): Այդ կենդանի հույսը մեր համոզմունքն է, որ մահը ոչ թե մեր ինքնության ավարտն է, այլ պարզապես մեր Երկնային Հոր ողորմած ծրագրում Իր զավակների փրկության համար անհրաժեշտ քայլ: Այդ ծրագիրը կոչ է անում անցում կատարել մահկանացու կյանքից դեպի անմահություն:Այդ անցման համար էականը մահվան մայրամուտն է և փառահեղ առավոտը, որը հնարավոր է դառնում մեր Տիրոջ և Փրկիչի Հարության միջոցով, որը մենք տոնում ենք այս Զատիկի Կիրակի օրը:

II.

Մի հրաշալի օրհներգում, որի բառերը գրվել են Էլիզա Ռ. Մնոույի կողմից, մենք երգում ենք.

Որքան մեծ, որքան փառահեղ,
որքան կատարյալ է,
Փրկագնման սքանչելի ծրագիրը,
Ուր կա սեր, զոյթ և արդարություն,
Ներդաշնակությամբ աստվածային:[1]

Այդ աստվածային նախագծի և ներդաշնակությանզարգացման համար, մենք հավաքվում ենք ժողովների, ներառյալ այս համաժողովը՝ միմյանց ուսուցանելու և խրախուսելու համար:

Այս առավոտ զգացի, որ պետք է որպես թեմա օգտագործեմ Մորմոնի գրքում գրված Ալմայի ուսմունքը՝ ուղղվածիր որդի Հելամանին. «Փոքր և հասարակ բաներով են իրականացվում մեծ բաները» (Ալմա 37.6):

Հիսուս Քրիստոսի ավետարանում մեզ ուսուցանվում են բազմաթիվ փոքր և հասարակ բաներ: Մենք պետք է հիշենք, որ ընդհանրապես որոշակի ժամանակի ընթացքում այդ փոքր թվացող բաները իրականացնում են մեծ բաներ: Այս թեմայի վերաբերյալ Բարձրագույն Իշխանավորների և այլ հարգված ուսուցիչների կողմից եղել են բազմաթիվ ելույթներ: Թեման այնքան կարևոր է, որ զգում եմ, որ դրա մասին կրկին պետք է խոսվի:

Ես հիշեցի, թե ինչ ուժ ունենփոքր և հասարակ բաները ժամանակի ընթացքում, այն բանի միջոցով, որը տեսա այս առավոտ զբոսանքի ժամանակ: Ահա նկարը, որը ես լուսանկարեցի: Հաստ և ամուր բետոնե մայթը ճաքճքվում է: Միթե՞ դա ինչ-որ մեծ և հզոր հարվածի արդյունքում է եղել: Ոչ, այս ճաքն առաջացել է հարակից ծառի արմատներից մեկի դուրս եկող դանդաղ, փոքր աճից: Ահա նմանատիպ մի օրինակ, որը ես տեսամեկ այլ փողոցում:

Հրող ուժը, որը ճեղքել է այդ ծանր բետոնե մայթերը, խիստ փոքր էր ամեն օր կամ նույնիսկ ամեն ամիս չափելու համար, բայց դրա ազդեցությունը ժամանակի ընթացքում աներևակայելիորեն հզոր էր:

Այդպես է ժամանակի ընթացքում փոքր և հասարակ բաների հզոր ազդեցությունը, որոնք ուսուցանվում են սուրբ գրություններում և ապրող մարգարեների կողմից: Մտածեք սուրբ գրությունների ուսումնասիրության մասին, որոնք մեզ սովորեցրել էին կիրառել մեր ամենօրյա կյանքում: Կամ մտածեք անհատական աղոթքների և ընտանեկան ծնկաչոք աղոթքների մասին, որոնք կանոնավորապես գործադրվում ենհավատարիմ Վերջին Օրերի Սրբերի կողմից: Մտածեք սեմինարիայի կամ ինստիտուտի դասերին երիտասարդ չափահասների հաճախելու մասին: Չնայած

այս գործընթացներից յուրաքանչյուրը կարող է թվալ փոքր և հասարակ, ժամանակի ընթացքում դրանք կարող են առաջացնել հզոր հոգևոր վերելքներ և աճ: Սա տեղի է ունենում, որովհետև այս փոքր և հասարակ բաներից յուրաքանչյուրը հրավիրում է Սուրբ Հոգու՝ Վկայողի ընկերակցությունը, ով լուսավորում է մեզ և առաջնորդում մեզ դեպի ճշմարտություն, ինչպես Նախագահ Այրինգը բացատրեց:

Մեկ այլ հոգևոր վերելքի և աճի աղբյուր է, նույնիսկ փոքր թվացող օրինազանցություններից ապաշխարության շարունակվող գործընթացը: Մեր անձնական ոգեշնչմամբ ինքնագնահատումները կարող են օգնել մեզ տեսնել, թե ինչպես ենք պակաս գտնվել և ինչպես կարող ենք ավելի լավ գործել: Այդպիսի ապաշխարությունը պետք է նախորդի մեր ամենշաբաթյա հաղորդությունը ճաշակելուն: «Արդյո՞ք գործել եմ որևէ բարիք» օրհներգում որոշ թեմաներ առաջարկվում են ապաշխարության այս գործընթացում մտածելու համար:

Արդյո՞ք արել եմ այսօր բարի գործ աշխարհում՝
Կարիքավոր մարդու օգնել,
Տխուր սիրտ ուիուիել, մեկին ուրախացրել:
Եթե ոչ, ուրեմն, իսկապես ձախողվել եմ:
Արդյո՞ք բեռը մեկի թեթև եմ դարձրել,
Քանզի կամեցել եմ կիսվել:
Արդյո՞ք հիվանդ, հոգնած մարդու եմ ես օգնել,
Երբ իմ կարիքն ունեին, արդյոք այնտե՞ղ էի ես:[2]

Իհարկե սրանք փոքր բաներ են, բայց անշուշտ լավ օրինակներ են այն բաների, որոնք Ալման ուսուցանեց իր որդի Հելամանին. «Եվ Տեր Աստված գործում է այս միջոցներով, որպեսզի իրականացնի իր մեծ և հավերժական նպատակները և խիստ փոքր միջոցներով է Տերը . . . իրականացնում բազում հոգիների փրկությունը» (Ալմա 37.7):

Նախագահ Սթիվեն Ք. Ուիլրայթը ելույթ ունեցավ Բրիգամ Յանգի Համալսարանում՝ Հավայիում, Ալմայի ուսմունքի այս ոգեշնչված նկարագրությամբ. «Ալման հաստատում էիր որդուն, որձևանմուշը, որին իսկապես հետևում է Տերը, երբմենք հավատք ենք գործադրում Իր հանդեպ և հետևում Նրա խորհրդին փոքր և հասարակ բաներում, այն է, որ Նա օրհնում է մեզ փոքր ամենօրյա հրաշքներով, իսկ ժամանակի ընթացքում՝ հրաշալի գործերով»:[3]

Նախագահ Հովարդ Վ. Հանթերն ուսուցանել է, որ «հաճախ սովորական գործերի կատարումն է, որ դրական մեծ ազդեցություն է ունենում ուրիշների կյանքի վրա, համեմատած այն բաների հետ, որոնքայնքան հաճախ աշխարհը կապում է մեծության հետ։[4]

Այս նույն սկզբունքի մի համոզիչ աշխարհիկ ուսմունք տրվել է Ինդիանայի Սենատոր Դան Քոութսի կողմից, ով գրել է. «Միակ նախապատրաստությունը այն մեկ խորիմաստ որոշման համար, որը կարող է փոխել կյանքը կամ նույնիսկ ազգին, այն հարյուրավոր և հազարավոր կիսագիտակցված, ինքնորոշող, անկարևոր թվացող որոշումներն էին, որոնք ընդունվել էին հոգու խորքում»։[5]

Այդ «անկարևոր թվացող» անձնական որոշումները ներառում են այն, թե ինչպես ենք օգտագործում մեր ժամանակը, ինչ ենք դիտում հեռուստացույցով և համացանցում, ինչ ենք կարդում, արվեստը և երաժշտությունը, որով շրջապատում ենք մեզ աշխատավայրում և տանը, ինչի ենք ձգտումզվարճության համար, և ինչպես ենք կիրառում ազնիվ և հավատարիմ լինելու մեր պարտավորությունը։ Մեկ այլ թվացյալ փոքր և հասարակ բան էքաղաքավարի և կենսախինդ լինելը մեր անձնական փոխհարաբերություններում։

Այս ցանկալի փոքր և հասարակ բաներից ոչ մեկը չի բարձրացնի մեզ դեպի մեծ բաներ, մինչև դրանք հետևողականորեն և շարունակաբար չգործադրվեն։ Նախագահ Բրիգամ Յանգն ասել է. «Մեր կյանքը բաղկացած է փոքր, հասարակ հանգամանքներից, որոնք մեծ նշանակություն ունեն, երբ ի մի են բերվում և ամփոփում տղամարդու կամ կնոջ ողջ կյանքը»։[6]

Մենք շրջապատված ենք լրատվության ազդեցություններով և մշակույթիվատթարացմամբ, որը մեզ կտանի հոսանքն ի վար մեր արժեքներում, եթե մենք անընդհատ չդիմադրենք։ Որպեսզի շարժվենք հոսանքն ի վեր՝ դեպի մեր հավերժական նպատակը, մենք պետք է անընդհատ շարունակենք թիավարել։ Օգնում է, երբ մենք մի թիմի մասն ենք

կազմում, ովքեր միասին են թիավարում, ինչպես թիավարող աշխատակազմը գործի մեջ։ Այդ օրինակն ավելի հեռուն տարածելով՝ մշակութային հոսանքներն այնքան ուժեղ են, որ եթե երբևէ դադարում ենք թիավարելը, մենք տարվում ենք հոսանքն ի վար՝ դեպի մի վայր, որին մենք չենք ձգտում, բայց որն անխուսափելի է դառնում, եթե մենքանընդհատջանք չենք թափում առաջ շարժվել։

Մի թվացյալ փոքր իրադարձության մասին պատմելուց հետո, որը մեծ հետևանքներ ունեցավ, Նեփին գրել է. «Եվ այսպիսով, մենք տեսնում ենք, որ փոքր միջոցներով Տերը կարող է առաջ բերել մեծ բաներ» (1 Նեփի 16.29)։ Հին Կտակարանը պարունակում է սրա վերաբերյալ մի հիշարժան օրինակ։ Այնտեղ մենք կարդում ենք, թե ինչպես իսրայելացիները պատուհասվեցին կիզող օձերով։ Շատ մարդիկ մահացան նրանց խայթոցներից (տես Թվոց 21.6)։ Երբ Մովսեսն աղոթեց օգնության համար, նա ոգեշնչվեց «պղնձի օձ շինել եւ նորան դնել մի ձողի վերայ»։ Այնուհետև, «եթե ով որ կծուի, թող նորան մտիկ տայ, եւ կապրէ» (հատված 9)։ Այդպիսի փոքրիկ բան և այդպիսի հրաշագործ արդյունք։ Այնուամենայնիվ, երբ Նեփին ուսուցանում էր, բացատրեց այս օրինակը նրանց, ովքեր ապստամբել էին Տիրոջ դեմ, նույնիսկ, երբ Տերը պատրաստել էր մի պարզ ուղի,

որով նրանք կարող էին բժշկվել. «միջոցի պարզության կամ հեշտության պատճառով եղան շատերը, որ կործանվեցին» (1 Նեփի 17.41):

Այդ օրինակը և այդ ուսուցումը հիշեցնում է մեզ, որ եղանակի պարզությունը կամ պատվիրված առաջադրանքի հեշտությունը չի կարող նշանակել, որ մեր արդար ցանկությանը հասնելն անկարևոր է:

Նմանապես, նույնիսկ անհնազանդության փոքրիկ քայլերը կամ արդար գործառույթներին հետևելու փոքրիկ ձախողումները կարող են քաշել մեզ վար՝ դեպի մի արդյունքի, որի մասին մեզ նախազգուշացվել է խուսափել: Իմաստության Խոսքը սրա մի օրինակն է: Հավանաբար մեկ գլանակի,մի բաժակ ալկոհոլի կամ թմրադեղի մեկ դոզայի ազդեցությունը չի կարող չափվել: Բայց ժամանակի ընթացքում ազդեցությունը հզորանում է և կարող է անդառնալի լինել: Հիշեք մայթի ճաքը, որը պայմանավորված էր ծառի արմատի աստիճանական փոքր տարածումով: Մի բան հաստատ է, որևէ բանի օգտագործումը, որը կարող է հակում առաջացնող դառնալ, ինչպես թմրադեղերը, որոնք ախտահարում են մեր մարմինները կամ պոռնոգրաֆիկ նյութերը, որոնք այլասերում են մեր մտքերը, լիովին հնարավոր է խուսափել, եթե մենք երբեք չճաշակենք առաջին անգամ, նույնիսկ մեկ անգամ:

Շատ տարիներ առաջ Նախագահ Մ. Ռասսել Բալլարդը նկարագրել է գերագույն համաժողովի ունկնդիրներին «ինչպես փոքր և սովորական բաները կարող են բացասական և կործանարար ազդեցություն ունենալ մարդու փրկության համար»: Նա ուսուցանել է. «Մանրաթելերի նման, որոնք ստեղծում են մանվածք, հետո հյուսք և վերջապես պարան, այս փոքր բաները միմյանց հետ միացված կարող են դառնալ խիստ ուժեղ՝ այն կտրելու համար: Մենք պետք է միշտ գիտակցենք, որ փոքր և հասարակ բաները կարող են հոգևորը կառուցելու ուժ ունենալ»,- ասել է նա: Միևնույն ժամանակ, մենք պետք է տեղյակ լինենք, որ սատանան կօգտագործիփոքր և հասարակ բաներ՝ մեզ հուսահատության և թշվառության մատնելու համար»:[7]

Նախագահ Ուիլրայթը տվել է նմանատիպ զգուշացում իր ԲՅՀ–Հավայիի ունկնդիրներին. «Փոքր և հասարակ բաներ անելիս ձախողվելն է, որ հավատքը տատանում է, հրաշքները դադարում են և առաջընթացը դեպի Տերը և Նրա արքայությունը սկզբում հետաձգվում է, իսկ հետո սկսվում է խճճվել, քանի որ Աստծո արքայության հանդեպ ձգտումը փոխարինվում է ավելի ժամանակավոր զբաղմունքներով և աշխարհիկ հավակնություններով»:[8]

Որպեսզի պաշտպանվենք կուտակվող բացասական ազդեցություններից, որոնք կործանարար են մեր հոգևոր առաջընթացի համար, մենք պետք է հետևենք փոքր և հասարակ բաների հոգևոր ձևանմուշին: Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը նկարագրել է այս սկզբունքը ԲՅՀ կանանց մի համաժողովում. «Մենք շատ բան կարող ենք սովորել այդ հոգևոր ձևանմուշի բնույթի և կարևորության մասին . . . հողը ոռոգելու շատ դանդաղ կաթիլային եղանակից՝ ի հակադրություն հեղեղման կամ ցողման ջրի մեծ քանակություններին, որտեղ դա գուցե անհրաժեշտ չէ:

Նա բացատրել է. «Ջրի հաստատուն կաթիլները ներծծվում են հողի խորքերը և ապահովում բարձր խոնավության մակարդակ հողում, որի շնորհիվ բույսերը կարող են փթթել: Նույն ձևով, եթե դուք և ես կենտրոնացած ենք և հաճախ ենք ստանում հոգևոր սնուցման հաստատուն կաթիլներ, ապա ավետարանի արմատները կարող են ներթափանցել մեր հոգու խորքերը, կարող են ամուր հաստատվել և հիմնավորվել և կարող են առաջացնել արտասովոր և համեղ պտուղ:

Շարունակելով, նա ասել է. «Փոքր և հասարակ բաների հոգևոր ձևանմուշն առաջ է բերում մեծ բաներ՝ առաջացնում հաստատունություն և անսասանություն, խորացնում նվիրվածությունն ու ավելի լիարժեք դարձը դեպի Տեր Հիսուս Քրիստոս և Նրա ավետարանը:»[9]

Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է այս սկզբունքը խոսքերով, որոնք այժմ ներառված են Վարդապետություն և Ուխտերում. «Թող ոչ ոքանչաև չհամարի դրանք, քանզի սրբերին վերաբերող շատ բաներ կան . . . որոնք կախված են այդ բաներից» (ՎևՈւ 123.15):

Եկեղեցին Միսսուրիում հիմնադրելու ամենավաղ փորձերի հետ կապված, Տերը խորհուրդ տվեց համբերել, քանի որ «բոլոր բաները պետք է լինեն իրենց ժամանակին» (ՎևՈւ 64.32): «Ուստի, մի ձանձրացեք բարին գործելուց, քանզի դուք դնում եք հիմքը մի մեծ գործի: Փոքր բաներից է առաջանում այն, ինչը մեծ է» (ՎևՈւ 64.33):

Ես հավատում եմ, մենք բոլորս կամենում ենք հետևել «ուխտի արահետի վրա» առաջ մղվելու Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի մարտակոչին»:[10] Այդպես անելու մեր պարտավորությունն ուժեղանում է՝ հետևողականորեն հետևելով «փոքր բաներին», որոնք ուսուցանվում են մեզ՝ Հիսուս Քրիստոսի ավետարանի և Նրա Եկեղեցու առաջնորդների կողմից: Ես վկայում եմ Նրա մասին և խնդրում, որ Նրա օրհնությունները լինեն բոլորի վրա, ովքեր ձգտում են մնալ Նրա ուխտի արահետի վրա, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. «Որքան մեծ է իմաստությունն ու սերը» *Լիմներ,* համար 195:
2. «Արդյոք արե՞լ եմ այսօր ես բարիք», *Լիմներ,* 223:
3. Steven C. Wheelwright, “The Power of Small and Simple Things” (Brigham Young University–Hawaii devotional, Aug. 31, 2007), 2, devotional.byuh.edu.
4. *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Հոսպոդ Վ. Հանթեր* (2015), 212:
5. Dan Coats, “America’s Youth: A Crisis of Character,” *Imprimis,* vol. 20, no. 9 (Sept. 1991), 4; see also Elder Wilford Andersen in his column in the *Mesa Tribune,* May 1996.
6. Brigham Young, discourse in Ogden Tabernacle, July 19, 1877, as reported in “Discourse,” *Deseret News,* Oct. 17, 1877, 578.
7. Մ. Ռասսել Բալլարդ. «Փոքր և հասարակ բաներ», *Ensign,* May 1990, 7:
8. Թիվեն Ք. Ուիլռայթ, «Փոքր և հասարակ բաների ուժը,» 3:
9. David A. Bednar, “By Small and Simple Things Are Great Things Brought to Pass” (Brigham Young University Women’s Conference, Apr. 29, 2011), womensconference.byu.edu.
10. Ռասսել Մ. Նելսոն, «Միասին առաջ ընթանալով», *Լիահոնա,* ապրիլ 2018, 7:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

Հայտնություն Եկեղեցու համար, հայտնություն մեր կյանքի համար

Գալիք օրերում, հնարավոր չի լինի հոգևորապես գոյատևել առանց Սուրբ Հոգու առաջնորդության, ուղղորդման, մխիթարող և մշտական ազդեցության։

Ինչպիսի փառահեղ արտոնություն է տոնել Զատիկը ձեզ հետ գերագույն համաժողովի այս կիրակի օրը։ Ոչ մի բան չի կարող լինել ավելի պատշաճ, քան երբևէ տեղի ունեցած ամենակարևոր իրադարձության տարեդարձի նշումը այս երկրագնդի վրա՝ երկրպագելով ամենակարևոր էակին, ով երբևէ քայլել է այս երկրի վրա։Այսպիսով, Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում մենք երկրպագում ենք Նրան, ով սկսեց Իր անսահման Քավությունը Գեթսեմանի պարտեզում։ Նա պատրաստակամ տառապեց մեզանից յուրաքանչյուրի մեղքերի և թուլությունների համար, մի տառապանք, որը ստիպեց Նրան «արյունահոսել ամեն մի ծակոտիից»։[1] Նա խաչվեց Գողգոթայի խաչի վրա[2] և բարձրացավ երրորդ օրը՝ որպես մեր Երկնային Հոր զավակներից առաջին հարություն առած էակ։Ես սիրում եմ Նրան և վկայում եմ, որ Նա ապրում է։ Այդ Նա է, ով առաջնորդում է և ղեկավարում Իր Եկեղեցին։

Առանց մեր Քավիչի անսահման Քավության, մեզանից ոչ ոք հույս չէր ունենա երբևէ վերադառնալ մեր Երկնային Հոր մոտ։ Առանց Նրա Հարության, մահը կլիներ ավարտը։ Մեր Փրկիչի Քավությունը հավերժական կյանքը դարձրեց հնարավորություն, իսկ անմահությունը՝ իրականություն բոլորի համար։

Իր հետևորդներին պարգևած արտասովոր առաքելության նախաղաղության շնորհիվ է, որես և կինս՝ Ռենդին, սփոփանք զգացինք 2018թ. հունվարի 2-ի ուշ ժամին, երբ հեռախոսազանգով մեզ հայտնեցին, որ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը անցել էր վարագույրի միջով։

Ինչպե՞ս ենք կարոտում Նախագահ Մոնսոնին։ Մենք հարգում ենք նրա կյանքն ու ժառանգությունը։ Հոգևոր մի հսկա, ով անջնջելի հետք թողեց բոլոր նրանց վրա, ովքեր գիտեին նրան և Եկեղեցու վրա, որին նա սիրում էր։

2018 թվականի հունվարի 14-ին, կիրակի օրը, Սոլթ Լեյքի Տաճարի վերնասենյակում, Առաջին Նախագահությունը վերակազմավորվեց Տիրոջ կողմից հաստատված պարզ, սակայն սրբազան կարգաձևով։ Ապա երեկվա առավոտյան հանդիսավոր հավաքի ժամանակ Եկեղեցու անդամները ողջ աշխարհով մեկ բարձրացրին իրենց ձեռքերը՝ հաստատելու ավելի վաղ գործողությունը, որը կատարվել էր Առաքյալների կողմից։Ես խոնարհաբար երախտապարտ եմ հաստատող աջակցության համար։

Ես երախտապարտ եմ նաև նրանց համար, ում ուսերին ես կանգնած եմ։Ես արտոնություն եմ ունեցել ծառայել Տասներկու Առաքյալների Քվորումում 34 տարի և անձնապես ճանաչել եմ Եկեղեցու նախկին 16 Նախագահներից 10-ին։Ես շատ բան եմ սովորել նրանցից յուրաքանչյուրից։

Ես նաև շատ պարտական եմ իմ նախնիներին։ Բոլոր իմ ութ մեծ պապերը Եկեղեցու նորադարձներ էին Եվրոպայում։ Այդ քաջարի հոգիներից յուրաքանչյուրը զոհաբերեց ամեն ինչ Սիոն գալու համար։ Սակայն հաջորդ սերունդների իմոչ բոլոր նախնիները մնացին այդպես նվիրված։ Դրա արդյունքում ես չմեծացա ավետարանակենտրոն տանը։

Ես պաշտում էի ծնողներիս։ Նրանք ինձ համար աշխարհ արժեին

և ուսուցանում էին ինձ կարևոր դասեր: Ոչ մի շնորհակալություն չի կարող բավարար լինել այն երջանիկ ընտանեկան կյանքի համար, որ նրանք ստեղծեցին իմ, եղբայրներս և քույրերս համար: Բայց և այնպես, նույնիսկ, երբ փոքր տղա էի, ես գիտեի որ ինձ մոտ ինչ-որ բան պակասում էր: Մի անգամ ես ցատկեցի տրամվայ և գնացի ՎՕՍ գրախանութ՝ Եկեղեցու մասին մի գիրք գտնելու: Ես սիրում եմ սովորել ավետարանի մասին:

Երբ ես սկսեցի հասկանալ Իմաստության Խոսքը, ցանկանում էի, որ ծնողներս ապրեին այդ օրենքով: Այսպիսով, մի օր, երբ շատ երիտասարդ էի, գնացի մեր նկուղը և բետոնե հատակի վրա ջարդեցի լիկյորի բոլոր շշերը: Սպասում էի, որ հայրս կպատժեր ինձ, բայց նա երբևէ մի խոսք իսկ չասաց:

Երբ հասունացա և սկսեցի հասկանալ Երկնային Հոր ծրագրի հիմառահեղությունը, ես հաճախ էի ասում ինքս ինձ. «Ես չեմ ուզում Սուրբ Ծննդյան ևս մեկ նվեր: Ես պարզապես ուզում եմ կնքվել ծնողներիս հետ»: Այդ ցանկալի իրադարձությունը տեղիունեցավ, երբ ծնողներիս 80 տարին լրացավ: Ես չեմ կարող լիովին արտահայտել այն ուրախությունը, որ ես զգացի այդ օրը,[3] և յուրաքանչյուր օր ես զգում եմ նրանց կնքման ներանց հետ իմ կնքման այդ ուրախությունը:

1945 թվականին, երբ ես բժշկական համալսարանում էի, ամուսնացա Դանզել Ուայթի հետ Սոլթ Լեյքի Տաճարում: Աստված մեզ օրհնեց ինը սքանչելի դուստրերով և մեկ թանկագին որդով: Այսօր մեր անընդհատ աճող ընտանիքը իմ կյանքի մեծագույն ուրախություններից է:

2005 թվականին մոտ 60 տարվա ամուսնությունից հետո, իմ սիրելի Դանզելը անսպասելիորեն տուն կանչվեց: Որոշ ժամանակ իմ վիշտը կաշկանդել էր ինձ: Բայց Զատիկի ուղերձը և հարության խոստումը ինձ պահպանում էին:

Ապա Տերը ինձ մոտ բերեց Ուենդի Ուոթսոնին: Մենք ամուսնացանք Սոլթ Լեյքի տաճարում 2006թ. ապրիլի 6-ին: Ինչպե՞ս եմ սիրում նրան: Նա արտասովոր կին է՝ մեծ օրհնություն ինձ համար, մեր ընտանիքի և ողջ եկեղեցու համար:

Այս օրհնություններից յուրաքանչյուրը եկել է որպես Սուրբ Հոգու հուշումներին ձգտելու և ուշադրություն դարձնելու արդյունք: Նախագահ Լորենզո Մնոուն ասել է. «Մա յուրաքանչյուր Վերջին Օրերի Սրբի սքանչելի արտոնությունն է . . . որը մեր իրավունքն է՝ ամեն օր ունենալ Հոգու դրսևորումները մեր կյանքում»:[4]

Եկեղեցու նոր Նախագահի կոչումում կանչվելուց ի վեր,Հոգին անընդհատ տպավորել է իմ մտքում այն, թե Տերը որքան է կամենում հայտնել Իր միտքը և կամքը: Հայտնություն ստանալու արտոնությունը Իր զավակներին Աստծո տված մեծագույն պարգևներից մեկն է:

Սուրբ Հոգու դրսևորումների միջոցով Տերը կօգնի մեզ մեր բոլոր արդար ձգտումներում: Վիրահատարանում ես կանգնել էի մի հիվանդի մոտ, չիմանալով, թե ինչպես կատարել մի աննախադեպ վիրահատություն, երբ զգացի, թե Սուրբ Հոգին ինչպես էր բացատրում այդ մեթոդը իմ մտքում:[5]

Որպեսզի ամրացնեի իմ առաջարկությունը Ուենդիին, ես ասացի նրան. «Եսգիտեմ հայտնության մասին և գիտեմ՝ ինչպես ստանալ»: Ի պատիվ իրեն և իրեն բնորոշ ձևով, նա արդեն փնտրել էր և ստացել անձնական հայտնություն մեր մասին, որը նրան խիզախություն տվեց ասելու՝ այո:

Որպես Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ, ես ամեն օր աղոթում էի հայտնության համար և շնորհակալություն հայտնում Տիրոջն ամեն անգամ, երբ Նա խոսում էր սրտումս և մտքումս:

Պատկերացրեք այդ հրաշքը: Ինչպիսին էլ որ լինի մեր Եկեղեցական կոչումը, մենք կարող ենք աղոթել մեր Երկնային Հորը և ստանալ առաջնորդություն և հրահանգ, նախազգուշացում վտանգներից ու շեղումներից, և հնարավորություն ունենալ իրականացնել այնպիսի բաներ, որոնք մենք պարզապես չէինք կարող անել ինքնուրույն: Եթե մենք իսկապես ստանանք Սուրբ Հոգին և սովորենք զանազանել ու հասկանալ Նրա հուշումները, մենք կառաջնորդվենք մեծ ու փոքր հարցերում:

Երբ վերջերս բախվեցի երկու խորհրդականներ ընտրելու երկյուղալի խնդրին, ես զարմացա, թե

ինչպես էր հնարավոր ընդամենը երկուսին ընտրել տասներկու տղամարդկանցից, որոնց ես սիրում եմ և հարգում:

Քանի որ գիտեմ, որ լավ ոգեշնչումը հիմնված է լավ տեղեկացված լինելու վրա, ես աղոթքով հանդիպեցի յուրաքանչյուր Առաքյալի հետ մեկ առ մեկ:[6] Ապա մեկուսացա տաճարի մի առանձին սենյակում և որոնեցի Տիրոջ կամքը: Ես վկայում եմ, որ Տերը հրահանգեց ինձ ընտրել Նախագահ Դալլին Հ. Օուքսին և Նախագահ Հենրի Բ. Այրինգին՝ ծառայելու որպես իմ խորհրդականներ Առաջին Նախագահությունում:

Նույն ձևով ես վկայում եմ, որ Տերը ոգեշնչեցԵրեց_Գերիթ Վ. Գոնգի և Երեց Ուլիսես Սոարեսի կանչը՝ կարգվելու որպես Իր Առաքյալներ:Մենք ողջունում ենք նրանց այս յուրահատուկ ծառայության եղբայրության մեջ:

Երբ մենք հավաքվում ենք որպես Առաջին Նախագահության և Տասներկուսի Քվորումի Խորհուրդ, մեր ժողովի սենյակները դառնում են հայտնության սենյակներ: Հոգին շոշափելիորեն ներկա է լինում: Երբ մենք գոտեմարտում ենք բարդ խնդիրների հետ, հուզիչ գործընթաց է բացվում, քանի որ յուրաքանչյուր Առաքյալ ազատ արտահայտում է իր մտքերն ու տեսակետը: Չնայած մենք կարող ենք տարբեր լինենք մեր սկզբնական հեռանկարներում, սերը, որ մենք զգում ենք միմյանց հանդեպ, մնայուն է: Մեր միասնությունն օգնում է մեզ տարբերել Տիրոջ կամքը Իր Եկեղեցու համար:

Մեր ժողովներում մեծամասնությունը երբեք չի ղեկավարում: Մենք աղոթքով լսում ենք մեկս մյուսին և խոսում միմյանց հետ, մինչև միավորվում ենք: Այն ժամանակ, երբ լիակատար համաձայնության ենք գալիս, Սուրբ Հոգու միավորող ազդեցությունը ցնցող է: Մենք զգում ենք այն, ինչ Մարգարե Ջոզեֆ Սմիթը գիտեր, երբ ուսուցանում էր. «Զգացումների միավորմամբ մենքզորություն ենք ձեռք բերում Աստծո հետ»:[7] Առաջին Նախագահության կամ Տասներկուսի Քվորումի ոչ մի անդամՏիրոջ Եկեղեցու համար որոշումները երբևէ չի թողնի իր սեփական լավագույն դատողությանը:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, ինչպես կարող ենք դառնալ այն տղամարդիկ և կանայք՝ այն Քրիստոսանման ծառաները, որոնցկարիքը Տերն ունի: Ինչպե՞ս կարող ենք պատասխաններ գտնել այն հարցերին, որոնք շփոթեցնում են մեզ: Եթե Ջոզեֆ Սմիթի աննախադեպ փորձառությունը Սրբազան Պուրակում ուսուցանում է մեզ որևէ բան, ապա դա այն է, որ երկինքները բաց են, և Աստված խոսում է Իր զավակների հետ:

Մարգարե Ջոզեֆ Սմիթը մեզ համար օրինակ սահմանեց, որպեսզի հետևենքմեր հարցերին լուծումներ տալիս: Ելնելով Հակոբոսի խոստումից, որ եթե իմաստության պակաս ունենք, մենք կարող ենք հարցնել Աստծուց,[8] պատանի Ջոզեֆը իր հարցն անմիջապես ներկայացրեց Երկնային Հորը: Նա ձգտեց անձնական հայտնության և նրա ձգտումը բացեց այս վերջին տնտեսությունը:

Նմանապես, ի՞նչ կբացի ձեզ համար ձեր ձգտումը: Ի՞նչ իմաստություն է պակասում ձեզ: Իմանալու կամ հասկանալու ի՞նչ հրատապ կարիք եք զգում դուք: Հետևեք Մարգարե Ջոզեֆի օրինակին: Գտեք մի խաղաղ տեղ, որտեղ կարող եք կանոնավոր գնալ: Խոնարհվեք Աստծո առաջ: Ձեր սիրտը բացեք ձեր Երկնային Հոր առաջ: Դիմեք Նրան պատասխանների և սփոփանքի համար:

Աղոթեք Հիսուս Քրիստոսի անունով ձեր մտահոգությունների, ձեր երկյուղների, ձեր թուլությունների մասին, այո, ձեր սրտի բուն ձգտումների մասին:Իսկ հետո լսեք: Գրեք մտքերը, որոնք ձեր միտքն են գալիս: Գրի առեք ձեր զգացմունքները և հետևեք, որ կատարեք ձեզ հուշված գործողությունները: Երբ կրկնեք այս գործընթացը օրեցօր, ամիս առ ամիս, տարեց տարի, դուք «կաճեք հայտնության սկզբունքի մեջ»:[9]

Միթե՞ Աստված իսկապես *կամենում է* խոսել ձեզ հետ: Այո՛: «Ինչպես մարդը չի կարող պարզել իր չնչին ձեռքը և կանգնեցնել Միսսուրի գետի կայուն ընթացքը կամ շրջել այն դեպի վեր, այնպես էլ հնարավոր չէ խանգարել Ամենազորին՝ երկնքից Վերջին Օրերի Սրբերի գլխին գիտելիքներ հեղել»:[10]

Դուք չպետք է կասկածեք նրա վերաբերյալ, ինչը ճշմարիտ է:[11] Դուք չպետք է կասկածեք նրան, ում կարող եք ապահովությամբ վստահել: Անձնական հայտնության միջոցով դուք կարող եք ստանալ ձեր վկայությունը, որ Մորմոնի Գիրքը Աստծո խոսքն է, որ Ջոզեֆ Սմիթը մարգարե է, և սա Տիրոջ Եկեղեցին է: Անկախ նրանից, թե ինչ կարող են ասել կամ անել մյուսները, ոչ ոք չի կարող երբևէ վերացնել վկայությունը, որը բերվել է ձեր սրտին և մտքին այն մասին, ինչը ճշմարիտ է:

Ես հորդորում եմ ձեզ վեր բարձրանալ ձեր ներկա հոգևոր ունակությունից անձնական հայտնություն ստանալու համար, քանի որ Տերը խոստացել է, որ «եթե [ձգտես], դու կստանաս հայտնություն հայտնության վրա, գիտություն գիտության վրա, որ կարողանաս իմանալ խորհուրդներն ու խաղաղարար բաները,- որոնք բերում են ուրախություն, որոնք բերում են կյանք հավերժական»:[12]

Օ՜, այնքան ավելի շատ բաներ կան, որ Երկնային Հայրը կամենում է, որ դուք իմանաք: Ինչպես Նիլ Ա. Մաքսվելն է ուսուցանել. «Նրանց, ովքեր աչքեր ունեն տեսնելու և ականջներ լսելու, պարզ է, որ Հայրը և Որդին տալիս են տիեզերքի գաղտնիքները»:[13]

Ոչ մի բան այնպես չի բացում երկինքները, ինչպես աճող մաքրության համակցությունը՝ ճշգրիտ հնազանդությունը, անկեղծ որոնումը, Մորմոնի Գրքում Քրիստոսի խոսքերով ամենօրյա սնուցումը,[14] և տաճարային ու ընտանեկան պատմության աշխատանքին կանոնավոր ժամանակ տրամադրելը:

Իհարկե, կարող են լինել ժամանակներ, երբ զգում եք, կարծես, երկինքները փակ են: Բայց ես խոստանում եմ, որ երբ դուք շարունակեք հնազանդ լինել, արտահայտելով երախտագիտություն Տիրոջ տված ամեն օրհնության համար և

երբ համբերությամբ հարգեք Տիրոջ ժամանակացույցը, ձեզ կտրվի գիտելիք և հասկացողություն, որին դուք ձգտում եք: Յուրաքանչյուր օրինությանը, որ Տերն ունի ձեզ համար, նույնիսկ հրաշքներ պիտի հետևեն: Ահա թե ինչ կանի անձնական հայտնությունը ձեզ համար:

Ապագայի հանդեպ ես լավատեսորեն եմ տրամադրված: Այն մեզանից յուրաքանչյուրի համար լցված կլինի առաջընթացով, ներդրում կատարելու և ավետարանը երկրագնդի ամեն անկյուն տանելու հնարավորություններով: Բայց ես նաև պարզամիտ չեմ առաջիկա օրերի վերաբերյալ: Մենք ապրում ենք մի աշխարհում, որը բարդ է և գնալով ավելի հակասական է դառնում: Սոցիալական լրատվամիջոցների առկայությունը և 24-ժամյա շուրջօրյա նորությունները ռմբակոծում են մեզ անողոք հաղորդագրություններով: Եթե պիտիորևէ հույսունենանք անհամար ձայների և մարդկանց փիլիսոփայությունների միջից մաղելճշմարտությունը, մենք պետք է սովորենք հայտնություն ստանալ:

Մեր Փրկիչը և Քավիչը՝ Հիսուս Քրիստոսը, կկատարի Իր հզորագույն գործերից մի քանիսը ներկայիս նԻր գալուստի միջև: Մենք կտեսնենք հրաշագործ նշաններ, որ Հայր Աստված և Նրա Որդի Հիսուս Քրիստոսը նախագահում են այս Եկեղեցու վրա վեհությամբ և փառքով: Բայց գալիք օրերում, հնարավոր չի լինի հոգևորապես գոյատևել առանց Սուրբ Հոգու առաջնորդության, ուղղորդման և մշտապես մխիթարող ազդեցության:

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, աղերսում եմ ձեզ մեծացնել հայտնություն ստանալու ձեր հոգևոր կարողությունը: Թող այս Զատիկի կիրակինվճռորոշ պահ լինի ձեր կյանքում: Ընտրեք կատարել պահանջվող հոգևոր աշխատանքը՝ վայելելով Սուրբ Հոգու պարգևը ավելի հաճախակի և ավելի հստակ լսելով Հոգու ձայնը:

Մորոնիի հետ ես հորդորում եմ ձեզ այս Զատիկի հանգստության օրը, որ դուք «գաք Քրիստոսի մոտ, և կառչած մնաք ամեն բարի



պարգևից»,[15] սկսած Սուրբ Հոգու պարգևից, որը կարող է և կփոխի ձեր կյանքը:

Մենք Հիսուս Քրիստոսի հետևորդներն ենք: Ամենակարևոր ճշմարտությունը, որ Սուրբ Հոգին երբևէ կվկայի ձեզ, այն է, որ Հիսուսը Քրիստոսն *է*, Կենդանի Աստծո Որդին: Նա ապրում է: Նա մեր Բարեխոսն է Հոր մոտ, մեր Օրինակը և մեր Քավիչը: Զատիկի այս կիրակի օրը, մենք նշում ենք Նրա քավիչ զոհաբերության, Նրա իրական Հարության և Նրա աստվածայնության տարեդարձը:

Սա Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով վերականգնված Նրա Եկեղեցին է: Ես այսպես եմ վկայում, ձեզանից յուրաքանչյուրի հանդեպ իմ սիրո արտահայտությամբ, Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 19.18:
2. Տես Ղուկաս 23.33:
3. Տես Ալմա 26.16:
4. *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Լորենզո Սնոու* (2012), 76:
5. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Աղոթքի քաղցր ուժը», *Լիահոնա,* մայիս 2003, 7–8:
6. Տես 3 Նեփի 28.1:
7. Եկեղեցու Նախագահների ուսմունքները. *Ջոզեֆ Սմիթ* (2007), 393–94:
8. Տես Յակոբոս 1.5:
9. *Ուսմունքներ. Ջոզեֆ Սմիթ,* 132:
10. Վարդապետություն և Ուխտեր 121.33:
11. Տես Մորոնի 10.5:
12. Վարդապետություն և Ուխտեր 42.61:
13. Neal A. Maxwell, “Meek and Lowly” (Brigham Young University devotional, Oct. 21, 1986), 9, speeches.byu.edu.
14. Տես 2 Նեփի 32.3:
15. Մորոնի 10.30:

Երեց Գերիթ Վ. Գոնգ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Տեր Քրիստոսն հարյավ այսօր

Սա Զատիկի կիրակին է: Ես ակնածանքով և հանդիսավորությամբ վկայում եմ կենդանի Քրիստոսի մասին, ով մահացել, թաղվել է և երրորդ օրը հարություն է առել:

Սիրելի՛ եղբայրներ և քույրեր, երբ մեր որդիները փոքր էին, ես նրանց քնելուց առաջ հեքիաթներ էի պատմում բիգլ քոթոթների մասին և երգեր երգում, այդ թվում՝ «Տեր Քրիստոսը հարյավ այսօր»:[1] Երբեմն ես փոխում էի խոսքերը. «Այժմ քնելու ժամանակն է, ալելուիա»: Սովորաբար մեր որդիները արագ քնում էին: Կամ, նրանք գիտեին, որ եթե մտածեի, թե քնել են, ես կդադարեի երգել:

Խոսքերը, առնվազն իմ խոսքերը, չեն կարող արտահայտել այն աննկարագրելի զգացմունքները, որ ունեցա, երբ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը սիրալիր վերցրեց իմ ձեռքը իր ձեռքի մեջ, մինչ Սյուզանը իմ կողքին էր, և առաջարկեց այս սրբազան կոչումը Տիրոջից. շունչս կտրվեց, ես դեռ շատ անգամներ արտասվեցի այս մի քանի օրերի ընթացքում:

Այս Զատիկի կիրակի ես ուրախությամբ երգում եմ «Ալելուիա»: Մեր հարություն առած Փրկիչի քավիչ սիրո մասին երգը[2] տոնում է ներդաշնակությունը ուխտերի (որոնք կապում են մեզ Աստծո և միմյանց հետ) և Հիսուս Քրիստոսի Քավության միջև (որն օգնում է մեզ հանել բնական տղամարդուն և կնոջը և հետևել Սուրբ Հոգու հուշումներին[3]):

Մեր ուխտերը և մեր Փրկիչի Քավությունը միասին զորացնում և ազնվացնում են: Միասին դրանք օգնում են մեզ չհանձնվել և շարունակել առաջ գնալ: Միասին դրանք քաղցրացնում են, պահպանում, սրբագործում, քավում:

Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է. «Ոմանց կարող է շատ համարձակ վարդապետություն թվալ այն, ինչի մասին մենք խոսում ենք՝ զորություն, որը գրանցում կամ կապում է երկրի վրա և կապում է երկնքում: Այնուամենայնիվ, աշխարհի բոլոր դարաշրջաններում, երբ էլ որ Տերը քահանայության տնտեսությունը հանձնել է որևէ մարդու, իրական հայտնությամբ, կամ մարդկանց որևէ խմբի, այդ զորությունը միշտ տրվել է»:[4]

Եվ այդպես է դա այսօր: Սրբազան ուխտերը և արարողությունները, որոնք մատչելի չեն որևէ այլ տեղ, տրվում են Տիրոջ 159 սուրբ տներում 43 երկրներում: Խոստացված օրհնությունները գալիս են վերականգնված քահանայության բանալիների, վարդապետության և իշխանության միջոցով, արտահայտելով մեր հավատքը, հնազանդությունը և Սուրբ Հոգու խոստումները՝ տրված մեզ և մեր սերունդներին ժամանակի և հավերժության մեջ:

Բոլոր երկրների, ազգերի և լեզուների պատկանող իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, մեր ամբողջ համաշխարհային եկեղեցում, շնորհակալություն ձեր կենդանի հավատքի, հույսի և գթության ձեր բոլոր քայլերի համար: Շնորհակալություն, որ դառնում եք վերականգնված ավետարանի վկայության և փորձառության հավաքող ուժը:

Ի՛մ սիրելի եղբայրներ և քույրեր, մենք պատկանում ենք միմյանց: Մենք կարող ենք միահյուսվել միասնության և սիրո մեջ,[5] բոլոր բանեերում, և բոլոր տեղերում:[6] Ինչպես Տեր Հիսուս Քրիստոսը հրավիրում է յուրաքանչյուրիս, որտեղ և ինչպիսի հանգամանքներում էլ որ լինենք, խնդրում եմ՝ եկեք և տեսեք:[7]

Այս օրը ես խոնարհաբար գրավ եմ դնում իմ հոգու ողջ կորովը և ունակությունները,[8] ինչպիսին էլ դրանք լինեն կամ դառնան, իմ Փրկիչին, իմ սիրելի Սյուզանին և մեր ընտանիքին, իմ Եղբայրներին և ձեզանից յուրաքանչյուրին՝ իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր:

Ամեն արժանի և հավերժական բան հիմնված է Աստծո՝ մեր սիրող Հավերժական Հոր և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի ու Նրա Քավության կենդանի իրողության վրա, որի մասին վկայում է Սուրբ Հոգին:[9] Սա Զատիկի կիրակին է: Ես ակնածանքով և հանդիսավորությամբ վկայում եմ կենդանի Քրիստոսի մասին, ով մահացել, թաղվել է և երրորդ օրը համբարձվել է երկինք:[10] Նա է Ալֆան և Օմեգան[11]՝ մեզ հետ ամենասկզբից, և մեզ հետ մինչև վերջ:

Ես վկայում եմ վերջին օրերի մարգարեների մասին, սկսած Մարգարե Ջոզեֆ Սմիթից մինչև մեր սիրելի Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը, ում մենք ուրախությամբ սատարում ենք այսօր: Ինչպես մեր Երեխաների Միությունում են երգում. «Հետևեք մարգարեին, նա գիտի ուղին»:[12] Եվ ինչպես մարգարեացել են սուրբ գրքերը, այդ թվում՝ Մորմոնի Գիրքը. ևս մեկ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին, ես վկայում եմ, որ Տիրոջ արքայությունը կրկին հիմնվել է Երկրի վրա, նախապատրաստելով Մեսիայի Երկրորդ Գալուստը:[13] Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. "Christ the Lord Is Risen Today," *Hymns,* no. 200.
2. Տես Ալմա 5.26:
3. Տես Մոսիա 3.19:
4. Վարդապետություն և Ուխտեր 128.9:
5. Մոսիա 18.21:
6. Տես Մոսիա 18.9:
7. Հովհաննես 1.39:
8. Տես 1 Նեփի 15.25:
9. «Դուք ստացել եք Սուրբ Հոգին, որը վկայում է Հոր և Որդու մասին՝ ի կատարումն խոստումի, որը նա արել է, որ, եթե դուք ներս մտնեք այդ ճանապարհով, դուք պիտի ստանաք» (2 Նեփի 31.18):
10. *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* (2007), 49:
11. Տես Վարդապետություն և Ուխտեր 19.1:
12. "Follow the Prophet," *Children's Songbook,* 111.
13. Մորմոնի Գրքի նախաբանը:

Երեց Ուլիսես Սոարես
Տասներկու Առաքյալների Քվորումից

Մարգարեները խոսում են Սուրբ Հոգու զորությամբ

Մարգարեներ ունենալը Իր զավակների հանդեպ Աստծո նշանն է: Նրանք հայտնի են դարձնում Աստծո և Հիսուս Քրիստոսի խոստումներն ու ճշմարիտ էությունը իրենց ժողովրդին:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, անկախ այն բանից, թե որտեղ եք գտնվում, ես կկամենայի արտահայտել իմ անկեղծ ու խորը երախտագիտությունը երեկվա ձեր աջակցության համար: Չնայած եսճարտարախոս չեմ ու ծանրախոս եմ՝ ինչպես Մովսեսն էր, ես սփոփում եմ ինձ նրան ուղղված Տիրոջ խոսքերով.

«Ո՞վ է մարդին բերան տուել. Կամ ո՞վ է անում համրը կամ խուլը կամ աչք ունեցողը կամ կոյրը, չէ՞ որ ես Եհովաս:

Եւ հիմա գնա, եւ ես քո բերանի հետ կլինիմ, եւ քեզ կսովորեցնեմ ինչ որ պիտի խոսես» (Ելից 4.11–12, տես նաև հատված 10):

Ինձ սփոփում է նաև իմ սիրելի կնոջ սերն ու աջակցությունը: Նա միշտ եղել է բարության, սիրո և Տիրոջ հանդեպ լիակատար նվիրվածության օրինակ իմ և իմ ընտանիքի համար: Ես սիրում եմ նրան իմ ողջ սրտով և երախտապարտ եմ այն դրական ազդեցության համար, որը նա ունեցել է մեզ վրա:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, ես ցանկանում եմ վկայել, որ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը Աստծո մարգարեն է Երկրի վրա: Ես երբևէ չեմ տեսել ավելի բարի ու սիրառատ մարդ, քան նա է: Չնայած ես ինձ անհամապատասխան էի զգում այսպիսի սուրբ կոչմանը, նրա խոսքերը և աչքերի քնքուշ արտահայտությունը, երբ նա առաջարկում էր այս պարտականությունը, ինձ պարուրեցին ու լցրին Փրկիչի սիրով: Շնորհակալությո՛ւն, Նախագահ Նելսոն: Ես աջակցում ու սիրում եմ ձեզ:

Մի՞թե հրաշալի օրհնություն չէ մեր ժամանակներում Երկրի վրա ունենալ մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ, ովքեր ձգտում են իմանալ Տիրոջ կամքը և հետևել դրան: Մեզ մխիթարում է այն հանգամանքը, որ մենքգիտենք, որ մենակ չենք աշխարհում՝ չնայած դժվարություններին, որոնց բախվում ենք այսօր: Մարգարեներ ունենալը Իր

զավակների հանդեպ Աստծո նշանն է: Նրանք հայտնի են դարձնում Աստծո և Հիսուս Քրիստոսի խոստումներն ու ճշմարիտ էությունը իրենց ժողովրդին: Ես սովորել եմ դա իմ անձնական փորձառություններից:

Տասնութ տարի առաջ ես և իմ կինը հեռախոսազանգ ստացանք Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստից, ով այդ ժամանակ Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդականն էր: Նա կանչեց մեզ ծառայելու Պորտուգալիայում՝ որպես միսիայի նախագահև ընկերակից: Նա ասաց մեզ, որ մենք ունենիք ընդամենը վեց շաբաթ, նախքան կսկսեինք մեր միսիան: Չնայած մենք մեզ զգում էինք անպատրաստ և ոչ համապատասխան, ընդունեցինք կանչը: Այդ ժամանակ մեր ամենակարևոր մտահոգությունը այդ երկրի վիզա ստանալն էր, քանի որ համաձայն ունեցած փորձառության, մենք գիտեինք, որ գործընթացն ավարտելու համար պահանջվում է վեցից ութ ամիս:

Նախագահ Ֆաուստը հարցրեց, արդյո՞ք մենք հավատում ենք, որ Տերը հրաշք կգործի և մենք կկարողանանք ավելի արագ լուծել վիզայի խնդիրը: Մեր պատասխանը հզոր «այո» էր, և մենք սկսեցինք անմիջապես պատրաստություն տեսնել: Մենք պատրաստեցինք վիզայի համար անհրաժեշտ փաստաթղթերը և հնարավորինս արագ մեր երեք փոքր երեխաների հետ գնացինք հյուպատոսարան: Մի շատ սիրալիր տիկին դիմավորեց մեզ այնտեղ: Մինչ նա նայում էր մեր փաստաթղթերը և ծանոթանում այն գործի հետ, որը մենք պատրաստվում էինք անել Պորտուգալիայում, շրջվեց դեպի մեզ և հարցրեց. «Դուք իրո՞ք պատրաստվում եք օգնել իմ երկրի մարդկանց»: Ես վճռական պատասխանեցի՝ «այս» և բացատրեցի, որ մենք ներկայացնելու ենք Հիսուս Քրիստոսին, վկայելու ենք Նրա և Նրա աստվածային առաքելության մասին աշխարհում: Մենք վերադարձանք այնտեղ չորս շաբաթ անց, ստացանք մեր վիզաները և վեց շաբաթ անց ժամանեցինք միսիայի տարածք, ինչպես Տիրոջ առաքյալն էր խնդրել մեզ:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, ամբողջ սրտով ես վկայում եմ, որ մարգարեները խոսում են Սուրբ Հոգու զորությամբ: Նրանք վկայում են Քրիստոսի և Երկրի վրա Նրա աստվածային առաքելության մասին: Նրանք ներկայացնում են Տիրոջ կամքն ու միտքը,կանչված են ներկայացնելու Նրան և ուսուցանելու մեզ, թե ինչ պետք է անենք, որ վերադառնանք ապրելու Աստծո և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի ներկայության մեջ: Մենք օրհնվում ենք, երբ հավատ ենք գործադրում և հետևում նրանց ուսմունքներին: Երբ հետևում ենք նրանց, մեր կյանքը դառնում է ավելի երջանիկ, մեր դժվարությունները ու խնդիրները պակասում ու դառնում են հեշտ տանելի, իսկ մենք մեր շուրջը ստեղծում ենք հոգևոր սպառազինություն, որը կպահպանի մեզ մեր օրերի թշնամիների հարձակումներից:

Զատիկի այս տոնին ես հանդիսավոր հայտարարում եմ, որ Հիսուս Քրիստոսը հարություն է առել, Նա ապրում է և Նա ղեկավարում է Իր Եկեղեցին Երկրի վրա Իր մարգարեների, տեսանողների և հայտնողների միջոցով: Ես վկայում եմ, որ Նա է աշխարհի Փրկիչն ու Քավիչը և Նրա միջոցով մենք կարող ենք փրկվել ու վեհանալ մեր թանկագին Աստծո ներկայության մեջ: Ես սիրում եմ Նրան, ես երկրպագում եմ Նրան: Ես ցանկանում եմ հետևել Նրան, կատարել Նրա կամքը և նմանվել Նրան: Ես խոնարհաբար ասում եմ այս ամենը մեր Տեր Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

Սպասավորություն

Մենք կիրականացնենք ուրիշների մասին հոգ տանելու և սպասավորելու ավելի նոր, ավելի սուրբ մոտեցում:

Երե՛ց Գոնգ և Երե՛ց Սոարես, շնորհակալություն հավատքի ձեր սրտաբուխ արտահայտությունների համար: Մենք երախտապարտ ենք ձեր և ձեր սիրելի զուգընկերների համար:

Սիրելի՛ եղբայրներ և քույրեր, մենք անընդհատ առաջնորդություն ենք փնտրում Տիրոջից այն մասին, թե ինչպես կարող ենք օգնել մեր անդամներին պահել Աստծո պատվիրանները, հատկապես՝ Աստծուն և մեր մերձավորին սիրելու այդ երկու մեծ պատվիրանները:[1]

Ամիսներ շարունակ մենք ավելի լավ եղանակներ էինք փնտրում մեր ժողովրդի հոգևոր և աշխարհիկ կարիքները սպասավորելու համար:

Մենք որոշում կայացրինք դադարեցնել տնային ուսուցման ու այցելող քույրերի ծրագրերն այն ձևաչափով, որը հայտնի էր մեզ: Դրա փոխարեն, մենք կիրականացնենք ուրիշների մասին հոգ տանելու և սպասավորելու ավելի նոր, ավելի սուրբ մոտեցում: Այդ ջանքերը մենք պարզապես կանվանենք «սպասավորություն»:

Սպասավորության արդյունավետ ջանքերն ի զորու են դարձել քույրերի ներքին պարգևների և քահանայության անզուգական զորության շնորհիվ: Դա անհրաժեշտ է, որպեսզի պաշտպանվենք հակառակորդի խորամանկ հմտություններից:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը և Սփոփող Միության Գերագույն նախագահ Քույր Ջին Բ. Բինգհեմը կբացատրեն, թե ինչպես քահանայության նշանակված եղբայրները և Սփոփող Միության ու Երիտասարդ աղջիկների նշանակված քույրերն այժմ կծառայեն Եկեղեցու անդամներին և հոգ կտանեն նրանց մասին ողջ աշխարհում:

Առաջին Նախագահությունը և Տասներկուսը հաստատում են նրանց ուղերձների իսկությունը: Երախտագիտությամբ ու աղոթքով մենք բացում ենք Եկեղեցու պատմության այս նոր գլուխը: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄ

1. Տես Ղուկաս 10.27:

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

«Լինել նրանց հետ և ամրապնդել նրանց»

Այսօր մենք աղոթում ենք, որ տղամարդիկ և կանայք այս գերագույն համաժողովից հետո լրջորեն պարտավորվեն սրտանց հոգ տանել միմյանց մասին։

Ռալֆ Վալդո Էմերսոնի խոսքերով կյանքի ամենահիշարժան պահերը նրանք են, երբ մենք հայտնության պոռթկում ենք զգում։[1] Նախագահ Նելսոն, չգիտեմ, թե այդպիսի քանի «պոռթկում» դեռ կունենանք այս շաբաթ։ Մեզանից ոմանք թույլ սիրտ ունեն։ Բայց իմ կարծիքով, դուք այդ մասին էլ կարող եք հոգ տանել։ Ինչպիսի՜ մարգարե։

Անցյալ երեկո և այս առավոտյան Նախագահ Նելսոնի կողմից հնչեցրած հրաշալիհայտարարությունների և վկայությունների ոգով ես բերում եմ իմ անձնական վկայությունը, որ այս հայտարարությունները հայտնության օրինակներ են, հայտնության՝ որը ղեկավարել է այս Եկեղեցին ամենասկզբից։ Դրանք ևս ապացույցներ են, որ Տերն արագացնում է Իր աշխատանքը իր ժամանակին։[2]

Այն մարդիկ, ովքեր ցանկանում են ծանոթանալ մանրամասներին, խնդրում եմ իմացեք, որ համաժողովի այս նիստի ավարտից անմիջապես հետո կսկսվի մի գործընթաց, որի շրջանակներում ոչ պարտադիր կերպով նամակ է ուղարկվելու Առաջին Նախագահությունից Եկեղեցու յուրաքանչյուր անդամին, ում էլեկտրոնային հասցեն մենք կունենանք։ Հարցերի և պատասխանների յոթ էջանոց փաստաթուղթ է կցվելու քահանայության և օժանդակ կազմակերպությունների բոլոր ղեկավարների համար։ Ի վերջո, այդ նյութերը հրապարակվում են անմիջապես ministering.lds.org կայքէջում։ «Խնդրեք եւ կտրուի ձեզ. որոնեցէք եւ կգտնէք»։[3]

Այժմ, անդրադառնամ հրաշալի հանձնարարությանը, որը Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը տվել է ինձ և Քույր Ջին Բ. Բինգհեմին։ Եղբայրնե՛ր և քույրե՛ր, երբ քվորումների և օժանդակ կազմակերպությունների աշխատանքը հասունանում է կազմակերպչական առումով, մենք նույնպես պետք է հասունանանք անհատապես, բարձրանալով ցանկացած մեխանիկական, զգացմունքներից զուրկ վարքագծից դեպի Փրկիչի արտահայտած սրտանց աշակերտությունը՝ Նրա երկրային ծառայության ավարտին։ Երբ Նա պատրաստվեց հեռանալ Իր, թերևս, անմեղ և շփոթված հետևորդների փոքր խմբից, Նա չթվարկեց տասնյակ վարչական քայլեր, որոնք նրանք պիտի կատարեին, կամ չհանձնեց զանազան զեկույցներ, որոնք երեք օրինակից պիտի լրացվեին նրանց կողմից։ Ո՛չ, Նա ամփոփեց նրանց հանձնարարությունը մի հիմնական պատվիրանով. «Իրար սիրէք, ինչպէս ես ձեզ սիրեցի . . . Սորանով կգիտենան ամենքը թե իմ աշակետներն եք, եթե իրար վրա սեր ունենաք»։[4]

Ավետարանի այդ իդեալին մոտենալու ջանքերում, քահանայության և Սփոփող Միության այս նոր հայտարարված սպասավորության գաղափարը կներառի նաև հետևյալ տարրերը, որոնցից մի քանիսը Սփոփող Միությունն արդեն հաջողությամբ գործի է դրել։[5]

- Մենք այլևս չենք օգտագործելու տնային և այցելությամբ ուսուցումների լեզուն։ Դա մասամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ սպասավորելու մեր ջանքերից շատերը տներում չեն լինելու, մասամբ էլ՝ այն պատճառով, որ մեր շփման առանցքը չի լինի պատրաստված դաս ուսուցանելը, թեև դասով կարելի է կիսվել, եթե դրա կարիքը կա։ Այս սպասավորության գաղափարի հիմնական նպատակը կլինի, ինչպես ասել են Ալմայի օրերի մարդիկ. «հսկ[ելը] իրենց ժողովրդի վրա և սնուց[ելը] նրանց արդարությանը պատկանող բաներով»։[6]

- Հնարավորության դեպքում, մենք կշարունակենք այցելել տները, սակայն տեղական պայմանները, ինչպես օրինակ, մարդկանց մեծ քանակը, մեծ տարածությունները, անձնական անվտանգությունը և այլ դժվար իրավիճակները, կարող են խոչընդոտել ամեն ամիս յուրաքանչյուր տուն այցելելու հնարավորությանը: Ինչպես տարիներ առաջ խորհուրդ է տվել Առաջին Նախագահությունը, կատարեք լավագույնը ձեր ուժերի սահմաններում:[7] Բացի ժամանակացույցից, որը կազմել եք փաստացի այցելությունների համար, այդ օրացույցին կարող եք ավելացնել հեռախոսազանգերը, գրառումները, տեքստային հաղորդագրությունները, էլեկտրոնային նամակագրությունը, տեսազրույցները, զրույցները Եկեղեցու ժողովների ժամանակ, համատեղ ծառայության ծրագրերը,հասարակական միջոցառումները և սոցիալական ցանցերում առկա բազմաթիվ հնարավորությունները: Այնուամենայնիվ, պետք է շեշտեմ, որ այս ընդարձակ դաշտը չի ներառում այն տեսակի արտահայտությունները, որը վերջերս տեսա ավտոմեքենայի հետևի թափարգելին փակցված: Գրված էր. «Եթե ազդանշանեմ՝ համարիր տնային ուսուցում»: Եղբայրնե՛ր, խնդրում եմ, (քույրերը նման բան չեն անում, ես դիմում եմ Եկեղեցու եղբայրներին), այս ճշգրտումների պայմաններում մենք պետք է շատ ավելի հոգատար և հոգալից լինենք:
- Ավետարանի վրա ավելի շատ հիմնված սպասավորության այս նոր գաղափարով, ես զգում եմ, որ սկսում եք խուճապի մատնվել, երբ մտածում եք հաշվետվությունների մասին: Դե լավ, հանգստացեք, քանի որ չի լինելու ոչ մի հաշվետվություն, առնվազն ամեն ամսվա 31-ի՝ «մեծ դժվարությամբ վերջապես պատրաստվող» հաշվետվությունը: Այստեղ էլ ենք փորձում հասունանալ: Միակ պատրաստվող հաշվետվությունը լինելու է տվյալ եռամսյակում ծխում սպասավորող զուգընկերների հետ ղեկավարների վարած հարցազրույցների թվի վերաբերյալ: Թեև պարզ են հնչում, իմ ընկերներ, այդ հարցազրույցները բացարձակ կարևոր են: Առանց այդ տեղեկությունների եպիսկոպոսը ոչ մի կերպ չի կարող ստանալ անհրաժեշտ պատկերը իր ժողովրդի հոգևոր և նյութական վիճակի մասին: Հիշեք՝ սպասավորող եղբայրները ներկայացնում են եպիսկոպոսությունը և երեցների քվորումի նախագահությունը. նրանք չեն փոխարինում դրանց: Եպիսկոպոսի և քվորումի նախագահի բանալիները այս սպասավորության գաղափարից շատ ավելի վեր են:
- Քանի որ այս հաշվետվությունը տարբերվում է նախկինում ձեր կողմից ներկայացվողներից, թույլ տվեք շեշտել, որ մենք Եկեղեցու գլխավոր վարչությունում կարիք չունենք իմանալու, թե *ինչպես, որտեղ* և *երբ* եք հանդիպում ձեր մարդկանց հետ, մենք միայն ուզում ենք իմանալ, որ դուք դա *անում* եք և որ դուք օրհնում եք նրանց, ինչպես կարող եք:

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, որպես Եկեղեցի մենք ունենք երկնքից տրված հնարավորություն՝ ներկայացնելու «մաքուր կրոնը, որն անարատ է Աստծո առաջ»[8], «կրելու մեկ[ս] մյուսի բեռը, որ դրանք թեթև լինեն» և «մխիթարել նրանց, ովքեր կարիք ունեն մխիթարության»[9], սպասավորելու այրիներին ու հայրազուրկներին, ամուսնացածներին և միայնակներին, ուժեղներին և հուսահատներին, խեղճացածներին և առողջներին, երջանիկներին ու տխուրներին, կարճ ասած՝ բոլորիս, մեզանից յուրաքանչյուրին, քանի որ բոլորս կարիք ունենք ջերմ ընկերություն զգալու և լսելու հավատքի հստակ հայտարարությունը: Այնուամենայնիվ, ես ձեզ նախազգուշացնում եմ՝ նոր նախագիծը, ճկուն գործերը և ավելի քիչ հաշվետվությունները մեր ծառայությունը չեն փոխելու, քանի դեռ մենք դա տեսնում ենք որպես միմյանց մասին հոգատար լինելու հրավեր, ավելի համարձակ, նոր ու սրբացնող, ինչպես քիչ առաջ ասաց Նախագահ Նելսոնը: Երբ բարձրացնում ենք մեր հոգևոր աչքերը՝ սիրո օրենքով ավելի համընդհանուր կերպով ապրելու ուղղությամբ, մենք հարգանքի տուրք ենք մատուցում այն սերունդներին, ովքեր տարիներ շարունակ ծառայել են այդ ձևով:

Թույլ տվեք նշել վերջերս տեղի ունեցած հույսի մի դրսևորման օրինակ, որը կօգնի մարդկանց բազմություններին ավելի լավ ըմբռնել Տիրոջ պատվիրանը՝ «լինել[10] [մեր եղբայրների ու քույրերի] հետ և ամրապնդել [նրանց]»:

Անցյալ հունվարի 14-ին, կիրակի օրը, ժամը 17:00-ից մի փոքր անց, իմ երիտասարդ ընկերներ Բրեթ և Քրիստին Համբլինները զրուցում էին իրենց տանը՝ Տեմպեռում (Արիզոնա)՝ Բրեթը եպիսկոպոսությունում մեկ օրվա ծառայությունից հետո, իսկ Քրիստինը՝հինգ երեխաների հետ և տնային գործերով զբաղված ծանր օրվա վերջում:

Հանկարծ Քրիստինը, ով թվում էր, թե հաջողությամբ հաղթահարել էր կրծքագեղձի քաղցկեղն անցյալ տարի, գիտակցությունը կորցրեց: 911 հեռախոսազանգից հետո ժամանեց արտակարգ իրավիճակների թիմը՝ ապարդյուն փորձելով կենդանացնել նրան: Աղերսելու և աղոթելու հետ մեկտեղ Բրեթը արագորեն ևս երկու հեռախոսազանգ կատարեց. մեկն իր մորը, խնդրելով օգնել պահել երեխաներին, մյուսը՝ Էդվին Փոթերին, իր տնային ուսուցչին: Վերջին զրույցն ընթացավ հետևյալ կերպ.

Էդվինը, տեսնելով զանգողի անունը, ասաց. «Բրե՞թ, ինչ է եղել»:

Բրեթի գրեթե աղաղակող արձագանքն էր. «Ես քո կարիքն ունեմ այստեղ՝ հենց հիմա՛»:

Հաշված րոպեներ անց Բրեթի քահանայության գործընկերը կանգնած էր նրա կողքին, օգնելով երեխաների հետ, ապա եղբայր Համբլինին տանելով հիվանդանոց շտապ օգնության մեքենայի հետևից, որը տեղափոխում էր նրա կնոջը: Այնտեղ, նրա աչքերը փակվելուց 40 րոպե չանցած, բժիշկներն արձանագրեցին Քրիստինի մահը:

Երբ Բրեթը լաց էր լինում, Էդվինը ուղղակի պահել էր նրան իր ձեռքերով և նրա հետ լաց էր լինում՝ երկար, երկար ժամանակ: Այնուհետև, թողնելով Բրեթին այդտեղ հավաքված ընտանիքի մյուս անդամների հետ, Էդվինը վարեց դեպի եպիսկոպոսի տուն, որ պատմի նրան կատարվածի մասին: Հրաշալի եպիսկոպոսը շտապեց հիվանդանոց, իսկ Էդվինը վարեց դեպի Համբլինների տուն: Այնտեղ նա իր կնոջ՝ Շարլոտի հետ, ով նույնպես շտապ եկավ, խաղում էին Համբլինների հինգ այժմ մայրազուրկ երեխաների հետ, որոնցից մեծը 12 տարեկան էր, իսկ փոքրը՝ 3: Նրանք կերակրեցին նրանց երեկոյան, երաժշտական համար մտածեցին փոքրիկների համար և օգնեցին պատրաստվել քնելու:

Հետագայում Բրեթն ինձ ասաց. «Այս պատմության զարմանալի մասն այն չէ, որԷդվինը եկավ, երբ ես զանգեցի: Շտապ օգնության թիմում միշտ այն մարդիկ են, ովքեր պատրաստ են օգնել: Ո՛չ, այս պատմության զարմանալի մասն այն է, որ նա այն մեկն էր, ում մասին ես մտածեցի: Ուրիշ մարդիկ էլ կային շուրջս: Քրիստինը եղբայր և քույր ուներ, ովքեր երեք մղոնից էլ քիչ հեռավորության վրա էին ապրում մեզանից: Մենք հրաշալի եպիսկոպոս ունենք, նա լավագույնն է: Սակայն իմ և Էդվինի հարաբերություններն այնպիսին են, որ բնազդաբար զանգահարեցի նրան, երբ օգնության կարիք ունեի: Եկեղեցին մեզ կառուցվածքային եղանակ է առաջարկում երկրորդ պատվիրանն ավելի լավ պահելու համար՝ սիրել, ծառայել և զարգացնել եղբայրների ու քույրերի հետ մեր փոխհարաբերությունները, այս գործոնները կօգնեն մեզ ավելի մոտենալ Աստծուն»:[11]

Էդվինն այս փորձառության մասին ասաց. «Երեց Հոլլանդ, զավեշտալին այստեղ այն է, որ Բրեթը մեր ընտանիքի տնային ուսուցիչն է եղել այնքան ժամանակ, որքան ես նրանցը: Այդ ժամանակի ընթացքում նա մեզ այցելում էր ավելի շուտ որպես ընկեր, քան հանձնարարություն կատարող: Նա հրաշալի օրինակ է եղել՝ քահանայության ակտիվ և ներգրավված կրողի մարմնավորում: Մենք՝ կինս, մեր տղաները, նրան չենք ընկալում որպես պարտավորված մեկի, որ յուրաքանչյուր ամսվա վերջում ուղերձով այցելում է մեզ: Մենք նրան տեսնում ենք որպես ընկերոջ, ով ապրում է նույն փողոցում և ամեն ինչ կանի մեզ օրհնելու համար: Ես ուրախ եմ, որ կարողացել եմ մի փոքր վարձահատույց լինել նրան իր արածի դիմաց»:[12]

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, ես միանում եմ ձեզ՝ողջունելով ցանկացած տարածքային ուսուցչի, ծխի ուսուցչի, տնային և այցելող ուսուցիչներին, ովքեր մեր ողջ պատմության ընթացքում այդքան հավատարմորեն սիրել և ծառայել են այս կերպ: Այսօր մենք աղոթում ենք, որ տղամարդիկ և կանայք, ինչպես նաև մեր մեծ տարիքի երիտասարդ տղամարդիկ և երիտասարդ կանայք այս գերագույն համաժողովից հետո լրջորեն-պարտավորվեն սրտանց հոգ տանել միմյանց մասին, մղվելով միմիայն Քրիստոսի մաքուր սիրով: Թեև մենք սահմանափակումների և անհամապատասխանության զգացում ունենք, և բոլորս ունենք մարտահրավերներ, այնուամենայնիվ, կարող ենք աշխատել կողք կողքի՝ այգու Տիրոջ հետ,[13] տալով Աստծուն և մեր Հորը մեր օգնող ձեռքը Նրա փայլուն հանձնարարության մեջ՝ պատասխանել աղոթքներին, մխիթարել, սրբել արցունքները և ամրապնդել թուլացած ծնկները:[14] Եթե այդպես անենք, ավելի նման կլինենք Քրիստոսի ճշմարիտ աշակերտներին, ինչպիսին պիտի լինենք: Այս Զատիկի կիրակի օրը, եկեք սիրենք մեկս մյուսին, ինչպես Նա սիրեց մեզ[15], ես աղոթում են Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Ralph Waldo Emerson, *The Conduct of Life* (1860), 268:
2. Տես Վարդապետություն և Ուխտեր 88.73:
3. Ղուկաս 11.9:
4. Հովհաննես 13.34–35:
5. Տես «Շփվեք նրա հետ ցանկացած ժամանակ, ցանկացած վայրում, ցանկացած ձևով», *Լիահոնա,* հուն. 2018թ., 7:
6. Մոսիա 23.18, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 20.53:
7. Տես "Watching Over and Strengthening Members," First Presidency letter, Dec. 10, 2001:
8. Հակոբոս 1.27:
9. Մոսիա 18.8–9:
10. Վարդապետություն և Ուխտեր 20.53:
11. Brett Hamblin, personal correspondence, Feb. 2018:
12. Edwin Potter, personal correspondence, Feb. 2018:
13. Տես Հակոբ 5.70–72:
14. Տես Վարդապետություն և Ուխտեր 81.5:
15. Տես Հովհաննես 15.12:

Ջին Բ. Բինգհեմ
Սփոփող Միության Գերագույն Նախագահ

Սպասավորել Փրկիչի ձևով

Եկեք ցույց տանք մեր երախտագիտությունն ու սերը Աստծո հանդեպ, սիրով ծառայելով մեր հավերժական քույրերին ու եղբայրներին։

Ի՞նչ հրաշալի օրհնություն է՝ ապրել այնպիսի ժամանակ, երբ Աստծո կողմից շարունակական հայտնություններ ենք ստանում։ Անհամբեր սպասելով և ընդունելով «ամեն բաների հաստատվելու ժամանակները»,[1] որոնք գալիս են և գալու են մեր ժամանակների մասին մարգարեացած իրադարձությունների միջոցով, մենք պատրաստվում ենք Փրկիչի Երկրորդ Գալուստին։[2]

Նրա հետ հանդիպմանը պատրաստվելու ավելի լավ եղանակ չկա, քան ձգտել *նմանվել* Նրան և սիրով ծառայել մեկս մյուսին։ Ինչպես Հիսուս Քրիստոսն է ուսուցանել իր հետևորդներին այս ժամանակաշրջանի սկզբում. «Եթե ինձ սիրում ես, ծառայիր ինձ»։[3] Մարդկանց համար կատարվող մեր ծառայությունը աշակերտության և մեր երախտագիտության ու սիրո դրսևորումն է Աստծո և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ։

Երբեմն մենք կարծում ենք, որ պետք է մեծ ու հերոսական գործ կատարենք, որպեսզի «համարվի», որ ծառայել ենք մեր մերձավորներին։ Սակայն ծառայության պարզ գործողությունները կարող են մեծ ազդեցություն ունենալ մեր և ուրիշների վրա։ Ի՞նչ էր անում Փրկիչը։ Քավության և Հարության Նրա գերագույն պարգևների շնորհիվ, որ մենք տոնում ենք այս զեղեցիկ Զատիկի կիրակի օրը, «ոչ ոք չի ունեցել այդպիսի խորը ազդեցություն բոլորի վրա, ովքեր ապրել են, և ովքեր դեռ ապրելու են երկրի վրա»։[4] Բայց Նա նաև ժպտում էր, խոսում, քայլում, լսում, ժամանակ հատկացնում, խրախուսում, ուսուցանում, կերակրում և

ներում։ Նա ծառայել է ընտանիքներին և ընկերներին, հարևաններին և օտարներին, և Նա հրավիրել է ծանոթներին ու սիրելիներին վայելել Իր ավետարանի առատ օրհնությունները։ Ծառայության և սիրո այդ «պարզ» գործերը օրինակ են հանդիսանում, թե ինչպես վարվենք այսօր։

Եթե ծառայելու ձեր ջանքերում արտոնություն ունեք ներկայացնելու Փրկիչին, հարցրեք ինքներդ ձեզ. «Ինչպե՞ս կարող եմ կիսվել ավետարանի լույսով այս անհատի կամ ընտանիքի հետ։ Հոգին ի՞նչ է ոգեշնչում ինձ անել»։

Ծառայությունը կարող է իրականացվել անհատական բազմազան մոտեցումներով։ Այսպիսով, ի՞նչ կարելի է ասել ծառայության մասին։

Ծառայությունն այն է, երբ երեցների քվորումի և Սփոփող Միության նախագահությունները աղոթքով խորհրդակցում են հանձնարարությունների վերաբերյալ։ Ծառայությունն այն է, երբ ղեկավարները պարզապես թղթեր չեն փոխանցում իրար, այլ խորհրդակցում են անհատների և ընտանիքների մասին անհատապես, ապա հանձնարարություններ են տրվում ծառայելու եղբայրներին ու քույրերին։ Ծառայությունը կարող է լինել զբոսանքի գնալով, միասին խաղի երեկոանցկացնելով, օգնելով և միահամուռ ուժերով դա անելով։ Ծառայությունը դրսևորվում է անձնական այցով կամ հեռախոսազրույցով, առցանց շփվելով կամ գրվելով։ Դա կարող է դրսևորվել ծննդյան բացիկ տալով կամ ֆուտբոլային երկրպագությամբ։ Դա կարող է լինել սուրբ գրություններից կամ համաժողովի ելույթներից որևէ հատվածով կիսվելով, որը նշանակալից կլինի տվյալ անհատի համար։ Ծառայությունը դրսևորվում է ավետարանի որևէ հարց քննարկելով կամ վկայությամբ կիսվելով, խաղաղություն և պարզություն հաստատելու նպատակով։ Դա կարող է լինել որևէ մեկի կյանքի մասը դառնալով և հոգ տանելով նրա մասին։ Դա կարող է լինել հարցազրույց անցկացնելով, որի ընթացքում կարիքներն ու արժանիքները կքննարկվեն զգուշորեն ու նրբանկատ կերպով։ Ծառայությունն

այն է, երբ ծխի խորհուրդը կազմակերպում է, թե ինչպես լուծել ավելի մեծ խնդիրը:

Ծառայության այդպիսի դրսևորում զորացրել է մի քրոջ, ով հեռացել էր տնից, երբ ամուսինը տեղափոխվել էր նոր վայր՝ ուսումը շարունակելու: Առանց հեռախոսի, իր խնամքի տակ գտնվող փոքր երեխայի հետ, նոր վայրում նա խուճապահար վիճակում էր՝ ամբողջովին մոլորված ու միայնակ: Առանց նախօրոք տեղեկացնելու, Սփոփող Միության մի քույր եկավ նրա տուն, բերելով մի զույգ փոքր կոշիկ երեխայի համար և մորն ու երեխային իր մեքենայով ուղեկցեց մթերային խանութ: Երախտապարտ քույրը հետագայում ասել է. «Նա իմ փրկարար օղակն էր»:

Ճշմարիտ ծառայության օրինակ է Աֆրիկայից մի քրոջ վարքը, ում հանձնարարվել էր գտնել որևէ քրոջ, ով երկար ժամանակ չէր մասնակցել Եկեղեցու ժողովներին: Երբ նա գնացել էր մի քրոջ տուն, տեսել էր, որ կնոջը ծեծել ու թալանել էին, նա շատ քիչ ուտելիք ուներ և չուներ այնպիսի հագուստ, որը հարմար կլիներ Եկեղեցու կիրակնօրյա ժողովների համար: Քրոջը հանձնարարվել էր ծառայել այդ կնոջը՝ լսողության սարք տանել նրան, խնամել նրա պարտեզը, սուրբ գրություններ տրամադրել և ընկերություն առաջարկել: «Կորած» քույրը շուտով վերադարձել էր Եկեղեցի և այժմ կոչում ունի, քանի որ գիտի, որ սիրված և գնահատված է:

Սփոփող Միության այդ ջանքերը երեցների վերակառուցված քվորումի ջանքերի հետ համատեղ կբերեն միասնություն, որը կարող է զարմանալի արդյունքներ տալ: Ծառայությունը դառնում է մեկ ընդհանուր համակարգված ջանք, իրականացնելով թե՛ քահանայության պարտականությունը՝ «այցելել յուրաքանչյուր անդամի տուն» և «միշտ հսկել եկեղեցու վրա, լինել նրա հետ և ամրապնդել այն»,[5] և թե՛ Սփոփող Միության նպատակը՝ օգնել միմյանց նախապատրաստվել հավերժական կյանքի օրհնություններին:[6] Աշխատելով միասին եպիսկոպոսի ղեկավարության ներքո, երեցների քվորումն ու Սփոփող

Միության նախագահությունները ոգեշնչում կստանան՝ ձգտելով գտնել լավագույն միջոցները յուրաքանչյուր անհատի և ընտանիքի մասին հոգ տանելու գործում:

Թույլ տվեք մի օրինակ բերել: Մի ընտանիքի մոր մոտ ախտորոշել էին քաղցկեղ: Շուտով նա սկսել էր բուժվել, և Սփոփող Միության քույրերն անմիջապես գործի էին անցել, պլանավորելով, թե ինչպես լավագույնս օգնել սնունդով, դեպի բժշկական կենտրոն և տուն նրան տեղափոխել,ով և այլ աջակցություն ցուցաբերել: Նրանք կանոնավ այցելում էին նրան, ուրախ ընկերակցություն ցուցաբերելով: Միևնույն ժամանակ, Մելքիսեդեկյան Քահանայության քվորումը նույնպես գործի էր անցել: Նրանք աշխատանքներ էին կատարել՝ ձևափոխելով ննջասենյակն ու բաղնիքն այնպես, որ հարմարություններ լինեին հիվանդ քրոջ համար: Երիտասարդ տղամարդիկ նույնպես օգնության ձեռք էին մեկնել և աջակցել, մասնակցելովայդ մեծ ջանքերին: Ներգրավվել էին նաև երիտասարդ կանայք. նրանք ամեն օր հաճույքով զբոսանքի էին տանում տանտիրոջ շանը: Ժամանակի ընթացքում ծուխը շարունակում էր ծառայել, ավելացնելով ու հարմարեցնելով՝ ինչ անհրաժեշտ էր: Դա ակնհայտ սիրո աշխատանք էր. յուրաքանչյուր անդամ, նվիրաբերելով իր ժամանակն ու ջանքերը, միասնականհոգ տանելով անհատականեղանակներով, որի արդյունքում օրհնվել էին ոչ միայն տառապող քույրը, այլև նրա ընտանիքի յուրաքանչյուր անդամը:

Չնայած մեծ ջանքերին,քույրն, ի վերջո, չդիմացավ քաղցկեղին և մահացավ: Արդյո՞ք ծուխը թեթևությամբ շունչ քաշեց և համարեց, որ աշխատանքներն ավարտված են: Ո՛չ, երիտասարդ կանայք շարունակեցին ամեն օր շանը զբոսանքի հանել, քահանայության քվորումները շարունակեցին ծառայել հորը և նրա ընտանիքին, իսկ Սփոփող Միության քույրերը շարունակեցին սիրով օգնության հասնել, վերահսկելով կարիքները: Եղբայրնե՛ր և քույրե՛ր, սա է ծառայությունը՝ սա Փրկիչի նման սիրելն է:

Այս ոգեշնչված հայտարարությունների մեկ այլ օրհնությունն այն է, որ հնարավորություն է տրվում 14–18 տարեկան երիտասարդ կանանց մասնակցել սպասավորությանը՝ որպես ընկերակիցներ Սփոփող Միության քույրերին, ինչպես և նույն տարիքի երիտասարդ տղաներին՝ ընկերակցել Մելքիսեդեկյան Քահանայության եղբայրներին: Երիտասարդները կարող են կիսվել իրենց եզակի պարգևներով և աճել հոգևորապես, երբ ծառայում են մեծահասակների հետ միասին փրկության գործում: Ծառայության հանձնարարություններում երիտասարդներին

ընդգրկելով, կավելանա նաև Սփոփող Միության և երեցների քվորումների հնարավորությունները՝ մյուսների մասին հոգ տանելու հարցում, քանի որ կավելանա մասնակիցների քանակը:

Երբ մտածում եմ փայլուն երիտասարդ կանանց մասին, ում ճանաչում եմ,ուրախանում եմ Սփոփող Միության քույրերի համար, ովքեր արտոնություն են ունենալու օրհնվել երիտասարդ կանանց խանդավառությամբ, տաղանդներով և հոգևոր զգայունությամբ, երբ նրանց հետ կողք-կողքի կծառայեն կամ նրանց կողմից կսպասավորվեն: Եվ ես հավասարապես ուրախ եմ երիտասարդ կանանց համար, ովքեր խորհուրդ են ստանալու, ուսուցանվելու են և ամրապնդվելու իրենց Սփոփող Միության քույրերի կողմից: Աստծո արքայության կառուցմանը մասնակցելու այս հնարավորությունը երիտասարդ կանանց հսկայական օգուտ կբերի, օգնելով նրանց ավելի լավ պատրաստվել Եկեղեցում և համայնքում կատարել իրենց դերերը և դառնալ ընտանիքին սատարող անդամ: Ինչպես երեկ ասել է քույր Բոննի Լ. Օսկարսոնը, երիտասարդ կանայք «*ուզում* են ծառայել: Նրանք պետք է իմանան, որ գնահատված են և կարևոր դեր են խաղում փրկության աշխատանքում»:[7]

Իրականում, երիտասարդ կանայք արդեն ծառայում են ուրիշներին առանց հանձնարարության կամ հայտարարելու: Ինձ ծանոթ է մի ընտանիք, ովքեր տնից հարյուրավոր մղոններ հեռու էին տեղափոխվել, որտեղ ոչ-ոքի չէին ճանաչում: Առաջին շաբաթվա ընթացքում իրենց նոր ծխից մի 14-ամյա աղջիկ հայտնվեց նրանց դռան մոտ թխվածքաբլիթների սկուտեղով, ողջունելով նրանց նոր տարածքում: Մայրը, ժպտալով կանգնել էր նրա հետևում, ինչպես ուղեկցող վարորդը՝ աջակցելով դստերը ծառայելու ցանկության հարցում:

Մեկ այլմայր մտահոգված էր մի օր, երբ իր 16-ամյա դուստրը սովորականի պես նույն ժամին տանը չէր: Երբ աղջիկը վերջապես եկավ, մայրը հուզված հարցրեց նրան, թե որտեղ էր նա: 16-ամյա աղջիկը համեստորեն

պատասխանեց, որ ծաղիկ էր տարել մի այրի կնոջ, որն ապրում էր մոտակայքում: Նա նկատել էր, որ տարեց կինը միայնակ է երևում և հուշում էր ստացել այցելել ծեր կնոջը: Նրանք լավ ընկերներ էին դարձել և նրանց շփումը շարունակվեց տարիների ընթացում:

Այս երիտասարդ կանանցից յուրաքանչյուրը և նրանց նման շատերը, նկատել էին մեկի, ով կարիքի մեջ էր, և աշխատել էին օգնել: Երիտասարդ կանայք բնատուր ցանկություն ունեն հոգ տանելու և կիսվելու, ինչը կարող է լավ ուղղորդվել ծառայության միջոցով, որևէ չափահաս քրոջ ընկերակցությամբ:

Անկախ մեր տարիքից, երբ մտածում ենք, թե ինչպես ավելի արդյունավետ ծառայենք, հարց է ծագում. «Ինչի՞ կարիք նա ունի»: Այդ հարցը կապակցելով ծառայելու անկեղծ ցանկության հետ, մենք այնուհետև Հոգով առաջնորդվում ենք անելու այն, ինչը կբարձրացնի ու կամրապնդի անհատին: Ես լսել եմ եղբայրների և քույրերի մասին բազմաթիվ պատմություններ, ովքեր օրհնվել են ներգրավվածության և ողջույնի պարզ վերաբերմունքով եկեղեցում, էլ-փոստով կամ տեքստային հաղորդագրությամբ հետաքրքիր գաղափար ստանալով, անհատական այցով դժվարին ժամանակ, խմբի միջոցառմանը մասնակցելու հրավերով կամ առաջարկ ստանալով՝ օգնելու դժվար իրավիճակում: Միայնակ ծնողները, նորադարձները, ոչ ակտիվ անդամները, այրիները կամ դժվարության մեջ գտնվող երիտասարդները կարող են լրացուցիչ ուշադրության և առաջնահերթ օգնության կարիք ունենալ ծառայող եղբայրների ու քույրերի կողմից: Երեցների քվորումի և Սփոփող Միության նախագահությունների միջև համակարգումը թույլ է տալիս, որ միայն ճիշտ հանձնարարություններ տրվեն:

Ամենից կարևորն այն է, որ իսկական ծառայությունն իրականացվում է մեկ առ մեկ, և դրա շարժառիթը սերն է: Անկեղծ ծառայության արժեքն ու հրաշքը կայանում են նրանում, որ այն իսկապես կյանքեր է փոխում: Երբ մեր սրտերը բաց են և կամենում ենք սիրել ու ընդունել, քաջալերել ու մխիթարել, մեր ծառայության զորությունը անդիմադրելի կլինի: Սիրո շարժառիթով տեղի կունենան հրաշքներ և մենք կգտնենք ուղիներ, որպեսզի բերենք մեր «կորած» քույրերին ու եղբայրներին դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանի ընդունող գիրկը:

Փրկիչը մեր օրինակն է ամեն ինչում, ոչ միայն այն բաներում, որոնք պետք է անենք, այլև նրանում, թե *ինչո՞ւ* պետք է անենք:[8] «Նրա կյանքը երկրի վրա հրավեր էր մեզ՝ ավելի բարձրացնելու մեր տեսադաշտը, մոռանալ մեր սեփական խնդիրները և օգնության հասնել ուրիշներին»:[9] Երբ մենք ամբողջ սրտով հանձն ենք առնում ծառայել մեր քույրերին ու եղբայրներին, մենք օրհնված ենք հոգևոր առումով ավելի զտված դառնալու, ավելի ներդաշնակ Աստծո կամքի հետ և ավելի ունակ հասկանալու Նրա ծրագիրը, օգնելու յուրաքանչյուրին վերադառնալ Նրա մոտ: Մենք ավելի լավ կճանաչենք Նրա օրհնությունները և կձգտենք կիսվել այդ օրհնություններով ուրիշների հետ: Մեր սրտերը մեր ձայների հետ միաձայն կերգեն.

Տեր, եղբորս ես թող սիրեմ,
Ինչպես Դու ինձ սիրում ես:
Թող Քեզանում միշտ ուժ գտնեմ,
Քո ծառան ընդմիշտ լինեմ:
Տեր, եղբորս թող ես սիրեմ,
Տեր, միշտ Քեզ կհետևեմ:[10]

Եկեք ցույց տանք մեր երախտագիտությունն ու սերը Աստծո հանդեպ, սիրով ծառայելով մեր հավերժական քույրերին ու եղբայրներին:[11] Արդյունքը կլինի զգացողության միասնությունը, ինչպիսին հին Ամերիկայի մարդիկ էին վայելում՝ իրենց երկրում Փրկիչի հայտնվելուց 100 տարի անց:

«Եվ եղավ այնպես, որ չկար ոչ մի հակառակություն . . . Աստծո սիրո շնորհիվ, որը բնակվում էր մարդկանց սրտերում:

Եվ չկային նախանձություններ, ոչ էլ պայքարներ, . . . և անկասկած, ավելի երջանիկ ժողովուրդ չէր կարող լինել այն բոլոր ժողովուրդների մեջ, որոնք ստեղծվել էին Աստծո ձեռքով»:[12]

Ուրախությամբ բերում եմ իմ անձնական վկայությունը, որ այս զարմանահրաշ փոփոխությունները ոգեշնչված են Աստծուց, և եթե մենք ընդունենք դրանք կամեցող սրտով, մենք ավելի պատրաստ կլինենք հանդիպելու Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին Իր գալուստի ժամանակ: Մենք ավելի մոտ կլինենք Սիոնի ժողովուրդ դառնալուն և անսահման ուրախություն կունենանք այն մարդկանց հետ, ում մենք օգնել ենք աշակերտության ճանապարհին: Ես աղոթում եմ, որ մենք այդպես անենք, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Գործք 3.19–21:
2. Տես Robert D. Hales, "Preparations for the Restoration and the Second Coming: 'My Hand Shall Be over Thee,'" *Liahona,* Nov. 2005, 88–92:
3. Վարդապետություն և Ուխտեր 42.29:
4. «Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը», *Լիահոնա,* մայիս 2017, շապկի ներսի մասում:
5. Վարդապետություն և Ուխտեր 20.47, 53:
6. Տես *Handbook 2: Administering the Church* (2010), 9.1.1.
7. Բոննի L. Օսկարսոն, «Երիտասարդ կանայք աշխատանքում», *Լիահոնա,* մայիս 2018:
8. Տես Եփեսացիս 5.2:
9. Russell T. Osguthorpe, "What If Love Were Our Only Motive?" (Brigham Young University devotional, Mar. 8, 2011), 7, speeches.byu.edu.
10. "Lord, I Would Follow Thee," *Hymns,* no. 220.
11. Տես Մոսիա 2.17:
12. 4 Նեփի 1.15–16:

Երեց Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Ահա այն մարդը

Նրանք, ովքեր իսկապես գտնում են Մարդուն, գտնում են կյանքի մեծագույն ուրախություններ տանող դուռը և կյանքի ամենադառը հուսահատության բալասանը:

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, սիրելի՛ ընկերներ, ուրախ եմ այսօր ձեզ հետ այս հրաշալի գերագույն համաժողովի շաբաթկիրակի նիստերին ներկա լինելու համար: Ես և Հարիեթը ձեզ հետ միասին ուրախությամբ հաստատեցինք Երեցներ Գոնզին և Սոարեսին և մյուս այլ եղբայրներին ու քույրերին, ովքեր այս գերագույն համաժողովի ժամանակ ստացան կարևոր կոչումներ:

Չնայած ես կարոտում եմ իմ սիրելի ընկեր Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնին, ես սիրում, հաստատում և աջակցում եմ մեր մարգարե և Նախագահ Ռասսել Մ. Նելսոնին և նրա ազնվազարմ խորհրդականներին:

Շնորհակալ եմ և պատիվ ունեմ կրկին սերտորեն աշխատել Տասներկուսի Քվորումի իմ սիրելի ընկերակից Եղբայրների հետ:

Ես խոնարհվում եմ և շատ երջանիկ եմ, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ եմ, որտեղ միլիոնավոր տղամարդիկ, կանայք և երեխաներ պատրաստ են *բարձրացնել իրենց կանգնած տեղերը,* որ դիրքում և կոչման մեջ էլ որ լինեն, և իրենց ողջ սրտով ձգտեն ծառայել Աստծուն ու Նրա զավակներին՝ կառուցելով Աստծո արքայությունը:

Այսօր սուրբ օր է: Զատիկի կիրակի է, և մենք նշում ենք այն փառահեղ առավոտը, երբ մեր Փրկիչը կոտրեց մահվան կապանքները[1] և հաղթեց մահին:

Պատմության ամենամեծ օրը

Վերջերս ես համացանցում հարցում արեցի. «Ո՞ր օրն է ամենաշատը փոխել պատմության ընթացքը»:

Պատասխանները զարմանալի ու տարօրինակ էին, ինչպես նաև՝ խորաթափանց և մտածելու տեղիք տվող: Պատասխանների թվում էր այն օրը, երբ նախապատմական աստերոիդը հարվածեց Յուկատան թերակղզուն, կամ երբ 1440 թվականին Յոհաննես Գուտենբերգն ավարտեց իր տպագրական մեքենան և, իհարկե, 1903 թվականի այն օրը, երբ Ռայթ եղբայրները ցույց տվին աշխարհին, որ մարդն, իսկապես, կարող է թռչել:

Եթե այդ նույն հարցը ձեզ տրվեր, ի՞նչ պատասխան կտայիք դուք:

Ինձ համար պատասխանը հստակ է:

Պատմության ամենակարևոր օրը գտնելու համար մենք պետք է հիշենք մոտ 2000 տարի առաջ Գեթսեմանի այգու այն երեկոն, երբ Հիսուս Քրիստոսը ծնկի իջավ եռանդուն աղոթքով և իրեն փրկագին մատուցեց մեր մեղքերի համար: Այդ մեծ և անսահման զոհաբերության ժամանակ, երբ Հիսուս Քրիստոսը, նույնիսկ Աստված, հոգով և մարմնով նմանը չունեցող տառապանք կրեց և արյունահոսեց ամեն մի ծակոտիից: Կատարյալ սիրուց մղված Նա տվեց ամեն ինչ, որպեսզի մենք կարողանանք ստանալ ամեն ինչ: Նրա աստվածային զոհաբերությունը, որը կարելի է զգալ միայն ողջ սրտով և մտքով, հիշեցնում է մեզ այն մեծ պարտքի երախտագիտության մասին, որը մենք պարտական ենք Քրիստոսին՝ Իր աստվածային պարգևի համար:

Ավելի ուշ՝ այդ գիշեր, Հիսուսը բերվեց կրոնական և քաղաքական իշխանավորների առջև, ովքեր ծաղրեցին Նրան, ծեծեցին Նրան և դատապարտեցին Նրան ամոթալի մահվան: Հոգևարքի մեջ նա կախված էր խաչից, մինչև «կատարվեց»:[2] Նրա անկյանք մարմինը դրվեց վարձու գերեզմանում: Եվ երրորդ օրն առավոտյան Հիսուս Քրիստոսը՝ Ամենակարող Աստծո Որդին, գերեզմանից դուրս եկավ փառահեղ, հարություն առած շքեղությամբ, լույսով և վեհությամբ:

Այո, պատմության ընթացքում բազմաթիվ իրադարձություններ կան, որոնք խորապես ազդել են ազգերի և ժողովուրդների ճակատագրերի վրա: Բայց համախմբեք բոլորին, և դրանք չեն կարող համեմատվել առաջին Զատիկի առավոտյան տեղի ունեցածի կարևորության հետ:

Ի՞նչն է, որ անսահման զոհաբերությունն ու Հիսուս Քրիստոսի Հարությունը դարձնում է պատմության ամենակարևոր իրադարձությունը, ավելի ազդեցիկ, քան աշխարհամարտերը, կործանարար աղետները և կյանք փոխող գիտական հայտնագործությունները:

Հիսուս Քրիստոսի շնորհիվ մենք կրկին կապրենք

Պատասխանը կայանում է երկու մեծ, անհաղթահարելի մարտահրավերների մեջ, որոնց մենք բոլորս հանդիպում ենք:

Առաջինը, մենք բոլորս մեռնում ենք: Անկախ նրանից, թե որքան երիտասարդ եք, գեղեցիկ, առողջ կամ շրջահայաց, մի օր ձեր մարմինը կդառնա անկենդան: Ընկերներն ու ընտանիքը կսգան ձեր կորուստը: Բայց նրանք չեն կարող ձեզ ետ բերել:

Այնուամենայնիվ, Հիսուս Քրիստոսի շնորհիվ ձեր մահը ժամանակավոր է լինելու: Ձեր հոգին մի օր կվերամիավորվի ձեր մարմնի հետ: Այդ հարություն առած մարմինը ենթակա չի լինի մահվան,[3] և դու կապրես հավերժ, ազատ ցավից և ֆիզիկական տառապանքից:[4]

Դա տեղի կունենա Հիսուս Քրիստոսի շնորհիվ, ով իր կյանքը դրեց և կրկին վերցրեց:

Նա արեց դա բոլոր նրանց համար, ովքեր հավատացին Նրան:

Նա արեց դա բոլոր նրանց համար, ովքեր չհավատացին Նրան:

Նա արեց դա նույնիսկ բոլոր նրանց համար, ովքեր ծաղրեցին, անարգեցին և անիծեցին Նրա անունը:[5]

Հիսուս Քրիստոսի շնորհիվ մենք կարող ենք ապրել Աստծո հետ

Երկրորդ, մենք բոլորս մեղք ենք գործել: Մեր մեղքերի պատճառով հավետ կարող էինք ապրել Աստծուց բաժան, քանի որ «ոչ մի անմաքուր բան չի կարող մտնել նրա արքայությունը»:[6]

Արդյունքում յուրաքանչյուր տղամարդ, կին և երեխա չէր կարող վերադառնալ Նրա ներկայություն, այնքան ժամանակ, մինչև Հիսուս Քրիստոսը, անբիծ Գառը, Իր կյանքը որպես փրկագին վճարեր մեր մեղքերի համար: Քանի որ Հիսուսը արդարության կարիք չուներ, Նա կարող էր վճարել մեր պարտքը և բավարարել արդարության պահանջները յուրաքանչյուր հոգու համար: Այդ թվում՝ ինձ և ձեզ:

Հիսուս Քրիստոսը վճարեց մեր մեղքերի գինը:

Բոլոր մեղքերի:

Պատմության այդ ամենակարևոր օրը Հիսուս Քրիստոսը բացեց մահվան դարպասները և մի կողմ դրեց այն խոչընդոտները, որոնք թույլ չէին տալիս մեզ մտնել հավիտենական կյանքի սուրբ և սրբագործված սրահները: Մեր Տիրոջ և Փրկիչի շնորհիվ ես և դուք ստացանք ամենաթանկ և անգնահատելի նվերը և անկախ մեր անցյալից, մենք կարող ենք ապաշխարել ու հետևել այն ճանապարհին, որը տանում է դեպի երկնային լույսը և փառքը՝ շրջապատված Երկնային Հոր հավատարիմ զավակներով:

Ինչո՞ւ ենք մենք ուրախանում:

Ահա, թե ինչ ենք տոնում Զատիկի կիրակի օրը՝ մենք տոնում ենք կյանքը:

Հիսուս Քրիստոսի շնորհիվ մենք կբարձրանանք մահվան հուսահատությունից և մեր սիրելիներին կընդունենք մեր գրկում, մեծ ուրախության և անսահման երախտագիտության արցունքներ թափելով: Հիսուս Քրիստոսի շնորհիվ մենք կապրենք որպես հավերժական էակներ, աշխարհներ առանց վերջի:

Հիսուս Քրիստոսի շնորհիվ մեր մեղքերը ոչ միայն կարելի է ջնջել, դրանք կարելի է մոռանալ:

Մենք կարող ենք մաքրվել և վեհանալ:

Սուրբ:

Սիրելի Փրկիչի շնորհիվ մենք ընդմիշտ կարող ենք խմել այն աղբյուրի ջրից, որը բխում է հավերժական կյանքից:[7] Մենք կարող ենք հավիտյան ապրել մեր հավերժական Թագավորի ապարանքներում, աներևակայելի փառքի և կատարյալ երջանկության մեջ:

Արդյո՞ք մենք «[նայում ենք] այն մարդուն»:

Չնայած այս ամենին, այսօր աշխարհում կան շատ մարդիկ, ովքեր կամ տեղյակ չեն կամ չեն հավատում այն թանկագին պարգևին, որը Հիսուս Քրիստոսը տվել է մեզ: Հնարավոր է, նրանք լսելեն Հիսուս Քրիստոսի մասին և ճանաչում են Նրան որպես պատմական գործչի, բայց նրանք չեն տեսնում, թե ով է նա իրականում:

Երբ մտածում եմ այս մասին, հիշում եմ հռոմեացի նահանգապետ Պոնտացի Պիղատոսի առջև կանգնած Փրկիչին, Նրա մահից ընդամենը մի քանի ժամ առաջ:

Պիղատոսը Հիսուսին նայեց խիստ աշխարհիկ տեսակետից: Պիղատոսն աշխատանք ուներ կատարելու, որը ներառում էր երկու հիմնական առաջադրանքներ՝ հավաքել Հռոմի հարկերը և պահպանել խաղաղություն: Այժմ, հրեական Սինեդրիոնը Հիսուսին բերել էր նրա առաջ, մի մարդ, ով նրանց պնդմամբ խոչընդոտ էր երկուսի համար:[8]

Իր բանտարկյալին հարցաքննելուց հետո Պիղատոսը հայտարարեց. «ոչ մի յանցանք չեմ գտնում նորանում»:[9] Բայց նա զգում էր, որ ստիպված էր ենթարկվել Հիսուսին մեղադրողներին, ուստի Պիղատոսը հիշեցրեց տեղական մի սովորույթ, որը թույլ էր տալիս բանտարկյալներից մեկին ազատ արձակել Զատիկի ժամանակ: Արդյո՞ք նրանք չէին ազատի Հիսուսին՝ տհաճ ավազակ ու մարդասպան Բարաբբայի փոխարեն:[10]

Բայց խռովված ամբոխը պահանջեց, որ Պիղատոսն ազատ արձակի Բարաբբային և խաչի Հիսուսին:

«Ինչո՞ւ»: Հարցրեց Պիղատոսը: «Ի՞նչ չար բան է արել»:

Բայց նրանք ավելի բարձր բացականչեցին: «Խաչի նրան»:[11]

Փորձելով վերջին անգամ բավարարել ամբոխին, Պիղատոսը հրամայեց իր մարդկանց խարազանել Հիսուսին:[12] Խոշտանգելով Նրան, թողեցին, որ արյունահոսի: Նրանք ծաղրեցին Նրան, փշե պսակ դրեցին Նրա գլխին ու հագցրեցին ծիրանի պատմուճան:[13]

Միգուցե, Պիղատոսը կարծում էր, որ դա կբավարարի ամբոխի արյան ծարավը: Միգուցե, նրանք խղճան այդ մարդուն: Պիղատոսն ասաց. «Ահա, նրան դուրս եմ բերում ձեզ մոտ, որ գիտենաք թե ես ոչ մի հանցանք չեմ գտնում նորանում: . . . Ահա այն մարդը»:[14]

Աստծո Որդին մարմնով կանգնեց Երուսաղեմի ժողովրդի դիմաց:

Նրանք կարող էին տեսնել Հիսուսին, բայց իրականում չէին նկատում Նրան:

Նրանք աչքեր չունեին տեսնելու համար:[15]

Փոխաբերական իմաստով մեզ նույնպես կոչ է արվում «տեսնել մարդուն»: Նրա մասին կարծիքները տարբեր են աշխարհում: Հին և ժամանակակից մարգարեները վկայում են, որ Նա է Աստծո Որդին: Ես նույնպես վկայում եմ դա: Նշանակալից և կարևոր է, որ մենք ինքներս հասկանանք դա: Ուստի, երբ մտածում եք Հիսուս Քրիստոսի կյանքի ու ծառայության մասին, ի՞նչ եք տեսնում:

Նրանք, ովքեր իսկապես գտնում են Մարդուն, գտնում են կյանքի մեծագույն ուրախություններ տանող դուռը և կյանքի ամենադառը հուսահատության բալասանը:

Այնպես որ, երբ շրջապատված եք ցավով և վշտով, նայեք Մարդուն:

Երբ ամայացած կամ մոռացված եք զգում, նայեք Մարդուն:

Երբ դուք հուսահատված եք, լքված եք, կասկածում եք, վիրավորված կամ պարտված եք, նայեք Մարդուն:

Նա կսփոփի ձեզ:

Նա կբուժի ձեզ և իմաստ կտա ձեր կյանքին: Նա կբացի Իր Հոգին և ձեր սիրտը կլցնի մեծ ուրախությամբ:[16]

Նա տալիս է «ուժ հոգնածին և նա կարողություն չունեցողին զորություն է շատացնում»:[17]

Երբ մենք իսկապես նայում ենք Մարդուն, մենք սովորում ենք Նրանից և փորձում մեր կյանքը համապատասխանեցնել Նրա կյանքին: Մենք ապաշխարում ենք և փորձում ենք գտնել մեր էությունը և ամեն օր ավելի շատ մոտենալ Նրան: Մենք վստահում ենք Նրան: Նրա հանդեպ սերը մենք արտահայտում ենք Նրա պատվիրանները և մեր սրբազան ուխտերը պահելով:

Այլ խոսքերով ասած, մենք դառնում ենք Նրա աշակերտները:

Նրա մաքրող լույսը հագեցնում է մեր հոգիները: Նրա շնորհը վեհացնում է մեզ: Մեր բեռները թեթևանում են, մեր խաղաղությունը մեծանում է: Երբ մենք իսկապես նայենք Մարդուն, մենք կունենանք օրհնված ապագայի խոստումը, որը կոգեշնչի և կխրախուսի մեզ՝ կյանքի անհարթությունների միջոցով անցնելիս: Հետ նայելով, մենք կհասկանանք, որ կա աստվածային օրինակ, որ կետերն իսկապես միանում են:[18]

Երբ դուք ընդունեք Նրա զոհաբերությունը, դառնաք Նրա աշակերտը և վերջապես հասնեք ձեր երկրային ճանապարհորդության ավարտին, ի՞նչ կպատահի այս կյանքում ապրած վշտերի հետ:

Դրանք կանհետանան:

Ի՞նչ կպատահի հուսահատությունների, դավաճանությունների, հալածանքների հետ, որոնց դուք բախվել եք:

Կանհետանան:

Ի՞նչ կպատահի ձեր ապրած տառապանքի, կսկիծի, մեղքի, ամոթի և չարչարանքի հետ:

Կանհետանան:

Կմոռացվեն:

Զարմանալի չէ, որ «մենք խոսում ենք Քրիստոսի մասին, մենք հրճվում ենք Քրիստոսով, մենք քարոզում ենք Քրիստոսի մասին, մենք մարգարեանում ենք Քրիստոսի մասին, . . . որ մեր զավակները կարողանան իմանալ, թե ինչ աղբյուրի նրանք կարող են ապավինել իրենց մեղքերի թողության համար»:[19]

Զարմանալի չէ, որ մեր ողջ սրտով ձգտում ենք իսկապես նայել Մարդուն:

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, ես վկայում եմ, որ մարդկության պատմության ամենակարևոր օրն այն օրն էր, երբ Հիսուս Քրիստոսը, Աստծո կենդանի Որդին, հաղթանակ տարավ մահվան և մեղքի վրա՝ Աստծո բոլոր զավակների համար: Եվ ամենակարևոր օրը ձեր կյանքում և իմ կյանքում կլինի այն օրը, երբ մենք սովորենք «տեսնել մարդուն», երբ մենք տեսնենք, թե ով է Նա իսկապես, երբ մեր ողջ սրտով ու մտքով ճաշակենք Նրա քավիչ զորությունը, երբ նորոգված ոգևորությամբ և ուժով պարտավորվենք հետևել Նրան: Թող որ դա լինի մի օր, որը մեր ողջ կյանքում անընդհատ կրկնվի:

Ես թողնում եմ իմ վկայությունը և օրհնությունը, որ երբ «նայենք Մարդուն», մենք գտնենք իմաստ, ուրախություն և խաղաղություն այս երկրային կյանքում և հավերժական կյանք՝ գալիք աշխարհում: Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Մոսիա 15.23:
2. Հովհաննես 19.30:
3. Տես Ալմա 11.45:
4. Տես Հայտնություն 21.4:
5. Տես Ա Կորնթացիս 15.21–23:
6. 3 Նեփի 27.19:
7. Տես Հովհաննես 4.14:
8. Տես Ղուկաս 23.2:
9. Հովհաննես 18.38: Խուսափելով դատել Հիսուսին, Պիղատոսը գործը փորձեց փոխանցել Հերովդես Անթիփասին: Եթե Հերովդեսը, ով մահվան էր դատապարտել Հովհաննես Մկրտիչին (տե՛ Մատթեոս 14.6–11), դատապարտեր Հիսուսին, ապա Պիղատոսը կհաստատեր նրա որոշումը ու կպնդեր, որ խաղաղությունը պահելու համար պարզապես տեղի խնդիր է, որին նա համաձայնվել է: Սակայն Հիսուսը ոչինչ չասաց Հերովդեսին (տե՛ս Ղուկաս 23.6–12), և Հերովդեսը Նրան հետ ուղարկեց Պիղատոսի մոտ:
10. Տես Մարկոս 15.6–7, Հովհաննես 18.39–40: Նոր Կտակարանի մի գիտնական գրում է. «Թվում էր սովորություն էր, որ Զատիկի օրը Հռոմի նահանգապետը հրեական բնակչությունից ազատ էր արձակում որոշ տխրահռչակ բանտարկյալի, ով դատապարտվել էր մահվան» (Alfred Edersheim, *The Life and Times of Jesus the Messiah* [1899], 2:576): *Բարաբբա* նշանակում է «հոր որդին»: Հետաքրքիր է և հեգնական, որ Երուսաղեմի ժողովրդին այս երկու տղամարդկանց միջև ընտրելու հնարավորություն էր տրվել:
11. Տես Մարկոս 15.11–14:
12. Խարազանումն այնքան սարսափելի էր, որ այն կոչում էին «միջանկյալ մահ» (Edersheim, *Jesus the Messiah,* 2:579):
13. Տես Հովհաննես 19.1–3:
14. Հովհաննես 19.4–5:
15. Ավելի վաղ Հիսուսը նկատել էր, որ «Որովհետեւ թանձրացաւ այս ժողովրդի սիրտը, եւ իրանց ականջներովը ծանր լսեցին, եւ իրանց աչքերը խփեցին, մի գուցէ աչքերով տեսնեն՝ եւ ականջներով լսեն՝ եւ սրտով իմանան, եւ ետ դառնան, եւ ես նորանց բժշկեմ»: Հետո, նա քնքշությամբ ասաց իր աշակերտներին. «Բայց երանելի են ձեր աչքերը, որ տեսնում են, եւ ձեր ականջները՝ որ լսում են» (Մատթեոս 13.15–16): Արդյո՞ք թույլ կտանք, որ մեր սրտերը կարծրանան, թե կբացենք մեր աչքերն ու սրտերը, որպեսզի իսկապես կարողանանք տեսնել Մարդուն:
16. Տես Մոսիա 4.20:
17. Եսայիա 40.29:
18. Տես Դիտեր Ֆ. Ուխդորֆ. «Մահկանացու կյանքի արկածը» (երիտասարդ չափահասների համաշխարհային հոգևոր հավաք, հուն. 14, 2018), broadcasts.lds.org:
19. 2 Նեփի 25.26:

Եպիսկոպոս Ջերալդ Քոսե
Նախագահող Եպիսկոպոս

Դա՝ մարդիկ են

Դա դուք եք՝ Տիրոջ հետևորդները, նրանք, ովքեր սիրում և հետևում են Նրան և Նրա անունը իրենց վրա են վերցրել։

Պատրաստվելով Փարիզ Ֆրանսիա հրաշալի տաճարի շինարարությանը, ես մի փորձառություն ունեցա, որը երբեք չեմ մոռանա։ 2010 թվականին, երբ տաճարի զույքն արդեն պատրաստ էր, քաղաքապետը մեզ հրավիրեց հանդիպման՝ Եկեղեցու մասին ավելին իմանալու նպատակով։ Դա շենքի թույլտվության ձեռքբերման համար կարևոր հանդիպում էր։ Մենք մանրակրկիտ պրեզենտացիա էինք պատրաստել, որը ներառում էր Վերջին Օրերի Սուրբ տաճարների մի քանի տպավորիչ նկարներ։ Ես հույս էի փայփայում, որ տաճարների ճարտարապետական գեղեցկությունը համոզիչ կլիներ քաղաքապետի համար, որ աջակցեր մեր ծրագրին։

Ի զարմանս ինձ, քաղաքապետն ասաց, որ մեր պատրաստածը դիտելու փոխարեն նա իր թիմով նախընտրում է անցկացնել սեփական հետազոտությունը՝ պարզելու համար, թե ինչպիսի եկեղեցի ենք մենք։ Հաջորդ ամիս մեզ հրավիրեցին կրկին հանդիպել և լսել քաղաքային խորհրդարանի անդամի զեկույցը։ Այդ կինը կրոնի պատմության պրոֆեսոր էր։ Նա ասաց. «Մենք ուզում էինք հասկանալ, թե ովքեր են ձեր եկեղեցու անդամները։ Նախ, ներկա գտնվեցինք ձեր հաղորդության ժողովներից մեկին։ Մենք նստել էինք աղոթատան հետևի մասում և ուշադիր հետևում էինք անդամներին։ Հետո մենք հանդիպեցինք ցցի տարածքում ապրող ձեր հարևանների հետ և հարցրեցինք նրանց, թե ինչպիսի՞ մարդիկ եք դուք՝ մորմոններդ»։

«Եվ, ո՞րն է ձեր եզրակացությունը»,- հարցրեցի ես մի փոքր անհանգստություն զգալով։ Նա պատասխանեց. «Մենք հայտնաբերեցինք, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին ամենամոտն է Հիսուս Քրիստոսի նախնական Եկեղեցուն, քան մեր իմացած եկեղեցիներից որևէ մեկը»։ Ես գրեթե ուզում էի առարկել, ասելով. «Դա ամբողջովին ճշգրիտ չէ։ Ոչ թե՝ ամենամոտն է, այլ հենց Հիսուս Քրիստոսի Եկեղեցին է, նույն, ճշմարիտ Եկեղեցին»։ Բայց ես զսպեցի ինձ, փոխարենը երախտագիտության լուռ աղոթք ասելով։ Քաղաքապետը մեզ հայտնեց, որ իրենց եզրակացությունների հիման վրա նա և իր թիմի անդամները որևէ առարկություն չունեն իրենց համայնքում տաճարի կառուցման հարցում։



Այսօր, մտածելով այդ հրաշալի փորձառության մասին, ես երախտապարտ եմքաղաքապետի իմաստնության և խորաթափանցության ոգու համար։ Նա գիտեր, որ Եկեղեցին հասկանալու բանալին շենքերի արտաքին տեսքը նայելու, կամ լավ կազմակերպված հաստատության անվան մեջ չէ, այլ դրա միլիոնավոր հավատարիմ անդամների մեջ է, որոնք ամեն օր ձգտում են հետևել Հիսուս Քրիստոսի օրինակին։

Եկեղեցու սահմանումը կարելի է ստանալ Մորմոնի Գրքի մի հատվածից, որտեղ ասվում է. «Եվ նրանք [Տիրոջ աշակերտները], ովքեր մկրտվեցին Հիսուսի անունով, կոչվեցին Քրիստոսի Եկեղեցի»։[1]

Այլ կերպ ասած, Եկեղեցին՝ դա մարդիկ են։ Դա դուք եք՝ Տիրոջ հետևորդները, նրանք, ովքեր սիրում և հետևում են Նրան և Նրա անունը իրենց վրա են վերցրել ուխտի միջոցով։

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը մի անգամ Եկեղեցին նմանեցրել է մեքենայի։ Մենք սիրում ենք մեքենան, երբ այն մաքուր է ու փայլուն։ Բայց մեքենայի նպատակը գրավիչ փոխադրամիջոց լինելու մեջ չէ, այն նախատեսված է իր սրահում *մարդկանց* տեղափոխելու համար։[2] Նույն կերպ, մենք, որպես Եկեղեցու անդամներ, գնահատում ենք երկրպագելու համար գեղեցիկ վայրեր ունենալը, որոնք մաքուր են և լավ պահպանված, ինչպես նաև վայելում ենք լավ ծրագրերը։ Բայց սրանք ուղղակի օգնող համակարգեր են։ Մեր միակ նպատակն է հրավիրել Աստծո

յուրաքանչյուր որդուն և դստերը գալ Քրիստոսի մոտ և առաջնորդել նրան ուխտի ճանապարհին: Ավելի կարևոր բան չկա: Մեր աշխատանքն ամբողջությամբ՝ մարդիկ են և ուխտերը:

Զարմանալի չէ՞, որ վերականգնված Եկեղեցու հայտնությամբ տրված անունը իրար է կապում յուրաքանչյուր ավետարանական ուխտի երկու կարևորագույն տարրերը: Առաջին անունը՝ *Հիսուս Քրիստոսն* է: Այս Եկեղեցին պատկանում է Նրան և Նրա սրբագործող Քավությունը և ուխտերը միակ ճանապարհն է դեպի փրկություն և վեհացում: Երկրորդ անունը *մեզ* է վերաբերում.սրբեր, կամ այլ խոսքերով, Նրա վկաներ և Նրա հետևորդներ:

Ես սովորեցի կարևորել մարդկանց, երբ ծառայում էի որպես ցցի նախագահ Ֆրանսիայում: Իմ ծառայության սկզբում ես շատ դժվար հասանելի նպատակներ ունեի ցցի վերաբերյալ. նոր ծխերի ստեղծում, նոր հավաքատների կառուցում և, նույնիսկ, մեր տարածքում տաճարի կառուցում: Վեց տարի հետո, երբ ինձ հետ կանչեցին, այդ նպատակներից ոչ մեկը չէր իրականացվել: Կարող էր բացարձակ ձախողում թվալ, եթե հաշվի չառնենք այն փաստը, որ այդ վեց տարիների ընթացքում իմ նպատակները զգալի փոխվել էին:

Կոչումից հետ կանչվելու օրը, ամբիոնի մոտ նստարանին նստած, ես լցվել էի երախտագիտության և հաջողության հասնելու մի բացառիկ զգացումով: Ես նայում էի հավաքված հարյուրավոր անդամների դեմքերին: Ես կարող էի վերհիշել նրանցից յուրաքանչյուրի հետ ունեցած հոգևոր փորձառությունը:

Այնտեղ էին այն եղբայրներն ու քույրերը, որոնք մտել էին մկրտության ջրերը, նրանք, ում համար ես ստորագրել էի առաջին երաշխավորագրերը, որպեսզի ստանան տաճարի սուրբ արարողությունները, և այն երիտասարդներն ու զույգերը, որոնց ես կարգել էի որպես լիաժամկետ միսիոներներ, կամ հետ էի կանչել այդ կոչումից: Կային շատ ուրիշներ, ում ես սպասավորել էի, երբ փորձությունների և դժվարությունների մեջ էին հայտնվել կյանքում: Ես եղբայրական մեծ սիրով էի լցված նրանցից յուրաքանչյուրի հանդեպ: Ես պարզ ուրախություն էի գտել նրանց ծառայելու մեջ և ուրախացել էի Փրկիչի հանդեպ նրանց հավատարմության և հավատքի աճով:

Նախագահ Մ. Ռասսել Բալլարդն ուսուցանել է. «Մեր Եկեղեցու պարտականությունների մեջ ամենակարևորը վիճակագրությունը չէ, թե ինչպես են զեկուցել կամ վարել ժողովները, այլ անհատապես մարդիկ, որոնց անհատական կերպով է սպասավորվում, ինչպես Փրկիչն էր անում, որոնց օգնել ենք կամ քաջալերել և որոնք հիմնովին փոխվել են»:[3]

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, մենք ակտի՞վ ենք ավետարանում, թե պարզապես զբաղված ենք Եկեղեցում: Կարևորը՝ Փրկիչի օրինակին հետևելն է բոլոր բաներում: Եթե դա անենք, մենք, բնականաբար, կզբաղվենք մարդկանց փրկելով, այլ ոչ թե հանձնարարություններ կատարելով և ծրագրեր իրականացնելով:

Երբևէ հարցրե՞լ եք ինքներդ ձեզ, թե ինչպես կլիներ, եթե Փրկիչն այցելեր ձեր ծուխը կամ ճյուղը հաջորդ կիրակի: Ի՞նչ կաներ Նա: Արդյոք կանհանգստանա՞ր Նա, թե դասարանում օժանդակ նյութերն ինչ վիճակում են, կամ աթոռները լա՞վ են դասավորված: Թե, Նա կնկատեր որևէ մեկի, ում ուշադրություն կդարձներ, կուսուցաներ և կօրհներ: Գուցե Նա կգտներ մի նոր անդամի կամ ընկերոջ ու կողջուներ նրանց, կգտներ որևէ հիվանդ եղբոր կամ քրոջ, ովքեր մխիթարության կարիք ունեն, կամ մի տատանվող երիտասարդի, ով օգնության ու քաջալերանքի կարիք ունի:

Ո՞ր դասարանները Հիսուսը կայցելեր: Ես չէի զարմանա, եթե նա Երեխաների Խումբն առաջին հերթին այցելեր: Հավանաբար Նա ծնկի կիջներ և կխոսեր նրանց հետ դեմ առ դեմ: Նա Իր սերը կարտահայտեր նրանց հանդեպ, պատմություններ կպատմեր, կգովեր նրանց իրենց նկարածների համար և կվկայեր Իր Երկնային Հոր մասին: Նրա վերաբերմունքը պարզ կլիներ, մաքուր ու առանց արհեստականությունների: Մենք կարո՞ղ ենք այդպես անել:

Ես խոստանում եմ ձեզ, որ եթե ձգտեք անել այն, ինչ Տերն է կամենում, ոչինչ ավելի կարևոր չի լինի, քան գտնել այն մարդկանց, ում կարող եք օգնել և օրհնել: Եկեղեցում դուք կկենտրոնանաք մարդկանց ուսուցանելու և նրանց սրտերը հուզելու վրա: Ձեր մտահոգությունը կլինի հոգևոր փորձառություն զարգացնելը, այլ ոչ թե կատարյալ գործունեություն կազմակերպելը, ձեր ընկերներին ծառայելը, այլ ոչ թե թղթի վրա

այցելությունների քանակի դիմացի վանդակը նշելը: Այդ գործը չպետք է կենտրոնանա ձեր անձի շուրջ, այլ *նրանց*, ում մենք կոչում ենք եղբայրներ ու քույրեր:

Երբեմն մենք խոսում ենք Եկեղեցի *գնալու* մասին: Բայց Եկեղեցին ավելին է, քան պարզապես շենք կամ մի որոշակի վայր: Այն նույնքան իրական է և կենդանի անգամ աշխարհի ամենահեռավոր վայրերում, ինչպես այստեղ՝ Եկեղեցու գլխավոր վարչությունում Սոլթ Լեյք Սիթիում: Տերն անձամբ ասել է. «Ուր որ երկու կամ երեք հոգի իմ անունովը ժողովուած լինին՝ ես այնտեղ նորանց մէջ եմ»:[4]

Մենք Եկեղեցին մեզ հետ ենք ունենում, ուր էլ որ գնում ենք՝ աշխատանքի, դպրոց, արձակուրդ և հատկապես՝ մեր տներում: Մեր ներկայությունն ու ազդեցությունը կարող են բավարար լինել, որպեսզի սուրբ դարձնենք այն վայրը, որտեղ գտնվում ենք:

Ես հիշում եմ իմ զրույցը մի ընկերոջ հետ, ով մեր հավատքից չէր: Նա զարմացել էր, երբ իմացավ, որ մեր Եկեղեցում ցանկացած արժանի տղամարդ կարող է քահանայություն ստանալ: Նա հարցրեց. «Իսկ քանի՞ քահանայություն կրողներ ունեք ձեր ծխում»:

Ես պատասխանեցի. «30-ից 40 հոգի»:

Խուճապահար, նա շարունակեց. «Իմ համայնքում մենք միայն մի քահանա ունենք: Ձեր ինչի՞ն են պետք այդքան քահանաներ կիրակի առավոտյան»:

Հետաքրքրված նրա հարցով ես ոգեշնչվածպատասխանեցի. «Ես համաձայն եմ ձեզ հետ: Չեմ կարծում, որ կիրակի օրը Եկեղեցում պետք են այդքան շատ քահանայություն կրողներ: Բայց քահանայություն կրողը *հարկավոր* է մեր տներից յուրաքանչյուրում: Երբ որևէ տանը չկա քահանայություն կրող, քահանայության մյուս կրողները կանչվում են հետևելու և սպասավորելու այդ ընտանիքին»:

Մերը միայն Կիրակի օրվա Եկեղեցի չէ: Մեր երկրպագությունը շարունակվում է շաբաթվա յուրաքանչյուր

օր, որտեղ էլ որ լինենք, ինչ էլ որ անենք: Մեր տները, մասնավորապես, «մեր հավատքի հիմնական սրբատեղիներն են»:[5] Ավելի հաճախ մեր տներում ենք մենք աղոթում, օրհնում, ուսումնասիրում, ուսուցանում Աստծո խոսքը և ծառայում մաքուր սիրով: Ես վկայում եմ իմ անձնական փորձից, որ մեր տները սուրբ վայրեր են, որտեղ Հոգին կարող է ներկա լինել՝ նույն չափով, և երբեմն էլ ավելի շատ, քան մեր երկրպագության պաշտոնական վայրերում:

Ես վկայում եմ, որ այս Եկեղեցին Հիսուս Քրիստոսի Եկեղեցին է: Նրա ուժն ու կենսունակությունը գոյանում են Իր միլիոնավոր հետևորդների ամենօրյա գործողություններից, ովքեր ամեն օր ձգտում են հետևել Նրա վեհ օրինակին՝ հոգ տանելով ուրիշների մասին: Քրիստոսն ապրում է և ուղղորդում է այս Եկեղեցին: Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը մարգարե է, ում Նա ընտրել է ղեկավարելու և առաջնորդելու մեզ այս օրերում: Այս ամենի մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. 3 Նեփի 26.21:
2. See Russell M. Nelson, general conference leadership meeting, Apr. 2012.
3. M. Russell Ballard, “O Be Wise,” *Liahona,* Nov. 2006, 20.
4. Մատթեոս 18.20:
5. Russell M. Nelson, “The Doctrinal Importance of Marriage and Children” (worldwide leadership training meeting, Feb. 2012), broadcasts.lds.org.

Երեց Քվենթին Լ. Քուք
Տասներկու Առաքյալների Քվորումից

Նախապատրաստվել հանդիպել Աստծուն

Աստվածայնորեն նշանակված պարտականությունները արդարությամբ, միասնությամբ և հավասարությամբ կատարելով կնախապատրաստենք մեզ հանդիպել Աստծուն:

Էլիզա Ռ. Մնոուն, խոսելով Կիրթլանդի Տաճարի նվիրագործման մասին (որին նա ներկա էր), ասել է. «Այդ նվիրագործման արարողություններին կարելի էր նախապատրաստվել, բայց մահկանացու լեզուն չի կարող նկարագրել այդ հիշարժան օրվա երկնային դրսևորումները: Հրեշտակներ հայտնվեցին ոմանց, մինչդեռ աստվածային ներկայության զգացումն առկա էր բոլոր ներկա գտնվողների մեջ, և յուրաքանչյուր սիրտ լցված էր աննկարագրելի ուրախությամբ և լիառատ փառքով»:[1]

Աստվածային դրսևորումները, որոնք տեղի ունեցան Կիրթլենդի Տաճարում, հիմնարար դեր խաղացին Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցում՝ իրականացնելով մեր Երկնային Հոր զավակների փրկությունը և վեհացումը:[2] Մինչ նախապատրաստվում ենք հանդիպել Աստծուն, մենք կարող ենք իմանալ, թե որոնք են աստվածայնորեն նշանակված մեր պարտականությունները՝ քննելով Կիրթլենդի Տաճարում վերականգնված սրբազան բանալիները:

Նվիրագործման աղոթքում Մարգարե Ջոզեֆ Սմիթը խոնարհաբար խնդրեց Տիրոջը. «ընդունիր այս տունը . . . որը դու պատվիրեցիր մեզ կառուցել»:[3]

Մի շաբաթ անց՝ Զատիկի կիրակի օրը, Տերը հայտնվեց հոյակապ տեսիլքում և ընդունեց Իր տաճարը: Դա տեղի ունեցավ 1836թ. ապրիլի 3-ին, գրեթե 182 տարի այս Զատիկի

կիրակիից առաջ: Դա նաև Պասեքի օրերն էր, այն հազվագյուտ ժամանակներից մեկը, երբ Զատիկը և Պասեքը համընկան: Տեսիլքից հետո հայտնվեցին հնօրյա երեք մարգարեներ՝ Մովսեսը, Եղիասը և Եղիան, և հանձնեցին բանալիներ, որոնք առանցքային դեր ունեցան՝ իրականացնելով Տիրոջ նպատակները Նրա վերականգնված Եկեղեցում այս տնտեսությունում: Այդ նպատակը պարզ, սակայն ազդեցիկ կերպով սահմանված է՝ որպես Իսրայելի հավաքում, որպես ընտանիքներ՝ նրանց կնքում և աշխարհի նախապատրաստում Տիրոջ Երկրորդ Գալստյան համար:[4]

Եղիայի և Մովսեսի հայտնվելը «զարմանալիորեն զուգադիպում է . . . հրեական ավանդության [հետ], համաձայն որի Մովսեսը և Եղիան պիտի միասին կհայտնվեին «վերջին ժամանակներում»:[5] Մեր վարդապետության մեջ այս հայտնությունը իրականացրեց հիմնական վերականգնումը որոշակի բանալիների՝ «տրված . . . վերջին օրերին ու վերջին անգամ, որը ժամանակների լրության տնտեսությունն է»:[6]

Կիրթլենդի Տաճարն աչքի չէր ընկնում ո՛չ իր տեղանքով, ո՛չ էլ չափերով: Սակայն մարդկության համար նրա մեծ նշանակության տեսանկյունից դա *հավերժության ձևավորումն էր:* Հնօրյա մարգարեները վերականգնեցին քահանայության բանալիները, որոնք նախատեսված են Հիսուս Քրիստոսի ավետարանի հավերժական փրկարար արարողությունների համար: Այն մեծ ուրախություն բերեց հավատարիմ անդամներին:

Այդ բանալիներն ապահովում են «զորությամբ . . . ի վերուստ»[7] աստվածայնորեն նշանակված պարտականությունները կատարելու համար, որը հանդիսանում է Եկեղեցու հիմնական նպատակը:[8] Զատիկի այդ հրաշալի օրը Կիրթլենդի Տաճարում վերականգնվեցին երեք բանալիներ.

Առաջինը, Մովսեսը հայտնվեց և տվեց աշխարհի չորս ծայրերից Իսրայելը հավաքելու բանալիները, որը միսիոներական աշխատանքն է:[9]

Երկրորդը, Եղիասը հայտնվեց և հանձնեց Աբրահամի ավետարանի

տնտեսության բանալիները, որը ներառում է Աբրահամի ուխտի վերականգնումը:[10] Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է, որ ուխտի բանալիների նպատակն է նախապատրաստել անդամներին Աստծո արքայության համար: Նա ասել է. «Մենք գիտենք՝ ովքեր ենք մենք, և [մենք գիտենք]՝ ինչ սպասումներ ունի մեզանից Աստված»:[11]

Երրորդը, Եղիան հայտնվեց և հանձնեց կնքման զորության բանալիներն այս տնտեսության համար, որը ընտանեկան պատմության աշխատանքն է և տաճարային արարողությունները, որոնք հնարավոր են դարձնում կենդանիների և մահացածների փրկությունը:[12]

Առաջին Նախագահության և Տասներկուսի Քվորումի ղեկավարությամբ Եկեղեցու գլխավոր վարչությունում գոյություն ունեն երեք գործադիր խորհուրդներ, որոնք վերահսկում են աստվածայնորեն նշանակված այս պարտականությունները, հիմնված բանալիների վրա, որոնք վերականգնվել են Կիրթլենդի Տաճարում: Դրանք են՝ Միսիոներական Գործադիր Խորհուրդը, Քահանայության և Ընտանեկան Գործադիր Խորհուրդը և Տաճարային և Ընտանեկան Պատմության Գործադիր Խորհուրդը:

Որքանո՞վ ենք մենք այսօր իրականացնում աստվածայնորեն նշանակված այս պարտականությունները:

Առաջինը, ինչ վերաբերում է Մովսեսի կողմից Իսրայելի հավաքման բանալիների վերականգնմանը, այսօր գրեթե 70000 միսիոներներ աշխարհով մեկ քարոզում են Նրա ավետարանը՝ Նրա ընտրյալներին հավաքելու համար: Սա սկիզբն է այն մեծ ու զարմանալի գործի, որի իրականացումը Նեփին տեսավ թե՛ հեթանոսների, և՛ թե Իսրայելի տան մեջ: Նեփին տեսավ մեր օրերը, երբ Աստծո Սրբերը կլինեին ողջ երկրի երեսի վրա, սակայն նրանք փոքրաթիվ կլինեին ամբարշտության պատճառով: Այնուամենայնիվ, նա տեսավ, որ նրանք «զինված էին արդարությամբ և Աստծո զորության մեծ փառքով»:[13] Վերականգնված Եկեղեցու հակիրճ պատմությունը վերանայելով, տեսնում ենք, որ միսիոներական ջանքերը եղել են ամենանշանակալիցը: Մենք տեսնում ենք Նեփիի տեսիլքն իրականանալիս: Չնայած թվաքանակով մենք համեմատաբար քիչ ենք, սակայն կշարունակենք ջանք գործադրել և հասնել նրանց, ովքեր կարձագանքնեն Փրկիչի ուղերձին:

Երկրորդը, Եղիասը հայտնվեց և հանձնեց Աբրահամի ավետարանի տնտեսությունը, հայտարարելով, որ մեզանով և մեր հետնորդներով պիտի օրհնվեն մեզ հաջորդող բոլոր սերունդները: Այս համաժողովի ժամանակ հաստատման ներկայացվեց կարևոր ուղեցույց՝ կատարելագործել Սրբերին և նախապատրաստել նրանց Աստծո արքայության համար:[14] Երեցների և քահանայապետերի քվորումների վերաբերյալ քահանայության նիստի հայտարարությունը կմեծացնի քահանայության զորության և իշխանության ազդեցությունը: Տնային և այցելությամբ ուսուցումները՝ այժմ «սպասավորումները», ինչպես զեղեցիկ կերպով ուսուցանվեց այս նիստի ժամանակ, կնախապատրաստեն Վերջին Օրերի Սրբերին հանդիպել Աստծուն:

Երրորդը, Եղիան հանձնեց այս տնտեսության կնքման բանալիները: Մեզանից նրանց համար, ովքեր կենդանի են այժմ, տաճարների և ընտանեկան պատմության աշխատանքի աճը բացառիկ է: Այս տեմպը կշարունակվի և կարագանա մինչև Փրկիչի Երկրորդ Գալուստը, այլապես ողջ երկիրն ամբողջովին «կամայանա նրա գալստյան ժամանակ»:[15]

Ընտանեկան պատմության աշխատանքը, շնորհիվերկնքից օրհնված տեխնոլոգիաների, մեծ առաջընթաց է ապրել վերջին մի քանի տարիների ընթացքում: Մենք խելացի չենք լինի, եթե հանգիստ նստենք, ակնկալելով, որ աստվածայնորեն նշանակված այս պարտականությունը կկատարի մորաքույր Ջեյնը կամ մեկ այլ նվիրված ազգական: Թույլ տվեք կիսվել Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի անկեղծ մեկնաբանություններով. «Ոչ ոք ազատված չէ այս մեծ պարտականությունից: Այն պահանջվում է ինչպես առաքյալից, այնպես էլ ամենախոնարհ երեցից [կամ քրոջից]: Վայրը, ձիրքը կամ Եկեղեցում երկարատև ծառայությունը . . . ոչ մեկին թույլ չի տալիս անտեսել մահացած մեկի փրկությունը»:[16]

Այժմ մենք տաճարներ ունենք ողջ աշխարհում և աջակցության հիմնադրամի ռեսուրսներ՝ օգնելու

կարիքի մեջ գտնվողներին, ովքեր ապրում են տաճարից հեռու:

Որպես անհատներ, մենք լավ կանենք, որ գնահատենք մեր ջանքերը՝ կապված միսիոներական աշխատանքի, տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքների և Աստծուն հանդիպելու համար նախապարտաստվելու հետ:

Արդարությունը, միասնությունը և հավասարությունը Տիրոջ առաջ ամուր հիմքեր են դնում այս սրբազան պարտականությունների համար

Ինչ վերաբերում է արդարությանը, բոլորիս համար այս կյանքն է ժամանակը նախապատրաստվել հանդիպելու Աստծուն:[17] Մորմոնի Գրքում տրվում են ողբերգական հետևանքների բազմաթիվ օրինակներ, երբ անհատները կամ խմբերը չեն պահել Աստծո պատվիրանները:[18]

Իմ կյանքի ընթացքում աշխարհիկ խնդիրները և մտահոգությունները մի ծայրահեղությունից անցել են մյուսին՝ աննկատ և չնչին հետապնդումներից մինչև լուրջ անբարոյականությունը:Գովելի է, որ անընդունելի համարվող անբարո արարքները բացահայտվել և դատապարտվել են:[19] Անընդունելի համարվող նման անբարո արարքները դեմ են Աստծո օրենքներին և հասարակությանը: Նրանք, ովքեր հասկանում են Աստծո ծրագիրը, պետք է նաև դեմ լինեն ընդունելի համարվող անբարոյականությանը, որը նույնպես մեղք է: Աշխարհին ուղղված ընտանիքի վերաբերյալ հայտարարությունում նախազգուշացվում է, «որ այն անհատները, ովքեր խախտում են ողջախոհության ուխտերը, բռնություն են գործադրում իրենց կանանց, ամուսինների կամ երեխաների [կամ որևէ այլ անձի] հանդեպ, . . . մի օր հաշվետու կլինեն Աստծո առջև»:[20]

Երբ նայում ենք մեր շուրջը, տեսնում ենք ամբարշտության և կախվածության ավերիչ ազդեցությունն ամեն քայլափոխի: Եթե, որպես անհատներ, մեզ իրոք մտահոգում է Փրկիչի վերջին դատաստանը, մենք պետք է ապաշխարություն փնտրենք: Ինձ վախեցնում է այն փաստը, որ շատերն այլևս հաշվետու չեն զգում իրենց Աստծո առաջ և չեն դառնում դեպի սուրբ գրությունները կամ մարգարեները առաջնորդության համար: Եթե մենք, որպես հասարակություն, մտածենք մեղքի հետևանքների մասին, զանգվածային ընդդիմություն կբարձրանար պոռնոգրաֆիայի և կանանց իրավունքների ոտնահարման դեմ:[21] Ինչպես Մորմոնի Գրքում Ալման է ասել իր որդի Կորիանթոնին. «Ամբարշտությունը երբեք երջանկություն չի եղել»:[22]

Ինչ վերաբերում է միասնությանը, Փրկիչը հայտարարել է. «Եթե դուք մեկ չեք, դուք իմը չեք»:[23] Մենք գիտենք, որ հակառակության հոգին դևից է:[24]

Մեր օրերում միասնության վերաբերյալ աստվածաշնչյան հրամայականը մեծ մասամբ անտեսվում է, և շատերը շեշտը դնում են ազգայնամոլության վրա,[25] որը հաճախ հիմնված է կարգավիճակի, սեռի, ռասայի և հարստության վրա: Շատ երկրներում, եթե ոչ մեծ մասում, մարդիկ իրարից խիստ տարբերվում են ապրելակերպով: Տիրոջ Եկեղեցում միակ մշակույթը, որին մենք հետևում ենք և ուսուցանում, Հիսուս Քրիստոսի ավետարանի մշակույթն է: Միասնությունը, որը մենք ենք փնտրում, Փրկիչի և Նրա ուսմունքների հետ միաբան լինելն է:[26]

Եթե նայենք Եկեղեցու հիմնական նպատակներին, դրանք բոլորը հիմնված են **Տիրոջ առաջ հավասար լինելու**[27] և Հիսուս Քրիստոսի ավետարանի մշակույթին հետևելու վրա: Ինչ վերաբերում է միսիոներական աշխատանքին, մկրտության համար հիմնական որակավորումներն են՝ մարդու խոնարհ լինելն Աստծո առաջ և կոտրված սիրտ ու փշրված հոգի ունենալը:[28] Կրթությունը, հարստությունը, ռասայական կամ ազգային ծագումը նույնիսկ չենքննարկվում:

Բացի դրանից, միսիոներները խոնարհաբար ծառայում են այնտեղ, որտեղ կանչվում են: Նրանք չեն փորձում ծառայել, հիմնվելով հասարակական դիրք գրավելու համար անհրաժեշտ աշխարհիկ չափանիշների վրա կամ ապագա կարիերային նախապատրաստվելու համար: Նրանք ծառայում են իրենց ողջ սրտով, զորությամբ, մտքով և ուժով՝ որտեղ էլ որ կանչվեն: Նրանք չեն ընտրում իրենց միսիոներական զուգընկերներին և ջանասիրաբար փորձում են զարգացնել քրիստոսանման հատկանիշներ,[29] որոնք Հիսուս Քրիստոսի մշակույթի սիրտն են:

Սուրբ գրություններն ուղղորդում են մեզ մեր ամենակարևոր հարաբերություններում: Փրկիչն ուսուցանել է, որ առաջին և մեծ պատվիրանն է. «Սիրիր քո Տէր Աստուծուն»: Եվ երկրորդը՝ «Սիրիր քո ընկերին քո անձի պէս»:[30]

Հիսուսն այս պատմության միջոցով մեզ սովորեցրեց, որ յուրաքանչյուրը մեզ համար մերձավոր է:[31] Մորմոնի Գիրքը պարզ ասում է, որ չպիտի լինեն -ացիներ, ցեղեր կամ խավեր:[32] Մենք պետք է միավորված լինենք և հավասար՝ Աստծո առաջ:

Սուրբ արարողությունները և աստվածային պարտականությունները կառուցվում են այս նախադրյալի վրա: Կցանկանայի, որ տաճարում ձեր սեփական փորձառությունները նման լինեին իմ փորձառություններին: Երբ ես թողնում եմ իմ ամենօրյա գործերով հագեցած աշխարհը Սան Ֆրանցիսկոյում և հասնում Օկլանդի Տաճար, ես ունենում եմ սիրո և խաղաղության մեծ զգացողություն: Հիմնականում ես զգում եմ, որ ավելի մոտ եմ Աստծուն և Նրա նպատակներին: Իմ ուշադրությունը հիմնականում կենտրոնանում է փրկարար արարողությունների վրա, սակայն այդ գեղեցիկ զգացողությունների մեծ մասը բխում են հավասարությունից և միասնությունից, որոնք շատ ուժեղ ես զգում տաճարում: Բոլորը կրում են սպիտակ հագուստներ: Հարստությունը, դիրքը կամ կրթության հետ կապված հաջողությունները էական նշանակություն չունեն. մենք բոլորս եղբայրներ և քույրեր ենք՝ խոնարհեցնելով մեզ Աստծո առաջ:

Կնքման սուրբ սենյակում հավերժական ամուսնության արարողությունը նույնն է բոլորի համար: Ինձ դուր է գալիս այն փաստը, որ ամենահամեստ ապրելակերպ ունեցող և հարուստ ապրելակերպ ունեցող զույգերն ունենում են ճիշտ նույն փորձառությունը: Նրանք կրում են նույն տիպի հագուստներ և նույն

ուխտերն են կնքում նույն զոհասեղանի առջև: Նրանք նաև ստանում են նույն հավերժական քահանայության օրհնությունները: Այս ամենը տեղի է ունենում գեղեցիկ տաճարում, կառուցված Սրբերի տասանորդներով՝ որպես Տիրոջ սուրբ տուն:

Աստվածայնորեն նշանակված պարտականությունների կատարումը՝ հիմնված արդարության, միասնության և Տիրոջ առաջ հավասարության վրա, բերում է անձնական երջանկություն և խաղաղություն այս աշխարհում և նախապատրաստում է մեզ հավերժական կյանքին գալիք աշխարհում:[33] Այն նախապատրաստում է մեզ հանդիպել Աստծուն:[34]

Մենք աղոթում ենք, որ ձեզանից յուրաքանչյուրը, անկախ ձեր ներկա հանգամանքներից, խորհրդի կնստի ձեր եպիսկոպոսի հետ և արժանի կլինի տաճարային երաշխավորագրի:[35]

Մենք երախտապարտ ենք, որ ավելի շատ անդամներ են նախապատրաստվում գնալ տաճար: Տաճարային երաշխավորագիր կրող արժանի չափահասների թիվը մեծապես աճել է տարիների ընթացքում: Վերջին երկու տարիների ընթացքում արժանի պատանիների համար նախատեսված սահմանափակ օգտագործման երաշխավորագրերի թիվը կտրուկ աճել է: Ակնհայտ է, որ Եկեղեցու անդամների հավատարմությունը երբևէ ավելի ուժեղ չի եղել:

Ի վերջո, խնդրում եմ համոզված եղեք, որ Եկեղեցու ավագ ղեկավարները, ովքեր ղեկավարում են Եկեղեցու աստվածայնորեն նշանակված նպատակները, ստանում են աստվածային օգնություն: Այդ առաջնորդությունը գալիս է Հոգուց և երբեմն հենց Փրկչից: Հոգևոր առաջնորդության այդ երկու ձևերն էլ տրվում են: Երախտապարտ եմ նման աջակցություն ստանալու համար: Սակայն առաջնորդությունը տրվում է Տիրոջ ժամանակին, տող առ տող և ցուցում առ ցուցում,[36] երբ «ամենագետ Տերն ընտրում է դանդաղ ուսուցանել մեզ»:[37] Ողջ Եկեղեցու վերաբերյալ առաջնորդությունը տրվում է միայն Նրա մարգարեին:

Այս համաժողովի ժամանակ մենք բոլորս արտոնություն ունեցանք հաստատելու Նախագահ Ռասսել Մ. Նելսոնին՝ որպես մեր մարգարե և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ: Տասներկուսը, որպես խումբ և անհատապես, հոգևոր մեծ փորձառություն ունեցան, երբ մենք դրեցինք մեր ձեռքերը Նախագահ Նելսոնի գլխին և Նախագահ Դալլին Հ. Օուքսի ղեկավարությամբ կարգեցինք նրան և ձեռնադրեցինք նրան որպես Եկեղեցու Նախագահ: Ես վկայում եմ, որ նա կարգված է եղել և նախապատրաստվել է իր ողջ կյանքի ընթացքում լինել Տիրոջ մարգարեն մեր օրերում: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Eliza R. Snow, in Janiece Johnson and Jennifer Reeder, *The Witness of Women: Firsthand Experiences and Testimonies from the Restoration* (2016), 124; Eliza R. Snow, in Edward Tullidge, *The Women of Mormondom* (1877), 65.
2. Տես *Ձեռնարկ 2. Սպասավորել Եկեղեցում* (2010), 2.2:
3. Վարդապետություն և Ուխտեր 109.4:
4. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Տիրոջ ուղերձները» (միսիաների նոր նախագահներին տրված ուղերձ, հունիսի 25, 2015թ.) 1–2:
5. Stephen D. Ricks, "The Appearance of Elijah and Moses in the Kirtland Temple and the Jewish Passover," *BYU Studies,* vol. 23, no. 4 (Fall 1983), 485.
6. Վարդապետություն և Ուխտեր 112.30:
7. Վարդապետություն և Ուխտեր 38.38, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 43.16, 84.20–21:

8. Տես *Ձեռնարկ 2,* 2.2: Չորրորդ պարտականությունը՝ աղքատների և կարիքավորների համար խնամքը, կարիք չուներ վերականգնված բանալիների, սակայն հենվում է Աստծուց ոգեշնչված Եկեղեցու կազմակերպության վրա:
9. Միսիոներական գործադիր խորհուրդը վերահսկում է Աստծո նշած այս պարտականությունները: Տես Վարդապետություն և Ուխտեր 110.11:
10. Քահանայության և Ընտանիքի գործադիր խորհուրդը վերահսկում է Աստծո նշած պարտականությունները: Տես Վարդապետություն և Ուխտեր 110.12:
11. Ռասսել Մ. Նելսոն, «Ուխտեր», *Լիահոնա,* նոյեմբեր 2011, 88:
12. Քահանայության և Ընտանիքի գործադիր խորհուրդը վերահսկում է Աստծո նշած պարտականությունները: Տես Վարդապետություն և Ուխտեր 110.13–16:
13. 1 Նեփի 14.14, տես նաև 1 Նեփի 14.5, 7, 12:
14. Տես Մոսիա 18.9, Ալմա 6.1, 32.37, տես նաև Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Եկեղեցու պատվիրակները», *Լիահոնա,* նոյեմբեր 2016, 61–62, 67:
15. Վարդապետություն և Ուխտեր 2.3:
16. Joseph Fielding Smith, *Doctrines of Salvation,* comp. Bruce R. McConkie (1955), 2:148–49.
17. Տես Ալմա 34.32:
18. Մորմոնի Գրքում անընդհատ կրկնվող թեման այն է, որ եթե մարդիկ պահեն պատվիրանները, նրանք կբարգավաճեն երկրում, բայց եթե նրանք չպահեն պատվիրանները, նրանք կկտրվեն Տիրոջ ներկայությունից: Տես 2 Նեփի 1.9, 4.4, Ալմա 9.13:
19. Սա տեղի է ունեցել #MeToo ծրագրի շրջանակներում:
20. «Ընտանիք. հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* մայիս 2017, 145:
21. Ross Douthat, "Let's Ban Porn," *New York Times,* Feb. 11, 2018, SR11.
22. Ալմա 41.10:
23. Վարդապետություն և Ուխտեր 38.27:
24. Տես 3 Նեփի 11.29:
25. David Brooks, "The Retreat to Tribalism," *New York Times,* Jan. 2, 2018, A15.
26. Տես Հովհաննես 17.21–22:
27. Տես 2 Նեփի 26.33. «Բոլորը նույնն են Աստծո համար», այդ թվում՝ «սև թե սպիտակ, ստրուկ թե ազատ, այր թե կին»:
28. Տես Վարդապետություն և Ուխտեր 20.37:
29. Տես *Քարոզիր Իմ Ավետարանը՝ Միսիոներական ծառայության ուղեցույց* (2004), գլուխ 6:
30. Տես Մատթեոս 22.36–39:
31. Տես Ղուկաս 10.29–37:
32. Տես 4 Նեփի 1.17:
33. Տես Վարդապետություն և Ուխտեր 59.23:
34. Տես Ալմա 34.32:
35. Տաճարային երաշխավորագրի հարցազրույցի հարցերը լավագույնս գնահատում են, թե որքանով ենք մենք ապրում ավետարանի համաձայն:
36. Տես 2 Նեփի 28.30, Վարդապետություն և Ուխտեր 98.12, 128.21:
37. Նիլ Ա. Մաքսվել, *All These Things Shall Give Thee Experience* (2007), 31:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոն

Տեր Աստծո գործին բոլորս մասնակցենք

Հնազանդվելու ձեր ցանկությունը կմեծանա, երբ հիշեք և մտածեք այս վերջին երկու օրերի ընթացքում ապրած ձեր զգացումների մասին։

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, մոտենալով այս պատմական համաժողովի ավարտին, ձեզ եմ միանում և իմ շնորհակալությունն եմ հայտնում Տիրոջը՝ Իր ցուցումների ու ոգեշնչող ազդեցության համար։ Երաժշտությունը գեղեցիկ ու վեհացնող էր։ Ուղերձները ոչ միայն ուսուցողական էին, այլև՝ կյանք փոխող։

Հանդիսավոր ժողովի ժամանակ մենք հաստատեցինք Առաջին Նախագահությանը։ Երկու հրաշալի անձնավորություններ են զբաղեցրել Տասներկու Առաքյալների Քվորումի շարքերը։ Եվ կանչվել ենՅոթանասունի ութ նոր Բարձրագույն Իշխանավորներ։

Այժմ, սիրված օրհներգը ամփոփում է մեր նորացված վճռականությունը, մեր մարտահրավերը և առաջ շարժվելու մեր պատասխանատվությունը.

Տեր Աստծո գործին բոլորս
մասնակցենք,
Որ մահից հետո պարզև մենք
վաստակենք,
Ճշմարտի կոչի համար նոր սուր
պատրաստենք,
Սուրը ճշմարտության։

Ոչքան էլ թշնամին մեզ ծաղրի,
Մեր կողմն է Աստվածը բարի։
Չարերի խոսքերը չլսենք,
Մենք միայն Աստծուն ենթարկվենք։[1]

Ես հորդորում եմ ձեզ առաջիկա վեց ամիսների ընթացքում հաճախակի ուսումնասիրել համաժողովի ելույթները և նույնիսկ կրկնել դրանք։ Բարեխղճորեն եղանակներ փնտրեք այս ուղերձները ձեր ընտանեկան երեկոներին, ավետարանի ձեր ուսուցման, ընտանիքի և ընկերների հետ ձեր զրույցներում և, նույնիսկ, այն մարդկանց հետ ձեր քննարկումների մեջ ընդգրկելու համար, ովքեր մեր հավատքից չեն։ Բազմաթիվ լավ մարդիկ կարձագանքեն համաժողովի ճշմարտություններին, երբ առաջարկվի սիրով։ Եվ հնազանդվելու ձեր ցանկությունը կմեծանա, երբ հիշեք և մտածեք այս վերջին երկու օրերի ընթացքում ապրած ձեր զգացումների մասին։

Այս գերագույն համաժողովը սպասավորելու նոր դարաշրջանի սկիզբն է կանխորոշում։ Միմյանց հանդեպ հոգ տանելու եղանակների վերաբերյալ Տերը կարևոր ճշգրտումներ է արել։ Տարեց և երիտասարդ քույրերն ու եղբայրները կծառայեն միմյանց ավելի սրբազան եղանակներով։ Երեցների քվորումները կամրապնդվեն, որպեսզի օրհնեն տղամարդկանց, կանանց և երեխաներին աշխարհով մեկ։ Սփոփող Միության քույրերը կշարունակեն ծառայել իրենց յուրօրինակ և սիրող եղանակներով, հնարավորություններ ավելացնելով ավելի երիտասարդ քույրերի համար, որպեսզի նրանք պատշաճ հանձնարարությամբ միանան իրենց։

Աշխարհին ուղված մեր ուղերձը պարզ ու անկեղծ է. մենք հրավիրում ենք վարագույրի երկու կողմերում գտնվող Աստծո զավակներին գալ դեպի Փրկիչը, ստանալ սուրբ տաճարի օրհնությունները, ունենալ հարատև ուրախություն և արժանանալ հավերժական կյանքի։[2]

Վերջնական վեհացման համար պահանջվում է, որ այժմ լիարժեք հավատարիմ մնանք մեր կապած ուխտերին և այն արարողություններին, որոնք ստացել ենք Տիրոջ տանը։ Այս պահի դրությամբ մենք ունենք 159 գործող տաճարներ, և շատերն էլ գտնվում են

շինարարության փուլում: Ցանկանում ենք տաճարները հասանելի դարձնել Եկեղեցու աճող անդամների համար: Այսպիսով, այժմ ուրախ ենք հայտարարել յոթ նոր տաճարների կառուցման ծրագրերի մասին: Այդ տաճարները կտեղակայվեն հետևյալ վայրերում. Սալթա (Արգենտինա), Բենգուլուրու (Հնդկաստան), Մանագուա (Նիկարագուա), Կագայան դե Օրո (Ֆիլիպիններ), Լեյտոն (Յուտա), Ռիչմոնդ (Վիրջինիա) և Ռուսաստանի մի մեծ քաղաքում, որ դեռ պետք է որոշվի:

Իմ սիրելի՛ եղբայրներ և քույրեր, այդ տաճարների շինարարությունը կարող է չփոխել ձեր կյանքը, բայց տաճարում անցկացրած ձեր ժամանակն անշուշտ կարող է փոխել ձեր կյանքը: Այդ ոգով, ես օրհնում եմ ձեզ, որ դուք կարողանաք գտնել այն գործերը, որոնք կարող եք մի կողմ դնել՝ տաճարում ավելի շատ ժամանակ անցկացնելու համար: Ես օրհնում եմ ձեզ՝ ձեր տներում ավելի մեծ ներդաշնակություն և սեր ունենալու համար և ավելի մեծ ցանկություն՝ ձեր հավերժական ընտանեկան հարաբերությունները հոգալու համար: Օրհնում եմ ձեզ, որպեսզի ավելի մեծ հավատք ձևավորեք Տեր Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության հանդեպ և ավելի շատ կարողանաք հետևել Նրան որպես Նրա ճշմարիտ աշակերտներ:

Ես օրհնում եմ ձեզ, որ բարձրացնեք ձեր վկայության ձայնը, ինչպես հիմա ես եմ անում, որ մենք զբաղված ենք Ամենակարող Աստծո գործով: Հիսուսը Քրիստոսն է: Սա Նրա Եկեղեցին է, որը Նա առաջնորդում է Իր օծյալ ծառաների միջոցով: Ես այդ մասին վկայում եմ, արտահայտելով իմ սերը ձեզանից յուրաքանչյուրին, Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. «Տեր Աստծո գործին բոլորս մասնակցենք» *Օրհներգեր,* հմր. 10:
2. Վարդապետություն և Ուխտեր 14.7 հատվածի մեջ նկարագրված է որպես՝ «մեծագույնն է Աստծո բոլոր պարգևներից»:

Վիճակագրական հաշվետվություն, 2017

Հ գիտություն Եկեղեցու անդամների, Առաջին Նախագահությունը հրապարակել է Եկեղեցու աճի և կարգավիճակի վերաբերյալ հետևյալ վիճակագրական հաշվետվությունը՝ 2017թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Եկեղեցու միավորներ	
Ցցեր	3,341
Միսիաներ	421
Շրջաններ	553
Ծխեր և ճյուղեր	30,506
Եկեղեցու անդամություն	
Անդամների ընդհանուր թիվը	16,118,169
Նոր գրանցված երեխաներ՝	106,771
Նորադարձների մկրտությունների թիվը	233,729
Միսիոներներ	
Լիաժամկետ միսիոներներ	67,049
Եկեղեցու ծառայության միսիոներներ	36,172
Տաճարներ	
2017թ.-ին նվիրագործված տաճարներ (Փարիզ Ֆրանսիա, Տուկսոն Արիզոնա, Մերիդիան Այդահո, Սեդար Սիթի Յուտա)	4
2017թ.-ին վերանվիրագործված տաճարներ (Այդահո Ֆոլս Այդահո)	1
Գործող տաճարները տարեվերջին՝	159

Համաժողովի պատմությունների ցուցիչ

Հետևյալ ցանկը գերագույն համաժողովին առնչվող ընտրված փորձառությունների հակիրճ նկարագրությունն է: Նշված համարները ցույց են տալիս ելույթի առաջին էջը:

Խոսնակ	Պատմություն
Ռեյնա Ի. Աբուրտո	(78) Վերջին Օրերի Սրբերը Չիլիում, Պերուում, Մեքսիկայում և Միացյալ Նահանգներում օգնություն են առաջարկում աղետներից հետո:
Նիլ Լ. Անդերսեն	(24) Քեթի Անդերսենը կարդում է Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի վերջին գերագույն համաժողովների ելույթները և աղոթում է նրա մարգարեական դերի մասին ավելի խորը հավաստիացում ձեռք բերելու համար:
Մ. Ռասսել Բալլարդ	(9) Երբ Երեց Մ. Ռասսել Բալլարդը Երուսաղեմում տեսնում է մանանեխի սերմը, հիշում է Փրկիչի ուսմունքները հավատքի մասին:
Դեյվիդ Ա. Բեդնար	(30) Ռասսել Մ. Նելսոնը և Հենրի Բ. Այրինգը հետևում են Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի հրավերին՝ ուսումնասիրել Մորմոնի Գիրքը և կիրառել նրա ճշմարտությունները:
Ջին Բ. Բինգհեմ	(104) Սփոփող Միության մի քույր սպասավորում է մի «մոլորված ու միայնակ» երիտասարդ մոր: Աֆրիկացի մի քույր սպասավորում է մի քրոջ, ում ծեծել և կողոպտել են: Ծխի անդամները հոգ են տանում մի քրոջ մասին, ով պայքարում է քաղցկեղի դեմ: Երիտասարդ կանայք աշխատում են, որպեսզի հոգան մերձավորի կարիքները:
Ջերալդ Կոսե	(24) Ֆրանսիայի Փարիզի տաճարի կառուցման հաստատումը տալուց առաջ քաղաքի խորհրդի անդամները այցելում են հաղորդության ժողովին: Ցցի նախագահ Ջերալդ Կոսեն հրճվում է, քանի որ աճել է ցցի անդամների հավատարմությունը և հավատը Փրկիչի հանդեպ: Ջերալդ Կոսեն պատմում է իր ընկերոջը, որ յուրաքանչյուր ընտանիք քահանայություն կրողի կարիք ունի տանը:
Դ. Թոդ Քրիստոֆերսոն	(55) Երեցների քվորումը հավաքում է մի ֆերմերի բերքը, երբ նրա ընտանիքի մի քանի անդամներ մահանում են գրիպի համաճարակից:
Քվենթին Լ. Քուք	(114) Կիրթլանդի Տաճարի նվիրագործման ժամանակ աստվածային դրսևորումները անդամների հոգիները լցնում են ուրախությամբ: Քվենթին Լ. Քուքը սեր ու խաղաղություն է զգում Օքլենդ Կալիֆորնիա Տաճարում:
Մասիմո Դե Ֆեո	(24) Մասիմո Դե Ֆեոյի որդին համադասարանցիներին պատմում է, որ իր հայրը «տիեզերքի առաջնորդն է»: Մասիմո Դե Ֆեոյի մահացող մայրը ցույց է տալիս, որ ավելի շատ է սիրում որդուն, քան ինքն իրեն:
Դեվին Գ. Դյուրան	(42) Ընտանեկան երեկոյի խաղը կառուցում է Դեվին Գ. Դյուրանի վստահությունը: Դյուրանների ընտանիքը լուսանկարվում է տաճարի մոտ:
Լարի Ջ. Էքո Հոք	(15) Էքո Հոքի ընտանիքը սփոփում է հարբած վարորդի ծնողներին, որը սպանել էր Լարի Ջ. Էքո Հոքի եղբորը և հարսին:
Հենրի Բ. Այրինգ	(61) Հենրի Բ. Այրինգի նախապապն ու նախատատը սիրահարվեցին, երբ անցնում էին հարթավայրերով: Մի երիտասարդ տղա հասկանում է, թե քահանայություն կրողներն ինչ կարող են իրականացնել Տիրոջը ծառայելիս: Մի ոգեշնչված տնային ուսուցիչ ծառայում է մի ընտանիքի, երբ նրանք հուսահատ կարիքի մեջ էին: (86) Երբ Հենրի Բ. Այրինգի մայրը ավանդում է հոգին, նրա հայրը սփոփանք է ստանում Սուրբ Հոգուց:
Թեյլոր Ա. Գոդոյ	(34) Ընկերոջ որդու մահը հուշում է Թեյլոր Գ. Գոդոյին իմաստուն կերպով օգտագործել կյանքի յուրաքանչյուր «ևս մեկ օրը»: Մի պերուացի քույր լուրջ է ընդունում իր ուխտերը այն բանից հետո, երբ զոհաբերությունների գնով գնում է տաճար: Թեյլոր Ա. Գոդոյը ցանկանում է լինել ամենալավ ուսանողը, երբ նրա մայրը զոհաբերություն է կատարում նրա ատամնաբուժական պրակտիկայի համար:
Գերիթ Վ . Գոնգ	(97) Գերիթ Վ. Գոնգը իր որդիների համար պատմություններ է պատմում և երգում, երբ նրանք պառկում են քնելու:
Ջեֆրի Ռ. Հոլլանդ	(101) Եղբայրը, ում կինը հիվանդանում է, բնազդաբար զանգահարում է իր տնային ուսուցչին օգնության համար:
Դուգլաս Դ. Հոլմս	(24) Սիարոնյան քահանայություն կրողները հասակակիցների հետ կիսվում են իրենց վկայություններով: Քահանաների քվորումը սովորում է, թե ինչ է նշանակում «լիազորված լինել Հիսուս Քրիստոսի կողմից»:
Ռասսել Մ. Նելսոն	(68) Քահանայություն կրողները թերանում են ճշմարիտ օրհնություն տալ ընտանիքի անդամներին և նոր կոչում ունեցող քույրերին: Նախագահ Նելսոնը օգնում է մի մարդու վերադառնալ եկեղեցի: (93) Երբ Նախագահ Նելսոնը փոքրիկ տղա էր, սիրում էր սովորել ավետարանի մասին և փափագում էր կնքվել իր ծնողների հետ: Երիտասարդ Ռասսել Մ. Նելսոնը կոտրում է ալկոհոլային խմիչքների շշերը, քանի որ ցանկանում էր, որ իր ծնողներն ապրեին Իմաստության Խոսքով:
Դալլին Հ. Օուքս	(65) Երեցների քվորումի նախագահը խորհուրդ է տալիս քվորումի մի անդամի չթողնել քոլեջը:
Բոննի Լ. Օսկարսոն	(36) Երբ Բոննի Լ. Օսկարսոնը երիտասարդ աղջիկ էր, նրան խնդրում էին կատարել հանձնարարություններ և կոչումներ, որոնք հիմնականում կատարում են չափահասները:
Դեյլ Գ. Ռենլանդ	(46) Փարլի և Օրսոն Պրատների սերը նրանց նախնիների հանդեպ օգնում է նրանց նորոգել իրենց հարաբերությունները: Տաճարային օրհնություններն օգնում են ամրոցել մի ընտանիքի, ում հիվանդ որդու սիրտը նվիրաբերվել էր:
Լին Գ. Ռոբինս	(21) Լին Գ. Ռոբինսի քոլեջի պրոֆեսորը խրախուսում է ուսանողներին ձախողումը համարել որպես ուսուցիչ և շարունակել փորձել:
Ուլիսես Սոարես	(98) Ուլիսես Սոարեսը և նրա կինը ստանում են արագացված վիզաներ, երբ հավատ են ցուցաբերում առ այն, որ Տերը հրաշք կգործի հօգուտ իրենց:
Գարի Ի. Սթիվենսոն	(17) Գարի Ի. Սթիվենսոնը վկայություն է ձեռք բերում մարգարեների հաջորդականության մասին Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյի մահից հետո: Մի նախկին ուսանող գովաբանում է Դոկտոր Ռասսել Մ. Նելսոնի ուսուցման ոճը:
Բրայըն Ք. Թեյլոր	(12) Բրայըն Ք. Թեյլորը հիշում է Երեխաների Միության իր համբերատար ուսուցիչներին: Իր պատճառով առաջացած ավտովթարից հետո երիտասարդ կինը խաղաղություն է գտնում, իմանալով, որ ինքն Աստծո զավակն է;
Թանիելա Բ. Վակոլո	(39) 39 տարի եկեղեցի հաճախելուց հետո մի մարդ մկրտվեց, իսկ ավելի ուշ կնքվեց իր կնոջ հետ տաճարում:
Լարի Յ. Ուիլսոն	(75) Գործելով ըստ հոգևոր տպավորությունների, ՎՕՍ քահանան օգնում է բեռնափոխադրող նավին և դրա անձնակազմին փրկվել թայֆունից:
Կլաուդիո Դ. Ջիվիկ	(83) «Համբերեք և կտոնեք ձեր հաղթանակը»,- նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը ասում է Կլաուդիո Դ. Ջիվիկին ու նրա կնոջը: Կլաուդիո Դ. Ջիվիկի նավակում եղած ճաքը անհնար է դարձնում դրա կառավարումը:

Երեց Գերիթ Վ. Գոնգ

Տասներկու Առաքյալների Քվորում

«Այս Զատիկի կիրակի օրը ես ուրախությամբ երգում եմ «Ալելուիա»,- ասել է Երեց Գերիթ Վ. Գոնգը՝ Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ հաստատվելու գերագույն համաժողովի իր առաջին ելույթի ժամանակ: «Մեր հարություն առած Փրկիչի քավիչ սիրո մասին երգը տոնում է ներդաշնակությունը ուխտերի և Հիսուս Քրիստոսի Քավության միջև»:

Երեց Գոնգը ողջ կյանքը վայելել է այդ ներդաշնակությունը: Նա գիտի, որ մեր ուխտերի զորությունը Փրկիչի Քավության հետ միասին «զորացնում և ազնվացնում են» մեզ: «Միասին դրանք քաղցրացնում, պահպանում, սրբագործում [և] քավում են»,- ասել է նա:

Օրերից մի օր, տաճարային ամուսնության ժամանակ, Քավության հետ զուգորդված ուխտերի զորությունն արտացոլվեց տաճարի հայելիների մեջ: Նա պատկերացրեց դեպի հավերժություն գնացող իր ընտանիքի սերունդներին , սկսած իր առաջին հայտնի հարազատ՝ Առաջին Դրեզոն Գոնգից, ծնված մ.թ. 837 թ.-ին, մինչև 36-րդ սերունդը՝ իր թոռները, որոնք անընդհատ շարունակվում են երկու կողմից:

«Ես սկսեցի ինձ և կնոջս տեսնել որպես մեր ծնողների երեխաներ և մեր երեխաների ծնողներ, որպես մեր տատերի ու պապերի թոռներ և մեր թոռների տատ ու պապ»,- ասաց նա: «Մահկանացու կյանքի մեծ դասերը թափանցում են մեր հոգիները, երբ մենք սովորում և ուսուցանում ենք հավերժական դերերը՝ ներառյալ երեխա-ծնող, ծնող-երեխա»:

Երեց Գոնգը Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական է ծառայել 2010թ. ապրիլից, իսկ Յոթանասունի Նախագահության անդամ՝ 2015թ. հոկտեմբերից: Նա Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ է հաստատվել 2018թ-ի մարտի 31-ին, որը նա նկարագրեց «սրբազան կոչում Տիրոջից, որի ժամանակ շունչը կտրվեց»:

2011–2015 թվականներին Երեց Գոնգը ծառայել է Ասիայի տարածաշրջանի նախագահությունում և ավարտել է այդ ծառայությունը Տարածաշրջանի Նախագահի կոչումով: Երեց Գոնգը լիաժամկետ միսիոներ է ծառայել Թայվանի Տայպեյ Միսիայում, ծառայել է բարձրագույն խորհրդական, քահանայապետերի խմբի ղեկավար, ցցի Կիրակնօրյա դպրոցի նախագահ, սեմինարիայի ուսուցիչ, եպիսկոպոս, ցցի միսիայի նախագահ, ցցի նախագահ և Տարածքային Յոթանասունական:

1977 թվականին Երեց Գոնգը Բրիգամ Յանգ Համալսարանում ստացել է Ասիական հետազոտությունների և համալսարանական հետազոտությունների հումանիտար գիտությունների բակալավրի աստիճան: 1979 թվականին նա ստացել է փիլիսոփայության մագիստրոսի աստիճանը, իսկ 1981 թվականին Օքսֆորդի Համալսարանում ստացել է միջազգային հարաբերությունների դոկտորական աստիճանը, որտեղ նա ստացել է Ռոդեսի կրթաթոշակ: 1985 թվականին Միացյալ Նահանգների պետական դեպարտամենտում աշխատել է պետքարտուղարի հատուկ օգնական, իսկ 1987 թվականին Պեկինում (Չինաստան) նա եղել է Միացյալ Նահանգների դեսպանի հատուկ օգնականը: 1989 թվականից նա ծառայել է մի քանի պաշտոններում Ռազմավարական և Միջազգային հետազոտությունների Կենտրոնում Վաշինգտոնում, Կոլումբիայի շրջան: Մինչև 2010 թվականը Բրիգամ Յանգ Համալսարանում եղել է նախագահի օգնականը ծրագրերի և գնահատման գծով:

Երեց Գոնգի պապն ու տատը ներգաղթել են Միացյալ Նահանգներ Չինաստանից: Երեց Գերիթ Վ. Գոնգը ծնվել է 1953 թվականին Ռեդվուդ Սիթիում, Կալիֆորնիա, ԱՄՆ: Նա ամուսնացած է Սյուզան Լինդսեյ Գոնգի հետ, և նրանք ունեն չորս երեխա և երեք թոռ:

«Ամեն արժանի և հավերժական բան հիմնված է Աստծո՝ մեր սիրող Հավերժական Հոր և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի ու Նրա Քավության կենդանի իրողության վրա, որի մասին վկայում է Սուրբ Հոգին»,- ասել է նա այս համաժողովի ժամանակ: «Ես ակնածանքով և հանդիսավորությամբ վկայում եմ կենդանի Քրիստոսի մասին: Նա մեզ հետ [էր] ամենասկզբից, Նա մեզ հետ է մինչև վերջ»: ■

Երեց Ուլիսես Սարես

Տասներկու Առաքյալների Քվորում

Ապրող մարգարեները, այդ թվում Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը, Իր զավակների հանդեպ Աստծո սիրո նշանն են, վկայել է Երեց Ուլիսես Սարեսը՝ Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ հաստատվելու գերագույն համաժողովի իր առաջին ելույթի ժամանակ:

«Մի՞թե օրհնություն չէ մեր ժամանակներում երկրի վրա ունենալ մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ, ովքեր ձգտում են իմանալ Տիրոջ կամքը և հետևել դրան: Մեզ մխիթարում է այն հանգամանքը, որ մենք գիտենք, որ մենակ չենք աշխարհում՝ չնայած դժվարություններին, որոնց բախվում ենք այսօր:

Չնայած նա անհամապատասխան էր զգում Առաքյալի իր կոչման համար, Երեց Սարեսի խոսքերով Նախագահ Նելսոնի «խոսքերը և աչքերի քնքուշ արտահայտությունը, երբ նա առաջարկում էր այս պարտականությունը, ինձ պարուրեցին ու լցրին Փրկիչի սիրով»:

2018 թվականի մարտի 31-ին հաստատվելով, Երեց Սարեսը դարձավ Եկեղեցու առաջին առաքյալը Լատինական Ամերիկայից: Նախքան իր կանչը, 2013 թվականի հունվարի 6-ից ի վեր նա եղել է Յոթանասունի Նախագահության անդամ և Սոլթ Լեյք Սիթիում Նախագահող Եպիսկոպոսության համար ծառայում էր հատուկ հանձնարարությամբ:

Երեց Սարեսը Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական է կանչվել 2005 թվականի ապրիլի 2-ին: Այդ պարտականության մեջ նա ծառայել է Հարավարևելյան Աֆրիկա և Հարավային Բրազիլիայի տարածաշրջանների խորհրդական և Բրազիլիայի տարածաշրջանի նախագահ:

Երեց Սարեսը ծառայել է Եկեղեցու բազմաթիվ այլ կոչումներում: Նա լիաժամկետ միսիոներ է ծառայել Բրազիլիայի Ռիո դե Ժանեյրոյի միսիայում, եղել է երեցների քվորումի նախագահ, եպիսկոպոսության խորհրդական, բարձրագույն խորհրդական, ցցի գործադիր քարտուղար, տարածքային բարօրության գործակալ, ցցի նախագահ և 2000–2003 թթ. եղել է Պորտուգալիայի Պորտո միսիայի նախագահ:

Նրա ամենակարևոր կոչումներից մեկը եղել է 15 տարեկան հասակում, երբ նրա եպիսկոպոսը խնդրեց ժամանակավորապես դասավանդել Երիտասարդներին Կիրակնօրյա դպրոցի դասին: Ցանկանալով ստանալ վկայություն դասավանդելու համար, երիտասարդ Ուլիսեսը որոշեց աղոթել ավետարանի ճշմարտացիության հավաստիացման համար:

Նա հիշում է. «Երբ ծնկի իջա, որպեսզի հարցնեմ Տիրոջը, թե արդյոք ավետարանը ճշմարիտ է, այդ ժամանակ սրտումս մի հաճելի զգացում ունեցա, մի մեղմ ձայն, որը հաստատեց, որ պետք է շարունակեմ այդ գործը: Դա այնքան ուժեղ էր, որ ես երբեք չէի կարող հերքել այդ գիտելիքը»:

1985 թվականին Սան Պաուլոյի Պոնտիֆիկա Կաթոլիկ Համալսարանի Տնտեսագիտության բաժնից ստացավ հաշվապահության և տնտեսագիտության բակալավրի աստիճան: Բիզնեսի կառավարման մագիստրոսի աստիճան ստանալուց հետո նա Բրազիլիայում հաշվապահ և աուդիտոր է աշխատել միջազգային ընկերություններում և եղել է Եկեղեցու Սան Պաուլոյի տարածքային գրասենյակի նյութատեխնիկական բաժնի տնօրենը:

Ուլիսես Սարեսը ծնվել է 1958 թվականի հոկտեմբերի 2-ին Սան Պաուլոյում, Բրազիլիա: 1982 թվականի հոկտեմբերին նա ամուսնացավ Ռոզանա Ֆերնանդեսի հետ: Գերագույն համաժողովի իր ելույթի ժամանակ նա գնահատանքի էր արժանացրել իր կնոջը՝ նրա սիրո և աջակցության համար:

«Նա միշտ եղել է բարության, սիրո և Տիրոջ հանդեպ լիակատար նվիրվածության օրինակ՝ իմ և իմ ընտանիքի համար», այդ թվում՝ զույգի երեք զավակների և երեք թոռների համար, ասել է նա համաժողովի իր ելույթում: Ես սիրում եմ նրան իմ ողջ սրտով և երախտապարտ եմ այն դրական ազդեցության համար, որ նա ունեցել է մեզ վրա»: ■

Երեց Կարլ Բ. Քուք

Յոթանասունի Նախագահություն

Երեց Կարլ Բ. Քուքը հավատում է, որ ծառայելու արտոնությունը Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամների ամենամեծ օրհնություններից մեկն է: Սակայն նա նշեց, որ կոչումները ընդունելու ու վեհացնելու համար հավատք է պահանջվում:

2018 թվականի մարտի 31-ին Յոթանասունի նախագահության անդամ հաստատված Երեց Քուքը ճյուղերում, ծխերում, քվորումներում և օժանդակ կազմակերպություններում ծառայող Եկեղեցու անդամներին նմանեցրեց ավտոմեքենայի բաղադրյալ փոխանցման տուփի, որն ավելի մեծ քարշիչ ուժ է ստեղծում:

Բաղադրյալ փոխանցումը չորս քարշիչ անիվների հետ միասին «թույլ է տալիս ձեզ իջեցնել փոխանցման աստիճանը, մեծացնել հզորությունը և շարժվել»,- ասել է նա 2016 թվականի գերագույն համաժողովի ժամանակ: «Ինչպես ատամնանիվներն են միասին ավելի մեծ հզորություն ստեղծում բաղադրյալ փոխանցման համար, միասին մենք ավելի մեծ ուժ ենք ունենում: Երբ միավորվում ենք միմյանց ծառայելու գործում, մենք միասին ավելի շատ աշխատանք ենք կատարում, քան կարող էինք անել միայնակ: Մեծ ոգևորություն ենք ապրում, ներգրավվելով և միավորվելով, երբ ծառայում և աջակցում ենք Տիրոջ գործին»:

Երեց Քուքը Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական է հաստատվել 2011թ. ապրիլի 2-ին: Իր նոր հանձնարարությունը ստանալուց առաջ Երեց Քուքը ծառայել է Եկեղեցու գլխավոր գրասենյակում, որտեղ նա այլ պարտականություններին զուգահեռ օգնում էր վերահսկել Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան տարածաշրջանը: Նախկինում նա ծառայել է Աֆրիկայի հարավարևելյան տարածքում:

Երեց Քուքը Վերջին Օրերի Սրբերին հորդորել է հիշել, որ Եկեղեցու կոչումները գալիս են Աստծուց՝ Իր նշանակված ծառաների միջոցով:

Երեց Քուքը բակալավրի իր աստիճանը ստացել է Վեբերի Պետական քոլեջում (Յուտա), իսկ բիզնեսի կառավարման մագիստրոսի աստիճանը՝ Յուտայի Պետական համալսարանում: Յոթանասունական կանչվելուց առաջ նա աշխատում էր առևտրային անշարժ գույքի ոլորտում:

Երեց Քուքը լիաժամկետ միսիոներ է ծառայել Համբուրգում, Գերմանիա և ծառայել է Եպիսկոպոս, ցցի նախագահ, Տարածքային Յոթանասունական և Նոր Զելանդիայի Օքլենդ միսիայի նախագահ:

Նա ծնվել է 1957 թվականի հոկտեմբերի 15-ին Օգդենում (Յուտա, ԱՄՆ): 1979 թվականի դեկտեմբերին նա ամուսնացավ Լինետ Հանսենի հետ: Նրանք ունեն հինգ զավակ: ■

Երեց Ռոբերտ Ս. Գեյ

Յոթանասունի Նախագահություն

Երբ ծառայում էր Գանայի միսիայի նախագահ, մի անգամ Երեց Ռոբերտ Ս. Գեյը զգաց, որ պետք է կանգ առնի ու օգնի մի արտասվող տղայի: Սկզբում, նա անտեսեց այդ զգացողությունը, բայց ավելի ուշ նա Եկեղեցու մի անդամ ուղարկեց, որպեսզի գտներ ու բերեր այդ տղային:

2018 թվականի մարտի 31-ին Յոթանասունի նախագահության անդամ հաստատված Երեց Գեյը իմացավ, որ այդ տղան իր խնամակալի համար չորացրած ձուկ էր վաճառում: Այդ օրը տղան իր վաստակած գումարը կորցրել էր, քանի որ գրպանը պատռված էր:

«Եթե նա վերադառնար առանց փողի, նրան ստախոս կանվանեին, շատ հավանական է, որ կծեծեին, իսկ հետո դուրս կշպրտեին փողոց»,- ասել է Երեց Գեյը: «Մենք հանգստացրեցինք նրան, տվեցինք նրան այն, ինչ նա կորցրել էր, և նրան հետ տարանք իր խնամակալի մոտ»:

2012 թվականի հոկտեմբեր ամսվա գերագույն համաժողովի ժամանակ Երեց Գեյը բացատրեց, որ այդ փորձառության շնորհիվ նա սովորեց երկու կարևոր ճշմարտություններ. «Առաջինը, երբեք նախկինում այդքան համոզված չէի, որ Աստված ուշադիր է մեզանից յուրաքանչյուրի հանդեպ և երբեք մեզ անօգնական չի թողնի. և երկրորդը, ես գիտեի, որ մենք պետք է միշտ մեր մեջ լսենք Հոգու ձայնը և անմիջապես գնանք՝ անկախ մեր վախերից կամ անհարմարությունից»:

Երեց Գեյը Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական է հաստատվել 2012թ. մարտի 31-ին: Յոթանասունի նախագահություն կանչվելիս նա ծառայում էր որպես Ասիայի հյուսիսային տարածաշրջանի նախագահ: Նախկինում նա ծառայել էր Եկեղեցու գլխավոր գրասենյակում, որպես Ինքնապահովման ծառայությունների/Մշտական կրթական ֆոնդի հանձնախմբի նախագահ և պատասխանատու էր աշխարհով մեկ ինքնապահովման ծառայությունների համար:

Յոթանասունական կանչվելուց առաջ, նա գլխավոր գործադիր տնօրեն է աշխատել ներդրումային մի ընկերությունում, որի համահիմնադիրն է եղել: Նաև, նա համահիմնադիրն ու տնօրենն է եղել մի քանի համաշխարհային մարդասիրական կազմակերպությունների և աշխատել է Wall Street-ի ներդրումային բանկային ծառայություններում, կառավարման խորհրդատու և Հարվարդի համալսարանում որպես տնտեսագիտության դասախոս:

Երեց Գեյը լիաժամկետ միսիոներ է ծառայել Իսպանիայում, եղել է քահանայապետերի խմբի ղեկավար, ծխի Երիտասարդ տղաների նախագահ, բարձրագույն խորհրդական, եպիսկոպոսության խորհրդական և տարածքային Յոթանասունական:

Նա ծնվել է 1951 թվականի սեպտեմբերի 1-ին Լոս Անջելեսում (Կալիֆորնիա, ԱՄՆ): 1974 թվականի ապրիլին նա ամուսնացավ Լինետ Նիլսենի հետ: Նրանք ունեն յոթ զավակ: ■

Երեց Տերենս Մ. Վինսոն

Յոթանասունի Նախագահություն

Երեց Տերենս Մ. Վինսոնը հավատում է, որ Փրկիչը հեռու չէ: «Նա միշտ մոտ է, հատկապես սրբազան վայրերում և կարիքի դեպքում»,- վկայել է նա 2013 թվականի հոկտեմբեր ամսվա գերագույն համաժողովին: «Երբեմն, երբ ամենաքիչն եմ սպասում, ես միշտ գրեթե այնպիսի զգացում եմ ունենում, կարծես նա ուսիս թփթփացնում է, իմաց տալով, որ Նա սիրում է ինձ»:

Մի անգամ, երբ Երեց Վինսոնը քայլում էր Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլանդի հետ, Երեց Հոլլանդն իր ձեռքը դրեց Երեց Վինսոնի ուսին ու ասաց, որ սիրում է նրան: Երեց Վինսոնն ասաց. «Ես հավատում եմ, որ եթե մենք Փրկչի հետ քայլելու արտոնությունն ունենայինք, ճիշտ նույն կերպ կզգայինք Նրա ձեռքը մեր ուսին»:

2018 թվականի մարտի 31-ին Յոթանասունի նախագահության անդամ հաստատված Երեց Վինսոնն ասաց, որ Աստծո սերը «ամենահաճելի զգացումն է»:

Երեց Վինսոնը, ով իր նոր կոչմանը կանցնի 2018 թվականի օգոստոսի 1-ին, Եկեղեցու Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական է հաստատվել 2013թ. ապրիլի 6-ին: Այդ ժամանակ նա Յոթանասունի ութերորդ քվորումի անդամ էր ծառայում խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում: Ներկայումս նա ծառայում է Աֆրիկայի արևմտյան տարածքի նախագահ:

Երեց Վինսոնը ստացել է մաթեմատիկայի և վիճակագրության բակալավրի աստիճան, կրթության և ուսուցչի դիպլոմ և կիրառական ֆինանսների մագիստրոսի աստիճան: Նրա մասնագիտական կյանքն անցել է համալսարաններում ուսուցանելով, վերապատրաստելով և դասախոսություններ կարդալով: Նա հիմնականում աշխատել է որպես ֆինանսական խորհրդատու և ֆոնդերի կառավարիչ:

Երբ Երեց Վինսոնը չափահաս երիտասարդ էր և հետաքրքվում էր Եկեղեցով, ուժեղ հոգևոր զգացողություններ էր ունենում: Նա հստակորեն զգում էր, որ պետք է միանա Եկեղեցուն, որպեսզի առաջընթաց ունենա և գտնի մնացած հարցերի պատասխանները: Հաջորդ շաբաթ նա մկրտվեց ու հաստատվեց Եկեղեցում:

Այդ պահից սկսած, «ես գիտեի, թե ինչ է Տերն ակնկալում ինձանից և հասկացա, որ իմ բոլոր հարցերն իրոք ունեն պատասխաններ»:

1974 թվականին մկրտվելուց հետո Երեց Վինսոնը ծառայել է եպիսկոպոսության խորհրդական, եպիսկոպոս, բարձրագույն խորհրդական, ցցի նախագահության խորհրդական, տարածքային ներկայացուցիչ, միսիայի նախագահության խորհրդական, տաճարային արարողության աշխատող և Տարածքային Յոթանասունական:

Նա ծնվել է 1951 թվականի մարտի 12-ին Սիդնեյում, Ավստրալիա: 1974 թվականի մայիսին նա ամուսնացել է Քեյ Էն Քարդենի հետ: Նրանք ունեն վեց զավակ: ■

Երեց Խոսե Ա. Տեշերա

Յոթանասունի Նախագահություն

Երեց Խոսե Ա. Տեշերան հիշում է մի դաս, որը նա սովորել է երիտասարդ ժամանակ Պորտուգալիայում: Ընտանեկան միջոցառման ժամանակ նա գաղտնի դուրս եկավ տնից, որպեսզի ձուկ որսա: Նա զգաց, որ պետք է ծնողներին տեղյակ պահեր, սակայն որոշեց չասել, քանի որ նրանք զբաղված էին:

Ժամեր անց, նրա անհանգստացած ծնողները գտան նրան գետափին: Այդ դեպքից հետո նա սովորեց ոչ միայն հնազանդվել իր ծնողներին, այլև հնազանդվել Սուրբ Հոգու հուշումներին:

Այդ օրից ի վեր, Երեց Տեշերան սովորություն դարձրեց ականջ դնել մեղմ, հանդարտ ձայնին: Նա և նրա ընտանիքը ծանոթացել են ավետարանին 1976 թվականին, երբ Պորտուգալիան բացվեց միսիոներական աշխատանքի համար: Նա մկրտվեց 16 տարեկան հասակում, իսկ ավելի ուշ որպես միսիոներ ծառայեց Լիսբոն Պորտուգալիա միսիայում:

«Մեր ընտրությունները մեր կյանքը փոխելու անժխտելի զորություն ունեն»,- ասել է Երեց Տեշերան, ով Յոթանասունի նախագահության անդամ հաստատվեց 2018 թվականի մարտի 31-ին: «Այդ պարգևը մեր հանդեպ վստահության մի արտասովոր նշան է, մի փայփայած անձնական պատասխանատվություն, որը պետք է իմաստությամբ օգտագործել»,- ուսուցանել է նա 2009 թվականի ապրիլի գերագույն համաժողովի ժամանակ:

Երեց Տեշերան հաշվապահության և բիզնեսի կառավարման աստիճաններ է ստացել և Եկեղեցու համար աշխատել է որպես միջազգային վերահսկիչ: Նա նաև ծառայել է Պորտուգալիայի Ռազմաօդային ուժերում, որը ՆԱՏՈ-ի անդամ էր: Այդ ժամանակ, նա կանչվել է տեղի Եկեղեցու հասարակության կապերի բաժնի տնօրեն: Դրանից կարճ ժամանակ անց, նա հանդիպել է իր կնոջը, Մարիա Ֆիլոմենա Տելե Գրիլոյին: Նրանք ամուսնացել են 1984 թվականին Բերն Շվեյցարիա Տաճարում և ունեն երեք զավակ:

Խոսե Ավգուստո Տեշերա դա Սիլվան ծնվել է 1961 թվականի փետրվարի 24-ին Վիլա Ռիալում, Պորտուգալիա: Նա ծառայել է եպիսկոպոսության խորհրդական, շրջանի նախագահ, ցցի նախագահ, Տարածքային Յոթանասունական և Բրազիլիայի Սան Պաուլո հարավային միսիայի նախագահ: Նա Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական է հաստատվել 2008 թվականի ապրիլի 5-ին: Ներկայումս նա ծառայում է Հարավային Ամերիկայի Հարավային Տարածաշրջանի նախագահ և Յոթանասունի Նախագահությունում իր ծառայությունը կսկսի 2018 թվականի օգոստոսի 1-ին:

Նախ և առաջ, Երեց Տեշերան 2015 թվականի ապրիլ ամսվա գերագույն համաժողովին խորհուրդ է տվել, որ «խորացնենք Փրկիչի մասին մեր հասկացողությունը: . . . Եկեք վաղվան չթողնենք այն, ինչ կարող ենք անել այսօր: Այսօր մենք պետք է գանք դեպի Քրիստոսը»: ■

Երեց Կարլոս Ա. Գոդոյ

Յոթանասունի Նախագահություն

1980-ականների վերջին Երեց Կարլոս Ա. Գոդոյը նոր էր հետ կանչվել Եպիսկոպոսի կոչումից: Նաև, ավարտել էր համալսարանը, աշխատում էր հաջողակ ընկերությունում և կարծում էր, որ կյանքն ավելի լավ չէր կարող լինել, մինչև որ հին ընկերն այցելեց իրեն:

Այդ ընկերը շնորհավորեց նրան, իսկ հետո մի հարց տվեց, որը նրան անհանգստացրեց. «Եթե շարունակես նույն կյանքով ապրել, արդյո՞ք քո հայրապետական օրհնության մեջ խոստացված օրհնությունները կիրականանան»:

Երեց Գոդոյը հասկացավ, որ պետք է փոփոխություններ կատարել, եթե ցանկանում էր ստանալ խոստացված օրհնությունները: Չնայած իր գոհունակությանը, նա որոշեց ստանալ մագիստրոսի աստիճան: Նա դուրս եկավ աշխատանքից, վաճառեց իր ունեցվածքը և իր ընտանիքի հետ միասին թողեց Բրազիլիայի իր ծանոթ վայրերը, որպեսզի հաճախեր Միացյալ Նահանգների համալսարան:

Երեց Գոդոյը, ով Յոթանասունի նախագահության անդամ նշանակվեց 2018 թվականի մարտի 31-ին, ասել է, որ այդ փորձառության շնորհիվ նա սովորեց վստահել Տիրոջ ծրագրին և կամավոր հեռանալ իր հարմարավետության գոտուց:

Երեց Գոդոյը Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական է հաստատվել 2008թ. ապրիլի 5-ին: Նա ծառայում է Հարավային Ամերիկայի Հյուսիսարևմտյան Տարածաշրջանի նախագահ և Յոթանասունի Նախագահությունում իր ծառայությունը կսկսի 2018 թվականի օգոստոսի 1-ին:

Յոթանասունական կանչվելուց առաջ Երեց Գոդոյը երկու խոշոր ընկերությունների համար աշխատել է մարդկային միջոցների կառավարչի պաշտոնում, մինչև իր սեփական խորհրդատվական ընկերություն հիմնադրումը: 1987 թվականին նա տնտեսագիտության և քաղաքագիտության բակալավրի աստիճանը ստացել է Սան Պաուլոյի Պոնտիֆիկա Կաթոլիկ Համալսարանում, իսկ 1994 թվականին կազմակերպչական վարքագծի մագիստրոսի աստիճանը ստացել է Բրիգամ Յանգ Համալսարանում:

Երեց Գոդոյը լիաժամկետ միսիոներ է ծառայել Բրազիլիայի Սան Պաուլոյի հարավային միսիայում և ծառայել է Եպիսկոպոս, բարձրագույն խորհրդական, տարածքային բարօրության գործակալ, տարածքային Յոթանասունական և Բրազիլիա Բելեմ Միսիայի նախագահ:

Նա ծնվել է 1961 թվականի փետրվարի 4-ին Պորտո Ալեգրեյում, Բրազիլիա: 1984 թվականի մարտին նա ամուսնացավ Մոնիկա Սոարես Բրանդոյի հետ և նրանք ունեն չորս զավակ: ■

Երեց Սթիվեն Ռ. Բանգերթեր

Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական

Մանկության տարիներին ճամբարային ուղևորության ժամանակ Երեց Սթիվեն Ռ. Բանգերթերը և նրա ընտանիքը լեռնային հեծանիվներով բարձրացան լեռան գագաթը: Վերադարձի ճանապարհին նա մոլորվեց ու առանձնացավ մյուսներից:

Երբ այդ օրը նա ծնկի իջավ ու խնդրեց իր Երկնային Հորը օգնության համար, իր մտքում նա տեսավ կորցրած արահետը: Երբ սկսեցի իջնել արահետով, «իմ եղբայրն իր մոտոցիկլետով հասավ արահետի վերջին, գրկեց ինձ և խավարի միջով ուղեկցեց դեպի ճամբարը, որը մի քանի ժամվա ճանապարհ էր»:

Այդ միջադեպը մեկն էր նրանցից, որի ժամանակ նա իրեն սիրված զգաց մանկության տարիներին: «Իմ կյանքում ոչ մի րոպե չեմ կասկածել, որ սիրված ու փայփայված եմ»,- ասել է Երեց Բանգերթերը:

Երեց Բանգերթերը ծնվել է 1961 թվականի հուլիսի 29-ին Սոլթ Լեյք Սիթիում (Յուտա, ԱՄՆ), Մաքս Ի. և Թելմա Ռ. Բանգերթերների ընտանիքում: Նա մեծացել է Գրենջերում, Յուտա:

Կանադայի Վանկուվեր միսիայից վերադառնալուց մի քանի շաբաթ անց Երեց Բանգերթերը հանդիպեց Սյուզան Ալեքսիս Հյուզին: Իրենց առաջին ժամադրության ժամանակ նա այդ աղջկա մեջ նկատեց ծառայելու խոնարհ ցանկություն, որը հուշեց նրան երկրորդ ժամադրության առաջարկն անել: Նրանք կնքվեցին Սոլթ Լեյքի Տաճարում 1983թ. Մարտի 17-ին: Նրանք ունեն վեց որդի:

Երեց Բանգերթերը կրոնի գիտությունների բակալավրի իր աստիճանը ստացել է Արիզոնայի Պետական համալսարանից, իսկ իրավագիտության դոկտորի աստիճանը ստացել է Վեսթերնի Պետական Համալսարանի Իրավագիտության քոլեջում: Վերջին 25 տարիների ընթացքում Երեց Բանգերթերը Հարավային Կալիֆորնիայում և հարավային Յուտայում իրավաբան է աշխատել եկեղեցիների և հավատքի վրա հիմնված կազմակերպությունների համար: 1993–2003 թթ. նա եղել է Cooksey, Toolen, Gage, Duffy, և Woog ընկերությունների գործընկեր և 2004 թ.-ին դարձել Bangerter, Frazier, և Graff ընկերությունների ղեկավար գործընկեր:

Երեց Բանգերթերը ծառայել է Տարածքային Յոթանասունական, ցցի նախագահ, ցցի նախագահության խորհրդական, եպիսկոպոս, երեցների քվորումի նախագահ և ծխի Երիտասարդ տղաների նախագահ: ■

Երեց Մեթյու Լ. Քարփենթեր

Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական

Երեց Մեթյու Լ. Քարփենթերը հիշում է, թե ինչպես է առաջին անգամ զգացել Սուրբ Հոգին: Նա յոթ տարեկան էր և նստած էր Երեխաների Խմբի կրտսեր դասարանում: Մի լույս էր ներխուժել սենյակ և նա ջերմություն էր զգում, որը նախկինում չէր զգացել:

«Միրտս թրթռում էր և դա այդ ջերմության պատճառով չէր»,- ասել է նա: «Ես գիտեի, որ Աստված իրական է, ես զգացի դա»:

11 տարեկան հասակում նա իր հայրիկի հետ հաճախեց գերագույն համաժողովի մի նիստի, որը տեղի էր ունենում Սոլթ Լեյքի Թաբերնաքլում: Առաջին անգամ էր Մարգարե Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի հետ գտնվում նույն սենյակում:

Նա ասաց. «Երբ տեսա նրան, Հոգին վկայեց, որ նա է մարգարեն»:

Երիտասարդ տարիքում այդ պարզ հոգևոր հաստատումն օգնեց նրան իր ողջ կյանքում փնտրել Հոգուն, որպեսզի առաջնորդի իրեն:

«Իմ վկայությունը մի հրեշտակային փորձառություն չէր»,- ասել է Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունականը, ով հաստատվեց 2018 թվականի մարտի 31-ին, «այլ այն ժամանակի ընթացքում մեծացել ու դրսևորվել է»:

Մեթյու Լեսլի Քարփենթերը ծնվել է 1959 թվականի հոկտեմբերի 21-ին Սոլթ Լեյք Սիթիում (Յուտա, ԱՄՆ), Լեոն Էրիկսոնի և Ռոբերտ Ալրեդ Քարփենթերների ընտանիքում: Նա այդ զույգի ութ երեխաներից ամենափոքրն էր, և մեծացել է մի ընտանիքում, որտեղ կային հինգ ավագ քույրեր:

Ավագ դպրոցի վերջին ամսում նա հանդիպեց Միշել (Շելի) Բրաունին: Նրանք սկսեցին ժամադրվել, բայց հարաբերություններին դադար տվեցին 1979–1981 թթ.-ին, երբ Մեթյուն ծառայում էր Շվեյցարիայի Ժնևի միսիայում: Միսիայից վերադառնալուց հետո այդ զույգն ամուսնացավ Սոլթ Լեյքի տաճարում՝ 1982 թվականի հուլիսի 9-ին: Նրանք ունեն հինգ զավակ:

Երեց Քարփենթերը ֆինանսների բակալավրի աստիճանը ստացել է Բրիգամ Յանգ Համալսարանում և բիզնես կառավարման մագիստրոսի աստիճանը ստացել է Հարվարդի Բիզնեսի Համալսարանում: Վերջերս, նա Foundation Specialty Financing Fund-ի գլխավոր տնօրենն էր:

Երեց Քարփենթերը ծառայել է եպիսկոպոս, եպիսկոպոսության խորհրդական, ցցի Երիտասարդ տղաների նախագահ, բարձրագույն խորհրդական, ցցի նախագահ և Տարածքային Յոթանասունական: ■

Երեց Ջեք Ն. Ջերարդ

Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական

Երեխա ժամանակ Երեց Ջեք Ն. Ջերարդն արթնանում էր ամեն օր առավոտյան ժամը 5:00-ին, որպեսզի հոգ տանի իրենց կաթնատու կովերի մասին: Մեծանալով Մուդ լճի (Այդահո, ԱՄՆ) մոտ գտնվող գյուղատնտեսական համայնքում, նա ոչ միայն սովորել էր ջանասիրաբար աշխատել և պատասխանատվություն ստանձնել, այլև հասկանալ՝ որպես Աստծո զավակներ բոլոր մարդկանց արժեքը:

«Բոլոր մարդիկ դեր ունեն կատարելու և այստեղ են մի նպատակի համար, անկախ կարգավիճակից ու հեղինակությունից»,- ասել է Երեց Ջերարդը, ով Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական հաստատվեց 2018 թվականի մարտի 31-ին: Այդ դասը իր կյանքի ընթացքում պարզև է հանդիսացել:

Նրա կարիերան, որն ընդգրկում էր մի քանի կազմակերպությունների առաջատար ղեկավար դերեր, ինչպիսիք են՝ National Mining Association, America Chemistry Council, և վերջերս American Petroleum Institute, հնարավորություն տվեց նրան ընկերանալ տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց հետ:

Երեց Ջերարդը ծնվել է 1957 թվականին՝ Ջեյմս և Մեսիլ Գասեր Ջերարդների ընտանիքում: Սիդնեյ Ավստրալիա միսիան վերջացնելուց հետո Երեց Ջերարդը հաճախեց Այդահոյի համալսարան, որտեղ նա փորձաշրջան անցավ, իսկ հետո լրիվ դրույքով պաշտոն ստացավ Այդահոյի կոնգրեսմենի աշխատակազմում:

Վաշինգտոն Կ. Տ.-ում Աշխատելու ժամանակ նա հանդիպեց Կլոդ Նեֆի հետ, ով Յուտայի սենատորի անձնակազմի օգնականն էր: «Նա ավետարանի լույսն էր լուսարձակում»,- ասել է Երեց Ջերարդը նրանց հանդիպման մասին: Այդ երկուսն ամուսնացան 1984 թվականի ապրիլի 4-ին Սոլթ Լեյքի տաճարում: Նրանք ունեն ութ զավակ և չորս թոռ:

Երեց Ջերարդը քաղաքագիտության և իրավագիտության դոկտորի աստիճանները ստացել է Ջորջ Վաշինգտոնի Համալսարանում:

Երեց Ջերարդը ծառայել է եպիսկոպոս, ցցի նախագահ և Տարածքային Յոթանասունական, Ավետարանի Վարդապետության ուսուցիչ և Կիրակնօրյա Դպրոցի նախագահ:

Երեց Ջերարդն ասել է, որ ինքն ու իր կինը կիսում են Տիրոջ կամքը կատարելու ցանկությունը: «Որպես թույլ մահկանացուներ, մենք հավատարիմ ենք այն ամենին, ինչ Տերը կցանկանա, որ մենք անենք, և մենք խոնարհվում ու պատիվ ենք համարում . . . մեր ժամանակն ու ջանքերը նվիրաբերել Տիրոջ գործին»: ■

Երեց Մաթիաս Հելդ

Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական

Երեց Մաթիաս Հելդին և նրա կնոջը՝ Իրենին, միանշանակ կարելի կոչել համաշխարհային Եկեղեցու մարմնացում: Երկուսն էլ գերմանացի նախահայրեր ունեցող կոլումբիացիներ են: Աշխատանքի և ուսման պատճառով իրենց հայրենի Հարավային Ամերիկայից ճամփորդել են Կանադա, Գերմանիա, Գվատեմալա, Բրազիլիա, և ի վերջո հետ՝ Կոլումբիա: Ամեն երկրում նրանք սովորում էին նոր լեզու և նոր մշակույթ:

«Սակայն, որտեղ էլ գնայինք, Եկեղեցին ճիշտ նույնն էր ամեն տեղ»,- ասել է Երեց Հելդը, ով Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական է հաստատվել 2018 թվականի մարտի 31-ին:

Այդ հոգևոր «նմանությունը» ամուր հիմք է տվել այդ զույգին, երբ նրանք մեծացնում էին երեք երեխաներին ու աճում ավետարանում:

Երեխա ժամանակ Հելդերը դասընկերներ էին գերմաներեն լեզվի թեքումով դպրոցում՝ իրենց հայրենի Բոգոտայում, Կոլումբիա: Նրանք կնքվել են 1989 թ. հունիսի 13-ին, Ֆրանկֆուրտի Գերմանիայի տաճարում այն բանից հետո, երբ Մաթիասը Բոգոտայում ստացավ մեքենաշինության ճարտարագետի աստիճան, իսկ Կանադայում՝ բիզնեսի կառավարման մագիստրոսի աստիճան:

Ավելի ուշ, աշխատանքի բերումով երիտասարդ զույգը տեղափոխվեց Հանովեր, Գերմանիա, որտեղ քույր Հելդը մեծ տպավորություն ստացավ, որ իրենց կյանքը պետք է փոխվի:

«Ես ասացի Մաթիասին, որ այնպիսի զգացողություն ունեմ, կարծես երկնքից ուղերձ ենք ստանալու»,- ասել է նա: Այդ երկնային ուղերձը երևան եկավ 1987 թվականի մի անձրևոտ երեկո, երբ լսվեց մուտքի դռան ձայնը: Դրսում կանգնած էին մորմոն միսիոներները, ովքեր ամերիկյան արտասանությամբ խոսում էին գերմաներեն:

Հետագա 10 ամիսների ընթացքում Հելդերն ուսումնասիրեցին միսիոներների հետ միասին և ընկերներ ձեռք բերեցին տեղի ՎՕՍ հավաքատանը: Երկար աղոթքներից հետո նրանք հոգևոր հաստատում ստացան ավետարանի ճշմարտացիության մասին և մկրտվեցին 1988 թվականին:

Երեց ՀԵլդն ավելի քան 25 տարի աշխատեց ավտոմոբիլային արտադրող Daimler-Benz ընկերության համար, որտեղ իր ղեկավար պաշտոնի բերումով ճանապարհորդեց աշխարհով մեկ: Յուրաքանչյուր իրենց ապրած երկրում Հելդերն ապավինում էին Տիրոջը:

Ծնվել է 1960 թվականի հունիսի 5-ին, Մայքլ և Էլիզաբեթ Հելդերի ընտանիքում: Երեց Հելդը ծառայել է ցցի նախագահության խորհրդական, եպիսկոպոսության խորհրդական և տարածքային Յոթանասունական՝ Հարավային Ամերիկայի Հյուսիս-արևմտյան տարածաշրջանում: ■

Երեց Դեյվիդ Փ. Հոմեր

Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական

Ավետարանի մասին Երեց Դեյվիդ Փ. Հոմերի վաղ հիշողություններից մեկն այն էր, որ 14 տարեկանում որպես զուգընկեր կցված էր իր ծխից մի տնային ուսուցչի, ով «արտասովոր մոտեցում էր ցուցաբերում տնային ուսուցմանը»,- ասել է Երեց Հոմերը: «Նրանք ոչ միայն գնում էին մարդկանց տուն այցելության, այլև սպասավորում էին նրանց՝ իրենց կարիքներին համապատասխան»:

Զուգընկերներով նրանք աղոթում ու խոսում էին իրենց կցված ընտանիքների մասին, ոչ թե որպես մեծը փոքրին, այլ՝ որպես հասակակիցներ քահանայության ծառայության մեջ: «Ես սովորեցի, որ ծառայելիս Հոգին ներկա է»,- ասել է Երեց Հոմերը:

Դա մի դաս էր, որը նա սերտեց ողջ կյանքի և Եկեղեցում հետագա ծառայության ընթացքում, անկախ այն բանից՝ ծառայում է որպես Տարածքային Յոթանասունական, մսուրի ղեկավար, թե հայտարարության տախտակի մասնագետ, մի կոչում, որը նա կատարում էր, երբ կնոջ հետ ապրում էր Մելբուռն քաղաքում, Ավստրալիայում:

Դեյվիդ Փոլ Հոմերը ծնվել է 1961թ-ի ապրիլի 25-ին, Սոլթ Լեյք Սիթիում (Յուտա, ԱՄՆ), Ֆրեդերիկ և Ֆիլիս Լենիլ Հոմերների ընտանիքում: 1980–1982թթ. Հոնկոնգում իր միսիայից հետո նա հանդիպել է Բրիգամ Յանգ համալսարանի շրջանավարտ Նենսի Դրանսֆիլդի հետ, Սոլթ Լեյք Սիթիում ինստիտուտի հոգևոր հավաքի ժամանակ, որտեղ նա աշխատում էր և դասընթացների էր հաճախում Յուտայի համալսարանում: Նրանք ամուսնացան Սոլթ Լեյքի Տաճարում 1984թ. հուլիսի 31-ին: Նրանք մեծացրել են հինգ դուստր և մեկ որդի:

Երեց Հոմերը ստացել է տնտեսագիտության բակալավրի աստիճան Յուտայի Համալսարանում և բիզնեսի կառավարման մագիստրոսի աստիճան Պենսիլվանիայի համալսարանի Վորթոնի դպրոցում:

General Mills-ում գործադիր ղեկավարի պաշտոնում աշխատելու իր 30-ամյա կարիերայի ընթացքում, նա և իր կինը ապրել են Մայամիում (Ֆլորիդա, ԱՄՆ), Մինեապոլիսում (Մինեսոտա, ԱՄՆ), Բիրլինգտոնում (Օնտարիա, Կանադա) և Մենթ-Սուլփիսում (Վոդ, Շվեցարիա):

Երեց Հոմերը ծառայել է ցցի նախագահ, եպիսկոպոս, երեցների քվորումի նախագահ և ծխի գործադիր քարտուղար: Որպես տարածքային Յոթանասունական, նա իր ծառայությունը սկսեց Կանադայում և շարունակեց Եվրոպայում, որտեղ նա ծառայեց այս վերջին չորս տարիների ընթացքում, որից հետո 2018 թվականի մարտի 31-ին հաստատվեց Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական: ■

Երեց Քայլ Ս. Մակքեյ

Բարձրագույն Իշխանավոր
Յոթանասունական

Բացի իր ընտանիքից ու Եկեղեցուց, Երեց Քայլ Ս. Մակքեյի մեծագույն նախասիրությունն իր ձիով լեռներով զբոսնելն է:

Նա ասել է. «Դա իմ կրոնը չէ, բայց կասկած չկա, որ այն ամրապնդել է իմ [հավատքը]: Ես հերթով վայելում եմ Տիրոջ լեռները և Տիրոջ տան լեռը: Այդ երկու վայրում էլ Նա հանդիպում է ինձ:

Երեց Մակքեյը Հանցվիլի (Յուտա, ԱՄՆ) լեռները նմանեցնում է Մորմոնի ջրերի և անտառների հետ և դրանց կարևորությունը Ալմայի ժողովրդի համար՝ դրանք այն վայրերն են, որտեղ իր երիտասարդության տարիներին Նա ճանաչեց իր Քավիչին:

Երեց Մակքեյը ծնվել է 1960 թվականի փետրվարի 14-ին, ԱՄՆ-ի Իլինոյս նահանգի Չիկագո քաղաքում, Բարի Գան Մակքեյ և Էլեյն Մակքեյի ընտանիքում, ովքեր նրա կարծիքով կերտել են իրենից այսօրվա մարդուն:

1979 թվականին նա դադար տվեց Բրիգամ Յանգ Համալսարանում իր ուսումնառությանը, որպեսզի ճապոնիայի Կոբ քաղաքում ծառայի լիաժամկետ միսիա: Իր միսիայից վերադառնալուց անմիջապես հետո, որպեսզի շարունակի անգլերեն լեզվի իր ուսումնառությունը, Երեց Մակքեյը հանդիպեց Ջենիֆեր Սթոունին, ով վերջերս էր վերադարձել Անգլիա Բրիստոլ միսիայից: Ջենիֆերը նույնպես սովորում էր անգլերեն: Այդ երկուսն ամուսնացան 1984 թվականի հունիսի 12-ին, Օուքլենդ Կալիֆորնիա Տաճարում:

Կարևորելով ընտանիքը, Երեց Մակքեյն ասում է, որ նա և Քույր Մակքեյին մեծագույն ուրախություն են պարգևում իրենց սերունդները: Մինչ Մակքեյներն ապրում են Կեյսվիլում (Յուտա, ԱՄՆ), նրանք կանոնավոր այցելում են իրենց ինը երեխաներին Հանցվիլում, որտեղ իր նախնիները բնակություն են հաստատել 1860-ականների սկզբներին:

Երեց Մակքեյը 1987 թվականին ստացել է իրավաբանական գիտությունների դոկտորի աստիճան ԲՅՀ-ի Ջ. Ռուբեն Քլարկի անվան իրավաբանական ֆակուլտետում և անմիջապես ընդունվել է ԱՄՆ-ի Պորտլենդ նահանգի տարածքային խոշոր իրավաբանական ընկերությունում աշխատանքի: Հետագայում, նա վերադարձավ Յուտա՝ հնարավորությունը փորձելու մեկ այլ իրավաբանական ընկերության հետ, նախքան Kroger Company-ում գործի ընդունվելը: 2000–2017թթ. աշխատել է որպես Smith և Fry ընկերությունների փոխնախագահ, որոնք Kroger ի երկու բաժանմունքներն էին Յուտա և Արիզոնա նահանգներում:

Նախկինում Երեց Մակքեյը ծառայել է եպիսկոպոս, բարձրագույն խորհրդական, ցցի նախագահ և Տարածքային Յոթանասունական: ■

Երեց Խուան Պաբլո Վիլար

Բարձրագույն Իշխանավոր
Յոթանասունական

Երեց Խուան Պաբլո Վիլարն առաջին անգամ Եկեղեցու մասին իմացավ Սանտիագոյում (Չիլի), որտեղ նրա ավագ եղբայր, Իվանը, հայտարարեց, որ ինքը մկրտվել էր առանց ծնողների թույլտվության, իսկ ավել ուշ ասաց, որ ցանկանում է ծառայել միսիայում: Երբ հարցրին, թե ինչու արել այդ, նա կիսվեց իր վկայությամբ ու ծառայելու ցանկությամբ:

«Ես չէի հասկանում դրա իմաստը»,- հիշում է Երեց Վիլարը, որն այդ ժամանակ դեռ 17 տարեկան էր: «Բայց այդ պահից ի վեր նա սերմ դրեց իմ սրտում»:

Այդ սերմն աճելու հնարավորություն ունեցավ, երբ եղբայրը նրա անունն առաջարկեց միսիոներներին: Իր առաջին դասի ժամանակ, Երեց Վիլարը ստացավ իր վկայությունը Մորմոնի Գրքի ճշմարտացիության մասին:

Նա ասել է. «Իմ դեպքում անհրաժեշտություն չկար ծնկի գալու և աղոթելու, քանի որ նրանց վկայությունը լսելուց հետո ես ներքուստ հասկացա, որ այն ճշմարիտ է»: «Երբ գիտակցեցի դա, ապա հասկացա, որ մնացած ամեն ինչ պետք է որ ճշմարիտ լինի»:

Իվանը, ով ծառայում էր մոտակա միսիայում, թույլտվություն ստացավ մկրտելու Երեց Վիլարին 1988 թվականին: Ավելի ուշ, նրանց մայրն ու մյուս եղբայրը, Կլաուդիոն, նույնպես միացան Եկեղեցուն:

Իր մկրտությունից մեկ տարի անց Երեց Վիլլը ծառայության անցավ Չիլիի Վինյա դել Մար միսիայում, սկսելով ծառայությամբ լի իր կյանքը, որն ընդգրկում է՝ ցցի նախագահ, եպիսկոպոս, եպիսկոպոսի խորհրդական, Չիլիի Սանտիագո Արևելյան միսիայի խորհրդական և Տարածքային Յոթանասունական՝ Հարավային Ամերիկայի հարավային տարածաշրջանում: Նա Յոթանասունի Բարձրագույն Իշխանավոր հաստատվեց 2018 թվականի մարտի 31-ին:

Երեց Վիլարը ծնվել է 1969թ. Սեպտեմբերի 11-ին Վալպարայսոյում, Չիլի, Սերջիո Վիլար Վերայի և Ջենովեվա Մավերդրայի ընտանիքում: Նա ամուսնացավ Կարոլա Կրիստինա Բարիոսի հետ 1994թ. մարտի 31-ին, Սանտիագո Չիլի Տաճարում: Նրանք ունեն երեք զավակ:

Սոցիալական հաղորդակցության և հասարակայնության հետ կապերի գծով բակալավրի և մարքեթինգի մագիստրոսի աստիճաններ ստանալուց հետո նա աշխատել է դեղագործական և բժշկական սարքավորումների ոլորտում: 2007 թվականին նա Բրիգամ Յանգ Համալսարանում ստացել է բիզնեսի կառավարման մագիստրոսի աստիճանը: Այնուհետև, նա վերադարձավ Չիլի, որպեսզի աշխատի հանքարդյունահանման ծառայություններ մատուցող Orica ընկերությունում, վերջին տվյալներով՝ որպես ավագ կառավարիչ: ■

Երեց Տակաշի Վադա

Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական

Նոյեմբերյան մի ցրտաշունչ օր ամերիկացի միսիոների կողմից հնչեցրած հարցը, ով հարցնում էր փոստային գրասենյակի տեղը, զարմացրեց Տակաշի Վադային:

15 տարեկան տղան իր հայրիկի կողմից զգուշացվել էր հեռու մնալ մորմոններից, ովքեր իրենց տնից երեք բոպե հեռավորության վրա գտնվող Ճապոնիայի Նագանո քաղաքի փողոցներում մոտենում էին մարդկանց: Սակայն, Տակաշին զարմացավ ամերիկացի երեցների ճապոներենի իմացությամբ:

Մի քանի օր անց, մեկ ուրիշ միսիոներ կանգնեցրեց Տակաշիին: Նա վերջերս էր Ճապոնիա ժամանել: Կոտրված ճապոներենով նա փորձեց կիսվել Ջոզեֆ Սմիթի պատմությամբ:

Տակաշին ամեն ինչ չհասկացավ, «բայց զգացի, որ պետք է լսեմ»,- հիշում է նա:

Միսիոներներն ուսուցանեցին աղոթքի քայլերը և դասերը: Նա հաճախեց Եկեղեցու ժողովներին և զգացվեց տեղի անդամների վկայություններից: Կաշկանդված զգալով իր բուդդիստական ընտանիքի ակնկալիքներից, Տակաշին շարունակում էր պնդել միսիոներներին, որ «ես չեմ կարող միանալ Եկեղեցուն, սակայն կցանկանայի ավելին իմանալ»:

Երկու տարի անց, 17 տարեկանում հասակում Միացյալ Նահանգեր սովորելու գնալուց առաջ, Տակաշիի ծնողները համաձայնվեցին և նա միացավ Եկեղեցուն:

Երեց Վադան ծնվել է 1965 թվականի փետրվարի 5-ին, Կենզո և Կազուկո Վադաների ընտանիքում, 1990 թվականին ստացել է լեզվաբանության գծով բակալավրի աստիճան, իսկ 1996 թվականին բիզնեսի կառավարման մագիստրոսի աստիճան Բրիգամ Յանգ Համալսարանում:

Նա ծառայել է Յուտայի Սոլթ Լեյք Սիթի հյուսիսային միսիայում և ամուսնացել է Նոեմի Ռենոյի հետ Տոկիո Ճապոնիա տաճարում՝ 1994թ. հունիսի 18-ին: Զույգն ունի երկու որդի:

Երեց Վադան որոշ պաշտոններ է զբաղեցրել Միացյալ Նահանգներում և Ճապոնիայում գտնվող միջազգային ընկերություններում, ինչպես նաև Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան, Հյուսիսային Ամերիկայի հյուսիս-արևմտյան և Հյուսիսային Ասիայի տարածաշրջանների Եկեղեցու նյութական գործերի տնօրենի պաշտոնը:

Երեց Վադան նախկինում եղել է եպիսկոպոս, բարձրագույն խորհրդական և սեմինարիայի ուսուցիչ: 2013–2016 թթ. նա ծառայել է Ճապոնիայի Տոկիո հարավային միսիայի նախագահ: Նա Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական է հաստատվել 2018թ. մարտի 31-ին: ■

Բոննի Հ. Քորդոն

Երիտասարդ Կանանց Գերագույն Նախագահ

Քույր Բոննի Հ. Քորդոնի կողմից շատ սիրված մի հատված գտնվում է Վարդապետություն և Ուխտեր 123.17-ում. «Եկեք ուրախությամբ անենք ամեն բան, որ մեր ուժի սահմաններում է. և հետո, թող մենք կանգնենք հանգիստ, ամենայն համոզվածությամբ՝ տեսնելու Աստծո փրկությունը և նրա բացահայտվող բազուկը»:

Նրա համար այս հատվածը ներառում է իր կյանքի ընթացքում սովորած դասերը: «Մենք կարող ենք անել դժվար գործեր, բայց մենք նաև կարող ենք դրանք ուրախությամբ անել», - ասել է Քույր Քորդոնը, ով 2018թ. մարտի 31-ին հաստատվել է որպես Երիտասարդ Կանանց Գերագույն Նախագահ:

Այդ գիտելիքը ներշնչվել էր նրան «հեքիաթային մանկության» տարիներին, երբ նա աշխատում էր Այդահոյից հարավ-արևելք գտնող մի փոքրիկ ագարակում, այնուհետև Պորտուգալիայում միսիոներ ծառայելիս, երբ փորձում էր յուրացնել նոր լեզու: Նաև, դա մի ուղերձ էր, որը միշտ կրկնում էր միսիոներներին, երբ ծառայում էր ամուսնու հետ, ով այդ ժամանակ նախագահում էր Բրազիլիա Կուրիթիբա միսիայում: Իսկ այժմ, այդ գիտելիքով նա ծրագրում է կիսվել աշխարհով մեկ սփռված երիտասարդ կանանց հետ:

Նա ասել է, որ այսօրվա երիտասարդ կանանցից պահանջվում է քայլ անել և առաջ տանել Տիրոջ աշխատանքը: «Եվ մենք կարող ենք դա անել»,- ասել է նա:

Բոննի Հիլամ Քորդոնը ծնվել է 1964 թվականի մարտի 11-ին, Այդահո Ֆալզում (Այդահո, ԱՄՆ), Հարոլդ և Քերոլ Ռասմուսեն Հիլամների ընտանիքում: Իր միսիայից հետո կրթության բնագավառում իր բակալավրի աստիճանը ստացել է Բրիգամ Յանգ Համալսարանում, որտեղ նա հանդիպեց Դերեկ Լեյն Քորդոնին: Նրանք ամուսնացան 1986թ. ապրիլի 25-ին Սոլթ Լեյքի տաճարում: Նրանք ունեն չորս զավակ և չորս թոռ:

Եկեղեցում ծառայել է որպես է մսուրային խմբի ղեկավար և սեմինարիայի ուսուցիչ: Երկու տարի առաջ, նախքան Երեխաների Միության գերագույն նախագահության խորհրդական կանչվելը, Քույր Քորդոնը սիրով ծառայել է ցցի Երիտասարդ Կանանց Նախագահի կոչումում: Նույնիսկ այդ կոչումից ազատվելուց հետո «ես երբեք չեմ դադարել երիտասարդ կանանց համար աղոթելուց»,- ասել է նա:

Ուղերձը, որով նա ցանկանում է կիսվել ողջ աշխարհի երիտասարդ կանանց հետ այն է, որ նա սիրում է նրանց և ամենակարևորը, որ Աստված է սիրում նրանց: ■

Մայքլ Դ. Քրեյգ

Առաջին Խորհրդական, Երիտասարդ Կանանց Գերագույն Նախագահություն

Երբ Քույր Միշել Քրեյգը դարձավ 16 տարեկան, նա իմացավ, որ իր ընտանիքը Պրովոյից (Յուտա, ԱՄՆ) պետք է տեղափոխվեր Հարիսբուրգ (Պենսիլվանիա, ԱՄՆ), որպեսզի նրա հայրը կարողանար ծառայել միսիայի նախագահի իր նոր հանձնարարության մեջ:

Նա երջանիկ էր, որ կարող է լինել իր ընտանիքի հետ, բայց այդ տեղափոխության հետևանքով երիտասարդ Միշելը կմնար «սոցիալապես միայնակ» ավագ դպրոցի տարիներին:

«Իսկապես, դրանք ձևավորող տարիներ էին»,- ասել է Քույր Քրեյգը: «Ընկերներիս ապավինելու փոխարեն, ես ապավինում էի ընտանիքիս և իմ վկայությանը, և Եկեղեցին դարձավ իմ աջակիցը»: Ամենից առավել, նա գնահատում էր իր հարաբերությունը Երկնային Հոր և Փրկիչի հետ:

Միշել Դենիս Քրեյգը ծնվել է 1963 թվականի հուլիսի 13-ին, Պրովո, Յուտայում և Ջանետ Լունդգրեն ու Ռոբերտ Հենրի Դայնզ Երրորդի յոթ զավակներից ավագն էր: Նա բնակվում էր Պրովոյում, մինչև իր ընտանիքը տեղափոխվեց Պենսիլվանիա: Երկու տարի անց Քույր Քրեյգը վերադարձավ Պրովո, որպեսզի հաճախի Բրիգամ Յանգ Համալսարան, որտեղ նա ստացավ տարրական կրթության բակալավրի աստիճան: 1984 թվականին նա ընդունեց Դոմինիկյան Հանրապետության Սանտո Դոմինգո միսիայում ծառայելու կանչը:

«Ես միշտ հավատացյալ եմ եղել»,- ասել է Քույր Քրեյգը, ով Երիտասարդ կանանց գերագույն նախագահության առաջին խորհրդական է հաստատվել 2018 թվականի մարտի 31-ին: «Երեխա ժամանակից ես իմացել եմ, որ Աստծո դուստրն եմ: Բայց ես հիշում եմ [իմ միսիայում], որ ամեն անգամ Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին վկայելիս, ես զգում էի Հոգին: Ես մի գեղեցիկ հաստատում էի զգում, որն ամրապնդում էր իմ վկայությունը:

Միսիայից վերադառնալուց օրեր անց, Քույր Քրեյգի եղբայրն ասաց նրան, որ նա պետք է ժամադրության գնար Բոյդ Քրեյգի հետ, ով եղբոր միսիայի ընկերն էր: Ութ ամիս անց այդ զույգը նշանվեց: Նրանք ամուսնացան 1986 թվականի դեկտեմբերի 19-ին, Սոլթ Լեյքի Տաճարում: Նրանք ունեն երեք զավակ և վեց թոռ:

Նա ծառայել է բազմաթիվ կոչումներում, այդ թվում՝ տաճարային արարողության ծառայող Պրովո Յուտա Տաճարում և Ավետարանի վարդապետության ուսուցիչ: Երիտասարդ կանանց գերագույն նախագահություն կանչվելուց առաջ նա ծառայում էր Երեխաների միության գերագույն նախագահությունում: ■



Բեքի Քրեյվեն

Երկրորդ խորհրդական, Երիտասարդ կանանց գերագույն նախագահություն

Մի խոսք կար, որը Քույր Բեքի Քրեյվենը հաճախակի էր արտասանում միսիոներ ծառայելու ժամանակ. «Երբ գիտակցում եք, թե ով եք, դուք այլ կերպ եք վարվում»:

«Եվ դա այդպես է բոլոր ոլորտներում՝ ինչպես եք հագնվում, ինչպես եք խոսում, ինչպես եք ներկայանում և միջոցառումների ժամանակ, որոնց հաճախում եք»,- ասել է Քույր Քրեյվենը, ով ծառայել է իր ամուսնու, Ռոնալդ Լ. Քրեյվենի հետ, երբ ամուսինը 2012-2015 թթ. նախագահում էր Հյուսիսային Կարոլինայի Շարլոտ միսիայում:

Քույր Քրեյվենը Երիտասարդ կանանց գերագույն նախագահության երկրորդ խորհրդական է հաստատվել 2018 թվականի մարտի 31-ին: «Երբ երիտասարդ կանայք սկսեն իրենց տեսնել Աստծո ծրագրի մեջ, նրանք կտեսնեն իրենց վերաբերող տեսլականը»,- ասել է նա: «Դուք պետք է տեսլական ունենաք: Եթե դուք չունեք տեսլական, դուք չեք իմանում, որ ուղղությամբ եք գնում և թե ինչպես կարող եք հասնել այդտեղ»:

Ռեբեկա Լին Քրեյվենը ծնվել է Չարդոնում (Օհայո, ԱՄՆ), 1959 թվականի հոկտեմբերի 26-ին, Քոլլես Վոլթեր և Լինդա Լուիզ Կազուկ Միտչելների ընտանիքում: Հպարտ է, որ «բանակայինի» դուստր է, մեծացել է՝ Տեխասում (ԱՄՆ), որտեղ նրա ընտանիքը միացավ Եկեղեցուն, Գերմանիայում, որտեղ ապրած տարիներին նրա ընտանիքը կնքվեց Շվեյցարիայի տաճարում, Անգլիայում, Յուտայում (ԱՄՆ), որտեղ նա մկրտվեց, երբ հայրն առաջին անգամ շրջագայում էր Վիետնամում և Մերիլանդ, Կենտուկի, Միսսուրի և Կանզասի նահանգներում:

Ամուսնացել է 1980թ. օգոստոսի 5-ին, Սոլթ Լեյքի տաճարում, Քրեյվեններն ունեն հինգ զավակ:

Իր նոր կոչման մեջ հաստատվելուց առաջ նա ծառայում էր ծխի Սփոփող միության նախագահությունում և արարողությունների աշխատող՝ Բաունթիֆուլ Յուտա տաճարում: Նաև, նա ծառայել է ծխի Երիտասարդ կանանց նախագահ, ցցի Սփոփող միության խորհրդի անդամ, ցցի միսիոներ և Մենկենհոսե ծրագրի ղեկավար:

Քույր Քրեյվենը ինտերիեր դիզայնի բակալավրի աստիճանը ստացել է Բրիգամ Յանգ Համալսարանից, որտեղ ծառայել է մարզական խորհրդատվական հանձնախմբում: Նաև ծառայել է գործադիր խորհրդի անդամ CHOICE Humanitarian ընկերությունում, որը Յուտայում հիմնված միջազգային բարեգործական կազմակերպություն է:

Նրան դուր են գալիս արշավները, ջրային մարզաձևերը, ձյունահավաքը, ճամփորդությունը, նկարչությունը, վերմակներ կարելը և իր ընտանիքի հետ խաղեր ու միջոցառումներ կազմակերպելը: ■



Լիզա Լ. Հարկնես

Երեխաների խմբի գերագույն նախագահության առաջին խորհրդական

Լիզա Լ. Հարկնեսը միշտ սեր է տածել ուսման և իրեն շրջապատող աշխարհի հանդեպ, բնավորություն, որը նա ժառանգել էր իր ծնողներից: Բրիգամ Յանգ Համալսարանում նա ուսումնասիրել է քաղաքագիտություն և, նույնիսկ, Monte L. Bean Life Science թանգարանում աշխատելիս սովորել է, թե ինչպես վարվել սողունների հետ, որոնց թվում են օձերը:

«Հավատում եք դրան, թե ոչ, նրանք անհատականություն են»,- ասել է նա: «Կար մեկը, որը ճանաչում էր ինձ, երբ բռնում էի նրան»: Հովարդը՝ կարմրապոչ օձը, բարձրանում էր նրա ուսին, փաթաթվում նրա վզին և գլուխը դնում նրա ուսին, մինչ նա թանգարան այցելող խմբին ուսուցանում էր:

Ներկայումս, նա կարող է վերցնել և զանազանել տարատեսակ օձերի, եթե նրանք չհարձակվեն նրա վրա:

Քույր Հարկնեսը ծնվել է 1965թ. Հունվարի 13-ին Լոս Անջելեսում, Կալիֆորնիա, ԱՄՆ, Ռոնալդ և Լառեյ Լոնգերի ընտանիքում: Լինելով ամենամեծը հինգ երեխաներից, ընտանիքով նրանք «միշտ արկածներ էին որոնում, և այլ երկրներում բացահայտում աշխարհը»: Նա ասաց դա, քանի որ միշտ կարող էր հարցնել իր ծնողներին. «ես լիովին հավատացել ու վստահել եմ, որ կարող եմ դիմել Երկնային Հորը և ստանալ պատասխանները»:

Լուիզիանա Բատոն Ռուժ իսպանախոս միսիայում ծառայելուց հետո Քույր Հարկնեսն ավարտեց ԲՅՀ և ստացավ քաղաքագիտության և երկրորդական ուսուցման բակալավրի աստիճան: Նա ամուսնացավ Դեյվիդ Ս. Հարկնեսի հետ 1988թ. ապրիլի 22-ին, Սոլթ Լեյքի տաճարում: Նրանք ունեն 5 զավակ և երկու թոռ:

Քույր Հարկնեսը, ով Երեխաների Խմբի Գերագույն նախագահության առաջին խորհրդական է նշանակվել 2018 թվականի մարտի 31-ին, նաև ծառայել է Երեխաների խմբի գերագույն խորհրդի անդամ, ցցի Երիտասարդ կանանց նախագահ, ծխի Սփոփող միության նախագահ, ծխի երիտասարդ կանանց նախագահության խորհրդական, համաստեղության դասարանի խորհրդատու, Երիտասարդ կանանց ճամբարի տնօրեն, ցցի ընտանեկան պատմության տնօրեն, ծխի ընտանեկան պատմության խորհրդատու և Ավետարանի Վարդապետության ուսուցիչ:

Նաև, կամավոր կերպով ծառայել է իր բնակավայրի ծնող-ուսուցիչ միության, համայնքի խորհրդի, Utah Symphony, Timpanogos Storytelling Festival համար, ինչպես նաև իր բնակավայրի տեղական իշխանությունների համար տարբեր պաշտոններում: ■

Սպասավորության կարևորությունը

Տնային ուսուցումը և այցելող քույրերի ծրագրերը կդադարեցվեն, հայտարարեց Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը գերագույն համաժողովի Կիրակի ցերեկային նիստի ժամանակ: «Սպասավորությունը» ուրիշների մասին Քրիստոսի նման հոգ տանելու մի «նոր և ավելի սրբազան» մոտեցում է, որի համակարգված աշխատանքի շնորհիվ անդամների հոգևոր և նյութական կարիքները կբավարարվեն:

Սփոփող Միության գերագույն նախագահ Քույր Ջին Բ. Բինգհեմը և Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը նույնպես խոսեցին այն մասին, թե ինչպես այս նոր մոտեցումն ավելի լավ կկենտրոնացնի Մելքիսեդեկյան Քահանայության քվորումները և Սփոփող Միությունները Քրիստոսի ձևով սպասավորման վրա (տես 101 և 104 էջերը):

Այժմ, դափնիների և համաստեղության դասարանի քույրերը նույնպես կարող են ծառայել սպասավորող զուգընկերներ Սփոփող Միության քույրերի հետ: Եռամսյակային հարցազրույցների ժամանակ սպասավորող եղբայրներն ու քույրերը կխորհրդակցեն ղեկավարների հետ այն մարդկանց կարիքների ու ուժեղ կողմերի վերաբերյալ, որոնց կցված են: Եռամսյակի ընթացքում ղեկավարների կատարած հարցազրույցների թվաքանակը կլինի զեկուցման միակ ձևաչափը: Հնարավորության դեպքում այցելությունները կարևոր են, սակայն սպասավորությունն իր մեջ չի ներառում հատուկ նախատեսված միջոց ամեն ամիս շփվելու համար:

«Երիտասարդները կարող են կիսել իրենց եզակի պարգևներով և աճել հոգևորապես, երբ ծառայում են մեծահասակների հետ միասին փրկության գործում»,- ասել է Քույր Բինգհեմը: Ընդգրկելով երիտասարդներին, նաև մեծանում է ուրիշների մասին հոգ տանող անդամների թիվը և օգնում է երիտասարդներին «ավելի լավ պատրաստվել Եկեղեցում և համայնքում իրենց դերերը կատարելուն և ընտանիքին սատարող անդամ լինել»:

«*Մենք* Եկեղեցու գլխավոր վարչությունում կարիք չունենք իմանալու, թե *ինչպես*, *որտեղ* կամ *երբ* եք հանդիպում ձեր մարդկանց հետ»,- ասել է Երեց Հոլանդը: «Մենք պարզապես ցանկանում ենք և կարևորում ենք, որ դուք դա *անեք* և որ ձեր հնարավորությունների սահմաններում օրհնեք նրանց ցանկացած կերպով:

Առաջին Նախագահությունից ստացած նամակի համաձայն, սպասավորության ջանքերի ճշգրտումները կարող են որոշ ժամանակ պահանջել, բայց պետք է կատարվեն հնարավորինս արագ: **Ministering.lds.org** կայքում տրված են լրացուցիչ մանրամասներ, այդ թվում՝ հաճախակի տրվող հարցերի պատասխանները: Ուսուցողական տեսանյութերը և այլ նյութերը կտեղադրվեն կայքում առաջիկա շաբաթների ընթացքում:

Հունիս ամսից սկսած *Լիահոնա* ամսագրում կավելացվի ամենամսյա բաժին՝ «Սպասավորության սկզբունքներ» վերնագրով, որի շնորհիվ անդամները կհասկանան, թե ինչպես կարող են միմյանց սպասավորելիս ավելի շատ նմանվել Քրիստոսին: ■

Վերակազմավորված Քվորումներ

Այժմ, ծխի (կամ ճյուղի) քահանայապետերի խումբը և երեցների քվորումը կմիավորվեն երեցների մեկ քվորումի կազմում, հայտարարել է Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը գերագույն համաժողովի քահանայության նիստին: 9ցի նախագահությունը կշարունակի ծառայել որպես ցցի քահանայապետերի քվորումի նախագահություն, սակայն այդ քվորումը կընդգրկի միայն այն քահանայապետերին, ովքեր ներկայումս ծառայում են ցցի նախագահությունում, եպիսկոպոսություններում, բարձրագույն խորհրդում և գործող հայրապետի կոչումներում:

Երեցների քվորումը կառաջնորդվի նախագահության կողմից, որը կարող է բաղկացած լինել երեցներից և քահանայապետերից: Երեցների քվորումի նախագահը հաշվետու կլինի ցցի նախագահին և կանոնավոր կերպով կհանդիպի եպիսկոպոսի հետ: Քահանայության պաշտոնները կմնան նույնը: Ծխի (կամ ճյուղի) ներկայիս երեցների քվորումի նախագահությունը և քահանայապետերի խմբի ղեկավարությունը հետ կկանչվի և ցցի նախագահը կկանչի երեցների քվորումի նոր նախագահություն: ■

Հայտարարվել են յոթ նոր տաճարներ

Տաճարները կկառուցվեն՝ Սալտա (Արգենտինա), Բենգալուրու (Հնդկաստան), Մանագուա (Նիկարագուա), Կագայան դե Օրո (Ֆիլիպիններ), Լեյտոն (Յուտա, ԱՄՆ), Ռիչմոնդ (Վիրջինիա, ԱՄՆ) և Ռուսաստանի որևէ խոշոր քաղաքում, որը դեռ որոշված չէ՝ գերագույն համաժողովի կիրակի ցերեկային նիստի վերջում հայտարարել է Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը:

Համաժողովից անմիջապես առաջ Առաջին Նախագահությունը հայտարարեց, որ Հռոմ Իտալիա տաճարը կնվիրագործվի 2019թ. մարտի 10-ից մինչև 2019թ. մարտի 17-ը: Եկեղեցին նաև թողարկել է Թայլանդի Բանգկոկ տաճարի գեղարվեստական նկարը:

2017 թվականի հոկտեմբեր ամսին Հաիթիի Պորտ-օ-Պրինսի տաճարի հիմքը փորվեց, Այդահոյի Մերիդիան տաճարը նվիրագործվեց 2017 թվականի նոյեմբերին և Յուտայի Սեդար Սիթի տաճարը (ԱՄՆ) նվիրագործվեց 2017 թվականի դեկտեմբերին:

Շուտով երկու տաճարներ կվերանվիրագործվեն՝ Հյուսթոն Տեխաս Տաճարը, կիրակի օրը՝ 2018 թվականի ապրիլի 22-ին, որը վերանորոգվել էր ջրհեղեղի պատճառով և Յուտայի Ջորդան Ռիվեր տաճարը, կիրակի օրը՝ 2018 թվականի մայիսի 20-ին, որը ենթարկվել էր վերանորոգման: Եվ երկու այլ տաճարներ կնվիրագործվեն այս տարվա վերջերին՝ Կոնսեպսիոն Չիլի տաճարը, կիրակի օրը՝ 2018 թվականի հոկտեմբերի 28-ին և Բարանկիլյա Կոլումբիա տաճարը, կիրակի օրը՝ 2018 թվականի դեկտեմբերի 9-ին:

Համիլտոն Նոր Զելանդիա տաճարը 2018 թվականի հուլիսին՝ լայնածավալ վերանորոգման պատճառով և կվերանվիրագործվի 2021 թվականին:

Ներկայումս աշխարհում կան 159 գործող տաճարներ, ևս 30 տաճարներ հայտարարված կամ շինարարության մեջ են: ■

Հռոմի Իտալիա Տաճար



Բանկոկ Թաիլանդ Տաճար

Ընտանեկան պատմություն. Գտեք, Հավաքեք, Կապ հաստատեք

Երեց Բրեդլի Դ. Ֆոսթերը, ով Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական և Եկեղեցու Ընտանեկան պատմության բաժնի գործադիր տնօրենն է, ասել է, որ տաճարային և ընտանեկան պատմության տեղական խորհրդատուները կարող են օգնել Եկեղեցու անդամներին և մյուսներին գտնել այն ուրախությունը, որը գալիս է նախնիներին գտնելիս, հավաքելիս և կապ հաստատելիս։

Ամեն ոք իր ընտանեկան պատմությունից ունի պատմություններ։ Եվ հրաշալի բաներ են տեղի ունենում, երբ սկսում ես փնտրել և գտնել նրանց։

Երեց Ֆոսթերն ասել է. «Առաջիկա տարվա համար մենք պետք է շեշտը դնենք խորհրդատուներին օգնելու վրա, որպեսզի նրանք հասկանան անդամներին այդ զգացումը փոխանցելու իրենց դերը»։ «Մենք անում ենք դա մեկ առ մեկ։ Մենք դիմում ենք [մարդկանց], որտեղ էլ նրանք գտնվեն և հատուկ ուշադրություն ենք դարձնում նրանց վրա, ովքեր դառնում են 12 տարեկան և նրանց վրա, ովքեր նորադարձներ են»։ Այդ երկու խմբերն արագորեն օգուտ են քաղում, երբ տեսնում են, թե ինչպես է տաճարային աշխատանքն ամրացնում ընտանիքները հավերժության շնորհիվ, և հաճախ նրանք ոգևորում են իրենց ընկերներին և ընտանիքների անդամներին։

Նույնիսկ ոչ անդամները կարող են աշխարհով մեկ գտնվող 5,000 FamilySearch ընտանեկան պատմության կենտրոններում կիրառել գտեք-հավաքեք-կապ հաստատեք փորձառությունը՝ մեկ առ մեկ օգնելու սկզբունքի շնորհիվ։ ■

Օժանդակել միսիոներական աշխատանքին

Վերջին վեց ամիսների ընթացքում Եկեղեցին քայլեր է ձեռնարկել միսիոներական աշխատանքն օժանդակելու ուղղությամբ:

Տիպիկ հարցեր: Առաջին Նախագահությունը տիպիկ հարցերի մի փաթեթ է ներկայացրել եպիսկոպոսների և ցցերի նախագահների համար, որի օգնությամբ նրանք պետք է հարցազրույց վարեն ապագա լիաժամկետ միսիոներների հետ: Նրանք հորդորել են ղեկավարներին, ծնողներին և երիտասարդներին ծանոթանալ այդ հարցերի հետ:

Հարցերի մեջ անդրադարձած չափանիշները չեն փոխում կամ ավելացնում լիաժամկետ միսիայի ծառայության պահանջները, այլ դրանց կանոնավոր վերանայումը թույլ կտա ապագա միսիոներներին և ծնողներին սովորել սկզբունքները և գտնել այն բաց տեղերը, որտեղ անհրաժեշտ կլինի բարելավում կամ լրացուցիչ նախապատրաստություն:

Տեխնոլոգիաների օգտագործումը: Բջջային սարքեր օգտագործող միսիաների թիվը 87-ից հասնում է 162, իսկ թաբլեթները փոխարինվում են սմարթֆոններով: Հեռախոսները կօգնեն միսիոներներին ուսումնասիրել, գտնել և ուսուցանել:

Տեխնոլոգիաների շնորհիվ նաև հասանելի է դառնում առցանց նյութերի բովանդակությունը նրանց համար, ովքեր կրոնական հարցերի պատասխաններ են փնտրում: Եկեղեցին առցանց ուսուցման կենտրոնները սկսեց օգտագործել վեց տարի առաջ և այսօր 20 առցանց ուսուցման կենտրոններ են գործում աշխարհով մեկ:

Տեխնոլոգիաների շնորհիվ ընկերների անունները միսիոներներին ուղարկող անդամներն այժմ կարող են շփվել այն միսիոներների հետ, ովքեր ուսուցանում են իրենց ընկերոջը: Միսիոներների հետ նրանք կարող են քննարկել կարիքները և համացանցի միջոցով մասնակցել դասերին: Պարզեք՝ **lds.org/referrals** կայքում:

Բավարարել ներկայիս կարիքները: 2018 թվականի հուլիսից սկսած Եկեղեցին կփոփոխի 19 միսիաների սահմանները և 5 նոր միսիաներ կստեղծվեն: Դրա արդյունքում միսիաների թիվը 421-ից կդառնա 407: Նոր միսիաները կլինեն՝ Բրազիլիա Ռիո դե Ժանեյրո հարավային, Կոտ դԻվոր Յամուսուկրո, Նիգերիա Իբադան, Ֆիլիպիններ Կաբանատուան և Զիմբաբվե Բուլավայո: Միսիոներների ծնողներին փոփոխության ենթակա միավորվող միսիաների մասին հետագա մանրամասներ կներկայացվեն այդ միսիաների նախագահների կողմից:

2012 թվականին հայտարարված միսիոներական ծառայության տարիքի փոփոխությունից հետո Եկեղեցին ստեղծել է 76 նոր միսիաներ, որպեսզի ապահովի 58000-ից մինչև 88000 միսիոներների աճը: Ինչպես ակնկալվում էր, միսիոներների նախնական ալիքն այդ օրվանից հետո նվազել է և ներկայումս ծառայում են շուրջ 68000 միսիոներներ: Դա նշանակում է, որ ներկայիս համար ավելի քիչ միսիաներ են անհրաժեշտ: Սակայն դա նաև նշանակում է, որ միսիոներների համապատասխան փոխարինումն անհրաժեշտ երկրներում առանձնահատուկ ուշադրություն է պահանջում:

Միսիոներների ուսուցման կենտրոններ: ԱՄՆ-ի Յուտայի Միսիոներական ուսուցման կենտրոնը և Ֆիլիպինների ՄՈՒԿ-ը ընդլայնվել ու նվիրագործվել է և Գանայում միսիոներական նոր ուսուցման կենտրոն է նվիրագործվել: Իսպանիայի ու Չիլիի ուսուցման կենտրոնները կփակվեն 2019 թվականի հունվարից, և այդ վայրերում վերապատրաստում պահանջող միսիոներները կվերապատրաստվեն աշխարհի մնացած 13 միսիոներների ուսուցման կենտրոններում: ■

Նոր քաղաքականություններ, ընթացակարգեր և ապրանքներ

Երիտասարդներ և տաճարային աշխատանք Առաջին Նախագահությունը տաճարի քաղաքականության փոփոխություններ է հայտարարել, որոնք երիտասարդ տղաներին և կանանց ավելի շատ հնարավորություններ է ընձեռում տաճարային աշխատանքը կատարելիս և օգնում է Երեխաների միության երեխաներին ավելի լավ պատրաստվել տաճարում ծառայելու համար:

Կանխարգելել, բացահայտել բռնությունները և արձագանքել դրանց: Շարունակելով խորհուրդ տալ ղեկավարներին, թե ինչպես կանխարգելել, բացահայտել բռնությունը և արձագանքել դրան, 2018 թվականի մարտի 26-ին Առաջին Նախագահությունը նամակ և համապատասխան նյութեր ուղարկեց Միացյալ Նահանգների և Կանադայի Եկեղեցու ղեկավարներին: Փաստաթուղթը ներառում է թարմացված ցուցումներ, թե ինչպես պետք է եպիսկոպոսները և ցցի նախագահությունները խորհուրդ տան սեռական բռնության զոհերին, և ինչպես պետք է հարցազրույցներ անցկացնեն Եկեղեցու անդամների հետ:

Փոփոխություններ Երիտասարդ Կանանց ճամբարի վերաբերյալ: Առաջիկա ամիսներին հրատարակվող ճամբարի նոր ուղեցույցի մեջ կընդգրկվեն Եկեղեցու երիտասարդ աղջիկների ճամբարի ծրագրի փոփոխությունները, ըստ որի, վկայականները հանվում են և շեշտը դրվում է երիտասարդ ղեկավարների վրա:

Ենթադրվում է, որ «միջազգայնորեն կկիրառվի» աշխարհի տարբեր վայրերում ապրող երիտասարդ աղջիկների կողմից և նոր *Երիտասարդ աղջիկների ճամբարի ուղեցույցը,* որն այժմ հասանելի է անգլերեն լեզվով (և ի վերջո կթարգմանվի 23 լեզուներով) և մի օգտակար նյութ է Երիտասարդ կանանց նախագահությունների, ճամբարի մասնագետների և երիտասարդների ճամբարի ղեկավարների համար ու հասանելի է **youngwomen.lds.org** կայքում:

Երաժշտության ներկայացում: Եկեղեցու երաժշտության ներկայացման ներկայիս փոփոխությունները անդամների համար արագ և դյուրին են դարձրել բնօրինակ սրբազան երաժշտության ներկայացումը Եկեղեցուն: Երաժշտությունը կարելի է ներկայացնել՝ **apps.lds.org/artcomp:**

«Ինչպե՞ս» տեսանյութի ալիքը: Եկեղեցին YouTube-ում նոր ալիք է բացել, որը կոչվում է «Ինչպե՞ս», որը ներկայացնում է պարզ, գործնական օգնություն՝ իրական կյանքի մարտահրավերների դեմ: Հայտարարված ինչպես «համընդհանուր ալիք, որն անհրաժեշտ է օգնություն գտնելու համար այն ժամանակ, երբ դրա կարիքն ունես», այդ ալիքը ներկայումս ունի ավելի քան 600 տեսանյութ, տեսակավորված 9-ը բաժիններում, որոնցից յուրաքանչյուրը բազմաթիվ տեսացանկեր ունի տարատեսակ թեմաների վերաբերյալ անգլերեն լեզվով՝ իսպաներենի և պորտուգալերենի որոշ բովանդակությամբ: Ստուգեք՝ **HowTo.lds.org** կայքում:

Սուրբ գրությունների թարգմանություններ: Եկեղեցին հայտարարել է 34 լրացուցիչ լեզուների ծրագրված թարգմանությունների ծրագրեր և նոր գործընթաց, որը թույլ կտա անհատներին ուսումնասիրել թարգմանությունների նախագծային տարբերակները, նախքան դրանց վերջնական հրատարակումը, որը նշանակում է, որ անդամներն ավելի վաղ կարող են կարդալ սուրբ գրություններն իրենց լեզվով: ■

Այդ կետերի մասին լրացուցիչ տեղեկություն կարող եք գտնել **news.lds.org** *կայքում:*



ԵԿ, ՀԵՏԵՎԻՐ ԻՆՁ

Երեցների Քվորումի և Սփոփող Միության համար

Այս նյութերն առկա են Gospel Library հավելվածում և comefollowme.lds.org կայքէջում:

Ինչո՞ւ ենք մենք անցկացնում

Քվորումի և Սփոփող Միության ժողովներ:

Այս վերջին օրերում Աստված վերականգնեց քահանայությունը և կազմավորեց քահանայության քվորումներն ու Սփոփող Միությունը, որպեսզի օգնի իրականացնել փրկության Իր աշխատանքը: Այս պատճառով, յուրաքանչյուր կիրակի, երբ հավաքվում ենք երեցների քվորումի և Սփոփող Միության ժողովներում, մենք քննարկում և պլանավորում ենք, թե ինչ ենք անելու, որպեսզի իրականացնենք Աստծո աշխատանքը: Արդյունավետ լինելու համար այս ժողովները պետք է ավելին լինեն, քան պարզապես դասեր: Դրանք հնարավորություն են ընձեռում միասին խորհրդակցել փրկության աշխատանքի մասին, այդ մասին սովորել Եկեղեցու ղեկավարների ուսմունքներից և պլանավորել ու կազմակերպել ինքներս մեզ այն իրականացնելու համար:

Առաջին կիրակի օրվա

խորհրդի ժողովներ

Յուրաքանչյուր ամսվա առաջին կիրակի օրը երեցների քվորումի և Սփոփող Միության ժողովները *չեն ընդգրկում ուսուցչի կողմից ուսուցանվող դասեր:* Փոխարենը, երեցների քվորումի և Սփոփող Միության նախագահություններն են վարում խորհրդի ժողովները: Առաջին կիրակի օրվա այս խորհրդի ժողովներում երեցների քվորումը և Սփոփող Միությունը միասին խորհրդակցում են տեղական պարտականությունների, հնարավորությունների և դժվարությունների մասին, սովորում են միմյանց կարծիքներից, փորձառություններից և ծրագրում են, թե ինչպես են գործելու՝ համաձայն Հոգուց ստացած տպավորությունների: Այս քննարկումները պետք է ծավալվեն համաձայն սուրբ գրությունների և ապրող մարգարեների ուսմունքների:

Խորհրդի ոչ բոլոր ժողովներն են նույնատիպ լինելու: Ահա որոշ ուղեցույցներ, որոնք կօգնեն նախագահություններին անցկացնել հաջող խորհուրդներ:

Առաջին կիրակի օրվա խորհրդի ժողովների թեմաները

Խորհրդի ժողովներում քննարկվող թեմաների գաղափարները կարող են ծնվել նախագահության ժողովներում, ծխի խորհրդի ժողովներում, տարածաշրջանի ծրագրից, այն տպավորություններից, որոնք ղեկավարները ստանում են սպասավորելով անդամներին և Սուրբ Հոգու հուշումներից: Ստորև տրված թեմաները պարզապես առաջարկներ են: Ղեկավարները կարող են տեղյակ լինել ուրիշների կարիքներից և ոգեշնչվել խոսելու դրանց մասին:

- Ի՞նչ կարող ենք անել, որ սպասավորենք մեր շրջապատի մարդկանց (տես Մոսիա 23.18):
- Ինչպե՞ս կարող ենք առաջնահերթություն սահմանել մեր տարբեր պարտականությունների համար:
- Ինչպե՞ս կարող ենք ավետարանով կիսվել մեր ընկերների ու հարևանների հետ (տես Ալմա 17):
- Ինչպե՞ս կարող ենք պաշտպանել ինքներս մեզ և մեր ընտանիքները ոչ պատշաճ լրատվամիջոցներից և պոռնոգրաֆիայից:
- Մենք ի՞նչ պիտի անենք, որպեսզի դաստիարակենք և զորացնենք մեր ծխի երեխաներին ու երիտասարդներին:
- Ինչպե՞ս կարող ենք ավելի շատ ընդգրկվել ընտանեկան պատմության և տաճարային աշխատանքում:
- Ինչպե՞ս կարող ենք հրավիրել Տիրոջ օգնությունը, երբ փնտրում ենք պատասխաններ ավետարանի վերաբերյալ մեր հարցերին և ձգտում ենք ավետարանն ավելի խորը հասկանալ:
- Ինչպե՞ս կարող ենք ուժեղացնել մեր վկայությունները Տիրոջ և Նրա ավետարանի մասին և օգնել մեր ընտանիքներին՝ դառնալ հոգևորապես ինքնապահով:

ՆԱԽՔԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎԸ

ԱՐԵՔ ՀԵՏԵՎՅԱԼԸ.

- Պարզեք տեղական կարիքները, հնարավորությունները և դժվարությունները:
- Աղոթքով ընտրեք քննարկման թեման:
- Խնդրեք քվորումի անդամներին կամ Սփոփող Միության քույրերին պատրաստ գալ՝ կիսվելու իրենց մտքերով ու փորձառություններով:

ՉԻ՛ ԿԱՐԵԼԻ.

- Նախապատրաստել դաս:
- Գալ, մտքում արդեն ունենալով որոշակի լուծում կամ գործողության ծրագիր:

ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎԻ ԺԱՄԱՆԱԿ

ԱՐԵՔ ՀԵՏԵՎՅԱԼԸ.

- Հրավիրեք անդամներին *կիսվել փորձառություններով*, որոնք ունեցել են նախորդ ժողովների ժամանակ ստացած տպավորություններից և ծրագրերից:
- Ներկայացրեք ժողովի թեման և խրախուսեք անդամներին *միասին խորհրդակցել* դրա շուրջ, փնտրելով լուծումներ և առաջնորդություն սուրբ գրություններից, մարգարեների խոսքերից և Սուրբ Հոգուց:
- *Ծրագրեք գործել* ըստ քննարկածի: Դրանք կարող են լինել թե՛ խմբային, թե՛ անհատական ծրագրեր:

ՉԻ՛ ԿԱՐԵԼԻ.

- Գերիշխել զրույցի ժամանակ:
- Փորձել համոզել մյուսներին ձեր գաղափարների ճշմարտացիության մեջ:
- Քննարկել նրբանկատ կամ գաղտնի հարցեր:
- Ուսուցանել դաս:
- Ճնշում գործադրել որևէ մեկի վրա մասնակցելու նպատակով:

ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎԻՑ ՀԵՏՈ

ԱՐԵՔ ՀԵՏԵՎՅԱԼԸ.

- Հետևեք, որ խորհրդի ժողովներում ընդունված ծրագրերն ու հանձնարարությունները կատարվեն:
- Աշխատեք ընդգրկել նրանց, ովքեր չեն կարող մասնակցել խորհրդին կոչումների կամ այլ պատճառներով: Նրանց տեղյակ պահեք կազմված ծրագրերի մասին:
- Գալիք ժողովների ժամանակ անդամներին հնարավորություն տվեք կիսվել փորձառություններով:

«Այս խորհրդի ժողովի հրաշալի կողմերից մեկն այն է, որ հանդիպման ավարտին դուք գործողության փաստացի ծրագիր եք ունենում»,-

ասել է Քույր Ջին Բ. Բինգհեմը՝ Սփոփող Միության գերագույն նախագահը:

Երկրորդ և երրորդ կիրակիների

ժողովներ

Ամեն ամսվա երկրորդ և երրորդ կիրակիներին երեցների քվորումները և Սփոփող Միությունները կուսումնասիրեն Եկեղեցու ղեկավարների ուսմունքները վերջին գերագույն համաժողովից: *Շեշտը պետք է դրվի Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի անդամների ուղերձների վրա:* Այնուամենայնիվ, ելնելով տեղական կարիքներից և Հոգուց ստացած հուշումներից, վերջին համաժողովից ցանկացած ուղերձ կարող է քննարկվել:

Հիմնականում, երեցների քվորումի կամ Սփոփող Միության նախագահությունն է ընտրում համաժողովի որևէ ուղերձ ուսումնասիրման համար, ելնելով անդամների կարիքներից, թեպետ եպիսկոպոսը կամ ցցի նախագահը նույնպես կարող են առաջարկել: Ղեկավարները կարող են ընտրել ուղերձը այն թեմայով, որը քննարկվել էր առաջին կիրակի օրվա խորհրդի ժողովի ժամանակ կամ կարող են ընտրել մեկ այլ ուղերձ՝ համաձայն Հոգուց ստացած ոգեշնչման:

Ղեկավարները և ուսուցիչները պետք է մտածեն, թե ինչպես խրախուսել անդամներին նախօրոք կարդալ ընտրված ուղերձը և պատրաստ գալ՝ կիսվելով ավետարանի ճշմարտություններով և մտքերով, թե ինչպես գործել ըստ դրանց: Ստորև տրված ուսուցման վարժությունները, որոնք հիմնված են *«Ուսուցանել Փրկիչի ձևով» ձեռնարկի սկզբունքների վրա,* կօգնեն անդամներին դաս քաղել գերագույն համաժողովի ուղերձներից:

> *«Բարեխղճորեն եղանակներ փնտրեք [գերագույն համաժողովի] այս ուղերձները ներգրավելու ձեր ընտանեկան երեկոների և ավետարանի ուսուցման մեջ, ընտանիքի և ընկերների հետ ձեր զրույցներում»:*
>
> Նախագահ Ռասսել Մ. Նելսոն, «Եկեք առաջ շարժվենք», *Լիահոնա,* մայիս 2018թ., 118:

Մ. Ռասսել Բալլարդ, *«Թանկագին պարգևներ Աստծուց», 9–11*

Նախագահ Բալլարդի ուղերձը վերաբերում է մի շարք թեմաներին՝ ներառյալ մարգարեներին, Քրիստոսի հանդեպ հավատքին, հաղորդությանը և ծառայությանը, իսկ ձեր քվորումի կամ Սփոփող Միության անդամների համար տարբեր թեմաներ կարող են հատկապես իմաստալից լինել: Հրավիրեք անդամներին կիսվել այս ուղերձից մի հատվածով, որը ոգեշնչել է իրենց: Ի՞նչ հրավերներ կամ խոստացված օրհնություններ ենք տեսնում Նախագահ Բալլարդի ուղերձում: Կարող եք հրավիրել անդամներին մի քանի րոպե խորհել, թե ինչ են ոգեշնչվում անել այս քննարկման արդյունքում:

Գարի Ի. Սթիվենսոն, *«Մարգարեի սիրտը», 17–20*

Օգնելով անդամներին հասկանալ նոր մարգարեի կոչման «փառահեղ իրադարձությունը», կարող եք հրավիրել նրանց աչքի անցկացնել Երեց Սթիվենսոնի ուղերձը, փնտրելով ճշմարտություններ և հասկացողություններ, որոնք օգնում են հասկանալ այս աստվածային գործընթացի կարևորությունը և սրբությունը: Կարող եք հրավիրել անդամներին կիսվել, թե ինչ են զգացել հանդիսավոր ժողովի ժամանակ, երբ Նախագահ Նելսոնը հաստատվել է որպես Եկեղեցու Նախագահ: Դուք կարող եք նաև սիրտ նկարել գրատախտակին և խնդրել անդամներին, որ այդ սրտի մեջ գրեն բառեր կամ արտահայտություններ, որոնք նկարագրում են Նախագահ Նելսոնի սիրտն ու բնավորությունը: Ի՞նչ է նա ուսուցանել, որն օրհնել է մեզ:

Նիլ Լ. Անդերսեն, *«Աստծո մարգարեն», 24–27*

Երեց Անդերսենի ուղերձի քննարկումը կարող է ամրապնդել անդամների հավատքը ապրող մարգարեների հանդեպ: Դուք կարող եք հրավիրել անդամներին գտնել նրա ուղերձում մի բան, որը կօգնի հասկանալ, թե Աստված ինչու մարգարեներ ունի երկրի վրա և ինչու ենք մենք հետևում նրանց: Ինչպե՞ս ենք մենք օրհնվել մարգարե ունենալով: Անդամները կարող են կիսվել, թե ինչպես են վկայություն ձեռք բերել, որ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը Տիրոջ մարգարեն է և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահը:

Դեյվիդ Ա. Բեդնար, *«Հեզ և սրտով խոնարհ», 30–33*

Երեց Բեդնարի ուղերձի շուրջ քննարկում ծավալելու համար կարող եք գրատախտակին գրել *Հեզությունը . . . է* և *Հեզությունը . . . չէ:* Անդամները կարող են աչքի անցկացնել Երեց Բեդնարի ուղերձը և գրել գրատախտակին իրենց գտած արտահայտությունները, որոնք կավարտեն այս նախադասությունները: Ի՞նչ ենք սովորում այս ուղերձից, որը ոգեշնչում է մեզ ավելի հեզ լինել: Հեզության դրսևորման ի՞նչ օրինակներ կարող ենք մտաբերել: Ինչպե՞ս կարող ենք կիրառել Երեց Բեդնարի խորհուրդը ավելի հեզ լինելու վերաբերյալ:

Բոննի Լ. Օսկարսոն, *«Երիտասարդ Կանայք աշխատանքում», 36–38*

Հարցերը կարող են խորհելու առիթ լինել: Կարող եք գրատախտակին գրել մի քանի հարց, որոնց Քույր Օսկարսոնի ուղերձը պատասխանում է, ինչպես օրինակ, *Ինչպե՞ս կարող ենք ներգրավել երիտասարդ կանանց Տիրոջ աշխատանքում*: Հրավիրեք անդամներին գտնել նրա ուղերձում այս հարցերի պատասխանները և քննարկեք, թե ինչ սովորեցին: Ի՞նչ օրինություններ կստանան երիտասարդ կանայք՝ ներգրավվելով սպասավորության աշխատանքում: Գուցե դասարանի անդամները կիսվեն փորձառություններով, որ ունեցել են երիտասարդ կանանց հետ կողք կողքի սպասավորելիս: Ելնելով քննարկվածից, ի՞նչ ենք ոգեշնչվում անել:

Դեյլ Գ. Ռենլանդ, *«Ընտանեկան պատմություն և տաճարային աշխատանք. կնքում և բժշկում», 46–49*

Երեց Ռենլանդը խոսել է Եզեկիելի տեսիլքի՝ տաճարից բխող ջրի մասին (տես Եզեկիել 47.8–9): Քվորումի կամ Սփոփող Միության անդամներից մեկը կարող է գրատախտակին նկարել այս տեսիլքը: Տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքի օրինությունները ինչո՞վ են նման Եզեկիելի տեսիլքի ջրին: Կարող եք հրավիրել դասարանի անդամներին կիսվել տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքի օրինություններով, որոնք ունեցել են: Մենք ի՞նչ կարող ենք անել, որպեսզի տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքը մեր կյանքի կանոնավոր մասը դարձնենք:

Դ. Թոդ Քրիստոֆերսոն, *«Երեցների Քվորումը», 55–58*

Երեցների քվորումում կարող եք հրավիրել քվորումի անդամներին կարդալ Երեց Քրիստոֆերսոնի ուղերձի հատվածը, վերնագրված «Այս փոփոխությունների նպատակը»: Ի՞նչ կարող ենք անել հավաստիանալու համար, որ կատարում ենք այս նպատակները: Սփոփող Միությունում կարող եք խնդրել քույրերից մեկին ամփոփել Մելքիսեդեկյան Քահանայության քվորումների փոփոխությունները, որոնք նկարագրում է Երեց Քրիստոֆերսոնը: Քույրերը կարող են այնուհետև գտնել այդ փոփոխություններում պարունակվող սկզբունքները, որոնք կիրառելի են Սփոփող Միության աշխատանքում: Երեցների քվորումում կամ Սփոփող Միությունում անդամները կարող են քննարկել, թե ինչ սովորեցին Եղբայր Գոատեսի պատմությունից և ինչպես է դա կիրառելի իրենց աշխատանքում:

Ռոնալդ Ա. Ռասբենդ, *«Ահա, արքայական զորքը », 58–61*

Եթե երգեք, լսեք կամ կարդաք «Ահա, արքայական զորքը» երգի խոսքերը (*Hymns,* no. 251), դա կնպաստի, որ քննարկում ծավալվի Երեց Ռասբենդի ուղերձի շուրջ: Ինչո՞վ են քահանայության քվորումներն ու Սփոփող Միությունները նման թագավորական բանակին: Անդամները կարող են նաև գտնել և քննարկել «բազում օրհնությունները», որոնք Երեց Ռասբենդի խոսքերով կստանան քահանայության քվորումների վերակազմավորման շնորհիվ: Ուրիշ ի՞նչ օրհնություններ ենք ստացել կամ հուսով ենք, որ կստանանք այս փոփոխությունների կիրառման արդյունքում: Ինչպե՞ս կարող են Սփոփող Միություններն ավելի լիարժեք ստանալ օրհնություններ, ինչպիսիք են «բազմազան պարգևները» և «դաստիարակելու պարգևը»:

Հենրի Բ. Այրինգ, *«Ոգեշնչված սպասավորություն», 61–64*

Նախագահ Այրինգը պատմում է սպասավորության թեմայով հաղորդության ժողովի երկու ելույթների մասին, որոնք տպավորել են իրեն: Գուցե հարցնեք քվորումի անդամների կեսին կամ Սփոփող Միության անդամների կեսին աչքի անցկացնել 14-ամյա տղայի պատմությունը, իսկ մյուս կեսին՝ տնային ուսուցչի մասին պատմությունը: Կարդալիս անդամները կարող են մտածել, թե ինչ խորհուրդ կարելի է տալ երիտասարդ տղային կամ երիտասարդ աղջկան, ով նոր է նշանակվել սպասավորելու ինչ-որ մեկին: Մենք ինչպե՞ս կարող ենք ավելի ոգեշնչված և ավելի գթասիրտ լինել մեր սպասավորության գործում:

Դալլին Հ. Օուքս, *«Քահանայության զորությունները», 65–68*

Քննարկումը սկսելու նպատակով կարող եք գրատախտակին գրել Նախագահ Օուքսի ուղերձի չորս բաժինների վերնագրերը: Այնուհետև հրավիրեք յուրաքանչյուր անդամին մտքում կարդալ բաժիններից մեկը, ապա գրեք գրատախտակին մի նախադասություն, որն ամփոփում է այդ բաժնի հիմնական ուղերձը: Այնուհետև անդամները կարող են կիսվել, թե իրենց կարդացածից ելնելով, ինչ ոգեշնչվեցին անել: Մեր քահանայություն կրողների կամ Սփոփող Միության քույրերի ծառայությունն ինչպե՞ս կբարելավվի, եթե կիրառենք Նախագահ Օուքսի ուղերձի ուսմունքները:

Ռասսել Մ. Նելսոն, *«Սպասավորել Աստծո զորությամբ և իշխանությամբ», 68–75*

Նախագահ Նելսոնը քահանայություն կրողներին հրավիրում է «վեր կենալ» և օգտագործել քահանայությունը Երկնային Հոր զավակներին օրհնելու համար: Հրավիրեք ձեր քվորումի կամ Սփոփող Միության անդամներին Նախագահ Նելսոնի ուղերձում փնտրել օրինակներ և քննարկել, թե դրանք ինչպես են օգնում հասկանալ քահանայության օգտագործումը մեր ընտանիքներում և ուրիշներին օրհնելու համար: Ի՞նչ փորձառություններով կարող ենք կիսել, երբ օրհնվել ենք քահանայության զորությամբ: Ինչպե՞ս կարող ենք օգնել մյուսներին և ինքներս մեզ հավատք ունենալ օգտագործել Աստծո քահանայությունը «սպասավորել Նրա անունով»:

Ռեյնա Ի. Աբուրտո, *«Լինենք միաբան», 78–80*

Քույր Աբուրտոյի ուղերձը հնարավորություն է տալիս ձեր քվորումին կամ Սփոփող Միությանը գնահատել, թե որքանով են լավ ու միաբանված աշխատում Տիրոջ աշխատանքը կատարելիս: Օգնելով անդամներին, որ դա անեն, կարող եք նրանց ցուցադրել միապետ թիթեռների

Ժողովի օրինակ

1. **Կիսվեք փորձառություններով**, որոնք ունեցել եք քահանայության և Սփոփող Միության նախորդ (նախագահության անդամի կողմից վարած) ժողովներում ստացած տպավորությունների և հրավերների ուղղությամբ աշխատելիս:

2. **Միասին սովորեք** (վարող՝ կանչված ուսուցիչ): Աշխատեք հրավիրել անդամներին.
   - ա. Համաժողովի ուղերձում փնտրել որևէ բան (օրինակ, հարցի պատասխանը, ոգեշնչող հատված կամ սկզբունքի որևէ օրինակ):
   - բ. Կիսվել դրանով և քննարկել այն, ինչ գտել են:
   - գ. Խորհել, թե ուղերձն ինչպես է կիրառելի նրանց կյանքի և փորձառության դեպքում:

3. **Ծրագրեք գործել** որպես անհատներ կամ որպես խումբ (վարող՝ նախագահության անդամ):

նկարները, Փրկիչի այցը Նեփիացիների մոտ (տես *Ավետարանի պատկերագիրք*, 82, 83, 84), և Եկեղեցու մարդասիրական աշխատանքը (տես LDS.org): Անդամները կարող են ուղերձում հայտնաբերել, թե ինչպես է Քույր Աբուրտոն օգտագործել այս օրինակները, որ ուսուցանի միասնական աշխատանքի նպատակներն ու օրինությունները: Ի՞նչ կարող ենք անել, որ աշխատելիս «լինենք միաբան»:

Հենրի Բ. Այրինգ, *«Որպեսզի Նրա հոգին ձեզ հետ լինի», 86–89*

Սուրբ Հոգին ստանալու մեր ցանկությունն ու ունակությունը մեծացնելու համար Նախագահ Այրինգը կիսվում է մի քանի անձնական փորձառություններով և տալիս է որոշակի ուղղորդում: Նրա փորձառություններին ծանոթանալուց հետո նմանատիպ ի՞նչ հիշողություններ կարող են լինել ձեր քվորումի կամ Սփոփող Միության անդամների մոտ, երբ Սուրբ Հոգին դիպչել է նրանց սրտերին կամ հաստատել ճշմարտությունը: Թերևս անդամները կարող են գրել գրատախտակին այն ուղղորդումը, որով Նախագահ Այրինգը կիսվում է, որը կօգնի «բացել մեր սրտերը, ստանալու Հոգու սպասավորությունը»: Շարժվելով Նրա առաջնորդությամբ, ինչպե՞ս կարող ենք օգնել մեզ կյանքում և մեր ընտանիքներում, մեր քվորումում կամ Սփոփող Միությունում:

Դալլին Հ. Օուքս, *«Փոքր և հասարակ բաներ», 89–92*

Նախագահ Օուքսի ուղերձը պարունակում է փոխաբերություններ, որոնք ուսուցանում են, թե փոքր ու հասարակ բաները ինչպես կարող են հզոր ազդեցություն ունենալ բարու կամ չարի համար: Այդ փոխաբերություններն են ծառի արմատները, թիավարները, պարանի մանրաթելերը և ջրի կաթիլները: Անդամները կարող են կարդալ այդ փոխաբերությունները և քննարկել, թե դրանք ինչ են ուսուցանում մշտապես փոքր ու հասարակ գործեր կատարելու զորության մասին: Որո՞նք են այն փոքր ու հասարակ բաները, որ մեր կյանք են բերում Սուրբ Հոգու ազդեցությունը: Հրավիրեք անդամներին մտածել, թե նրանք ի՞նչ են ոգեշնչվում անել՝ Նախագահ Օուքսի խորհրդին հետևելով:

Ռասսել Մ. Նելսոն, *«Հայտնություն Եկեղեցու համար, հայտնություն մեր կյանքի համար», 93–96*

Իր ուղերձում Նախագահ Նելսոնը աղերսում է մեզ մեծացնել «հայտնություն ստանալու մեր հոգևոր ունակությունը»: Որպեսզի օգնեք անդամներին հետևել նրա առաջնորդությանը, կարող եք գրատախտակին գրել հետևյալ տիպի հարցեր. Ինչո՞ւ մենք կարիք ունենք հայտնության: Ինչպե՞ս կարող ենք լավացնել հայտնություն ստանալու մեր ունակությունը և՛ անհատապես, և՛ երբ միասին խորհրդակցում ենք: Ի՞նչ օրինություններ է Նախագահ Նելսոնը խոստացել, եթե ձգտենք հայտնություն ստանալ: Անդամներին բաժանեք խմբերի, և յուրաքանչյուր խմբին խնդրեք գտնել հարցերից որևէ մեկի պատասխանը և բարձրաձայնել այն:

Գերիթ Վ. Գոնգ, *«Տեր Քրիստոսն հարյավ այսօր», 97–98*

Ձեր քվորումի կամ Սփոփող Միության անդամներն ի՞նչ կարող են սովորել Երեց Գոնգի ուղերձից մեր ուխտերի և Հիսուս Քրիստոսի Քավության մասին: Կարող եք հրավիրել անդամներին աչքի անցկացնել ուղերձը, փնտրելով օրինությունները, որոնք, գործելով միասին, Փրկիչի Քավությունը և մեր ուխտերը շնորհում են մեզ: Այնուհետև դրա վերաբերյալ տվեք հետևյալ հարցերը. Ինչպե՞ս են մեր ուխտերը և Քավությունը միասին գործելով մեզ «հնարավորություն տալիս և ազնվացնում»: Ինչպե՞ս են դրանք օգնում մեզ չհանձնվել և շարունակել առաջ գնալ:

Ուլիսես Սոարես, *«Մարգարեները խոսում են Սուրբ Հոգու զորությամբ», 98–99*

Երեց Սոարեսի ուղերձը կարող է մեզ ոգեշնչել, որ հավատքով գործենք, երբ մենք անհամապատասխան զգանք Տիրոջ կամքը կատարելիս: Երեց Սոարեսն ինչպե՞ս ստացավ մխիթարություն և վստահություն, երբ ընդունեց իր նոր կոչումը որպես Առաքյալ: Նա ի՞նչ սովորեց միսիայի նախագահ կանչվելու իր փորձառությունից: Ի՞նչ կարող ենք սովորել նրա փորձառություններից: Անդամներին ժամանակ տվեք կիսվել փորձառություններով, երբ նրանք վստահություն են զգացել մի բանում, ինչ Տերը ցանկանում էր, որ իրենք անեին: Ի՞նչ են նրանք արել հավատք գտնելու համար, որպեսզի առաջ շարժվեին:

Ջեֆրի Ռ. Հոլլանդ, *«Լինել նրանց հետ և ամրապնդել նրանց», 101–3*

Երբ ձեր քվորումի կամ Սփոփող Միության անդամները ծանոթանան քահանայության և Սփոփող Միության սպասավորության գաղափարի փոփոխություններին, ի՞նչ հարցեր կունենան: Երեց Հոլլանդի ուղերձը կարող է տալ պատասխանները: Անդամները կարող են գտնել ավետարանի սկզբունքներ, որոնք, ինչպես ուսուցանում է Երեց Հոլլանդը, այս փոփոխությունների հիմքն են: Ի՞նչ հրավերներ ենք տեսնում այս

ուղերձում: Ի՞նչ օրինություններ են խոստացվում: Ինչպե՞ս են սպասավորության այս նոր ուղիները օգնում մեզ դառնալ «Քրիստոսի ճշմարիտ աշակերտը»:

Ջին Բ. Բինգհեմ, *«սպասավորել Փրկիչի ձևով», 104–7*

Իր ուղերձում Քույր Բինգհեմը հրավիրում է մեզ հարցեր տալ ինքներս մեզ, որոնք կուղղորդեն սպասավորությանն ուղղված մեր ջանքերը: Անդամները կարող են քննարկել, թե այդ հարցերն ինչպես կարող են ուղղորդել իրենց ջանքերը, ապա փնտրել Քույր Բինգհեմի հարցի պատասխանները. «Այսպիսով, ի՞նչ կարելի է ասել սպասավորության մասին»: Դուք կարող եք ժամանակ հատկացնել և դիտարկել օրինակներից մի քանիսը, որոնք Քույր Բինգհեմն է բերում անհատական ծառայության մասին, և կարող եք հրավիրել անդամներին կիսվել իրենց օրինակներով: Ի՞նչ ենք գտնում Քույր Բինգհեմի ուղերձում, որի շնորհիվ ավելի լավ ենք հասկանում, թե ինչո՞ւ և ինչպե՞ս ենք մենք ծառայում:

Դիտեր Ֆ. Ուխդորֆ, *«Ահա՛ այն մարդը», 107–10*

Ինչպե՞ս կօգնենք ինչ-որ մեկին հասկանալ, որ Հիսուս Քրիստոսի քավիչ զոհաբերությունը և Հարությունը ամենակարևոր իրադարձություններն էին աշխարհի պատմության մեջ: Հրավիրեք ուսանողներին խորհել այս հարցի շուրջ, երբ նրանք կարդան հատվածները Երեց Ուխդորֆի ուղերձից: Ի՞նչ են նրանք գտնում, որ օգնում է բացատրել, թե ինչու են այդ իրադարձություններն այդքան կարևոր: Այս քննարկումից հետո դասարանի անդամները կարող են խոսել նրա մասին, թե ինչ է նշանակում «Ահա՛ այն մարդը»: Ինչպե՞ս ենք մենք սովորում այս ուղերձից:

Քվենթին Լ. Քուք, *«Պատրաստվել հանդիպելու Աստծուն», 114–17*

Կարող եք սկսել Երեց Քուքի ուղերձի քննարկումը, հրավիրելով անդամներից մեկին ամփոփել Քիրթլենդի տաճարում քահանայության բանալիների վերականգնումը: Համաձայն Երեց Քուքի ուղերձի, ի՞նչ պարտականություններ ունի Եկեղեցին, որոնք վերաբերում են այս բանալիներին: Ինչպե՞ս են այդ պարտականությունները դրսևորվում այսօր Եկեղեցում: Գրատախտակին գրեք *առաքինություն, միասնություն,* և *հավասարություն* բառերը, և խնդրեք անդամներին կիսվել այս սկզբունքների վերաբերյալ մտքերով, որոնք գալիս են Երեց Քուքի ելույթից: Ինչպե՞ս են այս սկզբունքներն օգնում մեզ իրականացնել Եկեղեցու սուրբ պարտականությունները:

Չորրորդ կիրակի օրվա

Ժողովներ

Յուրաքանչյուր ամսվա չորրորդ կիրակի օրը երեցների քվորումները և Սփոփող Միությունները քննարկում են որևէ թեմա, որն ընտրված է Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի կողմից: Այս չորրորդ կիրակի օրվա թեմաները կթարմացվեն յուրաքանչյուր գերագույն համաժողովից հետո: Այսօրվանից մինչև հաջորդ գերագույն համաժողովը թեման կլինի՝ «Սպասավորել մարդկանց»: Յուրաքանչյուր ամիս ղեկավարները կամ ուսուցիչները կարող են վարել քննարկումները սպասավորությանը վերաբերող հետևյալ սկզբունքներից որևէ մեկի շուրջ:

Սպասավորության թեմայով քննարկում ծավալելու լրացուցիչ նյութեր կարող եք գտնել ministering.lds.org-ում և «Սպասավորության սկզբունքները» *Լիահոնայի* հետագա համարներում:

Ի՞նչ է նշանակում սպասավորել:

Ի՞նչ է *սպասավորությունը* նշանակում ձեր ծխի կամ ճյուղի անդամների համար: Դա պարզելու համար կարող եք գրել *Սպասավորություն* բառը գրատախտակին, ապա խնդրել անդամներին, որ այդ բառի շուրջը գրեն բառեր, որոնք կապ ունեն սպասավորության հետ: Անդամները կարող են գտնել բառեր կամ արտահայտություններ, որոնք կավելացվեն ցուցակին սուրբ գրությունների հետևյալ հատվածներից. Մատթեոս 25.34–40, Ղուկաս 10.25–37, 2 Նեփի 25.26, Մոսիա 18.8–9, 3 Նեփի 18.25, և Վարդապետություն և Ուխտեր 81.5: Ի՞նչ ենք սովորում այդ հատվածներից սպասավորության մասին:

Դուք կարող եք խնդրել անդամներին կիսվել սպասավորության օրինակներով, որոնք իրենք տեսել են: Ինչպե՞ս կարող է մեր սպասավորությունը հոգալ մարդկանց հոգևոր և նյութական կարիքները: Ինչպե՞ս կարող է դա օգնել, որ մարդիկ մոտենան Քրիստոսին:

Փրկիչը սպասավորության մեր կատարյալ օրինակն է:

Որպեսզի իմանան, թե ինչպես արդյունավետ սպասավորեն, անդամները կարող են պատմություններ պատմել սուրբ գրություններից, որտեղ Փրկիչը ծառայում էր մարդկանց, մի քանի օրինակներ կարելի է գտնել Հովհաննես 4–6 և Մարկոս 2.1–12

հատվածներում: Անդամները կարող են կիսվել, թե ինչն է տպավորել իրենց այդ պատմություններում և ինչ սկզբունքներ են նրանք սովորում դրանցից սպասավորության մասին: Օրինակ, ինչպե՞ս է Փրկիչը անհատականացնում Իր սպասավորությունը մարդկանց: Ինչպե՞ս է Նա արձագանքում մարդկանց թե՛ հոգևոր, և թե՛ նյութական կարիքներին: Դասարանի անդամները կարող են մտաբերել, թե երբ են տեսել, որ մարդիկ ծառայելիս օգտագործել են այդ սկզբունքները:

Սպասավորությունը խթանվում է Քրիստոսանման սիրով:

Ծանոթանալով սպասավորության զորությանը, որը մղվում է Քրիստոսանման սիրով, գրատախտակին կարող եք գրել հետևյալ նախադասությունները և հրավիրել անդամներին առաջարկել բաց թողնվածները լրացնելու եղանակներ. *Երբ անկեղծ սիրում եմ մարդկանց, ում ծառայում եմ, ես* _____: *Երբ ծառայում եմ այլ նպատակներով, ես* _____: Ի՞նչ կարող ենք անել վստահ լինելու համար, որ մարդկանց ծառայելու մեր ջանքերը մղված են Քրիստոսանման սիրով: Ինչպե՞ս ենք Քրիստոսանման սեր զարգացնում նրանց հանդեպ, ում մեզ հանձնարարված է սպասավորել (տես Մորոնի 7.45-48): Անդամները կարող են սպասավորության օրինակներ բերել, որոնք ոգեշնչված են եղել Քրիստոսանման սիրով:

Աստված ցանկանում է, որ Իր բոլոր զավակներին ուշադրություն դարձվի և հոգ տարվի նրանց մասին:

Նախագահ Ռասսել Մ . Նելսոնն ասել է. «Տիրոջ ճշմարիտ և կենդանի Եկեղեցու առանձնահատկությունը միշտ լինելու է կազմակերպված և ղեկավարված ջանքերով անհատապես Աստծո զավակներին և նրանց ընտանիքներին սպասավորելը» («Սպասավորել Աստծո զորությամբ և իշխանությամբ», *Լիահոնա,* մայիս 2018, 69): Ըստ Նախագահ Նելսոնի, որո՞նք են «կազմակերպված, ղեկավարված» եղանակներից մի քանիսը, որոնցով Եկեղեցին օգնում է մեզ ավելի լավ հոգ տանել անհատների համար: Ինչո՞ւ են այս ջանքերը «Տիրոջ ճշմարիտ և կենդանի Եկեղեցու առանձնահատկությունը» հանդիսանում: (տես որոշ գաղափարներ Մոսիա 18.21–22 և Մորոնի 6.4–6 հատվածներում): Ի՞նչ օրինություններ ենք ստացել մենք կամ ուրիշ մարդիկ շնորհիվ մարդկանց սպասավորության Եկեղեցու իրենց կոչումներում կամ հանձնարարություններում:

Հոգիների արժեքը մեծ է Աստծո աչքում:

Մոսիայի որդիների փորձառությունները ցույց են տալիս, որ այն, թե մենք ինչպես ենք տեսնում մարդկանց, ազդում է նրա վրա, թե մենք ինչպես ենք նրանց ծառայում: Գրատախտակին կարող եք գրել *Ինչպե՞ս էին նեփիացիները տեսնում լամանացիներին* և *Ինչպե՞ս էին Մոսիայի որդիները տեսնում լամանացիներին:* Ապա հրավիրեք դասարանի անդամներին փնտրել Մոսիա 28.1–3 և Ալմա 26.23–26 հատվածներում բառեր և արտահայտություններ, որոնք կարելի է գրել այս նախադասություններից յուրաքանչյուրի տակ: Այս համեմատությունից մենք ի՞նչ ենք հասկանում, որ այն, թե ինչպես ենք տեսնում մարդկանց, ինչպե՞ս է ազդում նրա վրա, թե մենք ինչպես ենք նրանց ծառայում: Ինչպե՞ս կարող ենք սովորել տեսնել մարդկանց այնպես, ինչպես Աստված է տեսնում նրանց (տես ՎևՈւ 18.10–16):

Ճշմարիտ սպասավորները կենտրոնանում են մարդկանց կարիքների վրա:

Որպեսզի օգնեք անդամներին ավելի լավ հասկանալ սպասավորելիս կարիքների վրա կենտրոնանալու արժեքը, կարող եք համեմատել սպասավորությունը նվերներ տալու և ստանալու հետ: Երբևէ ստացե՞լ ենք մի նշանակալից նվեր մեկից, ով հստակ իմացել է, թե մենք ինչի կարիք ունենք կամ ինչ կցանկանայինք ունենալ: Սպասավորությունն ինչո՞վ է նման խելամիտ նվեր տալուն: Քննարկեք վերջին գերագույն համաժողովին հնչած պատմությունները, որոնք ցույց են տալիս, թե ինչպես են մարդիկ սպասավորել՝ ելնելով մյուսների կարիքներից (տես, օրինակ, Ջին Բ. Բինգհեմ, «Սպասավորել Փրկիչի ձևով» *Լիահոնա,* մայիս 2018): Անդամները կարող են նաև պատմել այլ պատմություններ, որոնք արտացոլում են այս սկզբունքը:

Ինչպե՞ս կարող ենք իմանալ մյուսների կարիքները: Խնդրեք յուրաքանչյուր անդամին կազմել այն մարդկանց ցուցակը, ում ինքը սպասավորում է: Ցուցակի յուրաքանչյուր անվան դիմաց նրանք կարող են գրել այս հարցի պատասխանը. «Ինչի՞ կարիք ունի այս մարդը, որպեսզի ավելի մոտենա Քրիստոսին»: Եթե հարմար է, քաջալերեք անդամներին ընդգրկել արարողությունները, որոնք տվյալ անձը կարիք ունի ստանալու: Անդամներին ասացեք, որ շարունակեն մտածել այս հարցի շուրջ և ոգեշնչում փնտրեք՝ օգնելով նրանց հոգալ ուրիշների կարիքները:

Տերը ցանկանում է, որ ընդունենք ուրիշների ծառայությունը:

Երեց Ռոբերտ Դ. Հեյլսն ասել է. «Ավետարանի ծրագիրը պահանջում է տալ և ստանալ . . . Դժվարության մեջ գտնվող մարդիկ հաճախ ասում են. «Ես ինքս կհաղթահարեմ . . . Ես կարող եմ հոգ տանել իմ մասին»: Ասված է, որ ոչ ոք այնքան հարուստ չէ, որ ուրիշների օգնության կարիքը չունենա և ոչ ոք այնքան աղքատ չէ, որ ինչ-որ ձևով օգտակար չլինի իր ընկերոջը: Մարդկանցից վստահաբար օգնություն խնդրելը և հաճույքով օգնելը պետք է մեր բնույթի մի մասը լինի» (“We Can’t Do It Alone,” *Ensign,* Nov. 1975, 91, 93): Ինչո՞ւ ենք մենք երբեմն տարակուսում ուրիշներից օգնություն ընդունելու հարցում: Օգնությունն ընդունելու մեր պատրաստակամությունն ինչպե՞ս է օրինում նրանց, ովքեր ծառայում են մեզ: Անդամներին մի քանի րոպե ժամանակ տվեք խորհել, թե ինչպես կարող են ավելի բաց լինել ուրիշների ծառայությունն ընդունելու: Ա Կորնթացիս 12.13–21 հատվածներն ի՞նչ են մեզ ասում՝ ինչո՞ւ մենք ունենք միմյանց կարիքը:

Շատ եղանակներ կան, թե ինչպես մենք կարող ենք ծառայել մարդկանց:

Որպեսզի օգնեք անդամներին հասկանալ, թե ինչ բազմաթիվ եղանակներով մենք կարող ենք ծառայել մեկս մյուսին, հրավիրեք նրանց կարդալ Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի ուղերձը՝ «Լինել նրա հետ և ամրապնդել այն» (*Լիահոնա,* մայիս 2018, 101–3, տես նաև «Սպասավորության սկզբունքները» *Լիահոնա*-ի ապագա համարներում): Անդամները կարող են բաժանվել փոքր խմբերի և յուրաքանչյուր խումբը կարող է մտածել մի քանի սցենարներ, որոնցում որևէ մարդ օգնության կարիք ունի: Այնուհետև նրանք կարող են մտածել տարբեր ուղիներ, թե ինչպես մարդիկ կարող են ծառայել սցենարի հերոսին՝ հոգալով հոգևոր և նյութական կարիքները: Խնդրեք խմբերին կիսվել մտքերով և մտածել, թե քննարկվող գաղափարներից որևէ մեկը կարո՞ղ է արդյոք օրինել այն մարդկանց, ում նրանք ծառայում են: ■

Տասներկու Առաքյալների Քվորում

Նստած, ձախից. Նախագահ Մ. Ռասսել Բալլարդ, Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Երեց Դիտեր Ֆ. Ուխդորֆ, Երեց Դեյվիդ Ա. Բեդնար, Երեց Քվենթին Լ. Քուք
Կանգնած, ձախից. Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Երեց Նիլ Լ. Անդերսեն, Երեց Ռոնալդ Ա. Ռասբենդ, Երեց Գարի Ի. Սթիվենսոն, Երեց Դեյ Գ. Ռենլանդ,
Երեց Ջերիթ Վ. Գոնզ, Երեց Ուլիսես Սոարես



«Ես օրհնում եմ ձեզ, որ դուք կարողանաք գտնել այն գործերը, որոնք կարող եք մի կողմ դնել՝ տաճարում ավելի շատ ժամանակ անցկացնելու համար», - ասաց Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը Եկեղեցու 188-րդ ամենամյա գերագույն համաժողովի փակման նիստի ժամանակ: «Ես օրհնում եմ ձեզ, որ ձեր տներում ավելի մեծ ներդաշնակություն և սեր ունենաք, և ավելի մեծ ցանկություն՝ ձեր հավերժական ընտանեկան հարաբերությունները հոգալու: Օրհնում եմ ձեզ, որպեսզի ավելի մեծ հավատք ձևավորեք Տեր Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության հանդեպ և ավելի մեծ կարողությամբ հետևեք Նրան որպես Նրա ճշմարիտ աշակերտներ:

Ես օրհնում եմ ձեզ, որ բարձրացնեք ձեր ձայնը, ինչպես հիմա ես եմ անում, վկայելով, որ մենք զբաղված ենք Ամենակարող Աստծո գործով: Հիսուսը Քրիստոսն է: Սա Նրա Եկեղեցին է, որը Նա առաջնորդում է Իր օծյալ ծառաների միջոցով»:

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 021475 1201 7